

ՌԱՖԱՅԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՇՎԵՏՈՒ ԵՄ...

325(479,25)

V

ՌԱՖԱՅԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՇՎԵՏՈՒ ԵՄ...

A II / 88602

ԵՐԵՎԱՆ 2003

ՀՏԴ 325+323(479.25)
ԳՄԴ 66.5+66.3(2Հ)
Ղ 158

*Խորին երախտիքս եմ հայտնում*
*փարիզաբնակ իմ անշահախնդիր բարեկամ*
*Յարութիւն Ռօպեր Այտապիրեանին*

*Իր նախաձեռնությամբ հատկացված*
*դրամական նպաստը հնարավոր դարձրեց*
*հուշերիս տպագրությունը*

*Հուշերս գրելու եւ տպագրության պատրաստելու*
*ընթացքում կորցրած տեսողությունս փոխարինեցին*
*իմ զավակները՝ Վազգենը եւ Գայանեն*

**ISBN** 99930 - 4 - 136 - X

© Ռաֆայել Ղազարյան, 2003 թ.

# ՍԵՆՏԵՆՑԻԱ

## (հեղինակի իրավունքով)

**Հեղափոխության իմ սահմանումը.**

*Դեպի լույսն են թռչում ոչ միայն թիթեռները, այլեւ ճանճերը: Մինչդեռ առաջիններն այրվում են, վերջինները ծվարում են ապակուն՝ փակելով լույսի ճամփան:*

**Եզրակացություն**

*Կամ խուսափեք հեղափոխություններից կամ նախապես արգելափակեք ճանճերի մուտքը (վերջինը թեեւ, ըստ իս, գրեթե անիրագործելի է):*

**Ի՞նչ կցանկանայի իմ ժողովրդին.**

*1. Կարողանալ ներել մերձավորին՝ ազնիվ ջանքերով ձեռք բերած նրա հաջողությունը:*
*2. Ոչ մի պահ չմոռանալով անցյալը՝ բոլոր ջանքերն ուղղել հանուն ապագայի: Եվ թող յուրաքանչյուրը դա համարի իր անձնական առաքելությունը:*

**Ռաֆայել Ղազարյան**

# ԵՐԿԱՐԱՇՈՒՆՉ ԱՌԱՋԱԲԱՆ, ՈՐԸ ԳՐՎԵԼ Է ՎԵՐՋՈՒՄ

# 1999 ԹՎԱԿԱՆ: ԱՄԱՌ

Եթե ոչ այժմ, ապա երբեք չեմ վերսկսի: Կուրությունս անխուսափելի է. ցանցաթաղանթի քայքայումը (մակուլային դիստրոֆիան) չի բուժվում: Ձախ աչքիս «լույսը մարեց» 3 տարի առաջ: Նույնը սպասվում է աջին: Միշտ օգնության հասնող Մանուչարյան Աշոտի ջանքերով Ֆյոդորովի ակնաբուժարանում լազերային վիրահատությունն իրականացրած բժիշկը երաշխավորեց 3–4 տարի: Երկուսն անցել է... Եթե խնայեմ և խնամեմ, եզրային տեսողությունս կմնա: Այսինքն ընթերցանությանս հրաժեշտ եմ տալու, բայց գոնե ձեռնափայտով չեմ թխկթխկացնի: Դրա համար էլ եմ Աստծուց շնորհակալ: Յոգեկան խորը թեթևությամբ կիրաժարվեի գրելու հոգեմաշ ու, իմ պարագայում՝ նաև ֆիզիկապես ծանր, այդ մտադրությունից, եթե շարժառիթը լիներ, ասենք, գրական դափնիների ակնկալիքը. 75-ս անց դա, բժշկական լեզվով ասած, չափազանց ժամկետանց է: Պարտադրողը ժողովրդի մեջ օբյեկտիվ դժվարությունների, ինչպես նաև իշխանական և չինովնիկական ոլորտի խորացող բարոյալքմամբ տարիներ առաջ սկիզբ առած խորը հիասթափությունն է, նրանով պայմանավորված ազգակործան արտագաղթը և, ինչն ամենից ավելի վշտացնողն ու տագնապեցնողն է, հետին թվով Արցախյան ազատագրական շարժման ձեռքբերումների և նրա իսկական նվիրյալների բացասական վերագնահատումը:

Այն, ինչ կատարվեց մեզ հետ վերջին տասնամյակում, պատմական է, ճակատագրական, տագնապեցնող և հուսադրող... Ու քանի որ «խառնակիչներից» մեկը ձեր խոնարհ ծառան է, ապա գիտակցում եմ, որ պարտավոր եմ նախ հաշվետվություն տալ իմ արածի ու չարածի վերաբերյալ և, որ անհամեմատ ավելի կարևոր է, թույլ ուժերիս չափով փորձել վերահաստատել ժողովրդի մեջ շարժման նվաճումների ճշմարիտ արժեքը, հավատն ապագայի հանդեպ, արթնացնել այդ ապագան վտանգող ուժերի դեմ պայքարի կամքը: Փորձենք տարբերակել ստեղծված ծանր կացության օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքները, զերծ պահենք վեհն ու պայծառն անմաքուր թաթերից: Մի հոգու գործ չէ: Յուսով եմ՝ իմ գործընկերների և ազնիվ հայրենասեր-

ների համատեղ ջանքերով դա կհաջողվի: Այսօր սեղանի վրա են միայն լուսահոգի Համբարձում Գալստյանի հուշերը: Վերջերս իր ելույթները հրապարակեց Վազգեն Մանուկյանը:

Մի մտավախություն հենց սկզբից բույն է դրել սրտումս: Բանն այն է, որ հուսալի տեղեկություններ կարելի է տալ այն իրադարձությունների մասին, որոնց ինքդ ես մասնակցել կամ ստացել այն հավատ ներշնչող աղբյուրից: Այդ դեպքում էլ շարադրանքը կամա-ակամա եսակենտրոն բնույթ է ստանում ու գլխից, լավագույն դեպքում, բերում պարսավանք: Մասնակի արդարացնող մի հանգամանք. կոմիտեի տղաները, ըստ երևույթին, հաշվի առնելով տարիքս և զբաղվածությունս ինստիտուտում, ազատել էին ինձ կազմակերպչական աշխատատար գործերից՝ վերցնելով դրանք իրենց վրա: Ուստի երբեմն ստիպված կլինեմ սահմանափակվել կարճ հիշատակումներով:

Համոզված եմ՝ շարժման մյուս ակտիվ գործիչները նույնպես կգրեն իրենց հուշերը, և բարեխիղճ ժամանակագիրը կամբողջացնի պատկերը: Հատկապես կարևորում եմ պատերազմի ծանրությունն իրենց ուսերի վրա կրած Վազգեն Սարգսյանի, Վազգեն Մանուկյանի, Լևոն Տեր-Պետրոսյանի, այն տարիներին անվտանգության խորհուրդը տնօրինող Աշոտ Մանուչարյանի, Սամվել Բաբայանի և ակտիվ մարտական գործողություններին մասնակցած մյուս հրամանատարների հուշերը: Հետաքրքրություն կներկայացնեն նաև Դավիթ Վարդանյանի՝ արտաքին քաղաքականությանը վերաբերող նրա հանդիպումների հուշագրերը:

Եվ այսպես.

# ԱՊՈՒԹԵՈՑ

*«Քեզ համար կուռք չշինես»*
*Աստվածաշունչ, Երկրորդ Օրինաց, Գլուխ Ե*

1989 թ., եթե չեմ սխալվում մայիսի 31-ի լույս հունիսի 1-ի գիշերը: Հանրապետությունը և հատկապես Երևանը ցնծության մեջ է. ազատ են արձակվել «Ղարաբաղ» կոմիտեի տղաները... Ես՝ 65 տարեկանս, «տղաներից» մեկն եմ: Այսօր՝ 10 տարի անց, երբ՝ ընկրկելով քաղաքական և իշխանական դաշտը գրաված այն պատեհաորս շահամոլների առջև, որոնք ծանր օրերին կուչ էին եկել բներում, հեռացել եմ քաղաքական ակտիվ գործունեության ասպարեզից ու որոշել եմ թղթին հանձնել «մեղքերի» իմ բաժինը, տագնապով ու զարմանքով հայտնաբերել եմ, որ մոռացել եմ որոշ դեպքեր, դեմքեր, անուններ, ժամանակագրական մանրամասներ... Համոզված էի, որ դաջվել են հիշողությանս մեջ... Սակայն այն գիշերն աչքիս առաջ է բոլոր մանրամասներով. կեսգիշերային Երևանը «հոտնկայս» ողջունում է մեր «շքերթը» Սովետաշենից մինչև Մատենադարան, ուր արդեն հավաքվել է բազմահազարանոց զանգված: Հիշում ու ցնցվում եմ ցավից ու զայրույթից... Որչա՞փ թույլ էր որոշ առաջնորդներիս բարոյական ու կամային ողնաշարը, որ ոտքի տակ տվին դարերով հալածվող, բնաջնջվող, ճարահատյալ տարեգիր դարձած ժողովրդի հոգևոր ու կամային պատմական եզակի թռիչքը: Եվ հանուն ինչի՞... Ընկալումիցս վեր է... Չէ՞ որ սկզբում ամեն ինչ մաքուր էր ու ազնիվ... Չէ՞ որ գիտակցված վտանգի էինք ենթարկում մեզ և մեր ընտանիքները՝ չգիտեինք, թե ինչով դա կավարտվի մեզ համար... Անշուշտ, բարոյախաթար որոշ դեր խաղաց «ստեղային» հիվանդությունը, որով ավել կամ պակաս չափով վարակվել էին ջահելն ու ահելը, հատկապես անհայտությունից եկածները, որոնց համար գլխներին անսպասելի փուլ եկած համաժողովրդական ճանաչումից ու հռչակից կառչելն ավելի ուշ դարձել էր ինքնանպատակ՝ մղելով նրանց երբեմն պահով չարդարացված քայլերի, ինչը 88-ի կեսերից սկսած հարաճուն անհանգստություն էր առաջացրել մեջս:

Սակայն 89-ի հունիսյան այդ գիշեր կատարյալ երջանիկ

էինք. մեզ սպասում, հավատում էին, որպես հաղթանակ ընկալում մեր ազատ արձակվելը: Յիշում եմ... մինչդեռ մեզ ձեռքերի վրա տանում էին վեր՝ դեպի Մատենադարանի հարթակը, մեջս գլուխ էր բարձրացրել բանտային ամիսներին խլացած տագնապը. արցունքներս զսպելով սեղմում էի ինձ պարզած ձեռքերն ու մտքում աղերսում. «Տեր Աստված, խափանիր չարն ու գայթակղությունը, օգնիր՝ չհուսախաբենք այս հրաշք ժողովրդին...»: Պարզ ասած՝ համը չհանենք:

Ուստի երբ Խաչիկ Ստամբուլցյանը (որն, ինչպես և Ալեքսան Յակոբյանը, ավելի վաղ էր ազատ արձակվել) հայտարարեց, որ առաջին խոսքը տրվում է ինձ, ես, որ բանտում տարած միկրոինֆարկտից հետո հազիվ էի ոտքի վրա կանգնում, կարճ կտրեցի. «Սիրելի ժողովուրդ, խնդրում եմ մեզ չհերոսացնեք, կուռք չդարձնեք... Ես տարիքս առած եմ, ինձ չեք մոլորեցնի, տղաներին՝ հնարավոր է»: Այնուհետև հերթով խոսեցին տղաները:

Անցած 10 տարիներին այդ տեսարանը ցուցադրվել է հեռուստատեսությամբ մի քանի անգամ. բոլորի ելույթները կան, ես՝ ընդհանրապես չերևացի: Չհասցրին նկարե՞լ, թե՞ գերադասեցին չհիշեցնել հաստատածս կասկածները... Չիմացա:

# ԽՈՇՈՐԸ ՀԵՌՎԻՑ Է ԴԻՏՎՈՒՄ

*Лицом к лицу лица не увидать.*
*Большое видится на расстоянии.*
*Сергей Есенин*

Միայն Աստծուն է հայտնի՝ երբ իմ տեսողությունը «ստոպ» հրամանը կարձակի. մի բան պարզ է՝ ծրագրածս ծավալը (տարեգրությունը) չեմ իրագործի, ուստի փորձեմ Արցախյան ազատագրական շարժման իմ ընկալումն ու գնահատականը տալ: Եվ քանի որ տարբեր տարիներին այն հնչեցրել եմ իմ ելույթներում ու հրապարակել մամուլի էջերում, ապա այժմ թույլ կտամ ինձ ներկայացնել դրանք թեզերի տեսքով.

*Թեզ 1. 1988-ի ազատագրական շարժումը պատմական անարդարության դեմ մեր ողջ ժողովրդի հոգում կուտակված բացասական լիցքի պարպումն էր:*

Ի սկզբանե այն մաքուր էր, անձնվեր, ընդհուպ մինչև անձնազոհություն: Մանրակրկիտ սոցիոլոգը, տարրալուծելով այդ լիցքը, կհայտնաբերեր այնտեղ և՛ եղեռնը, և՛ Ղարաբաղի ու Նախիջևանի բռնանջատումը, և՛ քսանամյա տևողության «37» թիվը, և՛ գաղափարական պարտադիր միակարծությունը, և՛ հայոց լեզվի հետ կապված հայտնի խնդիրներ...

Սակայն 88-ին գերիշխողն Արցախի՝ կորցրած մեր Հայրենիքի այն հողակտորի ազատագրումն էր, որից դեռ չէին հասցրել արտաքսել բնիկ էթնոսը:

Ուստի շահարկելով օբյեկտիվ ծանրագույն հանգամանքների (երկրաշարժ, տրանսպորտային շրջափակում, արտադրական և տնտեսական կապերի խզում ԽՍՀՄ ողջ տարածքում, պատերազմի վերաճած ընդհարումներ) և որոշ լիդերների հետագա բարոյական այլասերման հետևանքով ծանրացած սոցիալական վիճակը հետին թվով նորովի որակել շարժումը, վարկաբեկել, պղտորել այն՝ սրբապղծություն է, ավելին՝ անբարոյականություն ողջ ժողովրդի հոգևոր ու կամային անօրինակ վերելքի նկատմամբ: Մեր պատմության մեջ այնքան էլ շատ չեն նման պայծառ էջերը: Չարժե դրանք «ծրտոտել»: Ազնիվ մոտեցումը միակն է. դեպքերի և դեմքերի գնահատականը պետք է տրվի ժամանակահրադարձային համատեքստում: Կիրառելով այդ

մոտեցումը՝ կփորձեմ իմ «պաշտպանական ելույթը» տարածել 88-ին հաջորդած մեկ-երկու տարվա վրա:

Հիշենմ՝ հսկա երկրի հոգևարքն ավարտվում է նրա շռնդալից փլուզումով: Իշխանափոխություն կենտրոնում, նաև Հայաստանում: Մեկը մյուսի ետևից կտրվում են արտադրատնտեսական կապերը: Խախտվում է պետական կառույցների նորմալ գործունեությունը: Հատկապես ծանրանում է Հայաստանի վիճակը. շրջափակում, էներգետիկ «սով»: Կանգ են առնում երկրաշարժից տուժած շրջանների վերականգնողական աշխատանքները: Հարյուր հազարավոր տուժածներ դեռ վրաններում են կամ արտերկրում: Փախստականների բանակ: Արյունոտ սադրանքներ Ադրբեջանի կողմից, ի վերջո՝ պարտադրված պատերազմ: Կենտրոնացված կառավարմամբ «քեռփսյան բուրգի» փլուզումից հետո հաստատված տնտեսական նոր հարաբերությունների պայմաններում իրենց գլուխն էին կորցրել անգամ անհամեմատ ավելի բարվոք պայմաններում հայտնված հանրապետությունների փորձառու այն ղեկավարները, ովքեր, փոխելով զբաղեցրած պաշտոնի անվանումը, պահպանել էին աթոռը: Առավել ևս չես նախանձի ղեկավարման փորձից զուրկ իշխանության եկած թիմին: Ստիպված էինք արտաքին և ներքին լարվածության վիճակում անհապաղ արձագանքել գլխներիս ծառացած բազում պրոբլեմներին: Ընդ որում պետականա- և բանակաշինության առանցքային գերխնդիրների, ինչպես և սոցիալ-տնտեսական լուծումների պատասխանատվությունը ծանրացել էր հիմնականում նախագահի (Լևոն Տեր-Պետրոսյանի), վարչապետի (Վազգեն Մանուկյանի), անվտանգության ոլորտը տնօրինող Աշոտ Մանուչարյանի, մի փոքր ուշ՝ նաև Վազգեն Սարգսյանի ուսերին (և այս կամ այն չափով կոմիտեի մյուս անդամների և այլ ակտիվ գործիչների վրա): Այս իրադրության մեջ մեղադրել որևէ մեկին քրիստոնեական այս կամ այն պատվիրանը խախտելու համար, մեղմ ասած, արդարացի չէր լինի: Եղել են սուր, ճակատագրական պահեր: Բերենք մեկ օրինակ. 91-ի օգոստոսյան պուտչի օրերը: Չէի ցանկանա այդ օրը հայտնվել Լևոնի տեղում: Ի վերջո, գերլարված, օր տևած նրա սպասողական տակտիկան, որն իմ մեջ դժգոհություն էր առաջացրել, պարզվեց՝ ճիշտ լուծում էր:

Համարում եմ արդարացված և պատասխանատու որոշում Հայկական ատոմակայանի վերագործարկումը: Ավելի ուշ կանդ-

բաղադրանամ այդ խնդրի հետ կապված իմ անձնական հակասական վիճակին: Առայժմ ասեմ միայն, որ ՀԱԿ-ը, ինչպես և Հրազդանի ՊՇԷԿ-ը, կառուցել էր եղբայրս՝ Վազգեն Կազարովը (Ղազարյանը), սակայն Չեռնոբիլից հետո ստիպված էի միանալ Կանաչներին, երբ պատկերացնում էի նման մի աղետ Հայաստանում: Երբ որոշվեց վերագործարկել այն, առերես հակազդում էի, որովհետև հանդիպելով հանգուցյալ եղբորս Մոսկվայի գործընկերների հետ, պարզել էի, որ անհրաժեշտ է, և որ նրանք ի վիճակի են կատարելագործել ազդակային պաշտպանական համակարգը: Տագնապս պայմանավորված էր նաև ՀԱԿ-ում ստեղծված մի լարված պահով, երբ աշխատակազմի զգոնությունն ու օպերատիվությունը փրկեցին մեզ վերահաս աղետից: Ի վերջո դա իրագործվեց, թեև մինչ օրս իր արմատական լուծումը չի գտել թափոնների պահպանման կամ հեռացման խնդիրը:

Անշուշտ, առաջին շրջանում եղել են և՛ բացթողումներ, և՛ վրիպումներ, անհաջող կադրային նշանակումներ կամ որոշումներ, երկիմաստ այլանուներ: Մեծամասամբ դրանք փործի պակասի կամ սեփական հնարավորությունների գերագնահատման հետևանք էին: Եղան և իրենց շրջապատում թաքերը «տաքացնող» ճարպիկներ, վստահությունը չարաշահած «գործընկերներ»: Մի բան կարելի է վստահաբար պնդել՝ չարամիտ քայլեր առաջին մեկ-երկու տարում չեմ հիշում: Ուստի երբ ավելի ուշ անդրադառնանք որոշ բացթողումների, հիշենք նշածս հանգամանքները և լինենք հանդուրժող:

Առաջնորդների բարոյական խաթարումը սկսվեց ավելի ուշ, երբ նրանց համար գերխնդիր դարձավ զբաղեցրած պաշտոնների «հավերժացումը»: Նախագահի շուրջը հայտնվեցին գործիչներ, որոնց դժվար է շարժման ջատագովների շարքը դասել: Ավելի շուտ՝ հակառակը: Սկսվեց խորհրդարանի «խոցելի» պատգամավորների «մշակումը», որից հետո հնարավոր դարձավ անցկացնել արատավոր և՛ ընտրական օրենքը, և՛ սահմանադրությունը: Արցախը նրանց համար գլխավոր նպատակից հետզհետե (հատկապես 94-ի զինադադարից հետո) վերածվեց ծանր բեռի. դա արտահայտվեց և՛ ներքին, և՛ արտաքին քաղաքականության մեջ, ու որպես հետևանք՝ խեղաթյուրված ընտրություններ, համընդհանուր հիասթափություն, խորացող դժգոհություն, արտադրության շարունակվող քայքայում, ահագ-

նացող արտագաղթ ու Լիսաբոնի կատարյալ պարտություն: Խոստովանեմ՝ տղաների ու հատկապես Լևոնի խորացող խոտորումը մեր որդեգրած վարքագծից և առաջին հերթին Արցախի հիմնախնդրի հանդեպ նրա մոտեցման արմատական փոփոխությունն ինձ համար ծանր հիասթափության և տևական ապրումների պատճառ դարձավ: Բանն այն է, որ Լևոնին առանձնացնում էի մյուս տղաներից՝ համարելով նրան հոգեպես ինձ ավելի մոտ: Երկուսս էլ կարոտում էինք մեր գիտաշխատանքը: Սկզբնական շրջանում, եթե չէր կեղծում, կիսում էր իմ անհամբերությունն Արցախի խնդրի շուտափույթ լուծման և մեր մասնագիտությանը վերադառնալու առթիվ: Պահանջվեց տարիներ տևած ներքին ծանր պայքար ինձ հաճելի կերպարի վերագնահատման համար: Սկզբնական շրջանի ելույթներիս և հոդվածներիս ընկերական մեղմ հորդորները հետզհետե ավելի խիստ քննադատական բնույթ ստացան: 95-ի և 96-ի ընտրություններից և հատկապես Արցախը հրապարակավ լքելուց հետո նա ինձ համար անձնավորեց մեր շարժման և ազգի հակառակորդի կերպարը, ինչի մասին հայտարարեցի 96-ի սեպտեմբերի 16-ին՝ իմ հեռուստաելույթում: Սակայն մինչ օրս ափսոսանքով եմ վերհիշում նրա բարոյական ինքնոչնչացումը:

> Բութ հեգնեցին մեր կարոտները հրկեզ-
> Ու հեռացան: Ու ո՛չ մի լույս չբերին:
>
> Ե. Չարենց

Պետք է խոնարհվել մեր ժողովրդի այն մեծամասնության առջև, որը սոցիալական և կենցաղային ծանրագույն պայմաններում (որոնց մի մասը կարծես ծրագրավորված էր նրա համառությունը կոտրելու ակնկալիքով՝ ասենք «երիտհայերի» հրագործած էներգակիրների հետ կատարված «գործարքը» դրան հաջորդած ցուրտ ու մութ ձմեռներով) չներեց «պայքար մինչև վերջ» վանկարկող իր նախկին կուռքի նահանջը և հավատարիմ մնաց Արցախի ապազաղութացման սուրբ գործին:

Հետաքրքիր է շարժման հակառակորդների և քննադատողների «անատոմիան»: Որոշ ընդհանրացումներով (անշուշտ բացառություններով) նրանց կարելի է բաժանել 2 բանակի. առաջինը կազմում են բարձր և միջին պարտնոմենկլատուրան, որոշ պետական պաշտոնյաներ (խոսքս արտադրության ղեկա-

վարների մասին չէ. պարտտոմսը նրանց անհրաժեշտ էր իրենց մասնագիտական հնարավորություններն իրագործելու համար): Կեղծ քարոզչությամբ, «նվիրատվություններով» ձեռք բերված դիրքերը կորցնելու հեռանկարը մոբիլիզացրել էր նրանց ընդդեմ շարժման ավելի կամ պակաս ակտիվ գործողությունների: Յետագայում, երբ շարժումը հաղթեց, լենինիզմի այդ նվիրյալ մարտիկներն առանց վարանելու մի կողմ դրեցին հացի կարմիր գրքույկները (մեկ անգամ ևս հաստատելով այն փաստը, որ պարտտոմսերը պահել են ոչ թե սրտում, այլ ծոցագրպանում) և գունափոխվելով, այն էլ մեկ անգամ չէ, (ոմանք LSՊ-ի աջակցությամբ) գրավեցին հանգուցային դիրքեր: Որոշ ապաշնորհ ու անազնիվ բախտախնդիրներ էլ պետական բարձր աթոռներին բազմեցին, ավա՜ղ, Վազգեն Սարգսյանի կամքով:

Ուստի առանձնահատուկ հարգանքի են արժանի նշված կատեգորիայի այն գործիչները, որոնք համազգային շահերն անվերապահորեն վեր դասեցին անձնականից: Ըստ իս, առաջին տեղին հավակնում է Իջևանի շրջանի նախկին ղեկավար Ջեմա Անանյանը, որը ոչ միայն շրջանը բարեկարգած հոգատար մայր էր ողջ շրջանի համար, այլև առաջին օրերից գործեց ի նպաստ շարժմանն ու մասնակցեց շրջանի պաշտպանական գործողությունների կազմակերպմանը:

*Մեջբերում.* (կամ, հազար ներողություն, «ք... սրտի մխիթարանք»)

Մեզ սփոփենք նրանով, որ դա զուտ հայկական երևույթ չէ: Սոցիալիզմի լենինյան-ստալինյան տարբերակի՝ «անառիկ ամրոցի» փլուզումն ի ցույց բերեց Գորբաչովի և իր նմանակների՝ Ելցինի, Ալիևի, Նազարբաևի, Շևարդնաձեի, Դեմիրճյանի, էլ չեմ ասում միջին մակարդակի «տոկուն բոլշևիկների» «հարգանք» ու զարմանք առաջացնող գաղափարական «սկզբունքայնությունը, հավատարմությունը կոմունիզմի ու լենինիզմի անմահ ուսմունքին», որի «կրակոտ» քարոզչությամբ ապահովել են իշխանական իրենց բարեկեցիկ գոյությունը: Փոքրաթիվ բացառությամբ նրանք բազմեցին նույն աթոռներին, նախապես փոխելով պաշտոնի անվանումը ու սկսնակի անփորձությամբ խաչակնքվելով ու նամազ կատարելով՝ անցան միանգամայն այլ գաղափարների ոչ պակաս «կրակոտ» քարոզչությանը: Ու ոչ մի փորձ չարեցին ղեկավարելու իրենց նախկին բարերար կոմպարտիան կամ, թեկուզ, հարելու նրան: "Свято место пус-

то не бывает" (սրբատեղը դատարկ չի մնում)... Տեսնելով, թե ինչպես են «աննկուն» կոմունիստները հապճեպ ցրվում նորաբույծ կուսակցությունների «կենսախորշերը», նրանց հերթափոխը խոհեմաբար զերծ մնաց նոր տեղերի խլխլոցից և խաղաղ հեծավ ազատված սայլը ու բարոյական նպաստավոր դիրքերից նզովեց «դավաճաններին»:

Մտքով անցկացրեք ԱՊՀ-ի խաչակնքող ու նամազ անող նախկին առաջին քարտուղարներին՝ այսօրվա կուռք-պրեզիդենտներին ու այլ բարձրաստիճան պարտգործիչներին ու համաձայնեք. «Համա թե երես ունեն»:

Ինձ զվարճացնում է նախկին կոմունիստների ուրացման շաբլոն դարձած միօրինակ վարքը. 20 տարուց ի վեր տևած ստալինյան մսաղացը, դրան զոհ գնացած միլիոնավոր անմեղներ (ուրացողներից շատերի նաև մոտ հարազատներ), դրանց թվում՝ մեր բոլորի հարազատներ Թոթովենցը, Չարենցը, Բակունցը, Նժդեհը, Խանջյանը, չսասանեցին նրանց նվիրվածությունը «հարազատ» պարտիային (կարծես կար ուրիշը), սակայն 90-ին միահամուռ ու միաժամանակ «գլխի ընկան» ու «հիասթափվեցին»...

Շարժումը կշտամբողների մյուս խումբը մտավորականներն են, հատկապես մտավորական վերնախավի այն ներկայացուցիչները, որոնք շարժման սկզբում վախվորած հետևում էին դեպքերի զարգացմանը: Հետագայում, տեսնելով կոմիտեականների ուռճացած համբավը, նախանձեցին ու չներեցին մեզ իրենց սեփական զգուշավորությունը: Ինքնարդարացման համար ընտրեցին շարժման և նրա լիդերների հետին թվով պսակազերծման ոչ ամենաարժանավայել եղանակը: «Բա դու չտեսա՞ր, թե դրանք ովքեր են,– բազմիցս հանդիմանել են ակադեմիայի գործընկերներս,– մենք քեզ էինք ճանաչում, քեզ հավատացինք...»: Նախ պատասխանեմ «Բա դրանք ովքեր էին...» սակրամենտալ հարց-կշտամբանքին. Իգոր Մուրադյան՝ տնտեսագետ գիտաշխատող, Վազգեն Մանուկյան և Բաբկեն Արարքցյան՝ համալսարանի գիտաշխատողներ (մաթեմատիկոսներ), Դավիթ Վարդանյան՝ ֆիզիկոս, գիտությունների թեկնածու, համալսարանի գիտաշխատող, Լևոն Տեր-Պետրոսյան՝ մատենադարանի գիտաշխատող, դոկտոր, Աշոտ Մանուչարյան և Սամսոն Ղազարյան՝ մանկավարժներ (առաջինը՝ դպրոցի ուսմասվար), Վանո Սիրադեղյան՝ գրող, Համբարձում Գալստյան, Ալեք-

սան Հակոբյան՝ այն օրերին ասպիրանտներ (պատմության, ազգագրության), Սամվել Գևորգյան՝ ռադիոյի աշխատող: Դրանցից մի քանիսը (Վազգենը, Բաբկենը, Դավիթը, Աշոտը, Համբարձումը և այլք) դեռ ուսանողական տարիներից ակտիվ էին ազգային-հասարակական կյանքում: Ակտիվ քաղաքական կյանքի բեմում էին ակադեմիկոսներ Սիլվա Կապուտիկյանը, Լենդրուշ Խուրշուդյանը, Հրաչիկ Սիմոնյանը, Լեոնսեր Աղալովյանը, միութենական ակադեմիկոս Արմեն Թախտաջյանը, ժողովրդական նկարիչ Սարգիս Մուրադյանը, ժողովրդական դերասան Սոս Սարգսյանը, հրապարակախոս Զորի Բալայանը, բանաստեղծուհի Սեդա Վերմիշևան, բանասեր, դոկտոր Սուրեն Զոլյանը, Ռաֆայել Իշխանյանը, գրողներ Անահիտ Սահինյանը և Մարո Մարգարյանը, ինժեներ Հրանտ Խաչատրյանը և շատ ուրիշներ: Անմասն չմնացին ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը և կաթողիկոս Վազգեն I-ը: Պահեստային կոմիտեում էին Արշակ Սադոյանը, Վազգեն Սարգսյանը, Խաչիկ Ստամբոլցյանը, Ալբերտ Բաղդասարյանը, Վիտյա Այվազյանը, Ավետիք Իշխանյանը, Աղասի Արշակյանը, Կիմ Բալայանը, Երջանիկ Աբգարյանը և այլք: Ինչպես տեսնում եք, բոլորն՝ անխտիր մտավորականներ: Համոզված եմ՝ ողջ լիներ Պարույր Սևակը, կգար մեզ հետ: Ուրեմն ինչու՞ պիտի վարանեի... Եվ վերջապես, սիրելի կուռքաշեն ժողովուրդ, եկեք ազնվաբար խոստովանենք՝ Լևոնը դուր էր եկել ոչ միայն մեզ, այլև ժողովրդի 82 տոկոսին, ինչը նա ապացուցեց 91-ի սև տեխնոլոգիաներից զերծ նախագահական ընտրություններում: Իսկ այսօր, մոռանալով սեփական հոծվանքը, կշտամբում եք մեզ. «էս ի՞նչ արիք»:

Ու ամեն անգամ կրկնում եմ. «Դուք կանգնեիք իմ կողքին... Ու՞ր էիք, ինչ-որ չնշմարեցի հորիզոնում: Տեսա նրանց, ովքեր, անտեսելով վտանգը (դա անվիճելի ճշմարտություն է), նետվեցին շարժման հորձանուտը հանուն Արցախի ազատագրման»: Ու ամեն ինչ անմիջական էր, անկեղծ... Աստեղայինը հետո եկավ: Ուստի կանգնեցի նրանց կողքին ճիշտ այնպես, ինչպես 65-ին կանգնեցի Պարույր Սևակի, Սարգիս Մուրադյանի, Վարագ Առաքելյանի, Բագրատ Ուլուբաբյանի կողքին: Ու կրկին՝ հանուն Արցախի: Փորձում եմ արդարանալ. «Չէի կարող չմասնակցել այդ շարժմանն ու դրան գալիս էի մանկությանս օրերին արգելված Րաֆֆու, Մուրացանի վեպերով ու Անդրանիկի հրե-

տանավորի՝ հայրիկիս, պատմածներով «թունավորված» մանկությունից: Եվ Հայ Դատով եմ հիվանդ, էլի մանկությունից: Ընդ որում, ի տարբերություն ՁԻԱՀ-ի, դրա դեմ չկա «Արմենիկում»... Միակ «դարմանը» Արմենիան է... Չէի կարող չնետվել 88-ի շարժման մեջ, ինչպես ծնողը նետվում է ջուրը՝ խեղդվող զավակին փրկելու բնազդով, անկախ լողորդի իր ունակություններից: Չմասնակցելը կբերեր բարոյական մահվան, անձիս կործանման: Աղոթախառն երախտիքս եմ ուղղում Աստծուն, որ արժանացրեց, թեև կյանքիս մայրամուտին, մասնակցելու Հայ Դատի առաջին քայլի իրականացմանը: Մնում է պահպանենք ու հիշելով Եսենինի վերը բերված տողերը՝ չշտապենք վերջնական վերդիկտը կայացնել:

Տեղին եմ գտնում այս թեզը լրացնել հետևյալ ենթաթեզով. 80-ականների վերջին տարիներին ստեղծված մթնոլորտում «Կռունկի» կամ «Ղարաբաղ» կոմիտեի նման ստրուկտուրայի երևան գալը անխուսափելի էր՝ պատմական անհրաժեշտություն: Իրոք, սովետական արգելք-մոխրի տակ 7 տասնամյակ մարմրող արցախյան ցավ-կրակը համազգային էր (ներառյալ Սփյուռքը): Պարտմուշտրա (խստավարություն) անցած նոմենկլատուրան, որը հոգու խորքում, համոզված եմ, միակարծիք էր ժողովրդին, ինչպես տեսանք, հոգեբանորեն պատրաստ չէր շարժման գլուխ կանգնելու: Այս պարագայում անհրաժեշտաբար պետք է ծնվեր մի ստրուկտուրա, որն իր վրա կվերցներ ժողովրդի «փողհարի» դերը և կապահովեր շարժման օրինական, սահմանադրական ձևը: Մասնավորապես, նույն դրույթն են պաշտպանում «Մոսկովսկայա տրիբունայի» «Սոգլասիե» թերթի մարտի 14-ի համարում տպագրված հոդվածի հեղինակները (Անդրեյ Սախարով և ուրիշներ): Բերենք մի հատված. «...Ղարաբաղյան շարժման կոմիտեի ձերբակալված ղեկավարները կրքեր չեն բորբոքել, այլ ազատության մեջ գտնված ժամանակ ջանացել են ուղղել այն (ժողովրդական զանգվածները – *Ռ.Գ.*) խաղաղ և օրինական ճանապարհով... Տարերային աղետի առաջին իսկ ժամերին, տասնյակ հազարավոր մարդկանց հուսալքության, քաոսի և խառնաշփոթության պայմաններում շարժման առաջնորդներն ու ակտիվիստները գործուն մասնակցություն ունեցան փրկարար աշխատանքների կազմակերպման և իրականացման գործում...»: Չլիներ այս կազմի կոմիտեն՝ կծնվեր մեկ ուրիշը: Երբեմն ինձ հարցնում են՝ արդյո՞ք հնարա-

վոր է այսօրվա վիճակին ադեկվատ (համարժեք) նման ստրուկտուրայի ծնունդը: Ցավում եմ, բայց կարծում եմ՝ ո՛չ: Վերջին տասնամյակի գերխնդիրը և գերվտանգը ողջ երկրի գոյությանը, էլ չեմ ասում քաղաքակիրթ հասարակարգի կայացմանը՝ սպառնացող կոռուպցիան է և նրանով պայմանավորված արտագաղթը: Ցավոք այս ահագնացող համազգային վտանգը չի կարող ծնել համազգային ընբոստացում: Իրոք, թեև ծանր վիճակում հայտնված բնակչության ճնշող մեծամասնությունը կտրուկ դատապարտում է ստեղծված կացությունը, սակայն մի զգալի շերտ, հարմարվելով տիրող պայմաններին, ապահովում է բավարար, ոմանք՝ բարգավաճ, գոյություն, ուստի ցնցումների հեռանկարը նրանց բոլորովին չի ոգևորում: Առաջին հերթին դա վերից վար կոռումպացված իշխանական բուրգն է՝ կաշառակերության մեջ թաղված չինովնիկական ստվար բանակը, որը չի խորշի ոչ մի միջոցից, որպեսզի կասեցնի ստեղծված բուրգի կայունությանը սպառնացող որևէ ոտնձգություն, դա և կաշառատվության հետ համակերպված փոքր ու միջին գործարարների խավն է, որը, ղեկավարվելով «Աստված բեթարից ազատի» ժողովրդական «իմաստախոսությամբ», չի ուզենա վտանգել դժվարությամբ ստեղծածը, դա նվազագույն պահանջները բավարարող աշխատավարձի տեր դարձած երջանիկներն են և այլն: Այսինքն երկրին սպառնացող վտանգը՝ կոռուպցիան, իր դեմ միավորելու փոխարեն տարբաժանում է բնակչությունը հակադիր բանակների՝ ամրացնելով իր դիրքերը: Տարանջատմանը, այս անգամ, իբր, գաղափարական հողի վրա, ցավոք, նպաստում է նաև կուսակցությունների երամակը, որոնց ճնշող մեծամասնությունը հետապնդում է նեղ կուսակցական, ի վերջո, կենցաղային բարեկեցության նպատակներ: Սոցիալական ծանր կացության դեմ պայքարն ընդունում է անձնավորված բնույթ՝ մեկին մղելով բարոյալքման, մյուսին՝ արտերկիր: *Այն չի ոգևորում՝ հուսալքում է:* Ուստի «Ղարաբաղ» կոմիտեի նմանակը չի կարող ծնվել: Նրան փոխարինում են կուսակցությունների դեպքից դեպք ստեղծվող դաշինքները, որոնք իրենց առջև դրված խնդիրը լուծելուց կամ տապալելուց հետո լուծարվում են և հաճախ՝ հակադրվում:

Վտանգը պիտի դառնա համընդհանուր, սպառնա բոլորի գոյությանը, որպեսզի միավորի իշխանամետ և ընդդիմադիր ուժերը՝ դառնա համազգային:

Ա 28602

ԳՐԱԴԱՐԱՆ

*Թեզ 2. Արցախյան ազատագրական շարժումը սկսվեց պատմական միակ ճիշտ պահին:*

Իրոք, գորբաչովյան «գլասնոստից» առաջ նման խնդիրներ լուծում էր միայն Կրեմլը: Որևէ նախաձեռնություն ներքևից վճռականապես (Ստալինի օրոք՝ դաժանաբար) կճնշվեր: Էլ չեմ ասում անկախության դրոշը «ժամանակավրեպ» բարձրացրած «Սասնա ծռերի» մասին: Նրանց սպասում էր Զատիկյան-Յայրիկյան կուսակցության հանդուգների ճակատագիրը:

Սակայն երբ նման ցանկություն անցավ Կրեմլի տիրոջ սրտով՝ Ղրիմ-ադամանդը շողշողաց Ուկրաինայի թագի վրա: Ցավոք, մենք չենք ունեցել նման բարձր դիրքի մեր Խրուշչովը: Մեր ղեկավարների քաղաքավարի դիմումները չխանդավառեցին Կրեմլին՝ չկար մոխրի տակ մարմրող ածուխը խառնելու արտաքին կամ ներքին դրդապատճառ: Ավելի հեռուն գնաց ազնիվ հայրենասեր Զարոբյանը. իր պատասխանատվությամբ կազմակերպված, միության մեջ նախադեպը չունեցող երթով սկիզբ առած համեստ շարժումն ի վերջո ճնշվեց (ստորև այդ մասին կխոսենք ավելի մանրամասն): Մյուս կողմից, «88-ը» անհնարին կդառնար 90-ից հետո. կդիտվեր որպես ագրեսիա անկախ պետության դեմ: Մինչդեռ 88-ին այն սկսվեց միասնական պետության մեջ՝ լիակատար համապատասխանելով այդ երկրում գործող սահմանադրությանը: Կասկածից վեր է, որ անկախանալուն պես Ադրբեջանն օպերատիվ կերպով (սումգայիթավարի) կլուծեր Արցախի հայաթափման «ձգձգված» խնդիրը: Թերահավատներն աչքի առաջ ունենան Սովետական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների «եղբայրության» կրկներգի ներքո հայաթափված Նախիջևանը:

Մի քանի խոսք տարբեր տարիներին ողջ կոմիտեի կամ նրա առանձին անդամների հասցեին տարածվող ասեկոսեների մասին: Այսպես.

ա) «Այդ բոլորը Մոսկվան է սադրել». անկեղծ ասած տրամաբանություն չեմ տեսնում շարժումը սադրելու և այն ՁԼՄ-ների վայրահաչով նենգափոխելու, «Զվարթնոց», «Կոլցո» և այլ հետապնդումներ կազմակերպելու մեջ:

բ) «Կոմիտեի բոլոր կամ առանձին անդամներ ԿԳԲ-ի գործակալներ են»: Որքան գիտեմ այդ մեղադրանքը հաստատող ոչ մի փաստարկ չի ներկայացվել: Յաստատ գիտեմ, որ ես չեմ եղել: Ինչ վերաբերում է դաշնակցության կողմից Լևոնին դա

վերագրելու փորձին, ապա, ինչպես ինձ բացատրեց Աշոտ Մանուչարյանը, դա անհեթեթություն է. այդ զորքերի սպան (Լևոնը լեյտենանտ էր) և «ստուկաչը» անհամատեղելի են:

գ) Վերջերս լսեցի «մտքի» ամենացնցող ու ամենակեղտոտ «պայծառացումը», որն իբր սփյուռքից է ներմուծվել. «կոմիտեի ձերբակալումը թատրոն էր». ըստ էության չենք ձերբակալվել (!?)... սրտի ինֆարկտն էլ, ըստ երևույթին, հանգստյան տանն եմ ստացել...

դ) «Բոլորը կաշառված են եղել», – հայտարարեց ինձ մի «էլիտար մտավորական»: Խնդրեցի՝ հիշեցնի՝ որքա՞ն եմ ստացել: «Դու ու՞մ էիր պետք, քեզ օգտագործել են...»: Ասենք, այդպես է, սակայն վերհիշելով Աշոտի, Դավիթի, Սամսոնի, Խաչիկի, Սամվելի հետբանտային վիճակը, պետք է ենթադրեմ, որ բանտը զրկել էր նրանց հիշողությունից՝ մոռացել էին ստացված կաշառքի թաքստոցը: Իսկ Աշոտը մինչ օրս չի գտնում... Ի միջի այլոց շարժման առաջին տարիներին նույն այդ մտավորականը համառորեն սիրաշահում էր ինձ (և մյուսներին)՝ համոզված լինելով, որ ես այդքան «հարիֆ» չեմ գտնվի և օգտվելով ընձեռնված հնարավորությունից՝ անպայման մի «լավ» պաշտոն կչանքեմ: Նեղանալով մեր անդրդվելիությունից ու հիասթափվելով իմ անբուժելի «անբաշարությունից»՝ գտավ «մուռը հանելու» իր «վսեմ» միջոցը: Երևի այդքանը...

Հետադարձ հայացք գցելով կարող ենք փաստել. Արևմուտքը եռանդուն «թեժացնում» էր ամենափոքր կրակը ԽՍՀՄ-ի (որն արդեն դատապարտված էր) փլուզումն արագացնելու ձգտումով: Հիշենք, թե ինչ գրոհի ու ճնշման ենթարկեցին Գորբաչովին պետությունների ղեկավարներ, պետական ու հասարակական գործիչներ, սենատորներ, գիտնականներ՝ ի սատար Արցախյան շարժման ու ձերբակալված լիդերների: Եվ տրամագծորեն հակառակ ինչ դիրք են գրավել ԽՍՀՄ-ի փլուզումից հետո՝ տեսնում են Արցախն այն Ադրբեջանի կազմում միայն, որը 70 տարի բոլոր միջոցներով լուծում էր նրա հայաթափման «սուրբ» առաքելությունը...

Այնուհանդերձ, անգամ եթե ընդունենք այս կամ այն արտաքին ուժերի սադրիչ միջամտության փաստը, ապա և՛ դրանք, և՛ Արևմուտքի անբարո քաղաքականությունը մեր (88-ի) պարագայում կանխորոշեցին շարժման սկսվելու ճիշտ պահը: Ուստի, իմ խորին համոզմամբ, պահի ընտրությունն Աստծո կամոք է

եղել, որն առկա էր նաև մեզանից քանակով և սպառազինությամբ զգալի գերազանցող հակառակորդի դեմ ձեռք բերած հաղթանակում: Ու եթե հավատանք դրան, ապա գուցե ավելի զուսպ լինենք եսապաշտական ամեն տեսակի դրսևորումներում: Գուցե մեզ տրված վերջին քննությու՞նն է դա:

*Թեզ 3. Սովետական Միության փլուզման դետոնատորը Գորբաչովի հռչակած «պերեստրոյկան» ու «գլասնոստն» էին և ոչ՝ Արցախյան շարժումը:*

Մեր մեջ տարածված այս մոլորությունը հակված եմ վերագրել ոչ այնքան մեր մեծամտությանը, որքան մեր խառնվածքին հատուկ չափազանցություններին: Նորից եմ ասում՝ 88-ը հետևանք էր, «գլասնոստի» ծնունդ: Իսկ «պերեստրոյկան» իր հերթին հետևանք էր դրան նախորդած սովետական խաթարված բյուրոկրատիայի և Արևմուտքի բազմամյա «եռանդուն» գործունեության: Ուստի պետք է ընդունել այն այնպես, ինչպես կընդունեինք տարերային աղետը: Թող ինձ ներվի ստորև շարադրվող՝ հայտնության կամ թարմության չհավակնող վերլուծական փորձը: Արևմուտքի պարտադրած սպառազինման անօրինակ մրցավազքը ոչ էֆեկտիվ էկոնոմիկայի, կոշտ գերկազմակերպվածության ու Խրուշչովից հետո վերստին ճնշված հրապարակայնության պայմաններում հասցրել էր երկիրը տնտեսական և գաղափարական փակուղու, որից չէին կարող դուրս բերել ո՛չ զառամախտով տառապող Բրեժնևը, ո՛չ էլ կենդանի դիակ Չեռնենկոն: Վերջիններս կրեմլյան ծերակույտին անհրաժեշտ խամաճիկներ էին, որոնց ողջ երկրի ներողամիտ ժպիտի ու անթիվ անեկդոտների ուղեկցությամբ զբաղեցնում էին՝ մարմնի ազատ մնացած տեղերին նորանոր «խաղալիքներ» կախելով: Ուստի, Homo sapiens ղեկավարին անսովոր և Homo lupus Ստալինից դեռ լրիվ ուշքի չեկած երկիրը (բացառությամբ նոմենկլատուրայի) Գորբաչովին ընկալեց որպես մեսիա՝ հանճարեղ ռեֆորմատոր: Վերջինս, հասկանալով, որ արմատական վերափոխումներն անհրաժեշտ են, խթանում առավ իր անձի հանդեպ ժողովրդի մեջ արթնացած հույսերից, հայտնվեց «աղվես»-Արևմուտքի շողոքորթությունից գլուխը կորցրած «ագռավի» վիճակում ու չգիտակցեց, թե ինչ անհսկելի «շիկացած ջին» է բաց թողնում 70-ամյա «բանտ»-շշից, երբ հանեց «շշի» բերանից «գլասնոստ» խցանը: Չեմ հավատում, որ նա ծրագրել էր երկրի (որի միահեծան տերն էր դարձել)

փլուզումը: Յակված եմ կարծելու, որ ժողովրդի «բերանը» նետելով «գլասնոստ»-ոսկորը, համոզված էր, թե կշահի նրա լիակատար վստահությունը ու, վերահսկելով վիճակը, կհանգրվանի մի տեսակ տոտալիտար (կամ ավտորիտար) ժողովրդավարության դրախտում: Դեպքերը, սակայն, ծավալվեցին հայտնի սցենարով: Խրուշչովի «թեթև» ձեռքով մատուցվել և այժմ վերջնական ավարտին էր հասել ԿԳԲ-ի գերիշխանության փոխանցումը պարտապարատին: Ստալինյան Գուլագ-գնդանների ճակատագիրը կիսեցին նաև բրեժնևյան «պսիխուշկաները»:

Գորբաչովի գործունեությունն ամբողջացնող կարևորագույն մի հավելում. երեսունը բոլորած հայրենակիցներս, անշուշտ, կհիշեն համազգային (և ոչ միայն) այն վրդովմունքը, անգամ զայրույթը, որն առաջացրել էր Գորբաչովի՝ 88–90-ին ղարաբաղյան խաղաղ շարժման շուրջը խեղաթյուրումների, զրպարտությունների, ահաբեկման նրա սանձազերծած արշավը: Եվ սույն ժամանակագրության մեջ մեկ անգամ չէ, որ «կընդհարվենք» իր հետ: Սակայն անվերապահորեն պետք է ընդունել. կամա թե ակամա նրան բաժին ընկավ պատմական անգնահատելի առաքելություն՝ տապալվեց մարդկության պատմության մեջ ամենաանմարդկային, հրեշավոր միապետությունը («Չարիքի իմպերիան»), վերջ տրվեց բնակչության համատարած ահաբեկմանը, նրա բարոյական նկարագրի խաթարմանը, ԿԳԲ-պարտկոմ պատժիչ ամենահաս մեքենային, վերջ տրվեց սառը պատերազմին, քարացած գաղափարախոսությանը, հնարավոր դարձան մասնավոր սեփականությունը և գործարարությունը նաև արտասահմանի հետ և այլն և այլն: Ինձ կարող են առարկել. ստալինիզմն անցած գնացած մղձավանջ էր, բրեժնևիզմն անհամեմատ մեղմ էր... Այո՛... Սակայն ռազմա-քաղաքական այն միապետության մեջ միշտ մնում էր նոր Ստալինի հանդես գալու սպառնալիքը:

Ցավոք, այսօր այդ ձեռքբերումները կամ չեն երևում, կամ աղճատված են ներկայանում անցումային շրջանի մշուշում, երբեմն էլ ընկալվում որպես չարիք. ասենք՝ «երկաթյա վարագույրի» վերացումը բերեց արտագաղթի, գրաքննության վերացումը՝ երիտասարդությանը խեղող պղտոր, կեղծ մշակույթի անարգել տարածմանը և այլն: Սակայն պիտի հուսանք, որ սոցիալական վիճակն ի վերջո կբարելավվի (անգլիացիք ասում են. եթե վիճակը դառնում է ծայրաստիճան վատ, այն կարող է

փոխվել միայն դեպի լավը), ուստի արտագաղթը գոնե մասամբ կվերածվի ներգաղթի, կծաղկի բարձր արվեստը և այլն: Անշուշտ, դա չի նշանակում, որ պետք է ձեռքերը ծալած սպասենք այդ բաղձալի օրերին կամ բախտ որոնենք արտերկրում: Անհաշտ պայքար է պետք... անզիջում պայքար...

* * *

Առաջինը գլուխ բարձրացրեցին սոցիալիստական ճամբարի այն գաղութները, որոնք ստալինյան մամլիչի տակ ընկան 2-րդ Համաշխարհային Պատերազմի օրոք, չհասցրին լիովին մանկուրտանալ, ուստի նրանց չէր հաջողվում համոզել, որ "Жить стало лучше, жить стало веселей"[1]: Նրանք տեսել էին ավելի բարեկեցիկ կյանք, առանց ԿԳԲ-Գուլագ «հանգստավայրերի»: Հունգարացիք 56-ին, չեխերը՝ 68-ին շտապեցին՝ խեղդվեցին արյան մեջ, Լեհաստանը դուրս պրծավ սովետների ճանկերից առանց մեծ արյան, մերձբալթիացիք ճիշտ ընտրեցին պահը և գործեցին շատ ավելի խոհեմ, մտածված, գրագետ և տարան փայլուն դատա-դիվանագիտական հաղթանակ:

Ղարաբաղյան շարժման սկզբնական մոտիվները միանգամայն այլ էին. չկար Մոսկվային հակադրվելու, էլ չեմ ասում՝ Միությունից անջատվելու, որևէ միտում: ԼՂ մարզային խորհրդի պահանջը չէր հակասում երկրի սահմանադրությանը: Հիշենք շարժման առաջին կարգախոսները («Լենին, պարտիա, Գորբաչով» և դրա նմանները): Անշուշտ դրանում կար Կրեմլը սիրաշահելու մանկամիտում, բայց և այնպես կենտրոնախույս մղումները դեռ նիրհում էին: Եվ դա հասկանալի է. ի տարբերություն մերձբալթիացիների, հայերս (և ոչ միայն) մինչև 1918-ը արյունոտ դարեր ի վեր պետականությունից զուրկ, սիստեմատիկ հալածվող, աշխարհով մեկ ցրիվ եկած, վերջապես ստացել էինք, թեև բավականին «խուզված», սակայն հստակ սահմաններով ու սահմանափակ իրավունքներով պետություն՝ իրեն հատուկ բոլոր (թեև՝ մի մասը զուտ սիմվոլիկ) պետական ինստիտուտներով: Ծավալվել էր հսկայածավալ շինարարություն, ստեղծվել էր հզոր արդյունաբերություն: Դպրոցների լայն ցան-

---

[1] Երգի խոսքեր՝ «ապրում ենք ավելի լավ, ապրում ենք ավելի ուրախ»:

ցը պարտադիր անվճար միջնակարգ ուսուցմամբ (որից այսօր հետ ենք նահանջել) վերջ էր դրել անգրագիտությանը: Տեխնիկումները և ԲՈՒՅ-երը արդյունաբերության առկայությամբ խթանել էին գիտության, մշակույթի (ճիշտ է՝ գաղափարականացված ու գրախոսվող) քռիչք, իսկա ծավալի գիտական և գեղարվեստական գրականություն մայրենի լեզվով, գիտա-արտադրական լայն կապեր բոլոր հանրապետությունների հետ և այլն և այլն: «Գլասնոստի» հռչակումը մեր սրտերում արթնացրել էր հուզականությամբ տոգորված, զուտ պատմական արդարության վերականգնման վրա հիմնված ԼՂ խնդրի դրական լուծման անառարկելության միամիտ համոզմունքը:

*Այսինքն, մեր շարժման առաջին փուլը ազգային ազատագրական էր՝ երկրի սահմանադրությանը համահունչ:*

*Այդ միամտությունից կարճ ժամանակում բուժվեցինք Կրեմլի և ԶԼՄ-ների անխոհեմ ու անքարո «ջանքերով», և շարժումը թևակոխեց հակաբյուրոկրատական, հակաչինովնիկական փուլ:*

Արցախյան շարժումը կյանքի կոչեց խաղաղ պայքարի, թվում էր՝ ընդմիշտ ճնշված (նաև դաժանորեն՝ Նովոչերկասկի բանվորների խաղաղ հավաքի գնդակահարումը Խրուշչովի օրոք), միջոցները՝ զանգվածային հանրահավաքները, գործադուլները, դասա- և հացադուլները, թռուցիկները...

Կրկնում եմ՝ շարժումը և նրա զինանոցը «գլասնոստի» հետևանք են: Չլիներ Արցախը, կպայթեր մեկ այլ «տաք» կետում:

Անշուշտ, շարժումը իր ազդեցությունը ունեցավ միությունում ծավալվող պրոցեսների վրա: Կարծում եմ՝ մեր և մերձբալթիացիների ազգային ազատագրական պայքարը խթանեց նման խնդիրների առջև կանգնած ազգային փոքրամասնությունների ակտիվությունը: Ինչ վերաբերում է 2-րդ՝ հակաբյուրոկրատական փուլին, ապա այն արձագանք գտավ ողջ Միությունում, առաջին հերթին՝ մտավորականության շրջաններում, ինչը, ի վերջո, հանգեցրեց ԽՍՀՄ-ի փլուզմանը:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո տրտնջում էինք. «Մեզ անկախությունը արյունով տրվեց, մյուսներին՝ երկնքից իջավ...»: Այո՛, մեզ էլ անարյուն կտրվեր, եթե արդեն սկիզբ առած չլիներ Արցախյան շարժումը, սակայն այդ դեպքում՝ առանց Արցախի: Քանի որ շոշափվեց անկախության կարևորագույն թեման, ավելորդ չեմ համարում անդրադարձը մի ուսանելի երկխոսության.

Փարիզ. 1990-ի փետրվար: Հայ համայնքից խնդրել էին լիդերներից մեկի այցելությունը. մեկնեցինք քաղաքական մեկնաբան Հակոբ Հակոբյանի հետ: Հյուրընկալվեցինք (խնայողության նպատակով) Կարպիս և էլիզ Ավետիսյանների հյուրասեր ընտանիքում: Փարիզում լուր ստացա, որ ընտրվել եմ Գերագույն Խորհրդի փոխխոսնակ (այն ժամանակ դա կոչվում էր փոխպրեզիդենտ): Համոզված էի, որ դրանում Աշոտ Մանուչարյանի մատն է խառը, զանգահարեցի ու «լափ թափեցի» գլխին՝ երբեք չեմ գայթակղվել նման հեռանկարներով. անհամբեր սպասում էի Արցախի հարցի լուծմանը, որ անհապաղ վերադառնամ գիտական աշխատանքիս: Ինձ համար անսպասելի վեր ցատկեց ռեյտինգս. Համբարձումի ուղեկցությամբ ելույթ Սորբոնում, հարցազրույց «Յառաջ»-ում, հանդիպում Լիոնի քաղաքագլուխ Միշել Նուարի հետ, ելույթ հայկական «Այբ» ռադիոյով (Հ. Հակոբյանի հետ): Նոր. հաճելի ծանոթություններ, նոր բարեկամներ: Մասնավորապես մինչ օրս է շարունակվում ջերմ ու անկեղծ բարեկամությունը Նժդեհ և Դիանա Ասլանյան չքնաղ զույգի հետ: Ինձ համար, հանձին Նժդեհի, ուսանելի էր ծանոթությունը բիզնեսմենի քաղաքակիրթ տեսակի հետ. բնիկ հայաստանցիներից նման քաղաքակիրթ ու հայրենասեր (Մանթաշյանի տեսակի) առաջին «ծիծեռնակի» կոչմանն առայժմ հավակնում և ուրախացնում է Հրանտ Վարդանյանը, որը մեր շատ ղեկավարներից առավել հստակ է գիտակցում կրթության և գիտության վճռորոշ դերը երկրի ապագայի համար: Ի վերջո այդ հագեցած օրերի համար պետք է խորին շնորհակալություն հայտնեմ Աշոտին և Փարիզում իմ հովանավոր ուղեկիցներ Արմեն Խաչիկյանին, Րաֆֆի Հերմոն Արաքսին և Քրիստիան Տեր-Ստեփանյանին: Անմոռանալի էր ու մեծ պատիվ նվաստիս համար հանդիպումը համընդհանուր պարծանք ու սեր Շառլ Ազնավուրի հետ իր գողտրիկ սրճարանում:

Զանգահարեց ֆիզքիմիկոս Լևոն Տեր-Մինասյանը՝ դաշնակցական հայտնի գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանի որդին. Պարույր Հայրիկյանն ուզում է հանդիպել: Հանդիպեցինք Տեր-Մինասյանի տանը: Դա Պարույրի հետ մեր առաջին անձնական հանդիպումն էր: Խորին ակնածանք էի տածում 17-ամյա բանտային «ստաժով», տոտալիտարիզմի դեմ անկոտրում մարտիկի լուսապսակով այդ մարդու նկատմամբ: Զրույցը ձգվեց մինչև լուսաբաց: Մինչ դրան անցնելը մի փոքր նախաբան-խոստովանու-

թյուն: Անկախ Հայաստան երազել եմ մանկությունից. Ծովից ծով... Գոնե Ազգերի Լիգայի... Լավ, գոնե Բոգդան Գեմբարսկու առաջարկած... Վերջապես, գոնե Ռուսահայքի արևմտյան սահմաններով... Այսօր նայում եմ մեր և Ստեփանակերտի զորահանդեսներին ու հազիվ զսպում հպարտության, հիացմունքի արցունքներս... Միթե՞ դա մերն է... Հասկանում ենք, որ միջին, էլ չասենք գերհզոր պետությունների համեմատ դա «նետ ու աղեղ» է... Հիշում եմ սովետական մի կատակ. «Ինչպիսի՞ն է Ձեր ռոճիկը», «Լավն է, բայց փոքր է»: Սա էլ փոքր է, բայց լավն է...

Սակայն 89–90-ին Աստված էի կանչում, որ ուրվագծվող անկախությունը մի 2–3 տարի ուշանա: Իրոք, պետք չէր խորաթափանց կանխագուշակ լինել տրանսպորտային շրջափակման, ուստի և էներգետիկ «սովի», տնտեսական, հատկապես արդյունաբերական կապերի խզման ուրվականը տեսնելու համար: Մինչդեռ 2–3 տարվա (միամտիս աչեք) «ֆորա» մեզ տալու դեպքում կհասցնեինք ինքնաբավ դառնալ, անցնել սեփական հումքին... Մասնավորապես, եթե անսայինք Ռիժկովի թախանձանքին ու չփակեինք «Նաիրիտը», ապա Մոսկվան կարգելեր երկաթգծի բլոկադան: Խոստովանեմ. 87-ին պաշտպանում էի էկոլոգների պահանջը՝ «Նաիրիտի» վնասակար արտադրամասերը քաղաքից հեռացնելու առաջարկը (գերհարուստ միության համար դա մեծ ծախս չէ): 90-ի սկզբին՝ կոմիտեի հերթական նիստին, զգուշորեն առաջարկեցի հետաձգել նրա փակումը («50 տարի թունավորվել ենք միության համար, 2–3 տարի էլ թունավորվենք մեզ համար»): Պիկետավորներ Խաչիկը և Ալեքսանը ինձ համարյա դավաճան հանեցին: Տանուլ տվի...

Այս ընդարձակ պատասխանը տվեցի Պարույրի «Ինչպե՞ս եմ վերաբերում անկախությանը» ինձ ուղղած նրա հարցին: Նա չթաքցրեց իր հիասթափությունը. «Հանուն կենցաղային, տնտեսական խնդիրների դու պատրաստ ես մի քանի տարով հետաձգել անկախությու՞նը...»: Նախ, հետաձգողը ես չեմ, սակայն վախենում եմ քաղաքական անկախության դիմաց ստանալ հավերժ տնտեսական կախվածություն, որը փաստացի սիմվոլիկ կդարձնի մեր անկախությունը: Չտպավորվեց, ուստի փորձեցի թվերով հիմնավորել միտքս: Առաջարկեցի կատարել պարզ հաշվարկ. «Դիցուք 3.5 միլիոն մեր բնակչության կես միլիոնը ծծկեր երեխաներ են՝ հացի կարիքը չունեն: Ընդունենք

նաև, որ 1 կգ այուրից ստացվում է մեկուկես կգ հաց ու յուրաքանչյուրին կտրվի օրական կես կգ հաց: Ուրեմն հանրապետությանը օրական կպահանջվի մոտ հազար տոննա այուր (հետագայում պարզվեց, որ կոպիտ գնահատականս շատ մոտ է իրականությանը): Ու երկաթգիծը փակ է»... «Կբերենք ինքնաթիռներով», – զարմացրեց նա ինձ: «Պատկերացնու՞մ ես այդ հացի գինը...»: Չազդվեց... Բերեցի երկրորդ փաստարկը. Հրազդանի ՊՇԷԿ-ին անհրաժեշտ ծանր նավթի օրական պահանջը (ցիստերների շարասյուն): «Դա՞ էլ ես ինքնաթիռով բերելու...»: Պարույրն անհողդողդ էր... Անգամ մի քանի տարի անց, Գերագույն Խորհրդում տալով ինձ դրական գնահատական, նշեց՝ «թեև մեր մոտեցումներն անկախության նկատմամբ տարբեր են»: Կարծում էի «հաց» ծաղրանունը կրող գործակալաչ լափը և մութ ու ցուրտ ձմեռները համոզեցին իմ իրավացիությունը... Ավա՜ղ...

Չեմ ուզում պնդել, որ բացարձակ իրավացի եմ... Ի վերջո հացի պրոբլեմը լուծվեց... Թեև մնացյալում իրականությունը, ցավոք, իմ գուշակածից շատ ծանր եղավ... Մինչդեռ իմ պարզ ցանկությունն էր թեթևացնել անցումային շրջանը: Ինքս ինձ բացատրեցի՝ Պարույրի «համալսարանները» դարձրին նրան միջազգային ճանաչման այլախոհ ու քաղաքական գործիչ, սակայն պետականաշինության մեջ... Ավաղ...

Փոխադարձ փոքր հիասթափությունը չխանգարեց մեզ պահպանելու բարեկամական հարաբերությունները, մասնավորապես մեկ ամիս անց Լոս-Անջելեսում հայրենակիցների հետ հանդիպման ժամանակ պաշտպանելու նրան մեղադրական ռեպլիկներից: Աներկբա գիտակցում ենք այդ անձնազոհ մարտիկների լուման երիտասարդության մեջ հայրենասիրության և անկախության ոգու դաստիարակության գործում, որը փայլուն դրսևորվեց շարժման տարիներին:

Առիթից օգտվելով՝ երկու խոսք այդ շրջագայության մասին (մանրամասներն՝ ավելի ուշ, եթե հասցնեմ հաշվետվությունս մինչև 90-ը): Հրավիրվել էի ԱՄՆ «Հայկական Համաժողովի» կողմից՝ մեկ տասնյակ սենատորների հետ հանդիպելու և օգնություն հայցելու առաքելությամբ: Հայրենիքից ինձ ուղեկցող «շքախումբս»... լոկ իմ անձն էր, ֆինանսավորումը՝ միայն տոմսի գինը, գիշերօթիկը՝ Պերճ Հաճյանի տանը: Վերջինս քննադատաբար չափեց ինձ ոտքից գլուխ ու քարշ տվեց խանութ,

որտեղից երկու կոստյում ձեռքներիս՝ հայ դերձակի մոտ. «Գնում ես բանակցե՞ս, թե՞ խայտառակվես»: Վաշինգտոն ուղեկցեցին Պերճի կինը՝ Թամարը, և Լյուսի Դանիելյանը: Չեմ պատկերացնում՝ ինչ կանեի առանց իրենց: Միայն մի պահ. չափից ավելի խանդավառ թուրք լրագրողի՝ «արդյոք ճի՞շտ է, որ դուք պահանջում եք հայկական հողերը մինչև Վորոնեժ» հարցին պատասխանեցի. «Իսկ ինչու՞ մոռացաք Մոսկվան»... Ընդհանուր ծիծաղ: Բրիֆինգից հետո համառորեն փորձում էր հետս նկարվել: Թամարը, արագ կողմնորոշվելով, նախաձեռնությունն իր ձեռքը վերցրեց... Անշուշտ, նկարը չէր ստացվել:

Այնուհետև 2 օր հաջորդական հանդիպումներ 10 սենատորների հետ կիսատ-պռատ անգլերենով... Թշնամուս չեմ ցանկանա: Երախտիքով եմ հիշում շարժումով խանդավառված կանադահայ գործարար (Զորյան ինստիտուտի հովանավոր) Գուրգեն Սարգսյանին, որն իր վրա վերցրեց Կանադա իմ այցելության հոգսը և ուղեկցեց ինձ:

Վերջերս՝ 99-ի սեպտեմբերի 21-ին, ինձ նորից հարցրին անկախության մասին: Հարց տվողը հեռուստագրույցը վարող Ռուբինյան Հակոբն էր: Սկսեցի խոսել ու հանկարծ բռնեցի ինձ այն մտքի վրա, որ կարծես արդարանում եմ...

Այո՛, հուսախաբությունների շարանը, չարքաշ գոյությունը ու Արևմուտքի բանկերից տարեց-տարի խորացող ֆինանսատնտեսական այն կախումը, որի չարագուշակ ստվերը տագնապում էր ինձ Պարույրի հետ զրույցում, ցավոք, նորից է ստիպում ծանր ու թեթև անել, համոզել, որ հանուն անկախության պայքարը շատ հեռու է ավարտված համարվելուց: Փորձում եմ...

Չեմ կրկնում զգայացունց, պաթոսով լի ներբողները. ժամանակի գործածումն արժեզրկում է դրանք, խոսքն առարկայական պետք է լինի: Սկսենք նրանից, որ ռազմա-քաղաքական հարաբերական անկախության (տնտեսականը դեռ շատ է հեռու) շնորհիվ այսօր ունենք կուռ բանակ, որը ֆունկցիոնալ իմաստով իրեն սահմանված պարտականությունները (խաղաղության երաշխիք) կատարող համարյա միակ պետական կառույցն է: Սակայն խոսենք անկախությամբ պայմանավորված ավելի տևական գործոնների մասին: Անժխտելի փաստ է, որ ոչ անկախ (գաղութացված կամ օտար երկրում հայտնված) ազգի նկարագիրը այս կամ այն չափով փոփոխվում է, ավելի հաճախ՝ աղճատվում, ընդ որում տարբեր չափով և ձևով՝ կախված նրան

հյուրընկալած երկրի հասարակական, ազգային և կրոնական հանդուրժողականությունից, տիտղոսային ազգի նիստուկացից և այլն: Տարագիրը ստիպված է հարմարվել դրանց, խուսանավել: Նրա մոտ կարող է զարգանալ ինչպես թերարժեքության, այնպես էլ օտար պետության իշխող էթնոսի հետ հարաբերություններում խաբեության և այլ բարոյական նորմերի խախտման արդարացվածության բարդույթը: Համոզվել ենք, որ Ռուսաստանի, Բաքվի, Իրանի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի կամ Հայաստանաբնակ հայերը տարբեր են բնավորությամբ, կենցաղով, աշխարհընկալմամբ, իսկ մի քանի սերունդ տվյալ երկրում բնակվելու դեպքում՝ նաև արտաքնապես: Այսօրվա հայաստանաբնակ հայը տարբեր կլիներ, եթե Հայաստանը, ասենք, Բագրատունիներից մինչ օրս անկախ մնար: Հակառակը կարելի է ասել օրինակ ռուս ազգի մասին, եթե Ռուսաստանը մինչ օրս մնար թաթարական լծի տակ: Համոզված եմ նաև, որ 2–3 սերունդ քիչ թե շատ նորմալ պայմաններում ապրած ազգը վերականգնում է գեների հիշողության մեջ ննջող իր անխաթար նկարագիրը: Իսրայելն այդ իմաստով եզակի պատմական փորձ է ու, կարծես, հաստատում է մեր պնդումը. այնտեղ ծնված նոր սերնդի հրեան տարբեր է նրա՝ ավանդական դարձած (անարդարացիորեն բոլորին վերագրվող) նկարագրից: Այսօր մեր անկախությանը սպառնացող ամենաաղետալի գործոնը շարունակական արտագաղթն է: Ինքնախաբեություն կլինի մխիթարվել նրանով, որ այն առկա է ԱՊՀ մյուս երկրներում՝ այն, ինչը մարդկային, տարածքային (իր բոլոր բնական բարիքներով) անսպառ ռեսուրսներով ՌԴ-ի կամ Ուկրաինայի համար տհաճ է, փոքրաթիվ ու փոքրաչափ Հայաստանի համար կործանարար է: Ուստի մնում է հուսալ, որ մեր «բարեգութ» ու «հանդուրժող» իշխանավորները, հետևելով շահերին, խալիֆներին ու ցարերին, կիջեցնեն «աջ ու ձախ» տուրքերն այնքան, որ ժողովուրդը ստիպված չլինի ճողոպրել հայրենիքից: Ի վերջո գիտակցեն, որ սղոցում են իրենց հետույքների տակի ճյուղը:

– Ի՞նչ կարծիքի եք արտագաղթի մասին, – քրքրում է վերքս «սադիստ» Հակոբը:

– Չգիտեմ, թե ինչպես է մեր իշխանավորներին հաջողվում գիշերները հանգիստ քնել... Ինձ մոտ չի ստացվում:

Դիմում եմ ժողովրդին.

– Սիրելիներս, եթե կարող եք, մի գնացեք...

Կտրականապես դեմ եմ հուսախաբության ալիքի վրա ծնված «հայը պատրաստ չէ անկախությանը» վիրավորական, պարտվողական եզրահանգման հետ... Պատրաստ չեն պղտոր ջրում ձուկ որսացողները, մեր ժողովուրդը ոչ պակաս է պատրաստ, քան ԱՊՀ մյուս ժողովուրդները: Ավելին...

*Թեզ 4. Համարձակվում եմ պնդել, որ Հայաստանի Հանրապետությունն ԱՊՀ տարածքում կարող էր բոլորից շուտ ոտքի կանգնել կամ, ուրիշ կերպ ասած, բոլորից նվազ չափով ենթարկվել անցումային շրջանի հետ կապված դժվարություններին:*

Իրոք.

ա) միայն Հայաստանի թիկունքին էր կանգնած թվաքանակով մեզ կրկնակի գերազանցող սփյուռք, որը վերջապես հնարավորություն էր ստացել ամեն ինչով անարգել սատարելու հանրապետությանը: Ճիշտ է, նման հարաբերական մեծ սփյուռք ուներ և Լիտվան, սակայն այնտեղ առկա էր այլ պրոբլեմ. բնիկ էթնոսը կազմում էր ամբողջ բնակչության հազիվ կեսը:

բ) գիտության ընդհանուր զարգացմամբ ՀՀ-ն կիսում էր երրորդ-չորրորդ տեղերը Բելոռուսի հետ (ՌԴ-ից և Ուկրաինայից հետո), իսկ գիտական կոչում ունեցող գիտաշխատողների խտությամբ (զբաղված բնակչության 1000 հոգուն՝ 50 գիտաշխատող) առաջինն էր ԽՍՀՄ-ում: Գիտության որոշ ուղղություններ ճանաչված էին համաշխարհային գիտական հասարակության կողմից: 104 գիտօջախ սերտորեն համագործակցել են ԽՍՀՄ գիտական կենտրոնների հետ:

գ) ԽՍՀՄ չափանիշերով հզոր ու բազմաճյուղ արդյունաբերություն, որը տնտեսա-արտադրական սերտ կապերի մեջ էր միության հանրապետությունների հետ:

Եվ վերջապես,

դ) նախաձեռնող ժողովուրդ և այլն...

Լսում եմ առարկություններ. բա Սպիտակի դանթեակա՞նը, բա պատերա՞զմը, բա երկաթուղային բլոկա՞դան... Այո՛, այո՛... Եվ այնուհանդերձ. երկրաշարժին արձագանքեց ու օգնության հասավ ողջ աշխարհը: Վերականգնողական աշխատանքները շատ ավելին առաջ գնացած կլինեին, եթե զիջեինք Ն. Ռիժկովի հորդորներին և միաժամանակ շարունակեինք «Նաիրիտի» աշխատանքը, որի դեպքում Մոսկվան կմեղմացներ բլոկադան, եթե որոշ անաստվածներ չտաքացնեին իրենց թաքերը հայրենա-

կիցների դժբախտությամբ, եթե սեյսմիկայի տեսակետից ճիշտ ընտրվեր Գյումրիի նոր թաղամասերի տարածքը, եթե տուժածներին ուղարկվող մթերքը և ապրանքները չհայտնվեին միության քաղաքների շուկաներում, եթե ավելի ուշ չփոշիացվեր արդյունաբերության և գյուղատնտեսության զինանոցը և այլն...

Այո՛, պատերազմ... Եվ իսկայական միջոցների պահանջ՝ բանակի ստեղծման, նրա սպառազինման, կռիվը վարելու համար: Դրանք հայթայթելիս անխուսափելի են ոչ օրինական ուղիները, անգամ՝ ուժի կիրառումը: Ցավոք, պատերազմով հարկադրված այս անցանկալի քարքերը պահպանվեցին նաև պատերազմից հետո և ուղղվեցին անձնա- և նյութապաշտական նպատակների, խաթարեցին հաղթանակով ձեռք բերված համընդհանուր հոգեբարոյական վերելքը: Չմոռանանք, որ այդ ծանր փորձության ընթացքում մեզ կրկին սատար էին սփյուռքը և եկեղեցին:

Ինչ վերաբերում է երկաթուղային շրջափակմանը, ապա այն, անշուշտ, ոչ լիակատար, բայց հաղթահարվեց Իրանի հետ ցամաքային ուղիների բացումով և ՌԴ-ի հետ՝ ծովային- և ավտոտրանսպորտով:

Նորից եմ պնդում. չնայած այդ բոլոր կորուստներին և փորձություններին՝ Հայաստանը պարտավոր էր բոլորից շուտ «ուշքի գալ», որովհետև վերը թվարկած բարենպաստ գործոնների առկայությամբ այդ փոքր (տարածքով ամենափոքր) հանրապետության 3 միլիոնի թիկունքին կանգնած էր իր վերգտած անկախ հայրենիքով խանդավառված 6 միլիոնանոց սփյուռք, որը հենց սկզբից ապացուցեց բոլոր խնդիրներում մեզ օգնության գալու պատրաստակամությունը:

Իսկ ի՞նչ արեցինք մենք. մեր ո՞ր քաղաքական կամ տնտեսական «սխրագործությունից» սկսենք հոգեմաշ թվարկումը... Գուցե չարժե, շատ ենք ասել, գրել, ցնցվել, զայրացել... Լկտի ու բացահայտ շորթամոլությամբ ու անմաքուր գործարքներով հուսախաբեցինք և հիասթափեցրինք սփյուռքի և օտարազգի գործարարներին, հալածեցինք սեփական ձեռներեցներին... Հեռացան «յախա թափ տալով», երեսը շրջեցին ավետյաց երկրից:

Արդյունքը՝ «տանիքային» առևտրով ուռճացած օլիգարխներ, սպիտակ եղեռն (մասնավորապես՝ գիտական ներուժի), սոցիալական աղետ: Բերեմ ինձ հետ առնչված միայն մի դեպք: 90-ի գարնանն ինձ դիմեց ֆրանսիական ընկերության հայազգի ներ-

կայացուցիչ (ազգանունը չեմ ասում, քանզի չգիտեմ՝ արդյո՞ք դա նրան դուր կգա): Առաջարկեց ծայներիզների արտադրություն հիմնել Հայաստանում, թեև դրա հայտը ներկայացրել էր ՌԴ քաղաքներից մեկը: Մինիստրների խորհրդի նախագահ Վլադիմիր Մարգարյանի հետ կարճ բանակցություններից հետո կնքվեց պայմանագիր և մուծվեց նախնական 1.5 մլն դոլարը (ընդհանուր արժեքը, կարծեմ, 5 միլիոնի կարգի էր): 90-ի ամառվա իշխանափոխությունից հետո գործարքն անցավ «մեծ ծովակալ» Եսայի Տեր-Ստեփանյանի տնօրինությանը ու դոփեց տեղում: Վարչապետը՝ Վազգեն Մանուկյանը, դիմացավ իմ կատաղի գրոհներին. «ծովակալը» համոզել էր, որ գործարքը վտանգավոր է: Այն տապալվեց... Գուցե ծախողման դառնությունը մեղմացնելու համար ի վերջո կհամոզեի ինձ, որ «ծովակալն» իրավացի է, եթե... Մի քանի տարի անց, երբ «ծովակալն» արդեն ճողոպրել էր հայրենիքից, Փարիզում հանդիպեցի մեր հայ բարեկամին: Ընկերությունից հեռացվել էր գործարքը տապալելու համար: Հետո խոստովանեց, որ չէր ցանկացել ինձ վրդովեցնել ու չէր ասել, որ «ծովակալը» պահանջել էր 150 հազար դոլար՝ գործարքին ընթացք տալու համար... Չար լեզուները պնդում են, որ այդ «սկզբունքը» գործում է մինչ օրս:

Տհաճությամբ պետք է անդրադառնամ մեր ծանր իրադրությամբ պայմանավորված, բայց և այնպես մեր ազգային արժանապատվությանը ոչ հարիր մի երևույթի: Խոսքս ՌԴ-Բելառուս-Հայաստան (ՌԲՀ) քաղաքական արշավի մասին է: Որքան գիտեմ, նախաձեռնողը Թելման Գդլյանն էր. հավանաբար հույս ուներ այդ ակցիայով իր ռեյտինգը բարձրացնել Դումայի գալիք ընտրություններում: Գաղափարը խանդավառեց իր վիճակից ու «հոգատար հայրերից» զզված ժողովրդին ու քաղաքական որոշ ուժերի. ի վերջո, մի կողմից՝ կոմունիստները, մյուս կողմից՝ ՌԲՀ հասարակական կազմակերպությունը, ծավալեցին խանդոտ մրցակցություն՝ ով ավելի շատ ստորագրություններ կհավաքի այդ կոչի օգտին: Հենց սկզբից հստակեցնեմ մրցակցող լիդերների նպատակները. եթե կոմկուսը, Զյուգանովի գլխավորությամբ, հստակ գիտակցելով ԽՍՀՄ-ի փլուզման պատմական անշրջելիությունը, այդուհանդերձ, օգտվելով ԱՊՀ-ում ստեղծված սոցիալական ոչ բարվոք վիճակից, ծածանում է ԽՍՀՄ-ի վերականգնանացման պատրանք-դրոշը, առաջին հերթին հետապնդում է իր կուսակցության համբավի բարձրացման խնդիրը, ապա

քաղաքականապես հմտացած Մանուչարյանն ու ՌԲՅ տղաները առաջին հերթին ջանում են ելք գտնել երկրում ստեղծված ծանր վիճակից: Անշուշտ, նրանց փաստարկները պարզունակ չեն. խոսքը պետական անկախությունից հրաժարվելու մասին չէր, հավասար իրավունքներով պետությունների կոնֆեդերացիա էր ենթադրվում: Դրանում էին նրանք տեսնում կոռումպացված իշխանավորների և չինովնիկների խրախճանքը զսպելու ուղին և այլն:

Ցավոք, կեղեքիչներից ազատվելու հույսով խանդավառված ժողովուրդն առանձնապես չմտորեց ապագա կարգավիճակի շուրջը և ընկալեց այն որպես միացում, 88-ի «միացումի» նմանակը, լինի դա ՌԴ-ի ավտոնոմիա, մարզ, թե պարզ տարրալուծում... Միայն թե միանանք: Խայտառակությունը կատարյալ դարձավ, երբ պարզվեց, որ միացման կողմնակիցների թիվը քիչ էր մնում գերազանցի բնակչության թվաքանակին: Եվ դա անկախությունը դարերով փափագած և այն մեծ արյունով հենց նոր ձեռք բերած ժողովուրդն է: Ու թեև մտերիմ բարեկամներ ենք Աշոտի հետ, սակայն («Պլատոնն իմ բարեկամն է, բայց...») հենց սկզբից կտրուկ հակադրվեցի այդ գաղափարին: Վերաբերմունքս հրապարակեցի «Իրավունք»-ի 97 թ. N 22-ում «Ծովափ մեկնելիս լողազգեստով օդանավ մի մտեք» վերնագրի տակ (տե՛ս Հավելված էջ 261), ինչպես և "Голос Армении"-ում (վերջինումս՝ ծռինչով): Կարճ շարադրեմ տեսակետս. նախ հապճեպ ու վաղաժամ էր՝ դեռ բուն ՌԴ-ում ոչ ոք չէր պատկերացնում, թե ինչ լուծում կգտնի ՌԴ-Բելառուս կասկածելի միությունը: Կասկած հայտնեցի դրա երբևէ կայացման առթիվ, որովհետև շատ են տարբեր կողմերի ակնկալվող նպատակները: Լուկաշենկոն հետապնդում է ակնհայտ տնտեսական շահ (գազի պարտքերի ներում և այլն), մինչդեռ Ռուսաստանը Լուկաշենկոյի նախաձեռնությանն արձագանքեց կորցրած յուղոտ պատառը՝ Ուկրաինան այդ միության մեջ ներքաշելու բաղձանքով: Պատահական չէ Լուկաշենկոյին «Սլավոնական հողերի հավաքողի» պատմական առաքելությունը վերագրելը...

Սակայն Լուկաշենկոն այն լիդերը և այն անձը չէր, որը կհանդուրժեր Բելառուսի և իր անձնական անկախության մազաչափ սահմանափակումը: Ու երբ տեսավ այդ վտանգը Մոսկվայի առաջարկած տարբերակներում, նահանջի «շեփորը» հնչեցրեց: Չեմ բացառում (փաստագուրկ ենթադրություններ են),

որ նա փայփայել էր ամբիցիոզ ակնկալիքներ, որոնք ի դերև եղան Պուտինի հայտնվելով: Այս անորոշ, ծգծգվող երկխոսության պայմաններում առանց ՌԴ ղեկավարության (Զյուգանովը հաշիվ չէ) կարծիքը իմանալու Հայաստանի «մեջ ընկնելը» անկոչ հյուրի էֆեկտն ունեցավ: Միության մեջ ընդունվելու մեր թախանձանքներին և ՌԴ-ի «դոշին» փարվելու համառորեն կրկնվող մեր փորձերին ի պատասխան ՌԴ-ն «խոսքը կտուրն է գցում» ու փորձում հանգստացնել ու զսպել անհամբեր «կամավորին»: Ի վերջո դեսպանը «բաց տեքստով» ստիպված եղավ հասկացնել, որ պահը չէ...

Նվաստ վիճակ...

Եվ իրոք, ինչու՞ իր կարիքավորների ու թոշակառուների իսկա բանակի հոգսերը չլուծած ՌԴ-ն իր վրա վերցնի մեր սովածների հոգսը... Համուն Բելառուսից տասնապատիկ փոքր մեր «քարաստանի՞»... Իհարկե ո՛չ: Մենք ՌԴ-ին միջազգային ասպարեզում պետք ենք, թեկուզ սիմվոլիկ, բայց իբրև անկախ պետություն: Եվ ոչինչ չի խանգարում ՌԴ-ի հետ քաղաքական, տնտեսական, մշակութային կամ ռազմական կապերի սերտացմանը: Մնում է զարմանալ, որ կոմկուսի մեր ղեկավարները այսօր էլ համառորեն առաջ են քաշում այդ գաղափարը:

«Ինքն իրեն հարգող ժողովուրդը իր ինքնապաշտպանության հույսը դնում է նախ ի՛ր բազուկի, ի՛ր զենքի վրայ: Իր ուժերից զատ ամեն ինչի ապավինող ժողովուրդն արժանի չէ՝ անկախ հայրենիք ունենալու, ազատ ապրելու» (Գարեգին Նժդեհ):

Հաշվետվությանս երկարած ներածականի գլխավոր խնդիրը լուծած կհամարեմ, եթե կարողացել եմ ընթերցողիս համոզել, որ Արցախյան ազատագրական շարժումը պատմականորեն անխուսափելի էր, անհրաժեշտություն էր, որ այն սկսվեց միակ ճիշտ պահին, որ այն համազգային էր, արդար, վեհ, մաքուր, հերոսական, հետևաբար և հաղթական: Վշտացնողը, սակայն նաև բնականը, այն տիղմն է, որը բարձրացվեց հատակից ժողովրդական անասելի վարարումով... ու պղտորեց նրա զուլալ ջրերը...

Անբնական է դրան հաջորդածը... Իրոք, բնական կլիներ, եթե հեղեղի հանդարտվելով տիղմը նստեր, և ջուրը կրկին զուլալվեր: Դա տեղի չունեցավ: Ինչու՞... Վերստին, չհավակնելով բացարձակ ճշմարտության, փորձեմ քննարկել կամա և ակա-

մա այն բացթողումները և սխալները, որոնք, ըստ իս, բերեցին այս անանց ճգնաժամին:

*Բացթողումներ:* Եթե ընտրենք քննարկման ժամանակագրական կարգը, ապա բացթողումների առաջնեկությունը կտայի, պայմանական անվանենք «բաց դռներ», անփութությանը: Խոսքս այն պահի մասին է, երբ ՀՀՇ-ն համընդհանուր շարժումից կազմավորվեց որպես կուսակցություն: Տղաներին խորհուրդ տվեցի անմիջապես մշակել պահանջները, որոնց պետք է բավարարի նրա շարքերն անցնողը: Ցավոք, նման ֆիլտր չստեղծվեց, ու քանի որ ՀՀՇ-ն դարձել էր լուրջ քաղաքական ուժ՝ նրա մեջ առանց նախապայմանի ներխուժեցին ովքեր կամեցան, բնականաբար՝ նաև պատեհապաշտները: Ու քանի որ վերջիններս ծանրաբեռնված չեն բարոյական ներքին որևէ արգելակով, հետագայում էլ զսպաշապիկ հագցնող չգտնվեց, ապա, գործի դնելով արմունկները, նրանք հայտնվեցին վերին «շերտերում», պղտորեցին ու պարտադրեցին իրենց ոճը ողջ կազմակերպությանը: Ինքս, ունենալով կայուն հակակրանք ինձ ծանոթ միակ կոմունիստական կուսակցության նկատմամբ, գերադասեցի չդառնալ որևէ մեկի անդամ: Դրան նպաստեց նաև ցուցադրական այն անպարկեշտությունը, որը խաղարկվեց ՀՀՇ առաջին համագումարում Վլադիմիր Մարգարյանի նկատմամբ:

Որոշակի բացասական հետևանք ունեցավ կոմիտեի «չկա մշտական թշնամի, չկա մշտական բարեկամ» կարգախոսը: Հիմա դժվարանում եմ ճշտել դրա բուն հեղինակին: Անհանգստացնող էր Ռուսաստանի ու Թուրքիայի հանդեպ դրա մեջ պարունակվող թափանցիկ ակնարկը: Փորձեցի կատակով «պատվանդանից» ցած իջեցնել մտքի այդ «հանճարեղ պայծառացումը», ասելով, որ ամեն մի պոռնիկ ղեկավարվում է նման կարգախոսով՝ «չկա մշտական սիրեկան...»: Ցավոք, Լևոնը, դառնալով ԳԽ նախագահ, կառչեց այդ կարգախոսից: Կասկածում եմ, թեև չեմ կարող վստահ պնդել (հուսով եմ դրա հստակ պատասխանը մի օր կտա Աշոտ Մանուչարյանը), որ հարևանների հետ վարվող քաղաքականության մեջ այդ կարգախոսի հայտնվելը սադրեց “кольцо” արշավը և Շահումյանի կորուստը: Դա սթափեցրեց, թեև Թուրքիայի հետ սիրաշահելու չափ «նրբանկատ» քաղաքականությունը շարունակվեց մինչև Լևոնի հեռանալը:

Դաժան հարված գյուղատնտեսությանը հասցվեց հողերի

(նաև՝ անասունների և տեխնիկայի) հապճեպ, չնախապատրաստված սեփականացմամբ: Հետևանքները գիտենք. ցրվեց, փոշիացավ տեխնիկան, մոռթվեց խոշոր եղջյուրավորների ողջ գլխաքանակը, կտրուկ թանկացան ջուրը, քիմիական պարարտանյութերը, հողերը մնացին անմշակ...

«Ասա Վազգենին (Մանուկյան), – հորդորում էր ինձ ԱՄՆ-ի պրեզիդենտների անփոփոխ խորհրդական (ինչպես նաև Եվրոպայի որոշ երկրներում) Լի Գարոյանը, – թող չշտապի. կոլխոզները եզակի հնարավորություն են տալիս գյուղատնտեսությունը ոչ միայն պահպանելու, այլև մեծ թափով զարգացնելու... Պարզապես պետք է նորմալ հիմքերի վրա դնել պետություն-կոլխոզ տնտեսական հարաբերությունները: Սովետներում դրանք աղավաղված էին, անբնական»: Հնչեցրի դա նաև մամուլում... Չօգնեց: Հասկանում եմ տղաների ոգևորությունը. շատ էինք ուզում հողը գյուղացուն վերադարձնելու գործում ևս առաջինը լինել: Չար մտադրություն չկար, կա չար արդյունք...

*Զանցանքներ և հանցանքներ:* Իսկ ահա էներգակիրների գողավաճառքը միամիտների սխալ չէր՝ ժողովրդի ոխերիմ թշնամու մտադրված հանցանք, ուղեկցված վտանգավոր վկայի՝ Ղանդիլյանի («ձեռի հետ» նաև երկրաշարժի օրերին հայրենիքին օգնության եկած ինժեներ-գեներալ Իսահակյանի) սպանությամբ: Դրանով մինչ օրս չընդհատվող ազգակործան հոսքային արտագաղթի սկիզբը դրվեց: Իսկ հանցագործը ճիզվիտաբար փորձում է հիմնավորել արտագաղթի դրական գործոն լինելը...

ԱՊՀ երկրների հետ արտադրական կապերի խզումից հետո հանրապետության արդյունաբերությանը վերջին խորտակիչ հարվածը հասցրեց ՌԴ-ից ընդօրինակած սեփականաշնորհումը: Հաստոցների պարկը ջարդոնի անվան տակ չվեց արտասահման: Արտադրական ձեռնարկությունները դարձան կազինոներ (գիշերային հաճույքներով), առևտրական սրահներ, խաղատներ... Չկրկնենք, թե ինչ էին առաջին հերթին ակնկալում սփյուռքի գործարարից: Մի ճակատագրական բացթողում (ավելի ճիշտ՝ մտադրված խոչընդոտում նրա կայացմանը), ինչը, իմ համոզմամբ, կանխորոշեց իրավական պետության ստեղծման գործում մեր կրած ցավալի պարտությունը: Խոսքը տարբեր բնույթի համակարգերի հավասարակշռությունը (կայունությունը) ապահովող հակակշիռների համընդհանուր սկզբունքի կամ մեխանիզմի մասին է: Լինի դա տիեզերական (ասենք՝ արեգակ-

նային), կենդանական, բուսական, հասարակական (ցեղախումբ, համայնք, կուսակցություն, պետություն), թե բարդ տեխնիկական դինամիկ համակարգ, յուրաքանչյուրում նրա հավասարակշռությունը վտանգող արտաքին ուժի հայտնվելուն պես «գլուխ է բարձրացնում» արտաքին գործոնի բնույթից կախված հակաուժ՝ վերադարձնելով համակարգը հավասարակշռության վիճակին: Հակակշռող մեխանիզմի բացակայության դեպքում ամենափոքր խոտորումը (ֆլուկտուացիան) անդառնալի հանում է համակարգը կայուն վիճակից, ընդհուպ մինչև նրա ավերվելը (հողմացրիվ լինելը): Նույնը տեղի կունենա, եթե արտաքին ուժն անցնի կրիտիկական սահմանը, որից հետո հակաուժը անզոր է վերադարձնել համակարգը կայուն վիճակին: Ինժեներներին այդ մեխանիզմը ծանոթ է «հետադարձ բացասական կապ» անվան տակ: Բոլորին ծանոթ է կենդանական պոպուլյացիայի և էկոլոգիական կենսախորշի փոխհարաբերակցությունը: Փորձը ցույց է տալիս, որ հակակշիռները վնասող ուժը ի վերջո տուժում է հենց այդ գործոնի կաթվածահար լինելու պատճառով: Հիշենք, թե ինչ հետևանքների բերեց չինացիների «խաչակրաց արշավանքը» ճնճղուկների դեմ՝ խախտվեց հավասարակշռությունը թռչունների ու վնասատուների միջև. ստիպված եղան վերստին զբաղվել «ծտաբուծությամբ»: Մեկ այլ օրինակ. վերացավ նախիջևանյան հայ համայնքը (վանող ուժն անցավ հայերի դիմադրելիության կրիտիկական սահմանը, իսկ Հայաստանն ակտիվորեն չդիմադրեց): Էլ չե՛մ ասում Արևմտյան Հայաստանի մասին: Մահանում են և աշխարհասփյուռ մեր մյուս համայնքները, թեև վանող ուժն այնտեղ այլ բնույթի է, թշնամական ու վայրագ չէ: Թող ինձ ներվի այդ հանրակրթական նախաբանը. այլապես կդժվարանայի արդարացնել անկախացման օրից կրկներգ դարձած կոչերս ու անհանգստությունս հակակշիռների մեխանիզմի հաստատման և դրան խոչընդոտելու առթիվ:

Իրոք, բնական, կայուն համակարգերն առաջացել են տարերայնորեն, կենդանական աշխարհում՝ էվոլյուցիոն ճանապարհով, մինչդեռ մարդկային հասարակարգը պատմական ծանր, դարեր տևած արյունոտ պայքարում մշակել է (ոչ էական տարբերակումներով) կայուն պետության ստրուկտուրա, որում հակակշիռների մեխանիզմն իրագործվում է գործադիր, օրենսդիր և դատաիրավական մարմինների փոխներգործությամբ, ինչպես նաև (անխուսափելի հապաղումով) համաժողովրդական

ընտրություններով: 1990 թվի ամռանը (ինչպես և հաջորդ տարվա նախագահական) առայժմ միակ, համեմատաբար մաքուր, ժողովրդի կամքն արտահայտած ընտրություններով կազմավորված Գերագույն խորհուրդը (թեև պատգամավորների մի մասն անցել էին ավելի շուտ շարժմանն անխուսափելիորեն ուղեկցող հուզական ալիքի, քան թե գործարարական հատկությունների շնորհիվ) անհանգստանալու առիթ չէր տալիս. կար և՛ պարկեշտ ընդդիմախոսություն, և՛ ընդդիմություն: Մի հետաքրքիր առանձնահատկություն ևս. ոչ մի «Փայլակի» կամ անազնիվ գործարքով հարստացած կիսագրագետ լպիրշի մտքով չէր անցել պատգամավորական մանդատ «ծեռք գցելու» փորձ անել: Հետագայում ԼՏՊ-եզորյան տանդեմի ջանքերով «կատարելագործված» ընտրական օրենքը հնարավորություն ընձեռեց ղեկավարվել ու «ինչո՞վ եմ նրանից պակաս» բանաձևով (փոխարենը իրեն հարց տա, թե ինչո՞վ եմ մյուսից ավել), մասնակցել, խցկվել, ինչի հետևանքով ունեցանք մեկը մյուսից «ընտիր» խորհրդարաններ: Սակայն, կրկնում եմ, առաջին 2–3 տարին ժողովրդավարացմանը նպաստող մթնոլորտը հուսադրող էր: Պետք է ասեմ, որ և՛ նախագահի, և՛ վարչապետի կողմից նշանակումներում անհաջողների կողքին (սխալվելն անխուսափելի է) կային միանգամայն պարկեշտներն ու գործիմացները: Սակայն հետզհետե նրանք դուրս մղվեցին «ակտիվների» կողմից: Նույն 90-ին էր, Աշոտ Մանուչարյանն ինձ մոտ ուղարկեց ԳԽ-ին կից ինֆորմացիոն-անալիտիկ ծառայության ստեղծման գաղափարով տարված մի քանի կիրթ ու գիտակ երիտասարդների: Շատ տեղին էր ու ոգևորիչ: «Իրոք, – խորհում էի ես, – միանգամայն նոր վիճակում հայտնված երկրի և կառավարման փորձ չունեցող ղեկավարների առկայությամբ նման ծառայությունը, վերլուծելով երկրի ներսից և արտերկրից եկող ինֆորմացիան, կմատակարարի ԳԽ-ին ներքին ու արտաքին քաղաքականությանը վերաբերող օպտիմալ քայլերի հանձնարարականով ու կհանի նրան մեկ հերթական քայլը տեսնող սկսնակ շախմատիստի վիճակից (սիտուացիոն քաղաքականություն). այն կկատարի վերը նշված բացասական կապի ֆունկցիան՝ նպաստելով քարոզածս հակակշիռների մեխանիզմի կայացմանը, այն էլ ժամանակակից ամենահզոր զենքի՝ ինֆորմացիայի ներգրավմամբ: Մշակեցինք ԳԽ-ին կից ապագա այդ կենտրոնի մանրամասն, ֆունկցիոնալ բլոկ-սխեման, աշխատակազմը, միջոցները (այդ

թվում և ինքնաֆինանսավորման հնարավորությունները), ներկայացրինք Գխ ու... շռինդով տապալվեցինք: Ինձ համար անսպասելի դեմ դուրս եկան Վանոն ու Բաղդասարյան Ալբերտը: Որքանով ճիշտ է, չգիտեմ, ինձ հասկացրին, որ ցանկալի չէր իմ համառ ճշտախոսությունը: Ափսոսելով գաղափարը՝ հրաժարվեցի կենտրոնը ղեկավարելուց: Այն հանձնվեց ֆիզիկոս Ալեքսանդր Աղաբեկյանին: Նրան առաջարկեցին համեստացնել կառույցն այն աստիճան, որ ի վերջո նա էլ հրաժարվեց, և մենք ստացանք զավեշտային լուծում. գործը հանձնվեց չգիտեմ ինչով Լևոնի վստահությունը և հարգանքը շահած Ժ. Լիպարիտյանին (90-ին Բոստոնում իր հետ հանդիպումից առանձնապես չտպավորվեցի): Վերջինս գտավ խնդրի զավեշտ-լուծումը. մի երկու երեխա նստեցրեց ռադիոընդունիչի մոտ, որպեսզի հաջորդ օրը պատգամավորներին հրամցնեն տարբեր ծայների ասեկոսեները: Այդ «հանճարեղ» լուծումով ավարտվեց կենտրոնի տարեգրությունը, իսկ տղաները ցրվեցին աշխարհով մեկ: Սակայն փայլուն դիվանագիտական կարիերա արեց ՅՂԾ գրասենյակում լրագրային կտրածոները պատի թերթին կպցնող Ա. Արզումանյանը:

Եթե նախորդ քայլերի մեծ մասը կարելի է փորձի պակասի կամ սեփական ուժերի գերագնահատմանը վերագրել, ապա էներգակիրների գործը զազրելի ոճիր էր ողջ բնակչության դեմ, որը «պատիվ կբերեր» մեր ազգի ոխերիմ թշնամուն: Օրինապահ երկրում հանցնագործները կհայտնվեին կախաղանին: Մեր նախագահը մնաց «անվրդով»՝ դրանով իսկ կասկածներ հարուցելով այդ գործում իր դերի վերաբերյալ: Ինչ վերաբերում է «Արմենթելի» հետ նրա առնչությանը, ապա տարբեր մակարդակներում արվող ակնարկներն ավելի քան թափանցիկ են:

Սակայն պետականության կայացման (ավելի ճիշտ՝ չկայացման) վրա ամենածանր, ես կասեի ճակատագրական ազդեցությունն ունեցավ նախագահի եսակենտրոն նկրտումներով պայմանավորված կերպարանափոխությունը՝ գերակայող նպատակների փոխատեղումը: Ինչպես արդեն հիշատակել էինք, գերակայող դարձավ աթոռակառչությունը, ինչը պայմանավորեց կադրային համապատասխան քաղաքականության և խորհրդարաններում կառուցողական ընդդիմության խարխլումը: Առաջին հերթին «վերամշակման» են ենթարկվում արտադրության ներկայացուցիչները. պաշտոն կորցնելու սպառնալիքով կամ ստա-

նալու գայթակղությամբ կոտրեցին մի մասի ոգին, ու մի օր էլ համոզվեցինք, որ այլևս չենք կարող կասեցնել անցանկալի կամ, անգամ, վտանգավոր որոշումը: Առաջին օրենսդրական մոլախոտը, որը բերք տվեց այս եղանակով մշակված օրենսդրական դաշտում, եգորյանի հեղինակած ընտրական աղետալի օրենքն էր: Արատավոր սահմանադրությանը ժողովրդի շպրտած «ոչ»-ը համատարած զեղծարարությամբ դարձավ «այո»: Ժողովրդի ձեռքից խլեցին իշխանության նկատմամբ հակակշռի կիրառման իր միակ հնարավորությունը, ինչը ստիպեց նրան 96-ի սեպտեմբերին անցնել կոշտ դիմակայության ու ենթարկվել «պինոչետյան» ճնշամիջոցների: Ու թեև Լևոն Տեր-Պետրոսյանին չհաջողվեց մարսել Վազգեն Սարգսյանի ծանր մահակով ձեռք բերած «հաղթանակը» և ի վերջո իջավ բիրտ ուժով զբաղեցրած աթոռից, ժողովրդի մեջ կարծես կոտրվեց իր իրավունքների համար ակտիվ պայքարի ոգին: Դա է վկայում ընտրական համակարգի կաթվածահար ու հիվանդ վիճակը: Չափազանց վտանգավոր միտում է, և, *եթե այն չհաղթահարվի, քաղաքակիրթ ապագան կդառնա սին երազանք*... Չէի ուզենա խոսքս ավարտել մեր բացթողումների ու զանցանքների թվարկմամբ: Փորձենք սեղմագրել շարժմամբ ձեռք բերված կարևորագույն նվաճումները:

*Նվաճումներ:* Անշուշտ՝ *ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ*... Դարերով երազած... Դեռ թույլ, դողդողացող ոտքերի վրա, աջ ու ձախ լարված հայացքներ գցող, տնտեսապես թույլ ու կախյալ, սակայն աշխարհի պետությունների ընտանիքում ներկայացված ու ճանաչված Հայաստան ու դեռ չճանաչված ԼՂ Հանրապետություն:

Եվ մեզանից ու միայն մեզանից (իշխանավորից մինչև շարքային քաղաքացին ու դպրոցականը) է կախված՝ կամրանա՞ն արդյոք նրա ոտքերը, կխրոխտանա՞ ձայնը, կհանդարտվի՞ հայացքը, կբարելավվի՞ սոցիալական վիճակը, և դեպի հայրենիք տանող հետ ճամփան կբռնե՞ն նրան կամա ու ակամա լքած զավակները:

Այստեղ է, որ ճակատագրական կարևորություն է ստանում համայն ժողովրդին ուղղված մի պահանջ-պարտականություն. չհուսահատվել և մի կողմ չքաշվել... Պարզ գիտակցել, որ ո՛չ գողն ու կաշառակերը կհագենան, ո՛չ ստախոսը կապաշխարի, ո՛չ էլ ամբարտավանը կհամեստանա... Ժողովուրդը պետք է

պայքարի արդար ընտրություններով արժանիին ընտրելու իր սահմանադրական իրավունքի համար: Դա է միակ ելքը…

*Ածանցյալ նվաճումներ:* Որպես անկախ պետություն վերջապես հնարավորություն ստացանք միջազգային ամենաբարձր ամբիոններից խզելու Եղեռնի շուրջ եղած 80-ամյա անբարո լռությունը, խախտելու ամբարտավան բարբարոսի անխռով նիրհը և աշխարհի հզորներին հիշեցնելու իրենց անանց մեղքը:

Սահմանադրությամբ իրեն պատկանող իրավունքները և պարտականությունները ինչպես պետական ու հասարակական կառույցներում, այնպես էլ կրթական համակարգում, ստանձնեց ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ: Այսօր անգամ մտավորականների երեխաները, հաճախելով հայկական դպրոց, այլ լեզուների կողքին, «ավա՞ղ», «ստիպված են» սովորել նաև մայրենին: Այսօրվա կյանքը թելադրում է մի քանի ամենատարածված լեզուների իմացություն, ինչը նվազեցնում է փոքրաթիվ ժողովրդի մայրենիի խլացման, խեղճացման այն վտանգը, որը, ինչպես համոզվեցինք, առկա է մեկ արտոնյալ օտար լեզվի պարագայում:

Թուլլատրվել է մասնավոր ձեռներեցությունը, որը չինովնիկության հարստահարող «բեսպրեդելը» հաղթահարելու դեպքում կճաղկեցնի երկիրը:

Գիտության ոլորտում. երկաթյա վարագույրի, ինչպես նաև գաղափարական կաղապարվածության վերացումը հնարավորություն է ընձեռել ԱՊՀ գիտնականներին անմիջական կոնտակտների մեջ մտնելու և համագործակցելու արտասահմանի գործընկերների հետ, մասնակցել միջազգային ֆորումներին, մեկնելու գործուղումների, իսկ բազմաթիվ դրամաշնորհների ի հայտ գալը փրկեց մեր կառավարության «հոգատարությամբ» հոգևարքային վիճակում հայտնված գիտությունը վախճանից: Ավելին, ճշգրիտ գիտությունների ներկայացուցիչները (ճիշտ է, առայժմ հատկապես հաջողակ տեսաբանները) նյութական բարեկեցության առումով դուրս են եկել նվաստ վիճակից: Ցավոք, այդ թվարկումով սահմանափակվում են գիտությանը նպաստող գործոնները: Արտադրության փլուզումը ծանր հարված հասցրեց գիտությանը ԱՊՀ ողջ տարածքում և առավել չափով` Հայաստանում: Գիտությունը զրկվեց իր հիմնական պատվիրատուից` արտադրությունից: Մնաց բյուջետային ֆինանսավորումը, որը տարեց տարի նվազեց` հասցնելով գիտական համակարգը հոգևարքային վիճակի, խարխլելով ու աշխարհով մեկ սփռելով

մեր միակ ուժն ու հարստությունը՝ մտավոր ներուժը: Մեղքի իր բաժինն ունի մեր էլիտար մտավորականությունը կառավարությանը ուղղված իր շեշտավրեպ թախանձանքներով՝ արտադրության արագացված վերականգնման փոխարեն ռոճիկի բարձրացում աղերսելով: Թեև պարզից պարզ է, որ դոկտորի կամ թեկնածուի համար 10 հազար դրամ ռոճիկի ավելացումն անգամ 100%-ով, խնդիրը չի լուծում: Համեմատաբար ծանր վիճակում են մնում հայագիտությունը, պատմագիտությունը և այլք, որոնց հիմնական պատվիրատուն Հայաստանն է, և այստեղ է, որ առաջին հերթին պետությունը պիտի սատար կանգնի: 98-ին և 99-ին միջազգային կոնֆերանսներում (Թեհրան), ինչպես նաև ԳԱ նախագահությունում (նաև ԶԼՄ-ներում) զեկուցած վերլուծականս ԱՊՀ-ում գիտության վիճակի և նրա էվոլյուցիայի մասին ոչինչ չփոխեց մեր դիրքորոշման մեջ: Հույսս չեմ կորցնում, որ որոշ կատեգորիայի ընթերցողների համար նա հետաքրքիր կլինի, ուստի զետեղում եմ այն Հավելվածում (էջ 263):

Ազատագրվել է մշակույթը. պարզապես այստեղ հրատապ խնդիր է «պղտոր ալիքի» հաղթահարումը: Դրա քաղաքակիրթ ուղին ոչ այնքան ցենզուրան է, որքան բարձր արվեստի նվաճումներով նրան հակադրվելը:

Սահմանափակվենք այդքանով, թեև նոր հնարավորությունների ցուցակը կարելի է ընդարձակել:

# ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ը

## ... Ա Ն Ե Ծ Ք ...

Մեկ ամիս անց...

Անանց տրտմություն և դիակապտություն հիշեցնող աքռակռիվ... Աչքերում սռված փայլ և աշխուժություն ՀՀՇ-ի ճամբարում...

Զզվելի է... Եվ՝ գրելու ոչ մի ցանկություն...

Եվս մեկ ամիս...

*Աղետի վերաբերյալ:* Իշխանական կառույցներից և կուսակցություններից հեռու եմ, շփումներ չունեմ: Եզրակացություններս (ավելի շուտ ենթադրություններս) շարքային քաղաքացուն հասու դիտարկումների վրա են հիմնված: Կկրկնեմ այն, ինչ արդեն հնչեցրել եմ: Ըստ իս, Նաիրի Հունանյանը անսահման ամբիցիոզ խուլերիկ է: Բնավորության այդ գծերը «մշակել և հասունացրել» են՝ խոստանալով համընդհանուր ցնծություն, անհապաղ հեղաշրջում, հերոսի լուսապսակ և պաշտոններ: Ովքե՞ր...

ա) Այն իշխանավորները, ում անհաշվետու ինքնուրույնությանը խանգարում էր Վազգենի ամենահաս ծանր «մահակը»:

բ) Այն մաֆիոզ կլանները և օլիգարխները, որոնց «թափ տալու» խոստումը անզգուշորեն հնչեցրել էր, ավա՜ղ, իր անխոցելիության մեջ համոզված Վազգենը:

գ) Գուցե չարժե՞ դեն նետել որոշ քաղաքական գործիչների այն պնդումը, որ դա կազմակերպել են արտաքին ուժերը՝ զոհված լիդերների ռուսամետ քաղաքականությունը կասեցնելու նպատակով: Անձամբ ես քիչ հավանական եմ համարում. անգամ եթե դա առկա է, ապա՝ անպայման տեղական ուժերով միջնորդավորված: Իրոք, կասկածից վեր է, որ սադրողները երաշխավորել էին ահաբեկիչների անվտանգությունը, ասենք, մեծ ուժերով անմիջապես նրանց ետևից ներխուժելու տարբերակով: Նման օգնությունը դժվար է իրագործել օվկիանոսի մյուս ափից: Դա պետք է համոզիչ հիմնավորեն տեղական ուժերը:

Տրամաբանական եզրակացություն. դատավարությունը կդառնա անվերջանալի: Ստեղծված վիճակում ժառանգականության սկզբունքով արված նշանակումները գուցե և իրոք ճիշտ էին (հատկապես նկատելով Վազգենի եղբոր զուտ մարդկային, դրական գծերը), թեև ասիական այդ ավանդույթը ցանկալի չէ քաղաքակիրթ ընկալվելու հավակնող երկրի համար:

## 2000 ԹՎԱԿԱՆ: ԱՄԱՌ

Այժմ էլ ստեփանակերտյան ահաբեկչությունը... Տպավորություն է ստեղծվում, որ ընդդիմադիր ուժերի մեջ հաստատվում է այն համոզմունքը, որ իշխանությունների դեմ հակամարտության միակ միջոցը լենինյան տեռորն է... Վտանգավոր եզրահանգում է և ոչ միայն պայքարի ընտրված միջոցի առումով: Եթե բացառենք զուտ քրեական կամ բռնի իշխանափոխության տարբերակները, ապա արդյո՞ք դա չի նշանակում օրինականության կամ արդարադատության պակաս: Խորհելու լուրջ հիմքեր կան...

Ահա և իմ «ստոպ»-ը: Ամենաբարի մղումով համակված ինքնուս «հեքիմ»-ը «ունքը սարքելու փոխարեն աչքս հանեց». արյան զեղում քիչ թե շատ գործող աջ աչքումս: Ֆյոդորովի կլինիկայում հրաժարվեցին վիրահատությունից. անհույս է: Հայտնվել եմ թանձր մշուշում... Սփոփում են՝ երբ հեղուկը հետ քաշվի գուցե ուսպնյակները մեկը մյուսի վրա դնելով մի բան կտեսնեմ: Մի բան պարզ է. նախատեսածս ծրագրից պիտի հրաժարվեմ, և այն, ինչ հասցրել եմ գրել, կթողնեմ ինչպես կա՝ ոչինչ չեմ փոխի...

## 2001 ԹՎԱԿԱՆ: ԳԱՐՈՒՆ

### *Էպիտաֆիայի փոխարեն*

Տարիուկես է անցել եղեռնական օրից, սակայն այսօր էլ անասելի դժվար է խոսել նահատակների մասին: Կա հեշտ ձև՝ միանալ «անլռելի երգչախմբին», աշուղական մրցակցության մեջ մտնել ու ներբողներ շարել: Հայտնի է սակայն, որ նման ձևով հյուսած լուսապսակը շուտ է թառամում: Ապրում է ճշմարտությունը՝ արժանիքների ու թերությունների, նվաճումների ու սխալների ամբողջականությունը: Սակայն հենց դա շատ է դժվար, հատկապես նահատակի պարագայում...

*Վազգեն Սարգսյան:* Առաջին շրջանում քաշվող, բայց փոթորկոտ, հեշտ բռնկվող, ընկերության մեջ հուսալի, անդավաճան, ինչը հետագայում իրեն երբեմն ի վնաս գործեց: Ռազմական արվեստում (սկզբից՝ անտեղյակ) խորացավ պայքարի ընթացքում: Հայրենասեր, Արցախի ազատագրմանը անվերապահորեն նվիրված: Եվ ոչ միայն Արցախի... Հիշում եմ մի միջադեպ այն օրերին, երբ այս ու այնտեղ տարբեր ոչ պաշտոնական շրջանակներում արծարծվում էր Նախիջևանի խնդրի լուծման «հարվածային» եղանակի հարմարադեպությունը: Նման կես լուրջ խոսք բացվեց սենյակում, ուր երեքս էինք Լևոնի ու Վազգենի հետ: "Семь бед — один ответ" (յոթ մեղք՝ մեկ պատասխան), դիմեցի Լևոնին. «Քո տեղը լինեի՝ վրա կտայի... «ղալմաղալը» նույնն է լինելու, բայց Նախիջևանի խնդիրն էլ լուծած կլինենք...»: «Վախ, սրտիցս խոսեցիք, պարոն Ղազարյան», – ուրախացավ Վազգենը: Լևոնը հասկացրեց, որ դա, անշուշտ, կատակ էր, և Լևոնին արդեն նվիրված ու տարիքիցս ակնածող Վազգենը չփորձեց զարգացնել թեման: Այն օրերի անվտանգության գծով խորհրդական Աշոտ Մանուչարյանը տարիներ անց ինձ պատմեց, որ երբ հասունացել էր հարմար պահը, Լևոնը որոշել էր մտնել Նախիջևան, սակայն դրան խանգարեց գեներալ Պատրիկեևը. նա չքացեց սովետական բանակի կողմից հսկվող Հայաստան-Նախիջևան սահմանը: Ինձ համար գրավիչ էր, ինչ-որ տեղ հարազատ Վազգենի մեջ ակնածանքի և տաքարյունության համատեղումը: Դուր էր գալիս ամբողջա-

կան բնավորության տեր, հուսալի ընկեր Վազգենը:

Նորաստեղծ (1990 թ.) Գերագույն Խորհրդում Վազգենը ղեկավարեց պաշտպանության հանձնաժողովը, սակայն կարճ ժամանակ անց հանձնեց այն Շիրխանյան Վահանին և անցավ բանակաշինության կարևորագույն գործին, որն ընթացավ պատերազմական վիճակում: Կրկնում եմ՝ եղել են սկսնակի և՛ բացթողումներ, և՛ սխալներ, և՛ հարկադրված այլանդակություններ, սակայն, ի վերջո, բանակը կայացավ, իսկ հաղթողին, ինչպես հայտնի է, չեն դատում:

Շատ էր դառնացած, երբ Արծվաշենի անկումից հետո նրան նախարարի պաշտոնում փոխարինեց Մանուկյան Վազգենը: «Հաջողությունները չեք տեսնում, միայն անհաջողության ժամանակ եք հիշում մեզ», – սրտնեղած արտաբերեց նա ԳԽ-ի նիստում: Վազգեն Մանուկյանին հաջողվեց իրավիճակը ճակատում դուրս բերել ճգնաժամից՝ հաստատելով Լևոնի այդ քայլի արդարացիությունը: Ի պատիվ Վազգեն Սարգսյանի՝ պետք է ասեմ, որ նա այդ շրջանում աշխատեց ավելի մեծ նվիրվածությամբ, որպեսզի Վազգեն Մանուկյանի մոտ կասկած չառաջանա, իբր նա վիրավորվածությամբ ու խանդով տոգորված «գլուխ է պահում»:

Վարքագծի տհաճ դրսևորումները սկսվեցին նախարարի աթոռին Վազգեն Սարգսյանի վերադարձից հետո: Սկսեց գործել «նպատակն արդարացնում է միջոցները» կարգախոսը: Ուժայինների (Վանո-Վազգեն) անառողջ մրցակցություն, որի ընթացքում, սակայն, Վազգենը, ի տարբերություն հակառակ կողմի, չխախտեց իր ասպետական կեցվածքը մրցակցի նկատմամբ: 95-ի մատույցներում պարզ դարձավ Վազգենի ուժային գերիշխանությունը, և սկսվեց դրա դրսևորման դատապարտելի փուլը: 95-ի խորհրդարանական ընտրություններում արդեն պարզ դարձավ նրա «մահակի» որոշիչ դերը: Ու քանի որ նրա մեջ խորացել էր «Ղարաբաղ» կոմիտեի լևոնամերժ կեսի հանդեպ 90-ի սկզբին ծագած հակադրությունը (հատկապես՝ Վազգեն Մանուկյանի նկատմամբ), ապա նրա «մահակի» և Եգորյանի ծնած ընտրական օրենքի համագործակցությամբ ստացանք ՀՀՇ-ացված ԳԽ: Լևոնի հանդեպ նրա տածած կույր հավատը հանգեցրեց ընտրությունների վարկաբեկման գագաթնակետին 96-ի նախագահական ընտրություններում. գրողի ծոցն ուղարկելով միջազգային կարծիքը և էթիկան՝ խելահեղ շպրտեց չարաբաս-

տիկ «100% էլ հավաքեք՝ չենք թողնի...»-ն և հասավ դրան տանկերով, կրակոցով ու ծեծով... Այն տպավորությունն է ստեղծվել, որ ո՛չ Լևոնը, ո՛չ էլ Վազգեն Սարգսյանը չգիտակցեցին, որ վերջինն է որոշում՝ ով կնստի նախագահական աթոռին: Նստեցրեց Լևոնին: Եվ հենց այդ օրը (սեպտեմբերի 26-ին) նա ապրեց (իր խոստովանությամբ) առաջին սթափեցնող ցնցումը, երբ իր և զինվորների դեմ դիմաց կանգնած կանանց իրեն ուղղված հայացքներում տեսավ ցասում ու ատելություն: Եվ դա իր՝ ժողովրդի համար կռված, նրա բարին կամեցողի հանդեպ... Ցակնուվրա եղավ ու այլևս չմոռացավ: Աչքակապն ընկավ և «կուռքից» երես դարձրեց, երբ վերջինս հայտարարեց, որ Արցախը պետք է վերադարձվի Ադրբեջանին: Սակայն այս դեպքում էլ հավատարիմ մնաց ընկերության կոդեքսին... Ի վնաս և՛ երկրի, և՛ իրեն:

Լևոնի հետ հարաբերություններս վերջնականապես խզեցի 94-ի վերջում, երբ նա դիմեց ԶԼՄ-ների և Դաշնակցության դեմ բռնությունների, իսկ Վազգենի հետ՝ 95-ին: Մեր «ճամբարից» միայն Աշոտը, որը կարողանում է տիրապետել հույզերին, խոհեմաբար պահպանել էր հարաբերությունները Վազգենի հետ՝ հաճախ խաղալով հաշտարարի և խաղաղության աղավնու դերը (մասնավորապես 97-ին): Չեմ կարող չնշել մի դրվագ. չնայած Վազգեն Սարգսյանի հասցեին 95-ին հաջորդած իմ սուր, նաև հրապարակային, քննադատություններին, ոչ մի անգամ, թեկուզ մեղմորեն, չպատասխանեց ու չկշտամբեց ինձ, էլ չեմ ասում բռնության դիմելու մասին, թեև սեպտեմբերի 26-ից հետո, երբ բոլորը կալանքի կամ փախուստի մեջ էին, միայնակ և բաց ես էի ապահովում կալանավորվածների հարազատների և դեսպանների միջև հանդիպումներն ու գրավոր բողոքները հանձնում դեսպաններին:

Միայն 98-ին (արդեն հաշտվել էինք) գանգատվել էր կնոջս. «Փորձում եմ լավ բաներ անել, բայց պ-ն Ղազարյանը էլի քլնգում ա...»:

98-ի նախագահական և 99-ի խորհրդարանական ընտրություններում, ի զարմանս, ցույց տվեց, որ վարպետացել է քաղաքական խաղերում, սակայն, ցավոք, շարունակում էր ղեկավարվել այն համոզմունքով, որ միայն ինքը գիտի, թե ինչ է այս երկրին պետք: Ռոբերտ Քոչարյանի հաջողությունն ապահովելու և Վազգեն Մանուկյանի ու Սերգեյ Բադալյանի տարբերակները

կասեցնելու նպատակով թույլ տվեց (գուցե և օժանդակեց), որ հանդես գա ժողովրդի կարոտախտով «զինված» Կարեն Դեմիրճյանը: Վերջինիս հաղթարշավը ստիպեց Վազգենին փոխելու հակազոդիր ուղղությունը և ծանր մահակը ուղղեց Դեմիրճյանին՝ տապալելով նրա հնարավոր հաղթանակը: Հաջորդ տարվա խորհրդարանական ընտրությունների շեմին, հասկանալով, որ իր երկրապահներին խորհրդարան անցկացնելը հեշտ չի լինի, իմտորեն խաղարկեց Դեմիրճյանի բարձր վարկանիշը, և միանալով նորաստեղծ ՀԺԿ-ին, համոզիչ հաղթանակ տարավ:

Զբաղեցնելով վարչապետի աթոռը՝ փաստորեն դարձավ երկրի որոշիչ գործոն: Անսասան եռանդով տրվեց բարեփոխության գործին: Սակայն, ըստ երևույթին, հնարավոր որոգայթները և հակազդեցությունը բացառելու նպատակով, ավա՜ղ, կառավարությունը «կոմպլեկտավորեց» ամեն ինչով իրեն պարտական նորելուկներով ու համերկրացիներով՝ հաճախ անտեսելով նրանց կրթական ցենզը և բարոյական նկարագիրը: Նրա եղերական վախճանից հետո մեզ մնաց այդ անցանկալի ժառանգությունը, ցավոք, առանց Վազգենի զսպող արգելակների:


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՎԱԶԳԵՆ Զ. ՍԱՐԳՍՅԱՆ

26.01.99

Գրկախառնվեցինք և հաշտվեցինք 97-ին, երբ նա պարզ ցույց տվեց իր անհամաձայնությունն արցախյան խնդրի պարտվողական լուծմանը: Ուրախացնում էր նաև նրա մեջ հաստատվող այն համոզմունքը, որ առանց կոռուպցիայի դեմ անզիջում պայքարի հաջողության չի հասնի: Ցավոք, այնքան էր համոզված իր անխոցելիության մեջ, որ բարձրաձայն հայտարարեց իր մտադրությունը...

99-ի հունվարին ծննդյան օրվա առթիվ ուղարկել էր մի դաշույն և սիրտս ջեր-

մացրած մի երկտող, որը բերում եմ ստորև.

Փայլուն էր նրա ելույթը Հայաստան-Սփյուռք սեպտեմբերյան վեհաժողովում: Ոգևորիչ էր ու հուսադրող: Ինքն էլ էր ոգևորված... Ավա՜ղ... իրեն մնում էր մեկ ամիս... Ամեն անգամ, երբ նայում եմ պատի գորգին կախված դաշույնին, խորը տրտմություն է համակում սիրտս... Ցավով գիտակցում եմ, որ չկա հուսալի ընկեր Վազգենը, որ երբեք այլևս հանդիպելիս չի հարցնի՝ «ինչպե՞ս է փոքրիկ Վազգենիկը», որին առանձնացրել էր այն օրերից, երբ 7 տարեկան Վազգենիկը (այսօր 22 է) Մատենադարանի հարթակից երգեց Դանիել Վարուժանի «Ով, որ քաջ է...» երգը:

Եվ հերթական անգամ, երբ սրվում է Արցախի հարցը, ցավով գիտակցում եմ, որ չկա նրա անկոտրում պահապանը...

*Կարեն Դեմիրճյան:* Չեմ հիշում՝ 88-ի միտինգներից ո՞ր մեկի ժամանակ պահանջեցինք քաղկոմի և կառավարության ներկայությունը, որի ժամանակ Դեմիրճյանը քամահրանոք նետեց չարաբաստիկ «Ղարաբաղը ջեբումս է՞, որ հանեմ տամ ձեզ»-ը՝ հաստատելով իր մոտ շարժումն առաջնորդելու կամքի ու մտադրության բացակայությունը: Ինձ վիրավորել էր տոնը. պարզ հասկացրեց, որ շարժումն առաջնորդելու ոչ մի մտադրություն չունի: Ավելին՝ նրա սիրտը չի տրոփում Արցախի ազատագրման առկայծող հույսով ոգևորված ժողովրդի հույզերին համահունչ: Ինձ՝ տագնապի ու երջանկության մեջ թպրտացողիս, հատկապես դա խոցեց: Առիթը բաց չթողեցի վերադարձնելու նրան նույնպիսի քամահրական ռեպլիկ, թեև միշտ համակրանք է առաջացրել մեջս. հպարտանում էի նրա արժանապատիվ պահվածքով Կրեմլի հանդեպ, որը ցայտուն կոնտրաստ էր Ալիևի՝ նողկանք առաջացնող քծնանքի ու շողոքորթության համեմատությամբ: «Նա զոհաբերեց իրեն, որովհետև չէր ուզում, որ արյան մեջ խեղդվի ժողովուրդը» փրկարար բանաձևը, ըստ իս, վերջին տարիներին ինքնարդարացման նպատակով էր ձևակերպվել: Կրեմլի կողմից նա արդեն դատապարտված էր թեկուզ այն բանի համար, որ աչքաթող էր արել շարժման սկիզբը: Այսպես թե այնպես՝ պետք է ազատվեր: Եվ հետո, ժողովրդին վտանգից հետ պահելու, այսինքն շարժումը հանգցնելու համար ուրիշ տոնայնություն և ուրիշ խոսքեր էին պահանջվում: Իր ռեպլիկով նա հակառակ արդյունքի հասավ:

Նրա հասցեին հնչեցին նաև այլ մեղադրանքներ, մասնավորապես որոշ գյուղատնտեսական շրջանների եռանդուն թուրքացումը, տնամերձ ջերմոցների «եղեռնը», աղետի գոտու եղբայրական դամբարանները՝ խոտան բազմահարկերը: Վերջինս շահարկվեց նաև 98-ի նախընտրականում: Յասկանում եմ՝ պահանջներս չափազանցված են, բայց այսօր էլ ափսոսում եմ, որ չսատարեց շարժմանը՝ մնալով քաղաքական դաշտում: Յետագայում գուցե կօգներ չափավորելու տնտեսությունը քարուքանդ անողների «եռանդը»՝ շարունակելով ղեկավարել, այո՛, կոմունիստական կուսակցությունը: Դա արժանապատիվ պահվածք կլիներ: «Իրոք, – դատում էի ես, – մի մարդ, որը լուրջ ջանքեր էր ներդրել երկրի տնտեսության ու մշակույթի զարգացման գործում, դժվար թե հանդուրժեր այդ անողոք ու սանձարձակ սեփականաշնորհումը և համատարած աճուրդը: Վտանգը (պատմությունը մեկ անգամ չէ, որ հաստատել է դա) տարերքին ուղեկցող անցանկալի դրսևորումներն են, մանավանդ որ մեր տարերքում, ինչպես և 17 թվին, արդեն ի հայտ էին եկել «ժելեզնյակ մատրոսները» և հատկապես «մատրոսուհիները», որոնք նպաստեցին իշխանական ապազա հանցախմբի կայացմանը հանրապետության ողջ տարածքում: Ի միջի այլոց վերջիններից ամենաանձնուրացները հետագայում դեն նետվեցին որպես սպառված գործոն և հայտնվեցին ծանր կացության մեջ:

90-ի՞ն էր, թե՞ 91-ին, խոսք բացեցի Վազգեն Մանուկյանի մոտ Կարեն Սերոբովիչի մասին. ասացի, որ արդյունաբերության նախարար նրան եմ տեսնում: Խոստովանեց, որ ինքն էլ է մտածել այդ մասին, բայց վախենում է, որ ժողովուրդը սխալ կընկալի. համաձայնության եկանք իր գործարանի տնօրենի վրա, որի համար Կարեն Սերոբովիչը շնորհակալություն հայտնեց ինձ:

Ցավոք, դրան հաջորդած տարիներին նա նորից վշտացրեց... Ի տարբերություն Ալիևի ու Շևարդնաձեի, հետ քաշվեց քաղաքական դաշտից, բավարարվեց նարդիով ու մերձեցավ Տեր-Պետրոսյանների հետ: Չեմ կարող ասել՝ որքանով էր անկեղծ, սակայն անձնական զրույցում հիացմունք հայտնեց ԼՏՊ-ի արտաքին քաղաքականության առթիվ, թեև «հորիզոնում» արդեն նշմարվում էր Լիսաբոնի խայտառակությունը: Ավելի ուշ, ի հաստատումն իր կարծիքի, նա «Յայաստանի Յանրապետություն» թերթում կոչ արեց քվեարկել ԼՏՊ-ի օգտին: Ուստի, երբ

98-ին նա իր իմիջը շահարկող ուժերի դրդմամբ հավակնեց նախագահի աթոռին, համարեցի, որ դրա բարոյական իրավունքը չունի, մյուս կողմից, հիշելով Քոչարյանի վճռական դիրքորոշումն Արցախի խնդրում, պաշտպանեցի վերջինին՝ բերելով գլխիս տարբեր, նաև փողոցային որակի լուտանքների տարափ, թեև, ի տարբերություն այլ ելույթ ունեցողների (Բաղալյան, Հայրիկյան), ոչ մի անպատիվ ածական չէի կիրառել: Ճիշտ է, ի՞նչ մեղքս թաքցնեմ, ելույթս չափազանց հուզական ստացվեց. ՀՀՇ-ականների վերադարձի, ուստի և Արցախի խնդրի նկատմամբ տագնապն էր համակել: «Հայի վերջին խելքով» հասկանում եմ, որ հիստերիաս անհիմն էր. ելույթ ունենայի, թե ոչ, Դեմիրճյանը չէր անցնի: Այս անգամ արդեն կիրագործվեր «100% էլ հավաքեք...» Քոչարյան-Սարգսյան տանդեմի վերդիկտը: Այն 1-2%-ը, որոնք իբր ես խլեցի, կլրացվեր այլ կերպ... Կրկնում եմ, թեև համոզված էի, որ վարչապետների մեր դժգույն շարանում նա շատերից անհամեմատ ավելի փորձառու և իր տեղում կլիներ, մինչդեռ նախագահ Դեմիրճյանի ինքնուրույնությունն էապես կաշկանդված կլիներ Վազգեն Սարգսյանի կողմից և կարճ ժամանակում նոր հիասթափության կմատներ ժողովրդին: Խոստովանենք նաև, որ հապճեպորեն հավաքագրած իր կուսակցությունը մեկ մարդու՝ Կ. Դեմիրճյանի կուսակցություն էր... Հոկտեմբերի 27-ի դաժան ոճիրը հաստատեց դա՝ մեզ պարգևելով բառիս ուղղակի իմաստով «ծանրակշիռ» խոսնակ ու անմիաբան «համախոհներ»:

Մի անսպասելի հայտնություն. պարզվում է իմ և "Голос Армении" թերթի նախասիրությունները հակափուլ են: Ինչպես տեսանք, 98-ին թերթը Կ. Դեմիրճյանի կրակոտ պաշտպանն էր: Վերջին երկու տարում ես քննադատում եմ Քոչարյանին, մինչդեռ "Г. А."-ն սատարում է Քոչարյանին: Ավելին. 2003 թ.-ի փետրվարի 27-ի առաջնորդող հոդվածում ոմն Վ. Դարբինյան ուղղակիորեն մեղադրում է Դեմիրճյանին իր ղեկավարած տարիներին կոռուպցիայի խորացման և ապօրինի ֆինանսական հոսքերը միանձնյա տնօրինելու մեջ: Ո՛չ ավել, ո՛չ պակաս:

Այս առումով Հոկտեմբերի 27-ը անկասելիորեն հանգեցնում է ծանր, անգամ դաժան հետևության. ամեն մի առաջնորդ կամ ղեկավար (պետության, կուսակցության կամ ձեռնարկության), անկախ իր տարիքից և առողջական վիճակից, հաշվի առնելով մեր երկրային կյանքի եղծականությունը, մեր գոյության ոչ հու-

սալի գործոնը, պետք է մտածի, թե ու՞մ է թողնում իրենից հետո: Այլապես, կյանքը դա բազմիցս հաստատել է, քո կյանքի կամ տարիների անձնուրաց աշխատանքը, նվաճումները կարճ ժամանակում խարխլվում և փոշիանում են ապաշնորհ հետնորդի ոչ պակաս եռանդուն ջանքերով:

Այսօր էլ, երբ մտածում եմ «27-ի» հետևանքով չկայացած հնարավոր շարունակությունների մասին, ցավով ու տրտմությամբ գիտակցում եմ, որ հանցագործները մեզ զրկեցին բազմակողմանի զարգացած, փորձառու մարդու՝ Կարեն Դեմիրճյանի վարչապետությանն արժանանալու հնարավորությունից:

* * *

*Աշուն:* Աստվածահաճո մեծ միջոցառում՝ Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունը: Նպատակը՝ ազգանպաստ. ներկայանալ աշխարհին որպես հնագույն քրիստոնյա ժողովուրդ և նպաստել ժողովրդի 70-ամյա անհավատությունից «Տեառնընդառաջ» փորձություններով լի փշոտ ուղու հաղթահարմանը: Հասկացնել, որ հավատքի խորությունը չի գնահատվում կրծքին կախած խաչի գնով, որ ամենաթանկ խաչը ծնվում է սրտիդ խորքում...

Սակայն... Ապշում ես, թե ինչպես է հաջողվում մեր իշխանավորներին ամենաբարի նախաձեռնությունը, ասես սատանայի շշնջոցով, վերածել ժողովրդին մեկ անգամ ևս վիրավորելու, նրա հոգին պղտորելու նենգափոխության...

Ստեփանակերտի ձեռնարկության պարտքարտուղարը գտավ «իմաստուն» լուծումը և... տոնակատարությունը գլխավորեց աթեիզմի անխոնջ մարտիկ, մեկ այլ պարտքարտուղար՝ Խոսրով Հարությունյանը... Դրանից հետո պետք չէ զարմանալ, որ աղանդներն իրենց ամենամեծ հաջողությունն արձանագրել են Հայաստանում...

# 2002 ԹՎԱԿԱՆ

## *Երկարաշունչ առաջաբանի անավարտ վերջաբան*

Արցախի գերխնդիրը մնում է առկախ վիճակում: Ազատագրված տարածքների նկատմամբ Քոչարյանի նախկին անզիջում դիրքորոշումը, որը վճռական գործոն հանդիսացավ 98-ի նախագահական ընտրություններում, հետզհետե խամրում է՝ խորացնելով ընդհանուրիս անհանգստությունը: Անշուշտ, ինքը զգուշանում է դրան վերաբերող որևէ ակնարկից, այդ անշնորհակալ «առաքելությամբ» պարբերաբար հանդես են գալիս նախարարները: Կասկածի տեղիք են տալիս ազատագրված տարածքների վերաբնակեցմանն ուղղված անաշխույժ ճիգերը, ինչպես և ադրբեջանական կողմի հետ դիվանագիտական մենամարտում մերոնց ոչ համարժեք «հակահարվածները»: Ակամա փաստում ես մի տխուր ճշմարտություն. առ այսօր ինձ հայտնի հայ և օտարազգի դիվանագետների շարքում ազատագրված տարածքների ամենանկրակոտ, համառ և համոզված պաշտպանը ՌԴ-ի նախկին դեսպան պարոն Ստուպիշինն է: Ժամանակն է նրան էլ, մեր մյուս բարեկամների՝ Ստարավոյտովայի և Սախարովի նման, վարկաբեկիչ կասկածներ ներկայացնելու և հետո զարմանալ, թե ինչու հայերիս չեն սիրում:

* * *

Շարունակվում է արտագաղթը: Եթե անգամ, ինչպես մեզ համոզում են, այն նվազել է, ապա դա ավելի շուտ ընդհանուր բնակչության թվի նվազման, ինչպես նաև Ռուսաստանում և այլ երկրներում ներգաղթողների դեմ սաստկացող անհանդուրժողականության և օրենքների խստացման հետևանք է, որում մեղքի իրենց բաժինն ունեն իրենք՝ տարագիրները (մասնավորապես մեր հայրենակիցների ցուցամոլությունը՝ «իրեն հալին չմնալը»): Եթե դա ներգաղթի ալիքի սկիզբ դնի, ապա մեր ուրախությունը մռայլված կլինի սոցիալական վիճակի վատթարացմամբ, որից չի փրկի ժամանակավոր բնույթ կրող Լինսի հիմնադրամը:

* * *

Օլիգարխիկ տիրապետությունն այլասերել է պետական կառույցները վերից վար, իսկ ղեկավարության կողմից՝ դրա դեմ պայքարի ոչ մի նշույլ: Տեղական մարմինների վերջին ընտրությունները համոզեցին, որ արդար ընտրությունների ուրվականը կորչում է ապագայի մշուշում:

Նորաբույս հարուստները համեստությամբ չեն տառապում. խիզախորեն ցուցադրում են ապօրինի կուտակածը: Ձեր մտքով չանցնի հանկարծ, թե արտադրությունն են կենդանացնում, աշխատատեղեր ստեղծում, դպրոցին կամ զոհված ազատամարտիկների ընտանիքներին են օգնում... Ո՛չ... Խաղատներ, ռեստորաններ, կազինոներ՝ էլ ավելի այլասերելով երիտասարդությանը: Առավել հղփացածները պաշտոններ են գնում...

Անշուշտ, նման մթնոլորտում գիտությունը ծանր ու տհաճ բեռ է «նախանձելի» կրթական ցենզի տեր մեր իշխանավորների համար: Գիտական կոչում ունեցող գիտաշխատողի ռոճիկը էապես զիջում է պետական կառույցներում քարտուղարուհու ռոճիկին: Շարունակվում է գիտնականների միալար թախանձանքը ռոճիկի բարձրացման առթիվ: «Ձեզ կբավարարի՞ ռոճիկի 20 կամ 40 տոկոսի աճը», – հարց եմ տալիս ԳԱ տարեկան ժողովի ամբիոնից (որին, անշուշտ, ի տարբերություն Կ. Դեմիրճյանի, չբարեհաճեցին մասնակցել ո՛չ նախագահը, ո՛չ էլ վարչապետը): Իհարկե ո՛չ. դոկտորի կամ թեկնածուի վիճակը չի փոխվի, եթե 14 հազար դրամը դառնա 17–20 հազար: «Իսկ 100 տոկո՞սը»... Նույնպես, ո՛չ: Ուրեմն դա չէ, որ պիտի պահանջենք... Վերակենդանացրե՛ք մեր հիմնական պատվիրատուին՝ արտադրությունը (!), սա է ճիշտ շեշտադրումը: Այսօր այդ իրադրությունը հստակ գիտակցում և արտահայտում է միայն Հրանտ Վարդանյանը և փորձում օգնության ձեռք մեկնել գիտությանը:

Հոկտեմբերի 27-ը հիվանդագին աշխուժության առաջին ալիքը բարձրացրեց ՀՀՇ-ի մինչ այդ լռակյաց ճամբարում: Այնուհետև «Սանտա Բարբարա»-յի տևողության կասկածահարույց, վերջ չունեցող դատավարության, տեղական կառույցների բարոյալքման խորացման, հիմնական զանգվածի սոցիալական վիճակի դանդաղ առաջընթացի հետևանքներով սաստկացող դժգոհությունը խթանեց ՀՀՇ պարագլուխների ավելի ու ավելի համարձակ հակագրոհները: Ռևանշի առկայծած հույսով ոգևոր-

ված հանցագործները հոգեփրկիչ կեղծանուններով քննադատում են իրենց ջանքերով առաջացած արատները, փառաբանում նախկին գլխավոր հանցագործին: Վերջերս նրանց են ծայնակցում անցյալում տռզած «գործիչները» և քաղաքական ավանտյուրիստները, ասես համոզելով ժողովրդին, որ նա ընտրության հնարավորություն ունի միայն վատի և շատ վատի միջև: Կարծես Հայաստան աշխարհում բացառված է ազնիվ ու խոհեմ հայրենասերի հայտնվելը: Եթե այստեղ չկա նախորդ «բոբո»-յի ուրվականով այսօրվա լիդերի դիրքերի ամրացման միտում, ապա դա ժողովրդի կարճ հիշողությանն ապավինելու փորձ է: Մանավանդ, որ ժողովուրդը մեկ անգամ դա դրսևորեց չմտածելով, որ սովետական օրերի ամենաունակ ղեկավարի վերադարձը չի վերադարձնի նախկին քաղաքական և տնտեսական համակարգը, ուստի և էժան երշիկ չի հայտնվի, ինչպես այն չհայտնվեց Վրաստանում և Ադրբեջանում Շևարդնաձեի ու Ալիևի վերադարձով:

Արցախի կարգավիճակի վերաբերյալ նախորդ ղեկավարի նկատմամբ այսօրվա ղեկավարի ամենակարևոր առավելությունը վերացնելու միտումով անազնիվ քայլերի են դիմում, որպեսզի խարխլեն և վարկաբեկեն այն ուժերը, որոնք փորձում են կանխել ազատագրված տարածքների նկատմամբ ղեկավարության հնարավոր թուլությունը: Նման ցածրորակ, քամահրական բարոյախոսության արժանացանք ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը և ես: Մինչ այդ չամաչեցին կեղտոտ կասկածով ինձ վարկաբեկելու ստորությունից: Չուզեցի անգամ արժանացնել պատասխանի: Իրենց զայրույթն այդ կապակցությամբ հրապարակեցին Դավիթ Վարդանյանը և Սարգիս Մուրադյանը: Համբերության ոչ մեծ բաժակը լցրին Վանոյին և ԼՏՊ-ին նվիրված ձոն-հոդվածները: Դրանց վելուծականը տպեցի «Հայոց Աշխարհ»-ի 2002 թ.-ի մարտի 12-ի և 13-ի համարներում (տե՛ս Հավելված, էջ 270): Հորդորներով փորձում են քաջալերել Քոչարյանի զիջողությունն Արցախի խնդրում...

Հաճախ մտածում եմ, որ եթե Քոչարյանը հենց սկզբից անսար մեր հորդորներին (ամբողջական տեսքով այն հրապարակեց Հրանտ Խաչատրյանը), ասենք, պատասխանատվության կանչեր նախկին հանցավոր պարագլուխներին ու ամենաեռանդուն ջանքերը կիրառեր ի նպաստ ժողովրդի սոցիալական վիճակի բարելավման, ապա Արցախի գերխնդրում կոշտ դիրք-

րոշման և եղեռնի ճանաչման գործընթացում որոշ հաջողություննների առկայությամբ դժվար թե այսօր հիշատակվեր նրա ոչ լեգիտիմության բարդույթը կամ շահարկվեր ՀՀՇ-ականների թեթև ձեռքով նետած «հայաստանցի-ղարաբաղցի» ազգաքայքայիչ վիրուսը: Էլ չեմ ասում, որ անպատժելիության մթնոլորտում սանձարձակված մաֆիան մի փոքր կզգուշանար: Սակայն ավա՜ղ... Եղավ այն, ինչ եղավ...

* * *

*06.02.2003:* Թափ է առնում նախագահականի նախընտրականը՝ իր լավ ու վատ դրսևորումներով... Ընդդիմությանը մեկ համաձայնեցված թեկնածուով մրցության դուրս բերելու Աշոտի անդուլ ջանքերն առայժմ ապարդյուն են: Տարատեսակ բաղադրիչներից նրա հավաքած 16-ի համախումբը ևս չի սահմանափակվի մեկի թեկնածությամբ: Տարերայնորեն հանդես է բերվում նոր մարտավարություն. առաջադրել անսահմանափակ թվով թեկնածուներ՝ հետագայում անցվորականի (hուսանք և ամենաարժանավորի) շուրջը համախմբվելու ակնկալիքով: Տա՛ Աստված, թեև քիչ հույս կա, որ մասնակիցների մեջ կգերակայի ընդհանուրի գործի շահն անձնականի նկատմամբ: Հակառակ դեպքում դա գործող նախագահին պետական կառույցների անխուսափելի օժանդակության և արդար ընտրությունների նկատմամբ աղոտ հույսի առկայությամբ չափազանց կդժվարացնի ցանկացած թեկնածուի վիճակը:

Ինչպես և սպասվում էր, անարդարացի լուտանքների ամենամեծ բաժինը թափվեց ամենաակտիվի՝ Աշոտի գլխին, թեև նա անցյալ և գալիք ընտրություններում ո՛չ իր թեկնածությունն է դնում, ո՛չ էլ այլ անձնական շահ հետապնդում՝ մնալով հավատարիմ շարժման գաղափարներին... Ի՞նչ արած, ճշմարտությունը սովորաբար ուշացումով է բախում դուռը...

Ինչ վերաբերում է տրամադրություններին, որոնք զարգանում են հանրապետությունում այս նախընտրական շրջանում, ապա զարմանքով համոզվեցի, որ կարող էի առանց որևէ փոփոխության կրկնել այն սպասումներն ու խորհուրդները, որոնք տվել էի 98-ի ընտրությունների շեմին: Ուստի և կավարտեմ այդ ելույթիս մեջբերումով.

ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

Պահի կարևորությունը թելադրում է վեր կանգնել չհիմնավորված պիտակավորումներից, էլ չեմ ասում փողոցային հայհոյանքներին պատասխանելու գայթակղությունից և անցնել խնդրի էությանը:

Ժամանակս քիչ է, ասելիքս՝ շատ:

Այսօր մեր առջև կա գերնպատակ՝ մեր ապագայի փրկությունը, և այստեղ բոլորն անելիք ունեն: Բազմաչարչար ու բազմիցս խաբված ժողովուրդը պետք է վերջապես հավատա, որ այս երկրում հնարավոր է օրինականություն, առաջին հերթին արդար ընտրություններ, որ քայլեր կարվեն տնտեսության վերականգնման, գործազրկության ու հայաթափման կասեցման, մեր հիվանդ հասարակության առողջացման ուղղությամբ, այսինքն ապագա ընտրություններով կկազմավորվեն առողջ դատա-իրավական և խորհրդարանական մարմիններ, որ հասարակությունը կմաքրվի հանցագործներից, որ իշխանությունները տեր կկանգնեն արյունով ու զրկանքներով ազատագրված Արցախին՝ ամրագրելով հայության սխրանքը:

Այս ամենի համար պահանջվում է լոկ ազգային համաձայնություն և համագործակցություն: Հավակնորդները մրցակցի մեջ պետք է տեսնեն ոչ թե հակառակորդի, այլ պոտենցիալ գործընկերոջ: Այլապես... փոխադարձ կասկածներով լի հոգեմաշ պայքար, որի պղտոր ջրում նյութապաշտ ապազգայինները ձուկ կորսան՝ արջի ծառայություն մատուցելով իրենց ընտրյալին, ղարաբաղցու, սիսիանցու կամ գյումրեցու քայքայիչ բաժանումներ, այնուհետև հաղթողի ու պարտվածի բարդույթ, փոխմեղադրանքներ, բարոյական մթնոլորտի հետագա թունավորում և ամենակարևորը՝ հիմնական հավակնորդների անհաշտ պայքարից կօգտվեն ոչ ցանկալի ուժերը՝ վտանգելով ապագան:

Դա կկանխվի, եթե այսօրվա առողջ քաղաքական ուժերը սեղանի շուրջ մշակեն համագործակցության դրույթները և երաշխավորեն իրենց վրա վերցրած պարտականությունների կատարումը: Հավակնորդները, գիտակցելով իրենց պատասխանատվությունն ազգի առջև, վեր կկանգնեն անձնականից և բաց չեն թողնի բախտորոշ պահը:

ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ:

6.03.98 թ.

.................................................................................................

4 տարի է բաժանում մեզ այդ «աղերսից»: Եվ այսօր՝ նոր ընտրությունների նախաշեմին, մենք կարող ենք առանց փոփոխության կրկնել մեր սպասումները և տագնապները: Եթե այսօր ինձ հարցնեն՝ ի՞նչն եմ առաջին հերթին կարևորում գալիք ընտրություններում, ապա կասեմ. արցախյան սուրբ գործին անդավաճան, Հայ Դատին հետամուտ, բարոյապես առողջ, խոհեմ թեկնածուի հաղթանակ, և ընտրությունների գործընթացի գոնե մի փոքր առողջացում...

*Եվ նորից՝ հուսանք...*

*2002: Դեկտեմբեր*

# 2003 ԹՎԱԿԱՆ: ՄԱՅԻՍ

## *Չնախատեսված հավելում*

Յուշերիս հրապարակումը ձգձգվեց: Այս ընթացքում տեղի ունեցան նախագահական ընտրությունները, և թափ է առնում ԱԺ ընտրությունների քարոզարշավը:

Ականատես դարձանք «թագավորական ողջ զորագնդի», այսինքն՝ չինովնիկական բրգի, ուժային կառույցների, իշխանամետ կուսակցությունների զոռբայական խրախճանքին՝ ռազմական դիկտատուրայի նոր գագաթների նվաճմանը և դառնացած ժողովրդի հուսախաբությանը: Խուսափելով հոգեմաշ կրկնություններից՝ մեջ կբերեմ ս. թ. մարտի 21-ի «Առավոտում» հրապարակված վերլուծականս...

ՊՅՈՒՌՈՍՅԱՆ ՅԱՂԹԱՆԱ՞Կ

*Յարգարժան պարոն Քոչարյան:* 98-ի ընտրություններից հետո մի անթաքույց երազանք ունեի. 2003 թվականի ընտրությունները (որոնք հավանաբար վերջինն են, որոնց ես ականատես եմ) կընթանան առողջ՝ հանրապետության միջազգային հեղինակությանը նպաստող մթնոլորտում: Ավա՜ղ... մինչդեռ Դուք ունեիք դրան հասնելու հնարավորությունները: Իրոք, նախորդից ժառանգած քայքայված տնտեսությունը, ծանր սոցիալական և Արցախյան հիմնախնդրի փակուղային վիճակը, արտագաղթը ընձեռել էին Չեզ ժողովրդի վստահությունը և համակրանքը նվաճելու համար եզակի շահեկան ցատկահարթակ: Յիշեցնեմ, որ շատերս, այդ թվում և Չեր խոնարհ ծառան, պաշտպանեցինք Չեր թեկնածությունը միայն և միայն արձագանքելով Արցախի ապագային վերաբերող և նախորդի հայտարարածից տրամագծորեն տարբեր բանաձևին: «Սիրտս տեղը եկավ», երբ Դուք պաշտպանեցիք Արցախի անկախությունը և բարձրացրիք եղեռնի հարցը: Սակայն Չեր ներքին քաղաքականությունը գնալով ավելի ու ավելի խորը հիասթափություն առաջացրեց: Նախկին հացագործներին դատելու, ստվերային բիզնեսի, կոռուպցիայի դեմ պայքարելու և դրանով իսկ սոցիալական վիճակը մեղմացնելու և բարոյական մթնոլորտը բարելավելու փոխարեն Դուք ընտրեցիք ավտորիտարիզմից դեպի բռնապետություն տանող, ըստ իս, շատ ավելի աշխատատար ու անպատվաբեր տարբերակը: Չեր կառավարությունը համալրեցին նախարարներ, որոնց իսկական տեղը Սովետաշենի «նստավայրն» է, և նրանք լիովին «արդարացրին» սպասելիքներն այս ընտրություններում՝ կոչ անելով «ջարդել, փշրել, ծեծել, լցնել՝ մենք տեր ենք»: Չեր կամքին հլու-հնազանդ

դարձրիք արդարադատության ողջ համակարգը և պետական բուրգը՝ նախարարից մինչև գյուղապետ: Ճնշեցիք կամ գնեցիք քիչ թե շատ ընդդիմադիր կամ ինքնուրույն թերթերը և հեռուստածրագրերը, իսկ անհնազանդները փակեցիք: Խարխլեցիք ընդդիմադիր կուսակցությունները և առանց այն էլ անկայուն ԱԺ-ն: Խորտակեցիք գործադիր-օրենսդիր-դատաիրավական մարմինների հավասարակշռությունը՝ հակակշիռների գործոնը: Վախի մթնոլորտի խտացման «առագաստատիպ» խրատական դասեր, որոնք, կներեք, հատուկ են թույլ, ներքուստ անվստահ անձանց: Եվ այդ բոլոր ջանքերը, խարդավանքները, բանսարկությունները հանուն ինքնավերարտադրման... Արդյոք շատ թանկ գին չե՞նք վճարի դրա դիմաց: Չե՞ք վախենում, որ ամեն գնով հաղթանակը կարող է դառնալ Պյուռոսյան՝ պարտությանը համարժեք:

Եվ ամենամեծ կորուստը՝ ամենածանր պարտությունը Դուք կրեցիք բարոյական դաշտում: Այն, ինչ իրագործվեց այս օրերին, գերազանցեց, թվում էր, 96-ի անգերազանցելի խայտառակությունը: Ձեր ընտրական համակարգը, բացի օրենքով նախատեսվածից, ընդգրկեց չինովնիկական ողջ բուրգը վերից վար, զորքը, ոստիկանությունը, կրթական և դատաիրավական մարմինները, կուսակցությունների երամը, անգամ քրեական տարրեր և, անշուշտ, օլիգարխների «ծանր հրետանին»: Ստեղծվեց 37 թիվը հիշեցնող փոխադարձ անվստահության, մատնիչության մթնոլորտ, և մարդիկ, վախենալով այս ծանր իրավիճակում կորցնել աշխատանքը, քվեարկեցին, կեղծեցին, «կարուսել նստեցին»... մտովի շարելով անբարեհունչ ածականներ... Պատկերացրեք հիմնարկի կամ դպրոցի տնօրենի վիճակը, երբ նա սպառնում է, եթե չքվեարկեն «ինչպես հարկն է», էլ չեմ ասում զորամասի հրամանատարի վիճակի մասին, որը զորասյան գլուխն անցած ուղեկցում է նրան ընտրատեղամասից ընտրատեղամաս ու պարտադրում բաց քվեարկություն: Եվ հետո քարոզելու է սեր ու նվիրվածություն նման հայրենիքի հանդե՞պ: Նա ակամա կնմանվի զավեշտային այն հրամանատարին, որը զինվորներին գիշերային հաճույքների տունը ուղեկցելուց հետո սեռական ժուժկալության քարոզ կկարդա նրանց գլխին: Եթե կարդայիք նրանց մտքերը, հազիվ թե ինքնագոհ տեսքով ներկայանայիք հեռուստաէկրանի առջև և թունախառն կատակեիք 2-րդ փուլի առթիվ՝ «ծեռ առնելով» ժողովրդի կեսից ավելին: Չվիճենք տոկոսների մասին. Դուք ինձանից լավ գիտեք, թե ինչ չափերի հասան ընտրակեղծիքները. չեմ հավատում, որ դա կիրառվել է առանց Ձեր իմացության, անգամ, խմբավարության:

*Դուք ընտրվել եք հիմնականում երեկոյան ժամը 8-ից հետո!!!*

Դա է տխուր ճշմարտությունը: Ասում եմ դա առանց զայրույթի՝ խորը ցավով: Անշու՛շտ, համաձայն եմ, որ չինովնիկներից ու պարտադրվածներից բացի Դուք ունեք նաև ազնիվ ընտրազանգված, որոնք ներքին համոզվածությամբ գերադասեցին Ձեզ: Դա նրանց իրավունքն է: Սակայն այդ նույն իրավունքից Դուք զրկեցիք ժողովրդի գերակշիռ մասին: Եվ գիտակցելով ձեր հանցանքը, չվստահելով զինվորներին ու ոստիկաններին՝ դիմեցիք ավելի ծանր հանցանքի՝ հրավիրեցիք զորագունդ Արցախից՝ նորից բռնկելով «Հայաստանցի-Ղարաբաղցի» ազգակործան ախտը, որը հազիվ էր մարել: Մեզ միայն եղբայրասպանությունն էր պակասում... Թե՞ դա հեռու գնացող նպատակներ է հետապնդում Արցախի խնդրի հանգուցալուծման գործընթացու՞մ...

Գիտակցաբար խուսափում եմ թեկնածուների համեմատական արժանիքների քննարկումից: Ընդունում եմ, որ թեկնածուների ծաղկեփնջում, Վազգեն Մանուկյանից բացի, 91-ից հետո հաստատված այս նորովի պայմաններում Դուք ունեք երկրի լավ թե վատ կառավարման ամենամեծ փորձը, միջազգային ճանաչում և կարևոր կապեր: Բայց չէ՞ որ Դուք էլ էիք սկսնակ...

Ավելացնեմ նաև, որ ընտրավազքի լիդերներից ոչ ոք (այս անգամ՝ բացառությամբ Արամ Զավենի Սարգսյանի, որն ասպետաբար հանեց իր թեկնածությունը հանուն համախմբման), կրկնում եմ, ոչ ոք հստակ չարտահայտեց իր դիրքորոշումն Արցախի խնդրի վերաբերյալ, իսկ թռուցիկ ինչածը ավելի լավ է չասվեր:

Հանրապետությունում ստեղծված իրավիճակի առանձնահատկությունը, սակայն, ժողովրդի տրանսցենդենտ տրամադրություն է. գոյատևման տևական պայքարից հյուծված և 91-ից հետո խեղաթյուրված ընտրություններով պարբերաբար ստորացվող ժողովուրդը վերջապես պետք է հավատա, որ գործ ունի պետական այրերի և ոչ թե զորքաների հետ և գոնե 5 տարին մեկ կարող է թելադրել իր կամքը: Եվ դա ավելի կարևոր է, քան անգամ անհաջող ընտրությունը, մանավանդ, որ դա դեռ ենթակա է ապացուցման: Դուք հերթական անգամ խոցեցիք մեծամասնության արժանապատվությունը և դրանով սադրեցիք նոր վտանգներ:

Իրոք, սթափ գնահատենք Ձեր ընտրազանգվածը: Ձեզ համակրող ազնիվ հատվածից բացի Ձեզ կամովի ընտրել է պետական բուրգի ողջ աշխատակազմը, անշուշտ, օլիգարխները և իշխանամետ անթիվ կուսակցությունների վերնախավը՝ դարձնելով Ձեզ հավերժ պարտատու, իսկ օլիգարխների դեպքում՝ պատանդ: 2 հազար հանձնաժողովների բազմահազար անդամները, մյուս կարգի պարտադրվածները և իրենց կամքին հակառակ պարտադրողների զգալի մասը, թեև քվեարկել են Ձեր օգտին, Ձեր ընտրազանգվածը չէ: Կարծում եմ նրանք ավելի են չարացած Ձեր դեմ, քան Ձեզ դեմ քվեարկողները: Իրոք, Դուք նրանց ստիպեցիք գործել խղճի դեմ, խաթարեցիք հոգեկան աշխարհը, և դա Ձեզ չեն ների: Այսինքն բնակչության մեծամասնությունը բացասաբար է տրամադրված Ձեր նկատմամբ, և դժգոհությունը ճնշելու համար ստիպված կլինեք դիմելու բռնությունների: Նախանձելի վիճակ չէ: Բայց դրանք ներքին պրոբլեմներ են: Ավելի վտանգավոր է դառնում միջազգային (արևմտյան) հանրությունում երկրի հեղինակության անխուսափելի անկումը: Արևմուտքը չի ներում սրբության սրբոց ընտրությունների պղտորումը: Մեծ վտանգ է կախվում Արցախի գլխին: Պարադոքս. 98-ին դա Ձեր հաղթաքարտն էր, այսօր՝ ամենախոցելի տեղը: Գուցե գիտակցելով դա վեր կանգնեք անձնապաշտական զգացումներից (անհամեմատելի են մի անձի և ամբողջ ազգի շահերը) և մտածեք ճգնաժամից դուրս բերող խոհեմ քայլի մասին...

Հավատացեք. շատ կուզենայի շնորհավորել ազնիվ պայքարում հաղթանակած Նախագահին: Դուք ինձ զրկեցիք այդ հաճույքից:

Երկու խոսք կուսակցությունների դիրքորոշման մասին: Խոսքս «Օրինաց երկիր» տեսակի մասին չէ: Նրա ղեկավարության «սկզբունքային» վերաբերմունքը Նախագահների հանդեպ բացառապես հիացական է: Վշտացնողը ավանդականների պահվածքն է: Անշուշտ կարելի է հիմնավորել և հարգել դա իրենց և Նախագահի գաղափարական դրույթների համընկումով, թեև վերջինս

չի հստակեցրել իր կուսակցության՝ ժողովրդի դրույթները: Սակայն երբ կուսական անձեռնմխելիությամբ հեռուստաէկրանից զարմանում են, թե «ի՞նչ է եղել, որ... երկու կողմն էլ խախտել են...» (կարծես չգիտեն կողմերի կեղծելու վարչական ռեսուրսների անհամեմատելիությունը), ակամա ափսոսում եմ մեր նյարդերը ու թափված ջանքերը Լեռնի ճնշումներից նրանց պաշտպանելիս: Վիրավորվում եմ հարյուրամյա «ծնողի» փոխարեն:

Ձեր՝ Ռ. Ա. Ղազարյան

* * *

Բազմակի հուսախաբված ժողովուրդը կառչեց «նոր դեմքի» և ժառանգականության ոչ հուսալի գործոններից, չնկատելով որոշ լիդերների թիկունքից ծիկրակող, նախկին կլիկի ռևանշաբաղձությամբ փայլող աչքերը:

Նախագահականի էնդշպիլն ընթացավ «Թագավորական գորագնդի» չքուլացող ճնշման ներքո: Հանրահավաքները, ինչպես և 96-ին, կրկին դարձան հակասահմանադրական, ուստի շարքային «եզրայինները» քնքշաբար ուղեկցվեցին միլիցիայի բաժանմունքներ: «Թագադրումը» համեստաբար անցավ կառավարական շենքի կիսադատարկ դահլիճի առջև: Ժողովրդին «խանդավառության» չափազանցված դրսևորումներց զերծ պահելու նպատակով մերձակա փողոցները խնամքով դատարկվել էին անգամ պատահական անցորդներից, իսկ նստավայրը շրջափակվել էր փշալարերով:

Բռնապետական նկրտումների արձագանքը դուրս է գալիս ՀՀ սահմաններից: "Независимая газета"-ն տպագրում է «Հայաստանը շարժվում է դեպի դիկտատուրա» Պ. Սկվորցովի հոդվածը (տե'ս «Իրավունք», ս. թ. 29 ապրիլի): Հանրապետությունում ստեղծված իրավիճակից ելք են փնտրում քաղաքագետները: Հետաքրքիր առաջարկ է անում Սուսաննա Պողոսյանն իր «Պահանջվում է զրոյական տարբերակ» հոդվածում: Համարում է, որ միակ ելքը Սահմանադրական Դատարանի նախագահի ժամանակավոր ղեկավարությամբ անցումային տարբերակն է: Եվ, որերո՞րդ անգամ, աչքաթող արվեց «զանգ կախողի» սակրամենտալ գործոնը: Ուստի անցումային պահը մարեց դեռ չսկսված:

Սովորաբար կանխագուշակելի Սահմանադրական Դատարանն այս անգամ որոշում է խաղարկել "И вашим, и нашим" ծածկագիրը, առաջացնելով երկու կողմերի՝ զայրույթի փոխված սկզբնական շփոթվածությունը:

Ընկել է Հայաստանի վարկանիշը նաև Եվրախորհրդում: Դրա առողջացման դեղամիջոցը հեռուստաէկրանից ինչեցրեց Վահան Հովհաննիսյանը. «Գուցե Ադրբեջանում կայանալիք աշնանային ընտրություններն ավելի խայտառակ անցնեն...»:

Իր բարձրության վրա չգտնվեց նաև ընդդիմության դաշինքը: Ընդհանուրի և անձնականի հենց առաջին հակադրման պահից սկսվեց 16-ի կոնգլոմերատի խարխլումը: Չօգնեցին այն փրկելու Գառնիկ Մարգարյանի, Էդուարդ Սիմոնյանցի և Աշոտ Մանուչարյանի ջանքերը և Արամ Զ. Սարգսյանի ասպետական վարքը: Ուրախացնում է վերջինիս քաղաքական արագ աճը:

Հենց սկզբից պարզ դարձավ, որ քվոտա ստացած իշխանամետ կուսակցությունների հետ ԱԺ մանդատների որսի են դուրս եկել օլիգարխները՝ օգտագործելով ոչ միայն մեծամասնական կարգը, այլև ներթափանցելով իշխանամետների ցուցակները: Ապադյուն էր խոհեմ Հրանտ Վարդանյանի՝ «գործարարությունը և քաղաքական գործունեությունն անհամատեղելի են» կոչը: Մեծ մասի հարստության «ոտքերից» փչող քրեական բույրը ստիպում է վերջիններիս պատսպարվել անձեռնմխելիության ամրոցում՝ մասնագետների փոխարեն լցնելով ԱԺ-ն կիսագրագետ և կիսաբարո զոռբաներով:

Իրենց «մաքրությամբ» ԱԺ ընտրությունները, չնայած ԶԼՄ-ների ավելի պարկեշտ վարքի, ըստ էության կրկնեցին նախագահականը: Անգամ տեղի չունեցավ իշխանամետ կուսակցությունների սպասվող թեժ մրցակցությունը: Ձեռք գցելով գլխավոր «ավարը», Մեծն «կնքահայրը» աներեր «բազուկով» սահմանագծեց սատարողների փայաբաժինները, և նրանց մնում էր համախմբել ուժերն ընդդիմադիրների քվեները խեղաթյուրելու վեհ գործում: Յուրացնելով Մեծի ոճը, սատարողները նման ձևով վարվեցին իրենց փայաբաժինների հետ ու հաջորդած նշանակումներով ապշեցրին ամեն ինչի սովոր ժողովրդին: Եվ ոչ միայն զարմացրին, այլև ցինիկաբար շպրտեցին ողջ ժողովրդի երեսին՝ «Մենք շան տեղ չդրինք Եվրոպայի ամոթխած կշտամբանքը, առավել ևս... ձեր ծանծրացնող նվնվոցը...»: Եվ նորից «մեր դեմ խաղ չկա» անիծյալ բանաձևը: Համակարգված փայաբաժանումից դուրս մնացած մեծամասնականները «առաջարկեցին» կոնֆլիկտների լուծման փոխհրաձգությամբ և անմեղ զոհերով քրեական «ռազբոռկաների» իրենց ոճը:

Հեղինակիս համար անսպասելի մի զուգահեռ: Կես դարից ավելի զայրացել և վիրավորվել եմ «մեկ ծմերուկից լավագույնն ընտրելու»՝ վզիս փաթաթած ոչխարացման համար: Համարյա երբեք չեմ մասնակցել այդ շոուին՝ համոզված լինելով 99.99%-ի մեջ: Այսօր ինձ ակամա հարց եմ տալիս՝ ո՞րն էր ժողովրդի ներաշխարհին առավել քայքայողը... Ա՞յն, թե՞ այսօրվանը... Քանի որ այն ընտրակարգի դեմ պայքարի հնարավորությունն ի սկզբանե բացառվել էր Ստալինի «արարչական» բազուկով, ապա սովետական ժողովուրդը դասել էր ընտրության օրը մայիսմեկյան տարբերակի շարքը. օրն աշխատանքային չէր, և եթե արևոտ էր, լեցուն էր համերգներով, զբոսանքով, «մի կտոր հաց» կիսելով:

Այսօր ընտրում ենք «նիտրատներով թունավորված» մի քանի ծմերուկից, թեև արդյունքը կանխորոշված է: Սակայն հանուն այդ կանխորոշված արդյունքի, ընտրական կառույցների մի ստվար բանակ, առանց մազաչափ խղճմտելու, լպիրշաբար խարդախում է հօգուտ վարձահատույց պատվիրատուի, իսկ հյուծված ու բարոյախաթար ժողովուրդը վաճառում է իր ձայնը ողորմության դիմաց: Խորտակվում է ողջ ժողովրդի բարոյական ներաշխարհը, քանզի խաթարվում է նաև նա, ով չի տրվում այդ գայթակղությանը:

Ո՞րն է առավել ազգակործանը... Այդ դիլեմայի լուծումը թողնում եմ ընթերցողի հայեցողությանը:

Փորձենք ի մի բերել մեր նվաճումները. իրավա-սոցիալական անպաշտպանվածություն, երիտասարդության բարոյականությունը խաթարող լայն սպառման «մշակույթ», արտագաղթի գայթակղություն, լկտիացած քրեական տարրերի արյունոտ հաշվեհարդարներ, ֆեոդալների և իրենց ժառանգների լպիրշ ու ցուցադրական խրախճանք, իշխանավորներին օրենքով արգելվող գործարարության պարագայում նրանց անբացատրելի հարստություն: Վերջին տարիներին ավելացավ եկեղեցու և կառավարության ոչ համարժեք հակազդեցությամբ քաջալերված տասնյակ աղանդների հոգեորսը. առնետների այդ բանակը ողորմություններով ու մեղրածոր «բարեպաշտությամբ» ոչ միայն քայքայում է հոգիները, այլև խարխլում ազգային ինքնագիտակցության արմատները. մոլորյալն այլևս հայ չէ՝ առաջին հերթին եհովական է կամ մորմոն... Ապուշության հասնող տափակաբանություններ և բացահայտ «գլուխքլոզոց»: Ի՞նչ

բթացման է հասել մի ժողովուրդ, որը հանում իր հավատքի գնացել է Ավարայրի ճակատամարտին...

«Խորանում» է մեր անկախությունը... Արդեն անկախացել ենք կապի և էներգահամակարգերից, ավիացիայից և «Սևան-Հրազդանից», «Նաիրիտից» ու ԱԷԿ-ից, «անկախացել» ենք օրենքներից ու անտերացել իշխանություններից...

Թվում էր՝ համատարած ու եռանդուն այդ աճուրդի շնորհիվ կնվազի մեր արտաքին պարտքը, սակայն... Ավա՜ղ... այն աճում է՝ մոտենալով միլիարդին: Եվ՝ ոչ մի հույս, որ անգամ հեռու ապագայում մեզ կհաջողվի դուրս պրծնել վարկատու-ծովահրեշի օձագալար շոշափուկների պիրկ գրկից: Գուցե ամենահեռատեսը Լուկաշենկոն է, որն ամեն կերպ խուսափում է վարկային ստրկությունից: Տանջում է մի միտք. մի՞թե դա է արյունով ձեռք բերված մեր անկախության ֆինալը... Թվում է՝ պահն է, որ անգամ ազգի զոռբաները շանթահար կանգ առնեն ու իրենց հարց տան. «Ու՞ր ենք տանում այդ տանջահար երկիրը ու նրա տառապյալ ժողովրդը»... Եվ քանի դեռ ուշ չէ, փորձեն խորհել...

Իսկ զարմանալի մեր ժողովուրդը, չնայած այդ ամենին, գոյատևում է ու չի հանձնվում...

Պատմության այս վտանգավոր ոլորանում անմար հույսերովս առ ապագան կառչում եմ այդ առեղծվածից:

Մեր անվիճելի «հարստությունը»: Այո՛, մենք ունենք առավելություն, և անհերքելի, անգամ ամենախոշոր և ամենահզոր պետությունների նկատմամբ: Դա մեր կուսակցությունների հարյուրից անցնող անվանացանկն է՝ մեր ազգային անօտարելի հարստությունը... Կատակ բան չէ. կուսակցությունների թվաքանակով երկու միլիոնանոց մեր հանրապետությունը հպարտորեն գերազանցում է ողջ Եվրոպան, էլ չասենք խղճուկ ԱՄՆ-ը:

Ահա և այդ «հարստության» արժանի գնահատականը: Հեղինակի անունը, եթե չկռահեցիք՝ մեջբերման վերջում:

«Չկա ավելի մեծ չարիք, ավելի մեծ աղետ ժողովրդի համար, մասնավորապես մեզ նման փոքրիկ ժողովրդի համար, քան կույր կուսակցամոլությունը: Այդ տարամերժ ոգին համար չկան բացարձակ ճշմարտություններ, նրա համար չկա հասարակական շահ, պետական բարոյական: Նրա համար օտար է այն ամենը, ինչ որ իր կուսակցության կնիքը չի կրում: Ինչ որ իր կուսակցության ծնունդը չէ՝ անընդունելի է և անհանդուրժելի: Ծափահարելի է միայն այն, ինչ որ բխում է իր կուսակցությունից:

Կուսակցամոլության չար ոգին աստիճանաբար մթագնում է սրանց բանականությունը, կլանում խիղճը, և, վերջիվերջո, ի սպառ սպանելով այս դժբախտի բարոյական կարողությունները, դարձնում է սրան բարոյական ապուշ:

Քաղաքական ստախոսություն, հայհոյանք, կեղծիք, բանսարկություն, դավեր՝ ահա՛ սրա «կուսակցաշեն գործունեությունը»:

Դա անեծքն է մեր կյանքի: Կուսակցամոլության թունալի ախտով բռնված ժողովրդի ներկան տխուր է, ապագան անհուսալի:

Այդ ա7խտով վարակված ժողովուրդը միշտ էլ ներքուստ պառակտված է, միշտ էլ պատրաստի որս իր գիշատիչ հարևանների համար...»:

Գարեգին Նժդեհ

Մնում է Աղոթքով դիմել առ Աստված.

*Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն,*
*Այլ փրկեա զմեզ ի չարէ:*

*Յուլիս. 2003 թ.*

# «ՆԱԽԱԴԱՏԱԿԱՆ» ՇՐՋԱՆ

## (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԵՌ ԱՌՋԵՎՈՒՄ Է

*Թույնի առաջին կաթիլները կամ երջանիկ մանկություն սիրելի հայր «Արև - Ստալինի» շողերի ներքո:* 1931-ի՞ն էր, թե՞ 32-ին, Արմավիրում բանտ տարան հորական պապիս՝ հացթուխ Վարդանին: Մեկի մտքով հանկարծ չանցնի, թե դա բռնություն էր: Ամենևի՛ն: Պարզապես սոցիալիզմի կառուցման փառապանծ էջերից մեկը՝ արևմուտքի խարդավանանքներին ի պատասխան՝ «Մեծն Ստալինի» «մեր ժողովուրդը կգտնի ներքին ռեսուրսներ» հայտարարության խանդավառ իրականացումն էր: Գործելակերպը՝ անխրթին՝ առաջնորդի հստակ ու մատչելի ոճին հարազատ. ունևորի չարաբաստիկ համբավ ունեցողին (Հյուսիսային Կովկասում դա, առաջին հերթին, հայերն էին, հույները և ազգային այլ փոքրամասնությունները) տանում էին բանտ ու ծեծում... մինչև նա կիայտնի թաքստոցի տեղը: Եթե քիչ էր, կամ չուներ, աղերսանքը չէր փրկում, ծեծելով մեռցնում էին:

Պապս վերջինների ճակատագիրը կիսեց: 14-ին եղբայրների հետ Մոկաց աշխարհի Կարկառի գավառի Հալս գյուղից գաղթել էր Արմավիր, բացել հացի փուռ (նաև Մայկոպում) և վաստակածը բաժանում էր հայ կամավորներին ու էրկրից գաղթածներին, որ տնավորվեն ու գործ բացեն: Ինձ դա պատմել են այնտեղի գաղթականները Հայրենական Մեծ պատերազմից հետո: Եղբայրը, որին ուղարկել էր իր կնոջը (տատիս) և որդուն՝ Ավետիսին (հայրիկիս) բերելու, ձեռնունայն էր վերադարձել. կինը սովամահ էր եղել գաղթի ճանապարհին, որդին արդեն կամավոր էր (հրետանավոր) Անդրանիկի զորքում:

Մեկ տարի անց Կրասնոդարում տարան հացթուխ հայրիկիս: Որպես մասնավորի՝ տվեցին 5 տարի: Նրանց էլ կարելի է հասկանալ. կասկածելի տիպ էր՝ ո՛չ հարբեցող էր, ո՛չ էլ պորտաբույծ, օր ու գիշեր ձեռքերով շաղախում էր խմորի փթանոց գնդերը և աջ ու ձախ ծրի հաց բաժանում շրջակա աղքատներին: Մայրս բողոքարկեց Մոսկվա: Նիկոլայ II-ը ցարական ողորմածությամբ կպատասխաներ՝ "Всемилостивейше отказано"[1]: Ստալինը, փառք Աստծո, սրա նման փալաս ու շիլա-

---

[1] Ողորմածաբար մերժված է

շփոթ չէր՝ 10 տարի... Այս անգամ արդեն 58 հոդվածով՝ «ժողովրդի թշնամի»: Հիմնավորումը՝ «կուռ տրամաբանությամբ». ծնվել է Թուրքիայում, ուրեմն թուրքական լրտես է, գուցե ավելի վատ՝ դաշնակ: Հոգ չէ, որ դրանք իրար հետ չունեն: Բախտներս բերեց. գնդակահարությունը մոդայիկ էր դարձել 37-ականներին: Տարան, ըստ հաստատված կարգի, խոր գիշերով: Քանի որ մեր կուտակումներն էլ քիչ էին, մայրիկիս ու տատիս ձեռքերից հանեցին հարսանեկան զարդերը, հավաքեցին կահ-կարասին ու սպիտակեղենը: Հայրիկիս վերջին հայացքը տանջում էր ինձ տարիներ: Այսօր էլ եմ հիշում... Երբ 10 տարի անց վերադարձավ, պահանջվեց օտարացածներիս մերձեցման հոգեպես ծանր պրոցես, որի հաջողությանը նպաստեց Կատարինե մայրիկիս հավատարմությունը և նրբանկատությունը: Ես ու կրտսեր եղբայրս՝ Վազգենը, դարձանք ժողովրդի թշնամու զավակներ...

Հայրիկիս ձերբակալմանը հաջորդեց 33-ի գենոցիդը Ուկրաինայում և Կուբանում: Կուլակների սաբոտաժի պատրվակով գյուղացիներից անխտիր բռնագրավեցին ցորենի վերջին հատիկը (նաև սերմացուն): Գարնանը սկսվեց հրեշավոր սովը. գյուղը լցվեց քաղաք, գայլը՝ գյուղ՝ հոշոտելու դիակները: Բանը հասավ մարդակերության. երեխաներին երեկոյան դուրս չէին թողնում՝ բացառված չէր կարկանդակի լցոնամիս դառնալը: Փողոցում սովորական էին դարձել սովամահների դիակները կամ փրփուրը բերանին, փքված դեմքերով հոգեվարքայինները: Երեխաներս ստանում էինք 150-ական գրամ եգիպտացորենի հաց՝ մամալիգա, մայրիկը, որը, շտապ ավարտելով հաշվապահական դասընթացը, աշխատում էր տնային կառավարչությունում՝ 400 գրամ: Շատ անգամ փայս չեմ հասցրել դպրոցից տուն. կիսախելագար սովյալը խլում էր այն ու խժռում՝ նրան գետնին տապալածների ոտքերի հարվածների ուղեկցությամբ: Հետո նրանց հավաքել ու լցրել էին քաղաքի կենտրոնական այգիներից մեկը, շրջապատել ոստիկաններով, որոնք արգելում էին քաղաքացիներին նրանց մթերք փոխանցել: Այնտեղ նրանք մեռնում էին՝ ծառերի բները կրծոտելով: Ոմանք խեղդում էին սեփական երեխաներին՝ վերջ տալով նրանց տառապանքին:

Ես, ինչպես ասացի, դարձա ժողովրդի թշնամու զավակ: Մեր հայկական տարրական դպրոցի 4-րդ դասարանի մի հարբեցողի տարիքանց խուժան որդու պահանջով ինձ չընդունեցին պիոներների շարքերը՝ զրկելով մետաղյա գեղեցիկ սեղմակով փող-

կապը հագնելու բաղձանքից: Ուսուցիչները չհամարձակվեցին առարկել: Ազդվելով արցունքներս զսպելու իմ ապարդյուն ճիգերից՝ Երևանից գեղեցկուհի կնոջ հետ եկած մեր տնօրենը դիմեց քաղաքի ժողկրթբաժնի նախագահին: Վերջինս ընդառաջեց, սակայն շատ շուտով ինքն էլ, տնօրենն էլ ձերբակալվեցին ու ընդմիշտ չքացան: Յուսով եմ՝ ոչ իմ մեղքով:

Մորաքրոջս տղայի՝ Աշոտի, ճակատագիրը ավելի ծանր դասավորվեց. իր հոր՝ համոզված կոմունիստ, մի փոքր միամիտ, մշտապես կարիքավոր, բազմազավակ բանվոր Արշակի, որը համոզված էր, որ «մեր պարտիան անմեղ մարդու չի բանտարկի», ձերբակալումից անմիջապես հետո Աշոտը 5-րդ դասարանից դուրս շպրտվեց փողոց՝ ենթարկվելով տարիների թափառաշրջիկության: Յայրը այլևս չվերադարձավ: Աշոտը պատերազմի զորակոչվեց, հենց առաջին մարտում ծանր վիրավորվեց՝ դառնալով հաշմանդամ: Մինչ այդ զոհվել էր իր ավագ եղբայր Անդրանիկը:

Օրգանների անխոնջ, սևեռուն հայացքն ուղեկցեց նաև մյուս պոտենցիալ հանցագործին՝ եղբորս, նրա դպրոցական և ուսանողական տարիներին: Աչալրջությունը պսակվեց հաղթանակով՝ «կանխարգելիչ» հարվածը եղբորս գլխին իջավ ճիշտ պահին, ի չիք դարձնելով նրա կողմից «նյութվող վտանգավոր ծրագիրը»: Որպես Մոսկվայի էներգետիկ ինստիտուտի ջերմաէներգետիկայի բաժնի գերազանցիկի՝ ավարտական կուրսում ընդգրկեցին խորացված ուսուցմամբ հատուկ խումբ: Նախ, փայլեց իր ներկայացրած կուրսային աշխատանքով, հետո... հրավիրեց դեկանը և հայացքը փախցնելով մրմնջաց, որ ետ է փոխադրվում նախկին խումբ: Ապրումներն այնպիսին էին, որ մի քանի գիշեր մնացի իր հետ հանրակացարանում: Խորտակված էր հերթական մի անմեղ հոգի: Փառք Աստծո, իր մեջ ուժ գտավ և, ի հեճուկս «անխոնջ կերբերոսների», դարձավ փայլուն ջերմաէներգետիկ, հասավ միութենական էներգետիկայի նախարարության մոնտաժային խոշորագույն (400.000-անոց) Գլավկի պետի պաշտոնի, ղեկավարել է միության և արտասահմանի բոլոր կառուցվող ՋԷԿ-երի, իսկ այնուհետև նաև ատոմակայանների (այդ թվում՝ նաև Յրազդանի ՊՇԷԿ և հայկական ատոմակայան) մոնտաժային աշխատանքները, արժանացել է բազմաթիվ շքանշանների և... իսպառ մոռացության Յայաստանում: Երբ 91-ի ապրիլին անլուր տառապանքներում կնքեց իր մահկանացուն, և

նրա մահը սգաց միության էներգետիկայի ողջ նախարարությունը, իր պաշտած Հայաստանի ոչ մի թերթում չհայտնվեց մի ցավակցական երկտող, թեև այն ժամանակվա իշխանավորներն իմ գործընկերներն էին ու նաև ողջ էին էներգետիկայի այն գործիչները, որոնք քաջատեղյակ էին նրա լումային:

34-ին՝ Կիրովի սպանությունից հետո, ձերբակալությունների «կիրովյան» հոսքի սկիզբը դրվեց: 37-ին մոլեգնում էր տրոցկիստազինովևական կամպանիան: Գնդակահարվում էին նախկին նվիրյալ հեղափոխականներ, պետական այրեր, խոշոր մտավորականներ ու արվեստի գործիչներ: Միլիոններ հեծծում էին Սիբիրի և Ուրալի կալանավայրերում ու «փառապանծ» կառույցներում, իսկ «ժողովրդի թշնամիների» զավակները և հարազատները համերաշխ երգում էին "Легко на сердце от песни веселой" (այն տարիներին տարածված երգից):

37-ին տարան մյուս՝ մորական, պապիս՝ Մանվելին: Ավելի ճիշտ՝ խորթ պապիս: Հարազատ պապս՝ Մելիք-Սահակյան Գրիգորը, որը 1828-ին Սալմաստից Նախիջևանի Յարմջա գյուղ գաղթած ու սնանկացած մելիքական ցեղից էր, մասնակցել էր Առաջին համաշխարհայինին: Որպես «ավար», Գերմանիայից բերել էր թոքախտ, որից և մահացել՝ մինչև իմ ծնվելը: Տատս մինչև իր վախճանը պահում էր Յարմջայի իրենց «բաղերի սանաքները»: Մանվելը նույնպես Սալմաստից էր, կոշկակար, Րաֆֆու երկրպագու և հեռու ազգական, հայոց պատմության գիտակ: Արգելված Րաֆֆին և Մուրացանը ծվարել էին ձեղնահարկում, ուր և կարդում էինք կրտսեր եղբորս՝ Վազգենի հետ, հավաքելով թերթ առ թերթ: Հայրիկիս ու պապերիս ձերբակալման պահից մեր տանը չէր լռում Անուշ տատիս երկարաշունչ ու ճարտար անեծքը Ստալինի հասցեին, երբեմն՝ անզգուշության ատիճանի՝ փողոցում: Հավանաբար Աստված անսաց տատիկիս թախանձանքներին. 7 ամիս անց, 1938-ին, անձրևոտ մի խոր գիշեր Մանվել պապս թակեց դուռը: Նրա ազատ արձակվելը ստալինյան տանջարանների «ասպետների» այն հազվագյուտ քմահաճ կատակներից էր, որի վրա արժե կանգ առնել: Թույլ թոքերով, նիհար, միշտ հազացող, միշտ հիվանդ, սակայն զարմանալի հոգևոր ուժի տեր այդ մարդը բնածին ինտելիգենտ էր՝ լիխաչովյան բնորոշմամբ: Տեսնելով, թե ինչ կիսամեռ, ուշաթափ վիճակում են բերում ուժեղ երիտասարդներին հերթական «հարցաքննությունից» հետո ու շպրտում

դաhլիճի hատակին, ուր, ինչպես տառեխը տակառում, ճխտել էին տարբեր տարիքի ու խավի «ժողովրդի թշնամիների», ֆիզիկապես տկար, բայց արի ու արժանապատիվ պապս որոշել էր նման hաճույք չպատճառել սադիստ քննիչին: Երբ իր hերթը hասավ, առանց կարդալու ստորագրեց իրեն պարզած, նախապես գրված մեղադրանքը: Արիամարիական այդ վերաբերմունքը իր ստեղծագործական «գոhարի» նկատմամբ դիպել էր սադիստի hեղինակային պատվին. "Ты, что же, старый хрыч, не хочешь даже узнать — за что я тебя к стенке поставлю?"[1]... Պնդեց, որ պապս կարդա: Պարզվել էր, որ պապս hայ մի քանի կոշկակարների hետ որոշել էր պայթեցնել «կարևոր ռազմավարական օբյեկտ»՝ այն կավածեփ խրճիթը, որն իրենք վարձել էին իրենց արտելի hամար: Բացի դրանից, hազիվ քայլող պապս նենգորեն մտադրվել էր պայթեցնել Կրասնոդար-Տիխորեցկ 150 կիլոմետրանոց երկաթգիծը: «Ամեն ինչ ճիշտ է», hաստատել էր ծայրաստիճան տկարացած պապս՝ hենվելով պատին, որ չընկնի: Քննադատական hայացք գցելով պապիս hյուծված դեմքին՝ «միկրոեժովը» իր օպուսի նկատմամբ պապիս անտարբերության hամար վրեժխնդրության յուրովի ձևը գտավ. "Вот что старик, на тебя и пулю жалко, матай-ка ты подыхать к своей старухе"[2]... Ու hրամայել է դուրս hանել: Պապս, hամոզված, որ տանում են գնդակաhարելու, ուշքի է եկել միայն փողոցում, այն էլ՝ ուղեկցողի՝ «ռադը քաշելու» քնքույշ առաջարկից hետո: Համոզված չեմ, որ սադիստը hաղթաhարել է Եժով-Բերիա սերնդափոխությունը (Ստալինը խնամքով ոչնչացնում էր «hայրենասիրական պարտքը» կատարած ապետներին hաջորդների ձեռքերով): Սակայն պապս, ի hեճուկս նրա մաղթանքին, ապրեց 20 տարուց ավելի: Հորս ողիսականը ավելի տառապալից եղավ. քշվեց Մագնիտոգորսկ, ուր այդ շրջանում քաղաքի hետ մեկտեղ ստեղծվում էր մետաղագործական hսկան՝ տաղանդավոր ինժեներ, նույնպես բանտարկյալ Ռամզինի նախագծով ու hսկողությամբ: Շարքային բանտարկյալների վիճակը դժոխային էր. hայրիկիս պատմելով

---

1 Ի՞նչ է, քյաֆթառ, անգամ չե՞ս ուզում իմանալ, թե ինչի hամար եմ քեզ պատին դեմ տալու:

2 Սիա թե ինչ, ծերուկ, քեզ վրա գնդակն էլ է ափսոս, կորի գնա պառավիդ մոտ սատկելու:

հաճախ աշխատել են մինչև ծնկները հասնող սառցախառն ջրի մեջ: Մահանում էին հարյուրներով՝ ի՞նչ փույթ, թե գնդակահարություն չկար. երկարակեցությունը ամիսներով էր չափվում: Յայրս, շնորհիվ լեռնցու իր երկաթյա առողջության, դիմացավ երկու տարուց ավելի, սակայն, եթե մայրս, լսելով իրավիճակի մասին, չհասներ այնտեղ ու չկազմակերպեր նրա փախուստը, երկար չէր ձգի: Տարիներ թափառեց, մինչև ժամկետը լրացավ: Բարոյա-հոգեկան անկումից նրան փրկեց հավատ-համոզմունքը, որ տանը իրեն սպասում են հավատարիմ Պենելոպե-Կատարինեն ու երեխաները:

Թերսնումը և ապրումները 13 տարեկանիս հասցրին թոքախտի, որն այդ տարիներին անբուժելիի համբավ ուներ: Մայրս վաճառեց ունեցած-չունեցածը ու տարավ ինձ թոքախտավորների համար բարենպաստ կլիմայով հունա-ռուսական լեռնային Բականսկայա գյուղը՝ Նովորոսիյսկի ճամփին: Նույն ժամանակ Աստված ուղարկեց Միությունում դեռ չլսված շնչառական յոգայի՝ Պրանայամայի ծեռնարկը: Այդ երկու գործոնը և համոզմունքս, որ մահն ինձ համար չէ, կատարեցին առողջացմանս հրաշքը:

* * *

Րաֆֆին ու պապս սրսկեցին հայրենասիրություն, հայրս՝ եղեռնացավ, Յայ Դատ ու Անդրանիկի պաշտամունք, տատս ու 37-ը՝ խոր ատելություն Ստալինի ու լենինիզմի նկատմամբ:

* * *

Սկիզբ առավ Կրասնոդարի հայ և հույն համայնքների՝ որպես ազգային միասնական օրգանիզմների, քայքայումը: Փակվեց «նացմեն»[1] (национальные меньшинства) փաստացի հայկական ակումբը, ուր սիրողական ուժերով հայկական ներկայացումներ ու դասախոսություններ էին կազմակերպվում տեղական հայալեզու հույների մասնակցությամբ, գործում էր գրադարան: Փակվեցին հունական թերի միջնակարգ ու հայկական տարրական դպրոցները, ավելի ուշ՝ հայկական միջնակարգը, քանի որ հայերը դադարել էին երեխաներին հայկական դպրոց

[1] ազգային փոքրամասնություններ

ուղարկել: 1918-ին հայերի ուժերով կառուցված ծխական դպրոցը՝ քաղաքում լավագույն շենքերից մեկը, տրվեց քաղաքային գրադարանին: Հայաստանը չէր հասցնում ուսուցիչներ մատակարարել. հերթով չքանում էին КГБ-ի «սև խոռոչում»: Այսպիսով, վերացան հայ հասարակությունը համախմբող հավաքատեղիները:

Դպրոցի ավարտական երեկոն 41-ի հունիսի 21-ին էր: Ես՝ ուսուցիչների որակավորմամբ գերազանցիկների գերազանցիկս, ամբողջ երեկո գամվել էի աթոռին՝ հրաժարվելով աղջիկների՝ իրենց հետ պարելու առաջարկներից, քանզի շալվարիս «անհարմար» տեղում գեղեցկափայլում էր «ակնոց» կարկատանը, իսկ ծակ կոշիկից գողտրիկ դուրս էր ցցվում «ուոթիս բութ մատը»:

Պատերազմի բոթը հնչեց մի քանի ժամ անց, երբ մենք զբոսնում էինք քաղաքում:

*Հիմա էլ պատերազմ:* Մոսկվայի համալսարանի բաղձանքը մեռավ. ընդունվեցի Կրասնոդարի մանկավարժականի ֆիզմաթը: Տեղին է մի խոստովանություն. թեև 18-ս չէր լրացել, կարող էի գնալ կամավոր, սակայն վերը շարադրածս ամենևին չէր նպաստել իմ մեջ խանդավառ հայրենասիրության կայացմանը: Որոշել էի, որ պարտքս կկատարեմ, բայց առաջ չեմ ընկնի:

Առաջին կուրսի քննությունները հանձնելուն պես մի խումբ ուսանողներիս ուղարկեցին սովխոզ, ուր մի գեղեցիկ առավոտ հայտնվեց գերմանական բեռնատարը՝ մոտոցիկլիստների ուղեկցությամբ: Պարզվեց, որ քաղաքը հանձնել են համարյա առանց կռվի: Բեռնեցին մեր հավաքած բերքը, իսկ մեզ, կցելով գերիների շարասյանը, ոտքով քշեցին քաղաք: Մինչ ես անհանգստանում էի հրեա ուսանող Դիմայի համար, դու մի ասի 5-րդ կետի (ազգություն) իմաստով կասկածելին ես էի: Երկօրյա (նաև գիշերները) քայլարշավը շների ու ոստիկանների ուղեկցությամբ, Դեյր-էլ-Զորի Գողգոթայի մի փոքրիկ պատառիկն էր՝ տկարների գնդակահարվող դիակ-ուղենիշերով: Կեսամյա օկուպացիան հանգեցրեց ֆաշիզմի նկատմամբ ատելության հաստատմանը: Հայ լինելս նպաստեց դրան. չգիտես ինչու գերմանացիները համոզված էին, որ սևահերները անկասկած հրեա էին, ուստի ամեն մի էսէսական կարող էր կանգնեցնել՝ ազգությունդ պարզելու համար: Մի անգամ որսացին ու քշեցին ան-

տառ կտրելու: Սովամահության վտանգին գերադասեցի գնդակահարության վտանգը ու փախա գիշերով: Մյուս անգամ հարբած էս-էս-ականը քաղաքի կենտրոնական փողոցում ատրճանակը կպցրել էր քունքիս ու օրորվելով հետաքրքրվում՝ «Յու՞դ»... Ներքուստ քարացած՝ բնազդով զգում էի, որ տագնապս չպետք է տեսնի. հավերժություն տևած 3 վայրկյանանոց պաուզա պահելով կիսաժպիտ (վայ էդ ժպիտին) քամեցի ատամներիս արանքից. «Նայն, իխ բին արմենիեր», որից հետո նրա սթափ ուղեկցողը քաշեց տարավ՝ զրկելով նրան կրակելու հաճույքից: Ճշմարտության դեմ չմեղանչելով ասեմ, որ բնակարաններում տեղավորվող ճակատային զինվորներից չէին գանգատվում, ասում էին՝ «նորմալ տղերք են»: Երբ քաղաքը ազատագրվեց, հրաժարվեցի քաղաքային էլեկտրակայանի կամ ռադիոհանգույցի վերականգնման աշխատանքներին «բրոնյայով» մասնակցելու առաջարկից, ներկայացա զինկոմ, այնտեղից՝ գործող բանակ: Ռադիոսիրողությունս ու մորզեի այբուբենի իմացությունս կանխորոշեցին ռազմական կենսագրությունս. դարձա ռադիոօպերատոր, մի փոքր ուշ՝ գնդի գլխավոր ֆուրգոնային ռադիոկայանի պետ, մինչև պատերազմի ավարտը: Բնավորությամբ գործին տրվում եմ ամբողջապես, ուստի շուտով Առաջին Մերձբալթյան ճակատի թերթերի էջերում հայտնվեցի որպես «ռադիոաս»: Գնդի քաղբաժնի պետ, բարեկիրթ գնդապետ Կաչանովը համակրում էր ինձ, գալիս էր ռադիոֆուրգոն ու ժամերով զրույցի բռնվում սերժանտիս հետ: Հաճախ խոսք էր գցում կուսակցության շարքերն անցնելու մասին՝ առաջարկելով իր հանձնարարականը, ու զարմանում (վերջում էլ զայրանում), որ չեմ կառչում առիթից: Ի տարբերություն իր հոր գնդակահարությանը ի պատասխան՝ ընկ. Դարբինյանի ընտրած պարտտոմսավորմանը, ինձ համար հարազատներիս խորտակված ճակատագրերի դիմաց ստալինիզմի դեմ բողոքի միջոցների «մենյուի» մեջ միակ, ոչ ինքնասպան ձևը պարտ. տոմսը մերժելն էր: Վերջում ջանքեր պահանջվեցին պարտադրողական բնույթի հիշեցումների ներքո ձգձգելու հարցը մինչև զինացրվելը: Քյոնիգսբերգի անկումից հետո փոխադրեցին հյուսիսային Չինաստան, այնտեղից՝ Վլադիվոստոկ: Զորացրվեցի 46-ի ամռանը. կես տարուց ավելի պահեցին նորակոչիկներից ռադիստներ պատրաստելու նպատակով:

*Ստալինը ոչինչ չի մոռանում:* Հինգ տարի անց եկավ Մոսկվայի համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի ուսանող դառնալու վաղեմի բաղձանքս իրագործելու պահը: Ավաղ... Պարզվեց, որ իմ 4 տարվա ծառայությունը գործող բանակում չի չեզոքացնում կեսամյա օկուպացիան, թեև քաղաքը հանձնողը, ազնիվ խոսք, ես չէի[1]: Հարվածը քիչ էր մնում ինքնասպանության հասցներ, բոլոր ջանքերս ապարդյուն եղան: Արդեն սեպտեմբերի վերջն էր՝ ընդունվեցի էլեկտրակապի ինստիտուտ, այս անգամ լռելյայն անցնելով օկուպացիայի փաստի կողքով: Մեկուկես տարի տառապելով հարկադրված ստից՝ խոստովանեցի ինստիտուտի պարտկոմի քարտուղար, նույնպես պատերազմի մասնակից, Գենա Սորոկինին. «Այնքան անհմուտ ես արել, որ ես անմիջապես գլխի էի ընկել, ու քանի որ լավ եմ հասկանում քո վիճակը ու տիրող տխմարությունը, վաղուց հարթել եմ այդ հարցը ռեկտորի հետ... տար, արտագրի...» ու պարզեց ինձ չարաբաստիկ անկետան: Ի պատիվ ինստիտուտի ղեկավարության և դասախոսական կազմի, դա խոչնդոտ չդարձավ, որ ինձ (ճակատագրի հեգնանք) ստալինյան թոշակի ներկայացնեն:

Թոքախտից բուժեց պրանայաման, Հայ Դատից բուժում չկար՝ հանգիստ չէր տալիս: Ի վերջո, ուսանողական այդ տարիներին «հանդուգն մուկը» սկսեց իր «հերոսական» պայքարը ամենահզոր գազանի՝ «սարսափազդու կատվի» դեմ՝ հանուն Արցախի և Նախիջևանի: Այսինքն, գլուխս բնից չհանելով, ծվծվում էի հարևանությամբ դարանակալած կատվի՝ Ստալինի, վրա. կեղծ ստորագրությամբ նամակներ հղում Միկոյանին ու Ստալինին: Ցավոք, սևագրերը չեմ պահպանել՝ միասին կծիծաղեինք երանելուս վրա:

Թող ինձ ներվի ինտիմ բնույթի մի շեղում. դաստիարակվելով Կրասնոդարի հայ համայնքում՝ ժառանգեցի ազգային փոքրամասնություն հանդիսացող կոմպակտ համակեցություններին հատուկ, տեսակի պահպանման բնազդը և իբրև հետևանք՝ խառնամուսնությունների նկատմամբ հակազդեցությունը: Հանուն ինքս ինձ տրված այդ երդմանը՝ խորտակեցի իմ և համակուրսեցի Նինայի միջև ծագած խորը զգացմունքը: Մխիթարվեց

---

[1] Ստալինի համոզմամբ օկուպացիայում կամ վիրավոր, անգամ անգիտակից վիճակում գերության մեջ հայտնվածը դավաճան է:

որդիով՝ Ալեքսանդրով, և մինչև իր վախճանը մնաց հավատարիմ իր զգացմունքին: Ալեքսանդրը, որին գրեց հայ, Մոսկվայում կոմիտեի կալանքի օրերին (89-ին) ուղեկցում էր կնոջս՝ Գրիգելդային, և մյուս կալանավորվածների ազգականներին՝ նրանց «տառապանքի ուղևորություններում»: Այսօր, երբ Ալեքսանդրից բացի նաև Վարդան-Ռուզան-Վազգեն-Գայանեի հայր եմ, արդարացնում եմ այդ զոհողությունը:

* * *

Ինստիտուտի հետավարտական ծրագիրս կանխորոշել էի. խնդրելու եմ ուղեգիր դեպի ավետյաց երկիր՝ Հայաստան: Վերջապես կտեսնեմ... Այստեղ, սակայն, այլ գայթակղիչ կարգի հանգամանքներ առաջ եկան: Քանի, որ ոչ վստահելիի պիտակը սոսնձված էր ինձ (պատերազմին գաղտնի ռադիոգրամաների տնօրինությունը կարելի էր ինձ վստահել, ռադիոօբյեկտ ուղարկելը վտանգավոր էր) դիպլոմային աշխատանքս ստիպված էի կատարել ամբիոնում՝ վերցնելով տեսական թեմա: Դիպլոմս վերաբերում էր էլեկտրական շղթաների օպտիմալ սինթեզին: Պարզվել էր, որ մաթեմատիկական ապարատը (ռուս մաթեմատիկոս Զոլոտարյովի մոտարկման խնդիրներից մեկը), որը կիրառել էի ղեկավարիս խորհրդով, առաջադիմական էր. ինձանից առաջ այն կիրառել էր ամերիկացի Դարլինգտոնը, սակայն իմ ընտրած խնդիրը հանգեցնում էր ավելի ընդհանրական լուծման: Պետական հանձնաժողովը (1951 թ.) դիպլոմային աշխատանքս հանձնարարեց հրապարակման, իսկ ստալինյան դափնեկիր Վիկտոր Սեմյոնովիչ Մելնիկովը ինձ իր ինստիտուտում (НИИ-100) աշխատանքի վերցնելու հայտ ներկայացրեց՝ երաշխավորելով ըստ էության նույն աշխատանքս մեկ տարի անց (մինիմումները հանձնելուց հետո) ներկայացնել թեկնածուականի պաշտպանության: Քանի որ գրանցված էի հանրակացարանում, բնակարան առաջարկեց Զվենիգորոդում: Ես 250 շրջանավարտներից (շատերը բուն մոսկվացիներ էին) այն մի քանիսից մեկն էի, որին պահում էին Մոսկվայում (այլաքաղաքացիների բաղձանքը, հանուն որի, ոմանք, մասնավորապես հայերը ֆիկտիվ ամուսնության էին դիմում): Գայթակղությունը մեծ էր, հեռանկարը՝ փայլուն... Պահանջվեց ոչ միայն ներքին, այլև արտաքին դաժան պայքար նախարարության բարձրաստիճան չինով-

Նիկի հետ. ոչ մի կերպ չէր համաձայնում ինձ վերանշանակելու Հայաստան: Գործը հասավ փոխադարձ վիրավորանքների: Նրբանկատ ու հոգատար Վիկտոր Սեմյոնովիչը զարմացել ու սաստիկ նեղացել էր ինձանից. երբեմն ինձ թվում էր, որ նա չափազանցնում է իմ հնարավորությունները, ներուժը. միշտ վախ կար, որ մի օր կհամոզվի ու կհիասթափվի...

# 1952 ԹՎԱԿԱՆ: ՀԱՅԱՍՏԱՆ:

## *Առաջին տպավորություններ*

Ալավերդու կայարանը՝ գիշերով, դիմացը՝ լույսերով ողողված սար, վագոնում՝ հայերեն քաղցր թոթովող երեխա: Լենինական-Երևան անապատանման պեյզաժը, գյուղի կանայք՝ տղամարդկային կոշտ ու խանձված դեմքերով, Երևանի կայարանի սարսափազդու զուգարանը (ավելի ուշ համոզվեցի, որ դա հատուկ է հանրապետության բոլոր հասարակական և ձեռնարկություն-ների զուգարաններին)՝ որպես մեր հնագույն մշակույթի սիմվոլ, տրամվայում՝ հարևաններիս գրույցը. «սուխոյ ատկազ կկայնես, իմացա՞ր...», այգում՝ մի սիրունատես աղջիկ նստարանին նստած իր ընկերուհուն՝ «ատդիխատ ե՞ս անում...», ճաշարանում սեղանիս մոտենում է երիտասարդ, ձեռքը դնելով աթոռին՝ «զանիտ ա՞»: «Ոչ, զբաղված է...»: Փորձում է տանել աթոռը. «ես ասացի զբաղված է»... «դե, հայերեն ասա, հասկանանք, էլի...», սրտնեղում է տղան... Օհո՜, ահա, թե ինչպիսին ես, սիրելի հայրենիք... Մի քանի տարի անց համալսարանական գործընկերներիս հետ զբոսնում էինք Մաշտոցի (Լենինի) պողոտայով: Յոււգոյի Գավրոշի երևանյան եղբայրը ազդարարում է. «Կուբանի ժարիտ արած սեմուշկա...»: Մոտ եմ կանչում.

– Ի՞նչ արժե բաժակը:

– 15 կոպեկ, ձյաձյա:

– Ահա քեզ 3 ռուբլի, բայց մի պայմանով՝ 15 րոպե գոռում ես. «Կուբանի բոված արևածաղիկ», եղա՞վ:

– Ընչի չէ՞, մի հատ էլ ասա, ոնց է՞ր...

Ու հեռու կանգնած սպասում ենք: Յենց առաջին կոչը շանթահարում է անցորդներին.

– Յա՛, մալադե՛ց, տղա ջան, հլա տուր էդ քո բովածից:

10 րոպե անց Գավրոշը դատարկ զամբյուղով վազելով մոտենում է մեզ:

– Ես ինչ լավ բան ասիր, ձյաձյա ջան:

– Մի անգամ էլ ձյաձյա ես ասել կծեծեմ... Ասա՝ քեռի:

Նորահայտ ընկերներիցս մեկը խորհուրդ տվեց.

– Մի ասա «այդպես», ասա «ըտենց»՝ ձեռ կառնեն...

*Դոն Քիշոտը վարում է տեղական նշանակության մար-տեր:* «Սովետական Հայաստան»-ում մի վայ-թարգմանիչ Վենետիկի քաղաքապետարանը ("Палата дожей"[1]) (ռուսերեն կասեին ничто-же сумняшеся) թարգմանել էր «անծրևների պալատ», մյուսը լազերին այնպիսի հատկություններ էր «շնորհել», որոնք հասու չէին նույնիսկ ֆանտաստի բորբոքված երևակայությանը... Անշուշտ՝ նամակներ խմբագիրներին: Համաճարակ էր դարձել աղջիկներին սիրահետելու «նուրբ» ձևը. ծնագնդիկը հասցնելով սառույցի ամրության՝ աշխատել կպցնել այտը կամ առավել հաջողակ լինելու դեպքում՝ աչքը հանել: Եվ ոչ ոք չի զայրանում, չի հանդիմանում: Անմիջապես «Ավանգարդ» է սլանում հեգնաթունոտ (պետք է «ասպետները» ծիծաղելի հիմարների տեսքով ներկայանան) «Աչքդ հանեմ՝ ինձ սիրիր» ֆելիետոնս («Ավանգարդ», N 20, 1977 թ.): Խմբագրության պնդմամբ այն նկատելիորեն սառեցրել էր «ասպետների» կրքերը, ուստի ստորև անհամեստաբար հանձնում եմ ընթերցողի դատին:

ԱՉՔԴ ՀԱՆԵՄ՝ ԻՆՁ ՍԻՐԻՐ

Չգիտես ինչու, երբ խոսք է բացվում մարդկության առաջընթացի մասին, առաջին հերթին հիշում են միայն տեխնիկական առաջադիմությունը՝ «Նախկինում Դիլիջանից Երևան 2 օրում էին գալիս, իսկ հիմա՝ 2 ժամում»:

Մինչդեռ առաջադիմությունը կատարելագործել և հեշտացրել է նաև բարոյա-էթիկական ոլորտի հարաբերությունները: Վերցնենք անգիսի մի նուրբ ոլորտ, ինչպիսին թույլ սեռի նկատմամբ վերաբերմունքն է:

Հավանաբար նախապատմական ժամանակների նրբաբարո կաբալիերոն խստասիրտ ու անսասան գեղեցկուհու սիրտը շահելու համար հազար կտոր էր լինում, որ ձեռք գցի մի ինչ որ դելիկատես, ասենք՝ մամոնտի լյարդ, որը, ինչպես կռահում եք, «դասավորում» էր ոչ թե ծանոթ գործարարի միջոցով, այլ վտանգավոր որսի գնալով: Միջին դարերում, երբ մամոնտները սպառվել էին, սիրահար ասպետը փորձում էր մրցահրապարակում իր մրցակցի «լյարդը դասավորել», երաժշտասեր իտալացին կամ իսպանացին իր սիրո առարկայի ուշադրությունը ջանում էր գիշերային սերենադներով ու սոնետներով գրավել, նրբակիրթ ֆրանսիացին կաշվից դուրս էր գալիս սրախոսության մեջ մրցելով, լեհը հիացնում էր գրավիչ պարով և այլն:

Սիրահետելու ամենակատարյալ և հեշտ լուծումը գտել են մեր որոշ երիտասարդներ: Այդ նպատակով մի քանի բեղավոր և անբեղ հավաքվում են փողոցի որևէ անկյունում և նախօրոք մինչև քար վիճակ պնդեցրած ձնագնդերով «սիրահետում» են փողոցով անցնող ամեն մի անծանոթ աղջկա... Այս

[1] Դոժերի պալատ

ձևով բնակելի Նորքի զանգվածում փորձեցին «սիրահետել» Մոսկվայից ժամանած իմ հյուրին, որը եկել էր մոտիկից ծանոթանալու մեր նոր ու հին ճարտարապետությանը:

Պետք է միաժամանակ նշել, որ վերոհիշյալ տիպի ասպետները վերջին 20 տարում բանականության զարգացման պրոցեսում հսկայական թռիչք են գործել: Եթե նախկինում փորձեիք հանդիմանել, պատասխանը լինում էր՝ «Քեզ ինչ, կնի՞կդ ա...», հիմա հիացական աստիճանի նուրբ պատասխան են տալիս՝ «կարող ա ծանոթս ա, քե՞զ ինչ»: Մասնավորապես նախորդ դեպքում էլ փորձեցին համոզել, որ մի օր առաջ եկած հյուրս «իրենց ծանոթն ա»:

Ես ցանկացա ևս մի երկու հարցի պատասխան ստանալ, օրինակ.

1. Յաջողվե՞լ է, արդյոք, որևէ մեկին որևէ աղջկա հետ այդ ձևով մտերմանալ:

2. Ի՞նչ կմտածեր վերոհիշյալ «ասպետը» մեկ այլ «ասպետի» մասին, որը իր քրոջ կամ սիրած աղջկա աչքն է կպցրել ծնգնդով:

Ավա՜ղ, պատասխանը ես ստացա միայն 50 մետր հեռանալուց հետո՝ մեր ետևից սուրացող ծնգնդիների և քրքիջի միջոցով:

Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ
Տեխնիկական գիտությունների դոկտոր

Դրանով սահմանափակեմ «տեղական նշանակության մարտերի» թվարկումը, ժամանակն էր ընդարձակել պայքարի ճակատը: Ու, քանի որ իմ մեջ վաղուց բողոքավոր էի դարձել Միկոյանի հանդեպ՝ Ղարաբաղի հարցում, ապա անհապաղ նամակներ հղեցի իրեն («մի խումբ ընկերներից»), որոնցից առաջինում կշտամբելով նշածս կրավորական պահվածքի համար, երկրորդում՝ կոչ էի անում միջամտել հանրապետության ներքին կյանքի ճչացող թերությունների վերացման խնդրին (պարզ է, որ նամակները քաղաքացիների «տարբեր» խմբերից էին): Արժե մեջ բերել 2-րդ օպուսը՝ ի հիշեցում նրանց, ովքեր այսօր իդեալականացնում են այն անցյալը: Գրությանս վրա տարեթիվը նշված չէ. ամենահավանականը 57–58 թթ.: Յամենայն դեպս դա Զարոբյանի նշանակվելուց առաջ էր. բանն այն է, որ Խանջյանից հետո ընկած ժամանակաշրջանում Զարոբյանն իր հայրենասիրությամբ, ազնվությամբ ու համեստությամբ, իմ համոզմամբ, մարմնավորեց կոմունիստ ղեկավարի չգերազանցված իդեալը: Ուստի նամակը նրա գալուց առաջ է գրվել:

## ՆՈՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ

Եղբայրս՝ Վազգենը, նոր էր ստացել 401 փոքրիկ «Մոսկվիչը»: Չտեսներիս համար դա հրաշք էր՝ սեփական տնակ անիվների վրա: Որոշեցինք երեքով (մայրիկիս հետ) Կրասնոդարից Երևան անցնել մեքենայով: Մցխեթի կեմպինգում կանգ առանք գիշերելու: Մոտեցավ մի հաճելի վրացի երիտասարդ (պարզվեց՝ գիդ էր) ու խորհուրդ տվեց այցելել «Սվետիցխովելի» եկեղեցական համալիրը: «Դա մեր էջմիածինն է», – հպարտությամբ ասաց նա: Իրավունք ուներ հպարտանալու՝ հոյակապ կոթող էր: Զարմանքով կարդացինք ներսի և շրջակա տապանաքարերի՝ հոգևորականների հայատառ և հայանուն գրերը: 20 տարի անց կնոջս՝ Գրիգելդայի հետ անցնում էինք նույն ճանապարհով: Մտանք եկեղեցի. տապանաքարերը մաքուր հղկված էին. ոչ մի հայատառ գրություն: Հեռացանք ազգային ինքնահաստատմանը պատիվ չբերող այդ դրսևորումից պղտորված տրամադրությամբ: Այն ժամանակ դեռ չէինք պատկերացնում, թե ինչ անսքող բարբարոսություն կսկսվի Թիֆլիսի հայ եկեղեցիների և մեզ համար թանկ, նվիրական տապանաքարերի նկատմամբ: Եվ ոչ մի բողոք ո՛չ կաթողիկոսի, ո՛չ պատմաբանների, ո՛չ էլ պետական այրերի կողմից: Խորապես ցավում եմ, որ ստալինյան տարիներից արտոնյալ ազգի սինդրոմը ժառանգած որոշ վայ-գործիչներ նման անխոհ գործելակերպով նվաստացնում են մշակութային հարուստ ժառանգության տեր այդ հպարտ ու արժանապատիվ մեր հինավուրց բարեկամ ժողովուրդը, որը երկրաշարժի ծանր փորձության օրերին փայլուն դրսևորեց բարոյական իր բարձր արժանիքները: Ջերմ ու հարգալից տպավորություններ եմ ստացել վրաց այն մտավորականներից, որոնց հետ բախտ է վիճակվել ծանոթանալու և շփվելու. համոզված եմ՝ վաղ, թե ուշ իրենք կդատապարտեն և կմերժեն իրենց պատիվը ոտնահարողներին:

Այլ է քոչվոր թյուրքերի (кочевые тюрки) պարագան. դառնալով բոլշևիկների «շռայլ մտքի փայլատակման արգասիք»՝ նորաստեղծ պետության «բիրդան» տերը և ստանալով «ադրբեջանցի» նոր անվանումը՝ կանգնեցին մշակութային պատշաճ

ՄԵԾԱՐԳՈ ԱՆԱՍՏԱՍ ԻՎԱՆՈՎԻՉ

Տեսնելով ժողովրդի բարեկեցությունը լավացնելու Ձեր անկեղծ ցանկությունը և հավատալով դրան, տեղին ենք համարում դիմել Ձեզ Հայաստանի և մասնավորապես Երևանի սոցիալական վիճակին միջամտելու խնդրանքով:

Այսօր, երբ մթերային և արդյունաբերական ապրանքների բավարար մատակարարումը դարձել է ոչ միայն Մոսկվայի և Լենինգրադի մենաշնորհը, այլև համեմատաբար գավառական քաղաքների, Երևանում այն մնում է աղաղակող: Խանութներում տարիներով Չեք տեսնի կարագ, միս և մի շարք այլ ապրանքներ: Զավեշտային է, որ կարգին գուլպաների կամ ներքնազգեստի համար պետք է հասնել Մոսկվա: Միանգամայն բարձիթողի վիճակում են հասարակական սնունդը (ուսանողական ճաշարանները անմխիթար վիճակում են) և քաղաքի սանիտարական վիճակը: Մի խոսքով, ամենուրեք անտարբերության և անտնտեսվարության ցայտուն դրսևորում: Մենք հակված ենք կարծելու, որ հիմնական մեղքը հանրապետության ղեկավարներինն է, որոնք ապատեղեկացնում են Ձեզ, թաքցնելով իրական պատկերը: Անշուշտ, եթե նախապես իմացվի Ձեր ժամանման մասին, ապա «շքերթն» ապահովված է (խանութներում միսը լիքն է, սակայն ոչ ոքի չեն վաճառում): Մեր ճշմարտացիության մեջ կարող եք համոզվել, եթե այցելեք առանց նախազգուշացման: Գրում ենք՝ հավատալով արդարությանը:

Անկեղծ հարգանքով՝ Երևանի մի խումբ քաղաքացիներ:

Տեղին է մի խոստովանություն ևս. խոսքը Միկոյան անձի մասին է: Ինչպես Ռուսաստանում ապրած տարիներին, այնպես էլ Հայաստան փոխադրվելուց հետո, անսահման հեռու եմ եղել ոչ միայն բարձր-, այլև ցածրաստիճան պարտգործիչներից, ուստի, չունենալով որևէ փաստական նյութ սեփական կարծիք ձևավորելու համար, սեփականաշնորհեցի ժողովրդի մեջ հաստատված վերդիկտը. նա Հայաստանում, ինչպես և Խրուշչովը Ուկրաինայում, կատարել է «Մեծ Դասաբի»՝ «ժողովրդի թշնամիների» վերևից իջեցրած քվոտան համալրելու կարգադրությունը, որ Խրուշչովի օրոք չօգտվեց իր արտոնյալ դիրքից և չփորձեց Ղրիմի նմանությամբ խաղաղ լուծել Ղարաբաղի ազգամորմոք խնդիրը և այլն և այլն: Տարիների ընթացքում, կարդալով իր և իր մասին հուշերը, լսելով հարգալից կարծիքներ իր ընտանիքում երեխաների դաստիարակության, ազգայինավանդական դրվածքի և բարոյական մթնոլորտի մասին, վերհիշելով նրա գործունեության առանձին դրվագները, մասնավորապես Կարիբյան ճգնաժամի լուծման գործում նրա որոշիչ դերը, որում նա ցուցաբերեց մարդկային խոհեմություն և բարձր

դիվանագիտություն... մի օր զարմանքով գիտակցում ես, որ երևակայությանդ մեջ ներկայանում է ակամա հարգանք ներշնչող, պարտքի բարձր զգացումով օժտված, իշխանական վերնախավում իր բարեկրթությամբ և զարգացման մակարդակով շատերին գերազանցող, սակայն համեստ, չցցվող... Միկոյան: Եվ նորից դավադիր «սակայնը»... 20-րդ համագումարում Խրուշչովի պնդմամբ 37-ականներին ամենամեծ կորուստը ունեցան Բելառուսի ու Հայաստանի մտավորականությունը: Ենթատեքստը պարզ է. ինքը Ուկրաինայում ավելի մեղմ ու խնայող է եղել, քան Միկոյանը՝ Հայաստանում: Մյուս կողմից, կան կարծիքներ, որ Միկոյանը նույնպես դիմել է խորամանկությունների, որպեսզի պահպանի հայ մտավորականության ընտրանին: Մի «բայց» ևս. սովորաբար այդ սգավոր, անսփոփ ցուցակը սկսում ենք Չարենցից, Բակունցից, Թոթովենցից, Խանջյանից... Ինչ վերաբերում է առաջին երկուսին, ապա Միկոյանի միջնորդությունը չպահանջվեց. գրական եղբայրությունը փութաց ցուցաբերել «քաղաքական զգոնություն», Խանջյանն էլ «ակնոցավոր օձի» (Լավրենտի Բերիա) զոհը դարձավ... Մի խոսքով «դեմ» և «կողմ» փաստերն առկա են, ուստի կարծում եմ՝ մեր պատմագիրների պարտքն է, քանի դեռ դա չի դարձել անվերականգնելի անցյալ, հստակություն մտցնել «Միկոյան» ֆենոմենի հարցում: Գալով սեփական մտորումներիս՝ պետք է խոստովանեմ, որ անվերջ վերապրելով անկախության տասնամյակի Գողգոթան ու իրար հաջորդող նյութապաշտ իշխանավորների «բեսպրեդելը»՝ ինձ բռնեցնում եմ այն մտքի վրա, որ որակապես այլ կլիներ դեպքերի ընթացքը և երկրի այսօրվա վիճակը, եթե մեր առաջին նախագահը Միկոյանի նման անձը դառնար:

61-ին հայտնի դարձավ, որ ՀԽՍՀ կենտկոմի բյուրոյի որոշմամբ փակվում է հազիվ կես տարի գոյատևած Հայպետտեխիրատը: Ու քանի որ ձեռնարկիս հրատարակման կապակցությամբ շփվում էի նրանց հետ, անմիջապես (կպայթեի, եթե լռեի) նամակ-բողոքը սլացավ «Տիզբոն» (Մոսկվայի՝ կոմիտեում ընդունված մականունը)՝ անձամբ Խրուշչովին. ահավասիկ այն.

ՄԵԾԱՐԳՈ ՆԻԿԻՏԱ ՍԵՐԳԵՅԵՎԻՉ

Ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա ծրագրին համապատասխան բուռն զարգանում է նաև ԽՍՀՄ արդյունաբերությունը: Հաշվի առնելով Հայաստանի առանձնահատկությունը այստեղ առանձնակի արագ են զարգանում ճշգրիտ մեքենաշինությունը, քիմիան, միջուկային ֆիզիկան, ռադիոէլեկտրոնիկան և գիտության, տեխնիկայի և արդյունաբերության այլ ճյուղեր: Միաժամանակ աճել են համապատասխան ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջները:

Սակայն, հայերենով ուսումնական և տեխնիկական գրականության աղքատությունը, իսկ որոշ ճյուղերում նաև լիակատար բացակայությունը էապես բարդացնում է ազգային պատրաստման գործը:

Այսպես, հանրապետության բոլոր բարձրագույն և միջին ուսումնական հաստատություններում կարդացվում են հատուկ առարկաներ, որոնցից շատերի համար բացակայում է հայերենով որևէ ձեռնարկ: Վիճակն առավել վատ է բանվորական լայն զանգվածների տեխնիկական մակարդակի բարձրացման գործում, որտեղ հայերենով տեխնիկական գրականության մեծ պահանջ կա, քանզի դրանց մի մասը թույլ է տիրապետում ռուսերենին: Մինչև 1960 թ. ապրիլը գործող Հայպետհրատի համապատասխան բաժինն իր պոչատ ծրագրով, բնականաբար, ի վիճակի չէր վերացնել այդ բացթողումը: Ուստի հանրապետության մասնագետները, այդ թվում և բուհերի դասախոսական կազմը ողջունեցին ակադ. Վ. Համբարձումյանի նախաձեռնությամբ բացված Հայպետտեխհրատը, որը կոչված էր այդ խնդրի լուծմանը: Հարկ է նշել, որ իր գոյության կես տարվա ընթացքում Հայպետտեխհրատը կատարեց մեծ ծավալի աշխատանք, թարգմանելով մի քանի ձեռնարկ և հրատարակելով մեծ թվով մենագրություններ:

Այսպես, միայն արտադրա-տեխնիկական գրականության գծով հրատարակվել է 54 անուն, որոնց թվում ակադեմիկոսներ Համբարձումյանի, Ֆանարջյանի, Մնջոյանի, Ղարիբյանի, Առաքելյանի և այլոց աշխատություններ: Այս պարագայում տարակուսանք է առաջացնում Հայպետտեխհրատի լուծարման ՀԽՍՀ ԿԿ Բյուրոյի օգոստոսի որոշումը, որի համաձայն այն վեր է ածվում Հայպետհրատի բաժնի՝ էապես կրճատված ծրագրով:

Խնդրում ենք Ձեր աջակցությունը Հայպետտեխհրատի և նրա ծրագրի վերականգնման հարցում:

Հակաստալինյան վիրուսը, ավաղ, մշտական բնակություն էր հաստատել օրգանիզմումս և գլուխը բարձրացնելու առիթը բաց չէր թողնում: Գիտական լաբորատորիան կադրերով համալրելու նպատակով հեռանկարային շրջանավարտներից երկուսին համոզեցի ընդունվել ասպիրանտուրա: Ու թեև ամիսներ առաջ հաջող հանձնել էին ավարտական, այդ թվում և պարտիական պատմության քննությունները, այս անգամ նրանց կտրեցին վերջինից: Շներին կապեցին, ինձ արձակեցին: Արդեն ուսանող-

ներով լեցուն միջանցքում հարձակվեցի այդ հանձնաժողովի վրա գոռալով. «Մինչև ե՞րբ պիտի 3 էկոնոմիստով ու 5 բունդովականներով (թե հակառակը՝ չեմ հիշում) արգելափակեք շնորհալի երիտասարդների մասնագիտացումը: Հասկացանք՝ դրանով հաց եք վաստակում... Ձեր խղճի հարցն է, բայց մեզ մի խանգարեք...»: 15 րոպե անց կենտկոմից զանգել էին ռեկտորատ, կես ժամ անց, ես, որպես դատապարտյալ, կանգնած էի պարտկոմի ընդլայնված կազմի առաջ: Առաջարկություն եղավ պատժել պարտիական գծով, պարզվեց պարտիական չեմ: Սկսեցին համոզել, որ ներողություն խնդրեմ, ասացի, որ ծնկի համար պատրաստ եմ, սակայն բովանդ...

– Ըհը՛, – ընդհատեց ինձ լուսահոգի Վաչե Նալբանդյանը (այն ժամանակ պրոռեկտոր), – մարդը գիտակցել է իր սխալը... Ու սահուն փակեց կոնֆլիկտը: Սակայն հաջորդ օրվա թերթերում զարմանք արտահայտվեց նման ապոլիտիկ անձնավորությանը երիտասարդների դաստիարակությունը վստահելու կապակցությամբ:

Կես տարի անց Խրուշչովը հրապարակավ դատապարտեց պարտպատմության դասավանդման սխոլաստիկ, ամուլ վիճակը... Ինչպես միշտ, ժամանակավրեպ էի:

Երևանում միակ ազգականս մայրիկի հորեղբոր տղան էր՝ Մելիք-Սահակյան Աբրահամը, հին ու համոզված բոլշևիկ, «Վարդան Զորավար» գրահագնացքի մարտիկ, դասավանդում էր պոլիտեխում: Կնոջ ու աղջկա հետ բնակվում էր Տերյան փողոցի հանրակացարանի փոքրիկ սենյակում: Պնդեց, որ պետք է մնամ իրենց հետ, թեև ամեն գիշեր, քնելուց առաջ, բարդ երկրաչափական խնդիր էինք լուծում (կուբիկ-ռուբիկի նմանակը):

Տեղնուտեղը գերում է գիշերային Երևանի հմայքը, թափառում եմ ու չեմ հագենում... Սուզվում եմ պատմական Հայաստան. էջմիածին, Զվարթնոց, Սևան, Գեղարդ... Հիացմունք ու հպարտություն. «վերգտա իմ երազած հայրենիքը, մոռացի՛ր առօրյա տհաճությունները... Քար ու ապառաժ սանձող այս ժողովուրդն անմահ է...»:

*Բյուրական:* Ուղեգիրս կապի կոմիտեի հասցեով էր, սակայն ընկերներս խորհուրդ տվին դիմել ակադեմիայի փոխպրեզիդենտ Իոսիֆյանին: Վերջինս անառարկելիորեն առաջարկեց

Բյուրականը, ուր ռադիոաստղագիտության սկիզբն էր դրվում: Աշխատել Վիկտոր Համբարձումյանի մոտ... Ֆանտաստիկա...

Կապի վարչության նախագահ Մինասյանը, որին Մոսկվայից, ըստ երևույթին, գունեղ էին բնութագրել իմ «թանկագին» անձը, ու նա մտադիր էր ուղարկել ինձ նոր կառուցվելիք եզակի տիպի (բունկերային տիպի՝ ռմբապաշտպան) ռադիոկայանի մոնտաժման, անկեղծորեն վշտացավ, սակայն Իոսիֆյանին չմերժեց: Միակ ազատ հաստիքը Բյուրականում էլեկտրամոնտյորինն էր՝ 65 ռուբլի աշխատավարձով, որը զգալիորեն զիջում էր ստալինյան իմ թոշակին: Ինչ փույթ, «զատո» Համբարձումյանի մոտ եմ, մի քիչ էլ ծնողներս կօգնեն: Իմ անմիջական ղեկավարը՝ միջնակարգի 8-րդ դասարանի (հեռակայող) ավագ գիտաշխատողը անկեղծ դժկամությամբ ընդունեց իմ հայտնվելը, և առաջին օրից հետևողականորեն վարեց իր «կոշտ» ղեկավարումը. «արա՛, մի հատ թռի անտենան ֆռցրա»: Խոսքը արևի ռադիոճառագայթումն ընդունող կառուցվող անտենայի մասին է: Վազում «ֆռցնում» եմ. նա «մեծ մտածողի» հայացքը հառում է դեպի անսահմանություն: «Հլա հետ ֆռցրա»... և այդպես ամիսներ: Եթե փորձում եմ զգուշորեն առաջարկություն անել, կտրուկ չորում է. «էս քո իմացած ռադիոն չի, էս СВЧ ա (գերբարձր հաճախականություններ)»: Երկու շաբաթով գործուղում գնաց, օգտվելով առիթից արեցի այն, ինչ պետք էր. անտենան «զգաց արևը»: Կեսարի նման եկավ, տեսավ, «կատղեց», քանդեց... Եվ այդ բոլորը կոլեկտիվի օլիմպիական անվրդովության ներքո. ակամա համեմատում էի բանակի և ուսանողական իմ ռուս շրջապատի բարեսիրտ ու կարեկցող մթնոլորտի հետ: Համբերեցի համարյա կես տարի. ի վերջո, անգամ խորին ակնածանքը Վիկտոր Համբարձումյանի նկատմամբ անզոր եղավ կանխելու պայթյունը: Անշուշտ երկար կուտակվածը պարպելիս արտահայտություններ չես ընտրում, ինչը «փայլուն» կատարեցի բոլորի ներկայությամբ և անմիջապես ներկայացա Վիկտոր Համազասպովիչին՝ «Խնդրում եմ, ինձ ազատեք... Հասկացել եմ, որ հիմա ավելի կարևոր է մասնակցել ռադիոկայանի կառուցմանը, որն աշխատելու է Սփյուռքի համար»: «Ափսոս,– ասաց Վիկտոր Համբարձումյանը,– այս ուղղությունը շատ հեռանկարային է», ու բաց թողեց: Որից հետո անմիջապես ներխուժեց «մեծ մտածողը»՝ համոզված, որ բամբասել եմ.

– Կամ ես, կամ նա... Նա ինձ տգետ ու հիմար անվանեց:

– Իսկ դուք ինչ արեցիք, որ հերքեք այդ կարծիքը...

Հեռանալուցս հետո պարտ. ժողովում Վիկտոր Համբարձումյանը համոզմունք հայտնեց, որ կոլեկտիվը հալածեց հեռանկարային երիտասարդի: Կոլեկտիվը համաձայնեց:

*Բալահովիտ:* Ռադիոկայանում ազատ հաստիքը ավագ ինժեներինն էր: Ռոճիկս հսկայական թռիչք ունեցավ՝ 65-ից 74 ռուբլի: Հայտնվեցի հայ շինարարների ու նրանց համակրելի ղեկավարներ Հրանտ Հայրապետովի ու Լևոն Հարությունովի, Ռոստովի մոնտաժավորների և երկրի տարբեր բուհերի ու տեխնիկումների շրջանավարտների եռուն ու զվարթ մեղվանոցում: Ապագա ռադիոկայանի գլխավոր ինժեները բարձրակարգ մասնագետ, շատ հաճելի մարդ ու զրուցակից Աիարոն Գերշևիչ Սալմանն էր, տնօրենը՝ Մուկուչ Մելքոնյանը: Մոսկվայի ներկայացուցիչը Օստրովսկին էր: Բոլորը բնակվում էին քաղաքում: Ինձ՝ անտունիս, առաջարկեցին ընտրել ապագա շահագործողների համար կառուցված առանձնատներից ցանկացածը: Պարզվեց, որ ինձ կարելի է վստահել հույժ գաղտնի օբյեկտի մուտքը: Ավելին. ես էի ամեն առավոտ ստորագրում մոնտաժավորների վայրէջքի թույլտվությունը ստորգետնյա կայան ու տնօրինում 150 մետրանոց, նորատիպ անտենայի տեղակայումը: Օդափոխիչներից զուրկ թունել-դահլիճում, էլեկտրազոդիչների փայլատակումների ներքո, 8–10 ժամյա հսկումը անհետ չանցավ: Մեկ տարի անց՝ մոնտաժի ավարտին, թոքերիցս սև խորխ էի հազում և լինդերից ծորող արյունը թքում: Եվ երջանիկ էի: Այստեղ իրականացրի վաղեմի փափագս՝ ուղղեցի ազգանունս՝ Կազարովից դարձա Ղազարյան: Անգամ ծգծգեցի առաջին հոդվածիս տպագրությունը (թեև ունեի ակադ. Կոտելնիկովի դրական կարծիքը). շատ էի ուզում, որ լույս տեսնի «յան»-ով: Ամիսներ տևած քաշքշուքից հետո հաջողվեց: Եղբայրս՝ Վազգենը, մնաց Կազարով:

Սակայն ինձ չէին մոռացել ինստիտուտիս դասախոսները, մասնավորապես ակադեմիկոս Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Խարկևիչը: Մի օր էլ, ինձ համար անսպասելի (թեև ընկերներիցս ոմանք համոզված են, որ իմ ջանքերով), Մոսկվայից՝ կապի մինիստր Պսուրցևից, հեռագիր-հրաման ստացվեց. «Մոնտաժային աշխատանքները ավարտելուն պես Ռ. Ա. Ղազարյանին գործուղել Մոսկվայի էլեկտրակապի ինստիտուտի ասպիրանտուրա»:

Ալեքսանդր Ալեքսանդրովիչը պայման դրեց, որ մոռանում եմ դիպլոմիս թեման և կցվում այն ժամանակ մեծ բում առաջացրած ինֆորմացիայի տեսությանը: Մաթեմատիկական նոր ապարատ էր պահանջվում, նոր մտածելակերպ. ընդհանուր զարգացման իմաստով շատ օգտակար եղավ, անգամ գործընկերներիս հետ "Связьиздат"-ում հրապարակեցինք առաջին գրքույկները (1955–57 թթ.), սակայն 56-ին պաշտպանածս թեկնածուականը, իմ համոզմամբ, ավելի թույլ էր, քան դիպլոմայինս: Այն ժամանակ երդվեցի, որ եթե մի օր դոկտորականս հաղթահարեմ, ապա անպայման կպաշտպանեմ նույն խորհրդում՝ ի երախտիք խորհրդի մեծահոգության (անցնելով առաջ, ասեմ, որ երդումս իրագործեցի 73-ին): Թեզս (56-ին) պաշտպանելուց հետո նորից ցանկություն հայտնեցի մեկնել Հայաստան. այս անգամ քաջ պատկերացնելով, թե ուր եմ գնում:

«ժառանգության հրատապ ստեղծման» անշնորհակալ խնդրի առջև: Գործի դրվեցին նորելուկ պետության սահմաններում հայտնված այլ ժողովուրդների կոթողները կամ գործիչները: Ադրբեջանական դարձան պարսկական միջնադարյան կոթողները Նախիջևանում, ադրբեջանցի դարձավ Նիզամին, ուշքի գալով՝ «խաչդաշ» դարձրին խաչքարերը, որոնք դեռ չէին հասցրել ջարդուփշուր անել: Ցավոք, չէին հասցրել ընդօրինակել մեր տաճարների սեփականացման (չշփոթել ոչ պակաս քայքայիչ սեփականաշնորհման հետ)՝ ավագ եղբոր (Թուրքիայի) փորձը, ուստի քարուքանդ արին դրանք:

Արևմտյան Հայաստան... Մարդկային եղեռնին հետևեց և մինչ օրս շարունակվում է մշակութայինը... Սկզբում նույնպես քանդեցին, հողին հավասարեցրին՝ ջանալով սրբել հազարամյակների մեր գոյության հետքերը, հետո «խելքի եկան», սկսվեց մշակութային թալանը՝ Աղթամարը դարձավ արևելա-բյուզանդական կոթող, հայ գրերն ու զարդերը, անշուշտ, ոչնչացվում են, հայ ճարտարապետների անունները՝ թրքացվում և այլն և այլն... Եվրոպական ազգ դառնալու հավակնորդ՝ անամոթ գող: Ինչ ասես...Ականջդ կանչի ՅՈՒՆԵՍԿՕ... Վայ թե տեսողությունդ իմից էլ վատթար է...

Դժբախտ հայ մշակույթ՝ անգղերի կողմից հոշոտվող վիրավոր այծյամ...

Եվ միայն մուսուլմանական Իրանն է, որ ոչ միայն պահպանել է բոլոր մեր եկեղեցիները, այլև պետական միջոցներ է տրամադրում վերանորոգման համար ու դրանց նվիրված գունազարդ ալբոմներ հրապարակում: Իսկ պարսիկ պատմաբանը սուր քննադատության ու ծաղրի է ենթարկում թուրք կեղծարարներին: Ամաչե՛ք, քրիստոնյաներ:

Հպարտությամբ պիտի ամփոփեմ. մեր ժողովրդի մտքով անգամ չի անցել որևէ մզկիթ կամ պատմական ծանր իրավիճակում հայտված մեկ այլ դավանանքի տեր ժողովրդի եկեղեցի «իր ստեղծագործության կոթող» ներկայացնելու գայթակղությունը:

* * *

Մի քանի ամիս ԵՄՄԳԻ-ում[1] և հաշվողական կենտրոնում դե-

---

1 Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ

գերելուց հետո հրավիրվեցի համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետի էլեկտրականության (դ՛Անժուրի) ամբիոն, որը ղեկավարում էր դոցենտ Աթոյանը: Լաբորատորիայի վրա նետած առաջին հայացքը խորապես վիատեցրեց. գավառական պոլիտեխնիկական թանգարանի տպավորություն թողեց:

«Ստոպ-կադր»... Հայաստանյան մի անակնկալ ևս. դահլիճլաբորատորիայում դիմավորեցին 2 հոգի՝ խոշոր, գեղեցիկ ու տխուր աչքերով Կարեն Պողոսյանը և... «Վորոնցով», – ծեռքը մեկնելով ներկայանում է մյուսը: Ես շփոթվում եմ. «Հայ գյուղացու տիպար է, չէի պատկերացնում, որ ռուս տղա է», – շշնջում եմ Կարենին: Վերջինիս պատասխանն ավելի է շփոթեցնում. «ռուս չէ, դա նրա անունն է...»: Տարիներ անց որոշեց ընդունվել ասպիրանտուրա ու գնալ Ռուսաստան: Ասացի՝ չեմ թողնի, մինչև չփոխի անունը՝ կծաղրեն և՛ իրեն և՛ իր ազգը: Չհավատաց... Քննություններին լավ չէր պատրաստվել, ուրիշ ժամանակ կզիջեի, այս անգամ կտրեցի: Հասկացավ, որ չեմ կատակում, խնդրեց՝ հուշեմ հարմար անուն: Առաջարկեցի «Վարուժան» (նմանահունչ): Հաջորդ տարի հանձնեց քննությունները, մեկնեց ու 3 տարի անց վերադարձավ՝ պաշտպանած: Մյուս ավագ լաբորանտը՝ «Իլյիչը», նախորդի փորձը հաշվի առնելով, խնդրեց լինեմ նրա «կնքահայրը» ևս: Համահունչը չգտանք, դարձավ Նորայր: Կես տարի անց խոստովանեց, որ զարմանքով է գիտակցում, որ ինչ-որ ժամանակ Նորայր չի եղել:

Խոստացել էին մի քանի ամսից ապահովել բնակարանով. ստացա 7 տարի անց... Սենյակ էի վարձում: Այս անգամ իմ հայտնվելը սաստիկ դուր չեկավ նույն ամբիոնի դոցենտ Գուրգեն Հովհաննիսյանին: Կարճ ժամանակ անց քաղցկեղից մահացավ Աթոյանը, ու ամբիոնի վարիչի պաշտոնակատար դարձավ Հովհաննիսյանը: Բացառությամբ 3–4 հոգու, ամբիոնը համալրվել էր իրեն հավատարիմ կոմերիտական ակտիվիստ-դեմագոգներով կամ մասնագիտական ու բարեկրթության իմաստով ոչ լավագույն կադրերով: Բացառություն կազմեցին ամբիոնի դասախոս գերազնիվ ու բարեկիրթ Կարեն Պողոսյանը, Հովհաննիսյանի կողմից հրավիրված փայլուն ինժեներ Ալբերտ Խալաթյանը (հետագայում փոխադրվեց Մոսկվա) և ավագ լաբորանտ Լենա Շառոյանը (մինչ օրս համալսարանում է):

Փափագելով որքան հնարավոր է շուտ կատրելագործել հա-

յերենս՝ խնդրեցի ինձ փործնական դասընթաց հանձնարարել: Լսելով հայերենիս ճիգերը՝ ուսանողներն առաջարկեցին անցնել ռուսերենի: Ասացի՝ դա կարող էի և Մոսկվայում անել: Մինչ օրս ջերմությամբ ու երախտագիտությամբ եմ հիշում այս և հաջորդ տարվա խմբերը. կիրթ, զգոն ու լուրջ երեխաներ էին. խնդրեցի, որ ընդհատեն յուրաքանչյուր պահի և ուղղեն սխալս: Դասախոսությունս գրում էի ռուսերեն, բառարանների մեջ խրվելով՝ թարգմանում հայերեն, որից փչում էր թարգմանության հոտը: Մի 3 ամիս անց խմբովի շնորհավորեցին հաջողություններիս համար: Ստուգարքը ստացան «ձեռի հետ»՝ դիմացի այգում, բարեկամական զրույցի ընթացքում:

«Բարյացկամս», սակայն, չէր հանդարտվում: Մի օր համալսարանի պարտկոմը հրավիրեց. ցույց տվեց ծանոթ ձեռագրով անստորագիր ստեղծագործություն, որից հետևում էր, որ ես ապարանք ունեմ... Բաքվում: Ափսոսանք հայտնեցի կապուղու աղտոտվածության հետևանքով ինֆորմացիայի աղավաղման առթիվ. Բաքու ոչ միայն երբեք ոտք չեմ դրել, այլև ինքնաթիռով անգամ վրայով չեմ ճախրել. ծնողներս ունեն 2 սենյականոց տնակ, սակայն՝ Կրասնոդարում: Իսկ ապրելով Կրասնոդարում, անշուշտ կդժվարանայի ժամանակին ներկայանալ ամենօրյա աշխատանքի (ԵՊՀ):

Իմ և ծնողներիս Երևան փոխադրվելու բաղձանքը իրականացնելու մեր ջանքերը անհաջողության մատնվեցին. անմիջապես սկսվում էր մայրիկիս հիպերտոնիկ կրիզը՝ հազիվ էի հետ փախցնում Կրասնոդար:

Նույն այդ ժամանակ, կարծես ներաշխարհս ավելի պղտորելու, հոգեկան ապրումներս խորացնելու դիվային նպատակով, ասպիրանտական մի ընկերս՝ Պետյա Բերեստնևը, նամակով համոզում էր գալ Կույբիշև՝ կապի ինստիտուտ. «2 սենյականոցի բանալին պահել եմ քեզ համար... Ընտրում ես ցանկացած ամբիոնը կամ լաբորատորիան, եթե քիչ է՝ так и быть, охламон, զիջում եմ գիտական գծով պրոռեկտորությունս»: Նմանատիպ առաջարկ Նովոսիբիրսկից ուղարկել էր մյուս դասընկերս՝ Էնիկ Դյոմինը, միայն թե նրա գրպանում դարանակալած բանալին 4 սենյականոց բնակարանի էր:

Ուսանողների բացահայտ համակրանքը իմ նկատմամբ թունավորում էր հոգեառիս կյանքը, ու թեև իմ կողմից ոչ մի ոտնձգություն իր պաշտոնի նկատմամբ չէր անցնում մտքովս, իրեն

անապահով էր զգում: Ի վերջո, հոգուս վրա հասավ: Պայթելով հերթական «գաղտնի նետից բանսարկուի»՝ Մոսկվայի տոմսը գրպանումս, ողջ ունեցվածքս ուսապարկում (հետևելով հին հույնին՝ Բիանտին, «ամեն ինչս հետս եմ տանում») հայտնվեցի կայարանում: Գնացքի շարժվելուն մնում էր 10–15 րոպե , երբ առջևս շարվեց վերը հիշատակածս 2-րդ խումբը: «Ուրեմն փախչու՞մ եք... Մուրացանի առաքյալի նման...»: Չհասցրի բերանս բացել՝ ընդհատեց Նինա Սարգիսովան (հետագայում՝ Բադալյան, համալսարանի դոցենտ, այսօր աղջկա հետ ԱՄՆ-ում է)՝ «ուրախացել էինք, որ վերջապես մի լուսավոր անձ հայտնվեց, դուք էլ եք լքում...»: Նախ գետինը մտա, հետո՝ գրպանս, հանեցի տոմսս, պատռեցի ու խմբի ուղեկցությամբ վերադարձա վարձածս հավաքունը: Այնուհետև եղան այլ գայթակղություններ ևս (մասնավորապես Մոսկվայի ռեժիմային գիտահետազոտական ինստիտուտ՝ բնակարանով), սակայն հարցն ինձ համար փակված էր ընդմիշտ: Նույն խումբը դիմել էր դեկանատ՝ պահանջելով վերջ տալ հետապնդումներիս. նրանց ջանքերով 59-ին դառա ամբիոնի վարիչ: Առաջիկայում պետք էր «գավառական թանգարանը» դարձնել ժամանակակից ամբիոն: Համալրեցի ամբիոնը լավագույն շրջանավարտներով, կցվեցինք նոր լաբորատորիաների ստեղծմանը: "Не было счастья — несчастье помогло", ասում են ռուսները կամ «չկա չարիք առանց բարիքի». խոսքը համալսարանի հայտնի հրդեհի մասին է: Կորուստների մեր ներկայացրած ուռճացրած ցուցակների դիմաց ստացանք ժամանակակից սարքավորումների հարուստ պարկ, որը թույլ տվեց առաջինը հանրապետությունում իրականացնել «ֆրոնտալ եղանակը»: Գրում էինք լաբորատոր ձեռնարկներ, թարգմանում և գրում հայերեն դասագրքեր: Խալաթյան Ալբերտի հետ 61-ին հրատարակեցինք ռադիոտեխնիկայի առաջին հայերեն ձեռնարկը, ճիշտ է ռադիոսիրողի համար, որը, սակայն, տարիներ ի վեր օգտագործել են և՛ տեխնիկումները, և՛ բուհերը: Բուհական դասագրքի տպաքանակը մեծ չէր կարող լինել՝ չէր փակի տպագրական ծախսերը (այն իրագործեցի 80-ականներին): Այդ թոհուբոհի մեջ անցավ 3 տարի: Այդ ընթացքում մեզ հաջողվեց ստեղծել ժամանակակից լաբորատորիաներով կահավորված ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ամբիոն, որը ղեկավարեցի 10 տարի (մինչև 69 թիվը): Հետագայում այն դարձավ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի առանցքային ամբիոն:

Վերջերս նշվեց այդ ֆակուլտետի 25-ամյակը: Դեկանի՝ Յու. Վարդանյանի ընդարձակ պատմական ակնարկում չգտա Ռ. Ղազարյանի անունը: Շատ չզարմացա՝ երախտամոռության ու ապերախտության ապշեցնող օրինակներ՝ ինչքան ուզես...

Գիտությանը շատ քիչ ժամանակ էր մնում: Որպեսզի վերջնականապես «չդախանամ» ու նաև նպաստեմ լեզվի իմացությանս, կիրառեցի ինֆորմացիայի տեսության քանակական գնահատականները հայերեն տեքստի նկատմամբ. լուսահոգի Գուրգեն Սևակի ուսանողների օգնությամբ հաշվեցի տառերի հաճախությունները և տեքստի էնտրոպիան: Ժամանցի նման գործ էր, զարմացա, երբ տարիներ անց մեծարգո Գևորգ Ջահուկյանը այդ հոդվածները հայերեն վիճակագրական լեզվաբանության առաջնեկների շարքը դասեց: Ինչ խոսք, հաճելի էր, սակայն ինձ համար հեռանկար չէի տեսնում: Փրկությունը եկավ հանձին Միքայել Տեր-Միքայելյանի: 62-ին նա Մելիստ Մովսիսյանի հետ ձեռնամուխ եղավ նորածին լազերային թեմատիկայի զարգացմանը Հայաստանում: 63-ին առաջարկեց միանալ և հանձն առնել քվանտային էլեկտրոնիկայի լաբորատորիայի կազմակերպումը: Այսուհետև ուսանողական պրոցեսին զուգորդեց նաև լազերային ֆիզիկայի ոլորտի գիտահետազոտական եռուզեռը: Ամբիոնի շրջանավարտները կազմեցին ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի քվանտային էլեկտրոնիկայի բաժնի կորիզը:

Հերթական անգամ ողբալով համալսարանական չիրականացած կրթությունս ու «հիշելով» (գրաբարյան իմաստով) Ստալինին՝ «քշտեցի թևքերս» ու քառասունս բոլորելով՝ աշակերտաբար խրվեցի ֆիզիկայի այն բաժինների մեջ, որոնք ինժեներական ԲՈՒՀ-ում, լավագույն դեպքում ликбез-ի (ликвидация безграмотности)[1] կարգավիճակում էին:

*1965 թվական: Համաժողովրդական զարթոնք:* Մոտենում էր 1965-ը՝ եղեռնի 50-ամյակը, ու դրա հետ մեկտեղ համընդհանուր ներքին լարվածությունը Հայաստանում: Դժվարանում եմ միարժեք բացատրություն տալ եղեռնին վերաբերող՝ Սովետական իշխանության որդեգրած լռության «երդմանը»: Գուցե Ստալինի հակահայկական տրամադրությունների ինե՞րցիան էր,

---

[1] Անգրագիտության վերացում

թե՞ եղեռնից արնաքամ եղած հայության շահերի ոտնահարումը հօգուտ Թուրքիայի, խղճի խայթ էր արթնացրել բոլշևիկների մոտ, թեև դժվար է բոլշևիկներին կասկածել նման «թուլության» մեջ: Համենայն դեպս մինչ այդ միայն Պարույր Սևակին էր հաջողվել իր «Անլռելիով» հանդգնորեն ճեղքել չհայտարարված «Տաբու-պարիսպը»: Անձամբ ես առաջին անգամ եղեռնական սարսուռը զգացի դպրոցական տարիներին, երբ վերը հիշատակած ձեղնահարկում ձեռքս ընկավ ռուսերեն մի ծավալուն ու քրքրված ժողովածու՝ "Братская помощь пострадавшим в Турции армянам. М. 1897 г."[1], ի նպաստ հայ գաղթականների ու որբերի: Անտանելի ծանր էր կարդալ 1894–96-ի Սասունի և այլ վայրերի կոտորածի ու դաժանությունների նկարագրությունները, անհավատալի էին լուսանկարներում պատկերված սովյալների ու որբերի ցնցոտիները, հուսահատ ու դատապարտված աչքերը:

Հուսադրող էին մեծ հումանիստներ Վիլյամ Գլադստոնի, Հենրի Սատտերլենդի, հայազգի գործիչների ու զորավարների, ռուս մտավորականների ջանքերն ու բողոքները: Ավա՜ղ, արդյունքը եղավ 1915 թիվը՝ Արևմտյան Հայաստանի իսպառ վերացումը ու Լենինի առատաձեռնությամբ Ռուսահայքի պոչատումը:

Տառապանք էր նաև «Անլռելիի» ընթերցումը, բայց ինձ վերջնականապես կոտրեցին ու ստիպեցին վերանայել վարքագիծս Անրի Բարբյուսի երկու գրքերը՝ հետեղեռնական Արևմտահայքի մասին: Ռուսերեն թարգմանությամբ այն պահպանվում էր հանրային փակ բաժնում: Ծանոթությամբ տվեցին կարդալու: Տառապելով հաղթահարեցի "Мученица Армения"[2]-ն, սակայն "Армения — страна ужаса"[3]-ի վրա հոգեկան վիճակս դարձավ վտանգավոր: Ընդհատեցի ու որոշեցի՝ վերջ ինքնախոշտանգմանը, անօգուտ սպառում ենք ինքներս մեզ. ակտիվ պայքարի հոգեկան ներուժ չի մնա: Հասկացա նաև. կան Ներսիսյանի, Տատրյանի և այլոց նման պողպատյա նյարդերով օժտվածներ, որոնք կարող են տասնամյակներով փորփրել արխիվները՝ ի տես աշխարհի ներկայացնելով զանգվածային անասելի դաժա-

---

1 «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին», Մոսկվա, 1897:

2 «Տառապյալ Հայաստան»

3 «Սղձավանջի երկիր՝ Հայաստան»

նությունների չոր հաշվետվությունը: Ինձ համար դա անմատչելի է. կյանքս առանց վարանելու կզոհեմ հանուն արդարության վերականգնման, կպահպանեմ ներուժս ակտիվ պայքարի և ոչ թե մենակյաց ինքնախոշտանգման համար:

Եվ այսպես մոտենում էր 1965-ը: Նորահայտ ընկերներիս շարքում, շնորհիվ նկարիչ Սարգիս Մուրադյանի, որի հետ մտերմացել էի դեռ Մոսկվայում եղածս տարիներին, արժանացա ճակատագրիս չվաստակած պարգևին՝ ծանոթացա և մտերմացա Պարույր Սևակի հետ:

Մարտի վերջն էր կամ ապրիլի սկիզբը: Նոր էի վերադարձել հերթական գործուղումից: Ներխուժեց հուզված Սարգիսը և շանթեց անակնկալով. Մոսկվան թույլ է տվել եղեռնի 50-ամյակի նշումը: Պարզվում է՝ դեռ 64-ին Վարազ Առաքելյանի նախաձեռնությամբ և Պարույրի ու Սարգսի մասնակցությամբ նամակ է ուղարկվել Մոսկվա, կենտկոմ, համապատասխան խնդրանքի հիմնավորմամբ: Նամակը ստորագրել էին 13 անվանի մտավորականներ. վերջերս, երբ վերհիշում էինք այն օրերի դեպքերը, Սարգիսը դժվարանում էր անվանել բոլորին. համոզված նշեց Գոհար Գասպարյանի անունը: Նրանց հրավիրեց կենտկոմի առաջին քարտուղար մեծ հայրենասեր Յակով Զարոբյանը: Զրույցի ավարտին խոստացավ ամեն ինչ անել թույլտվությունը կորզելու համար և խնդրեց օգնել իրեն: Մոսկվա սլացավ 2-րդ նամակը, այս անգամ 50-ի ստորագրություններով: Զարոբյանը հրավիրվեց Մոսկվա: Պատմում է, որ Բրեժնևը և պոլիտբյուրոյի մյուս անդամները պատկերացում չունեին եղեռնի մասին: Ապշած էին ներկայացված փաստերից. թույլտվությունը ստացվեց:

24-ի նախօրեին համալսարանի մի քանի առավել ակտիվներիս հետ հանդիպեցին Վիկտոր Համբարձումյանը, ռեկտոր Նագուշ Հարությունյանը, պարտկոմը. խնդրեցին չհորդորել ուսանողությանը մասնակցելու նախապատրաստվող քայլարշավին: Մի փոքր տաքացա՝ «ե՞րբ, վերջապես, հնարավորություն կունենանք մեր արդար պահանջը հնչեցնելու...»: Հավաքվածների մեջ միակ անպարտիականը ես էի, մյուսները ենթարկվեցին պարտ. կարգապահությանը:

Պայմանավորվել էինք Պարույրի խմբով անպայման մասնակցել երթին՝ հնարավոր անհամությունը կանխելու նպատակով, քանզի Յակով Զարոբյանը, վտանգելով իր անձը, համոզել էր Մոսկվային զորքերը երթին միջամտելուց զերծ պահել՝ իր

պատասխանատվությամբ երաշխավորելով խաղաղ երթ: Կազմակերպչական նման զրույցներ տարվել էին մտավորականների և երիտասարդական խմբերի ջանքերով: Մի քանիսին այցելել էին Պարույրը և Սարգիսը: Լուրջ նախապատրաստական ջանքեր ներդրեցին քաղաքապետ Հասրաթյանը և այլոք:

Ապրիլի 24-ի «Պրավդան» լույս տեսավ երկու տարբերակով. Հայաստանի համար՝ Մկրտիչ Ներսիսյանի՝ եղեռնին նվիրված հոդվածով և ամբողջ միության համար՝ առանց դրա: Կենտրոնական մյուս թերթերում ոչ մի ծպտուն. հանկարծ մեր հարևան ոխերիմ բարեկամը չնեղանա:

Երբ քայլարշավի մի թևը մոտեցավ համալսարանին (Աբովյան փողոցի սև շենքին) հոսքային դասախոսությունս էի կարդում մեծ լսարանում: Դիմեցի ուսանողներին՝ «Այսօր յուրաքանչյուրը պետք է վարվի համաձայն իր խղճի և սկզբունքների, իսկ այժմ ստիպված եմ ընդհատել դասախոսությունս» ու դուրս եկա: Համարյա բոլորը միացան շարասյանը: Մինչև Կոմիտասի այգին շարժվում էր մի քանի տասնյակ հազարանոց շարասյուն՝ Միությունում աննախադեպ հրաշք: Սակայն եղավ դրանից ավելի աներևակայելին. մասնակիցների 100%-ը հայեր... ու ո՛չ մի անհամություն, ո՛չ մի կարգազանցություն: Անզեն զինվորները մնացին նստած մեծ մեքենաների բաց թափքերում, ոչ մի անգամ չմիջամտեցին. «Քո անուանդ սաղմոս պիտի երգեմ, ով Բարձրեալ» (Սաղմոս Դաւթի): Ժողովրդի սիրելին՝ Հովհաննես Բադալյանը, և նրան շրջապատած մի խումբ երիտասարդներ ամբողջ ճանապարհին երգում էին հայրենասիրական երգեր:

Երեկոյան հավաքվել էինք Սարգսի տանը: Բոլորիս անասելի խանդավառ հոգեվիճակը «վերծանեց» Պարույրը՝ «Ամբոխ էինք, այսօր ժողովուրդ դարձանք»: Հանկարծ զանգ. օպերայի շենքի մոտ (ներսում հանդիսավոր նիստն էր) անկարգություններ են: Լցվեցինք միակ (Սարգսի) մեքենան. ջոցան մեքենաներով միլիցիայի հետապնդումից փախչող տղաներին հանդիպեցինք կենտկոմի շենքի մոտակայքում: Պարզվում է՝ փորձել են ներխուժել օպերա, մերժում են ստացել, քարկոծել են պատուհանները: Տրամադրությունններս բավականին պղտորվել էր: Եվ նորից պետք է նշել ղեկավարության խոհեմ վարվելակերպը. առանց ընթացք տալու մարեցրին դեպքը:

Ապրիլի 24-ից հետո ոգևորված Զարոբյանը կանչում է տղա-



Դեպի Մատենադարան...



Սենատոր Էդուարդ Քեննեդիի հետ: Մեր միջև եղբոր՝ Զոնի կիսանդրին է:



Բրիֆինգ Նյու Յորքում լազերային կապի վերաբերյալ ելույթիցս հետո



Լաբորատորիայում

տոմսը, թե «հրաժարվում եմ, քանզի չեմ կարող դա բացատրել իմ ժողովրդին»: Մեջ է ընկնում Սուսլովը («գորշ կարդինալը») և հասկացնում Լյոնյային, թե ինչ կատաղած ջին է բաց թողնում 22ից, որից հետո Քոչինյանին կարգադրվեց այլևս չբարձրացնել այդ խնդիրը և արգելել այդ կապակցությամբ ամեն տեսակի ակտիվություն: Մենք դա զգացինք անմիջապես. խմբի նկատմամբ «վերևի» վերաբերմունքը փոխվեց: Մյուս խմբերի նկատմամբ ավելի խիստ վարվեցին. «Սամիզդատի» առաջին ու վերջին համարի կազմակերպիչը կալանավորեց ու 2 օրից հանկարծամահ եղավ բանտում, իբր, սրտի նոպայից: Երկրի վրա իջավ ռեակցիայի ամպը:

* * *

66-ի ապրիլի 24-ին որոշեցինք ծաղիկ դնել Կոմիտասի շիրիմին: Քաղաքը խստիվ հսկվում էր. երեքից ավելի խումբը վտանգավոր էր դիտվում: Նորից Սարգսի մեքենան. մեզ միացավ նկարիչ Հենրիկ Սիրավյանը և մի կին գրող, ցավոք, չեմ հիշում՝ ով: Այգում սպաներ էին շրջում: Ըստ երևույթին մեր անցաթուղթը Պարույրն էր. Կոմիտասի շիրիմի կողմից մի ավագ լեյտենանտ քարշ էր տալիս երիտասարդ մի զույգի, հավանաբար՝ ուսանողների. պարզվեց՝ համարձակվել էին ծաղիկ դնել շիրիմին. տղային քոթակել էին: Արյունը խփեց գլուխս.

– Վերջին անգամ նման տեսարան տեսել եմ 42-ին, – հանդարտ կատաղությամբ դիմեցի ավագ լեյտենանտին, նա ընդհարումից կրակ կտրած հայացքը լարեց վրաս, – օկուպացված Կրասնոդարում էր, – խաբուսիկ մեղմությամբ շարունակեցի, – ֆաշիստներն էին նույնը անում մեզ հետ:

– Ուզում ես ասել՝ ֆաշի՞ստ եմ, – չռեց աչքերը:

– Իհարկե ոչ, – շտապեցի հերքել, – դու ավելի վատն ես: Նա օտարին էր ծեծում, դու՝ յուրայինին:

Չհասցրեց հարձակվել՝ հանկարծ հայտնված մայորն ու փոխգնդապետը ոլորեցին ձեռքերս ու քաշեցին դեպի իրենց մեքենան, ընդ որում փոխգնդապետը ռուսերեն սպառնալիքներ էր թափում գլխիս: «Գոնե այսօր հայերեն խոսեք», – նետեցի ես: "Я тебе покажу хаерен!"[1], – խոստացավ հայ փոխգնդապե-

---

[1] Ես քեզ ցույց կտամ՝ խայեռեն

տը: Նա ետ մնաց, մայորը, ձեռքս ոլորած, շարունակեց ճամփան: Վիճակը նվաստացուցիչ էր. «եթե անմիջապես չթողնեք ձեռքս, կկրծեմ ձեր քիթը, լակոտ չեմ, չեմ փախչի»... Նա շփոթված նայեց աչքերիս ու թողեց ձեռքս: Մեքենա նստելու պահին կողքը կանգնած մի քանի «դրուժինիկ» չարախինդ նայում էին մեզ: «Ու՞ր էր, Պարույրն էլ մի բան աներ՝ ծեծեինք», – ծոր տվեց մեկը: Դա շանթեց այն աստիճան, որ չհասցրի շշպռել՝ մտցրին մեքենա: Լա՜վ, ինձ՝ շարքային թեկնածուիս, չեն ճանաչում, բայց Պարույր Սևակին ծեծել երազող հա՞յ... Բերեցին «Հայրենիք» կինոթատրոնի միլիցիայի բաժին ու փակեցին մի փոքր սենյակում: Վիճակս բարդանում էր մի հանգամանքի առկայությամբ. շալվարիս գրպանը տռզել էր թռուցիկներով, որոնք մի քանի գիշեր տպում էի գրամեքենայի վրա: Բովանդակությունը չէր փայլում օրիգինալությամբ. նորից Ղարաբաղ, նորից Նախիջևան: Նախորդ գիշերները մի քանիսը կպցրել էի պատերին, մեծ մասը մնացել էր: Այդ մասին գիտեր միայն Սարգիսը: Քառորդ ժամ անց սենյակ մտան կրակոտ ավագ լեյտենանտը և Սարգիսը: Երկար միջանցքով քայլելիս՝ գոգռված սպան չնկատեց, որ մենք կես քայլ հետ ընկանք. դա բավական էր, որ Սարգիսը ձեռքը խոթի գրպանս ու հանի թռուցիկների խուրձը: Ներս մտանք ընդարձակ աշխատասենյակ. սեղանի շուրջը՝ ընկերներս, սեղանի գլխին՝ պետը՝ նոր սերնդի երիտասարդ, գուցե և մի փոքր ճեզվիտ... Համենայն դեպս կտրուկ և դրականապես տարբերվում էր ինչպես նախկին, այնպես էլ օրինապահության այսօրվա «ասպետներից», որոնք մասնագիտական և մտածողական ունակությունները խիզախաբար լրացնում են բռունցքներով, քանզի հարցաքննվողը նմանատիպ պատասխանի հնարավորություն չունի: Ավելի ուշ իմացա, որ տղաները նախապես հայտարարել էին՝ կա՛մ դուրս են գալիս ինձ հետ, կա՛մ բոլորն են մնում: Դիվանագետ պետը հասկացել էր, որ ամենաճիշտը հաշտության եզրերի հանգելն է, ուստի սկսեց խրատական իր զրույցը ինձ հետ, ակնարկելով դատը և ազատազրկումը: Թռուցիկների խուրձից ազատվելով՝ հանգստացել ու աքլորացել էի. պատասխանեցի, որ երազում եմ բաց դատ, ուր վերջապես կասեմ այն ամենը...«Չենդ կտրի, վեր ընկի տեղդ», – խոսքս կտրեց Պարույրը. հազիվ էին խաղաղեցրել մթնոլորտը, կարող էի փչացնել: Հետագա զրույցն ընթացավ խաղաղ հունով ու տևեց 2 ժամից ավելի: Երբ վերջապես հրա-

ժեշտ տվեցինք ու դուրս էինք գալիս սենյակից, կողքս հայտնվեց «կրակոտ» ավագ լեյտենանտը. «Շնորհակալ եմ, եղբայրս, – շշնջաց, – շատ բան հասկացա»: Եթե անհարմար չլիներ, կհամբուրեի:

Թափ առած շարժումը համարյա մարեց: Հիշում եմ՝ համալսարանում դոցենտ Թորգոմ Խաչատրյանի հանձնարարմամբ դրամ էի հավաքում մեր ֆակուլտետում՝ ի նպաստ բանտարկված այլախոհների ընտանիքների:

65–67 թվականների վերելքը համենայն դեպս մի կարևոր նվաճում տվեց: Եղեռնի հուշարձանի մրցույթ հայտարարվեց ու հետո սկսվեց շինարարությունը՝ սկզբնական շրջանում կամավորների շաբաթօրյակներով:

Համազգային միասնության և հպարտության մի նոր առիթ՝ Երևանի 2750-ամյակի փառավոր նշումը. հատկապես երբ նրա նախաձեռնող և կազմակերպիչ հարգարժան Լ. Ղարիբջանյանն ի լուր աշխարհի հայտարարեց, որ, ի տարբերություն մյուս հին քաղաքների, Երևանի տարիքը վիճաբանության կամ կասկածի տեղիք չի տալիս, քանի որ այն հաստատվում է նրա ծննդյան քարե վկայականով:

*ԱՄՆ: Անհնարինը՝ ակնհայտ:* 69-ին, ի զարմանս, թույլ տվեցին երկամսյա գիտական գործուղումս ԱՄՆ: Ինչպես թույլտվությունը, այնպես էլ գործուղմանս նախորդող արարողակարգը Սովետական գործելակերպի հակատրամաբանական ցայտուն և տիպիկ օրինակն է:

– Մինիստրությունում արտասահմանյան գիտական գործուղումների տեղեր են ստացվել, – ի միջի այլոց, առօրեական տոնով նկատեց ինստիտուտի տնօրեն Տեր-Միքայելյանը, – ինչու՞ չփորձել:

Համոզված էի, որ պարտպատմության դեմ կատարած դեմարշ-քաջագործությունից հետո միամտություն է անգամ փորձելը:

– Գիտե՞ս, որ անհույս է:

– Իսկ դու փորձիր:

– Զահլա գործ է... Մի կույտ թղթեր, պատվաստ, տեղեկանքներ...

– Առանց զահլայի ոչինչ չի ստացվի, – խորիմաստ ավարտեց շեֆը, – մի օր պետք է փորձել:

– Պե՞տք է, որ...
– Надо, Федя!
– Ըստ աշխատանքիս բնույթի կգերադասեի ԱՄՆ-ը, ծայրագույն դեպքում՝ Իտալիա, – ասացի մինիստրությունում ցուցակը զննելուց հետո:
– Լրացրեք «ծայրագույնը»՝ 90% հավանականությամբ կգնաք:
– Իսկ եթե ԱՄՆ-ը՞...
– 99%-ով՝ չեք գնա:
– Համոզեցիք՝ վերցնում եմ ԱՄՆ-ը:
– Մի խոսքով չեք ուզում գնալ:
– Խոստովանեմ. ինձ ողջ կյանքս հետապնդում է Մինկովսկու փոքր թվերի օրենքը...
Ոչ մի հույս չէի տածում, ուստի առանց ճիգերի խսպառ մոռացության էի տվել այդ «անհեթեթությունը»:
Հանկարծ զանգ Մոսկվայից.
– 2 օրից ներկայանալ Մոսկվա՝ ԱՄՆ մեկնելու կապակցությամբ:
– Չե՞ռ եք առնում...
– Ամեննին...
– Լսեք, մարդիկ սեփական «դաչա» մեկնելիս մի շաբաթ առաջ են ծրագրում... Ես բոլորովին պատրաստ չեմ ո՛չ գիտական, ո՛չ կենցաղային, ո՛չ լեզվի առումով: Գոնե մեկ ամիս...
– Ишь чего захотел?![1] – զարմացան մյուս ծայրում:
– Գոնե մի շաբաթ, – նվնվում էի ես:
– Исключено![2]:
– Այդ դեպքում հրաժարվում եմ, չեմ ուզում խայտառակվել...
– Չի ստացվի, – ծեփեց հեռախոսաքեռին, – վիզան ստացված է, ժամկետը՝ նշված:
2 օր անց Մոսկվայում, տարբեր քաղաքներից 5 զգզված «ինտուրիստներ» նստած ենք խստաբարո քեռու առջև: Զարմանալիորեն նման է Իլյինսկու հերոսին "Карнавальная ночь" ֆիլմում. հետագայում պարզվեց, որ նաև խելք ու խոսքով: Քեռին, գլուխը վեր բարձրացնելով, զննեց մեզ ակնոցի միջով ու, հավանաբար, էսթետիկական հաճույք չստացավ: Գլուխը

---

1 Է՞լ ինչ կուզեիր
2 Բացառված է

վար իջեցրեց ու նայեց ակնոցի վրայով. նույն արդյունքը: Քեռին հանեց ակնոցը, դրեց մյուսը. համոզված էր, որ այս մոգական ժեստը վերջապես կտա ցանկալի արդյունքը՝ կտեսնի մեր դեմքերի շփոթված արտահայտությունը: Ըստ երևույթին դեմքերին (fas-երին) դաջված տարակուսանքը ընդունեց որպես իր սպասածը: Գերադասում եմ պահպանել հետագա երկխոսության բնագիրը:

– Товарищ, Вы куда едете?[1]- հարցը ուղղված էր ամենաերիտասարդին:

– В Иллинойс.[2]

– Кто там есть из советских людей?[3]

– Не знаю...[4]

– Вы что, товарищ, – զարհուրեց քեռին, – Вы куда, "тасазать", едете?[5]

– Так ведь за два дня узнали...[6]

– Ну и что? Это первое, что советский человек должен был выяснить! Ну а Вы?[7]

– В Индиану... Кажется там нет наших...[8]

Բնազդաբար հասկացանք, որ համաձայն «ծիսակատարության» պետք է կախենք գլուխներս: Աչքի պոչով նայեցի կողքիններիս. հայացքս խաչվեց միջին տարիքի լատվիացու հայացքի հետ, որի մեջ սևով սպիտակին տպված էր. «Տո՛ իշի գլուխ, հայվա՛ն... Պրոտոկոլ, հասկացանք, բայց ոչ Զոշչենկոյի գրչի զավեշտ... Երկաթե վարագույրի միջով սպրդել ենք, որ գնանք սովետական մարդկանց մո՞տ, թե՞ գիտօջախ: Իսկ թե որտեղ քանի՞ ստուկաչ եք ներդրել, ծեր հոգսն է. մենք ո՞նց պարզեինք, մտածե՞լ ես, ապուշ...»:

Իսկ քեռին մոլեգնում էր.

– Товарищи! Еще не поздно, вы можете отказаться!

---

1 Դուք ու՞ր եք գնում

2 Իլլինոյս

3 Սովետական մարդկանցից ո՞վ կա այնտեղ

4 Չգիտեմ

5 Ինչպե՞ս թե, ընկե՛ր, դուք, «այսպես ասած», ու՞ր եք գնում

6 Չէ՞ որ 2 օր առաջ ենք իմացել:

7 Հետո ի՞նչ, դա առաջինն բանն էր, որ սովետական մարդը պիտի պարզեր: Իսկ դու՞ք:

8 Ինդիանա: Կարծես թե այնտեղ մերոնցից ոչ ոք չկա:

Это, "тасазать", ваше неотъемлемое право![1]

Հետաքրքիր է, եթե բոլորս հրաժարվեինք, ինչ կասեր դրա վերադասը:

– Мы пологали, что главное — это научная[2], – անհամարձակ փորձ արեց առաջինը, սակայն քեռին վճռականորեն մերժեց նրա համաձայնողական ձևակերպումը:

– Ну, а вы?[3], – դիմեց ինձ:

– Разумеется интересовался, – հաստատակամորեն պատասխանեցի ես, – там полно наших[4].

Միակ բանը, որ ես հասցրել էի տեղեկանալ այն էր, որ ես գնում ոչ այնտեղ, ուր հայտ եմ ներկայացրել, և ինչպես պարզվեց հետագայում, ամբողջ MIT-ում (Մասաչուսետսի տեխնոլոգիական ինստիտուտ) ընդամենը մի կորած-մոլորած homo-soveticus կար, կարծեմ Վորոնեժից, որը, մատնված մոռացության ու անգործության, տրտմորեն սպասում էր՝ երբ կլրանա իր 4 ամիսը և կկուտակվի «Մոսկվիչ-412»-ի գումարը: Դա իր գալու միակ նպատակն էր. գիտությունից հեռու, վարքի ինստրուկցիան սերտած ու անկետային տվյալներով, ըստ երևույթին, անթերի:

Իմ նետած փրկարար օղակից փորձեց կառչել խեղդվողներից մեկը.

– Вообще то наши университеты там почти рядом...[5]

«Քեռու» պատասխանը գերազանցեց բոլորիս սպասելիքները.

– Рядом, да не вместе... Я, "тасазать", не знаю, как там выражается американский километр в нашем советском метре.[6]

– Тысяча метров в одном километре,[7] - պատրաստակամ հուշեցի ես, գերմարդկային ճիգեր թափելով՝ դեմքիս լուրջ արտահայտություն տալու վրա:

---

1 Ընկերներ, դեռ ուշ չէ: Դուք կարող եք հրաժարվել: Դա ձեր անօտարելի իրավունքն է:

2 Մենք ենթադրում էինք, որ գլխավորը գիտականն է...

3 Իսկ դու՞ք:

4 Բնականաբար հետաքրքրվել եմ: Մերոնք այնտեղ լիքն են:

5 Ճիշտն ասած, մեր համալսարաններն այնտեղ գրեթե հարևան են:

6 Հարևան են, բայց ոչ միասին... Ես, այսպես ասած, չգիտեմ, թե ինչպես է իրենց կիլոմետրն արտահայտվում մեր սովետական մետրով...

7 Հազար մետր՝ մեկ կիլոմետրում:

– Возможно...[1]

Չեզնանքը չզգաց. ցասումը փոխելով ողորմածության՝ ողջերթ մաղթեց և շատ «արժեքավոր» խրատներ տվեց.

– Мы молчаливо допускаем, как говорят математики, что вы пополните, если не золотую, то хотя бы серебряную копилку нашей науки. Имейте ввиду: ЭВМ, ЦВМ, и разные прочие ВМ-это вам не сейф, – նա մատնանշեց իր սեյֆը, – этого со счетов не сбросишь...[2]

– Ապրի՛, շատ հստակ նշեց տարբերությունը, – եզրակացրեց լատվիացի Արինյը:

Չիշեցնեմ՝ խոսքը 1969 թվի մասին է. այցելությունը ԱՄՆ քիչ էր զիջում այլմոլորակային ճանապարհորդությանը: Այսօր դա չի զարմացնում (փոխարենը սաստիկ վշտացնում է, քանզի շատ շատերի համար դարձել է անվերադարձ):

Ուստի երկրից ստացած տպավորությունների մասին (թեև գայթակղիչ է) չեմ շաղակրատի, իսկ մնացյալը՝ հեռագրական ոճով:

Վայրէջք Մոնրեալում: Սովետականներիս ընդհանուր դահլիճ չթողեցին, հետ ու առաջ ենք քայլում մարդազուրկ, անծայր, նեղ միջանցքով. "Спрямленная разновидность Бутырки"[3], – նկատում է Արինյը: Նյու-Յորքում տրապի մոտ սպասում են 2 ուսանող. «Ո՞վ է Ռուսաստանից», – հարցնում են դուրս եկողներին: «Մենք ենք»: Առանց ճշտելու բաժանում են մեր գործուղման ծրագրերը, իսկ ինձ և Արինյին՝ նաև 500-ական դոլար: Մենք գիտական «իկսչեյնջով» ենք, մյուսները՝ ստաժավորներ. կստանան տեղում: Նյու-Յորքից արդեն տեղական ավիաընկերության «Բոինգ»-ով Վաշինգտոն (մուտքի մոտ ծանծրույթից հորանջող 2 երիտասարդ՝ կրծքներին նախազգուշացնող պլակատներ՝ «Ոչ մի դեպքում չթռչեք այս ընկերության ինքնաթիռներով՝ վտանգավոր է»): Չենց առաջին երեկոն ընկնում եմ փողոցները, կլանված զբոսնում մութն ընկնելուց հետո զարմանալի ամայացած քաղաքում, կորցնում ճամփան, ուրախացած

---

[1] Շատ հնարավոր է...

[2] Մենք լռելայն ընդունում ենք, ինչպես ասում են մաթեմատիկոսները, որ դուք կլրացնեք մեր գիտության եթե ոչ ոսկե, ապա գոնե արծաթե գանձարանը: Նկատի ունեցեք, որ ԷՉՄ, ՄՉՄ և այլ ՉՄ-ները ձեզ համար սեյֆ չեն: Դա չես թաքցնի...

[3] Բուտիրկայի ուղղված տարբերակը

ցցվում հայտնված 2 նեգրերի մոտ ու չնկատելով նրանց տարօրինակ հայացքները՝ ներկայանում ու խնդրում ցույց տալ դեսպանատան ճամփան: Դեսպանատանը մեր կուրատորը քիչ է մնում ինձ ծեծի: Ամբողջ կազմը լարված է. «Դու գիտե՞ս, որ քեզ կարող էին 5 դոլարի համար մորթել... Չտեսա՞ր, որ փողոցներում միայն սևեր են ... աշխատանքն ավարտելուն պես սպիտակները ցրվում են իրենց քաղաքամերձ տները. քաղաքը տնօրինում են սևերը: Միությունում է, որ գոռում ենք նրանց իրավունքների մասին, այստեղ աչքով աչք չունենք ...»: Նոր հասկացա իմ պատահական զրուցակիցների հայացքների իմաստը: Չեմ կարծում, որ իմ նկատմամբ անպայման բռնություն կգործադրվեր, ինձ վրա նրանք հաճելի տպավորություն թողեցին, բացի դրանից, իմ «Homo Sovieticus»-ի «այցետոմս»-ը պետք է, որ զրկեր նրանց նվազագույն ավարի հույսից: Չեմ նախանձում այժմյան «նոր ռուսներին» ու «նոր հայերին»:

Երկու օրից յուրաքանչյուրս ցրվեց իր քաղաքը, ես՝ Բոստոն: Իմ ինքնուս, կցկտուր անգլերենով մեր հնգյակում Օքսֆորդի շրջանավարտի տեղ էի անցնում, սակայն արդեն օդակայանում սարսափով պարզեցի, որ ոչինչ չեմ հասկանում, հատկապես երբ գունավորներն են խոսում:

MIT-ում դիմավորեց հյուրընկալող (host)-պրոֆեսորս՝ Ռոբերտ Քեներին (հայտնի կլանի հետ կապ չունի): Ծանոթացրեց մի խումբ պրոֆեսորների հետ, ասաց, որ կարող եմ նրան կոչել Բոբ, ստիպված դառա Ռաֆ (անգլերեն ասել է «կոպիտ»), ցույց տվեց աշխատանքային տեղերս. մեկը՝ առանձնասենյակ (հանձնեց դրա բանալին), մյուսը, եթե ուզենամ շփվել աշխատակիցների՝ մեկը մյուսից հաճելի շրջանավարտ երիտասարդների հետ: Առանձնասենյակս այդպես էլ չմտա: Առավել սերտացա ֆինն Սեպպո Հալմիի հետ (մինչ օրս ստանում եմ տոնական բացիկներ): Իսկական ցնցում ապրեցի կարդալով իմ հարևան սենյակի դռան վրա Կլոդ Շեննոնի անունը: Երբևէ կերևակայե՞ի, որ կդառնամ ինֆորմացիայի տեսության հիմնադիր, հանճարեղ Շեննոնի հարևանը: Պետք է ասեմ, որ գործընկերներիս մոտ այդ սրբազան երկյուղածությունը չտեսա. «Է՜, լա՜վ, Շեննոնն ա...Հետո՞ ինչ», – կարծես ասում էին նրանց դեմքերը... Ավելի ուշ ես էլ հանգստացա. անգամ բարևում էի նրան: Հայտարարությունից իմացա, որ նախօրեին MIT-ում դասախոսությամբ հանդես էր եկել նախաբոլշևիկյան Ռուսաստանի վերջին տիրա-

կալը՝ ժամանակավոր կառավարության նախագահ պրոֆեսոր (եթե չեմ սխալվում՝ իրավաբան) Կերենսկին:

Դեռ չէին հանդարտվել Walter & Miriam Shneir-երի "Invitation to an inquest"[1] գրքի շուրջ ծավալված կրքերը, որի էջերում հեղինակները ապացուցում էին Ռոզենբերգ զույգի և Մորտոն Սոբելի անմեղությունը ատոմային ռումբի գաղտնիքը սովետներին հանձնելու գործում: Սոբելի կինը ղեկավարում էր երեսուն տարվա ազատազրկման դատապարտված ամուսնու ազատման հասարակական կոմիտեն (Ռոզենբերգ ամուսինները նստեցին էլեկտրական աթոռին): Հետևելով Շչեդրինի սցենարին՝ անցա հայրենակիցների որոնմանը. «արահետը» բերեց դաշնակցության «Հայրենիք» ամսագրի խմբագրություն, ինչն ինքնին հազիվ թե ուրախացներ մեր օրգաններին: Խմբագրի՝ Ջեյմս Թաշյանի հայերենը զիջում էր իմ անգլերենին, որը, ինչպես նշեցի, համարյա «չիմացության» մակարդակի էր, ուստի տեղի ունեցած բառափոխանակությունը Աստված զրույց համարի: Սակայն այդքանն էլ բավական էր, որ ես լիովին ստանայի նրա ծառացած անբարյացակամության ու կասկածամտության բաժինը: Այլևս չհանդիպեցինք: Դադարեցրի հայրենակիցներիս որսը ու կպա անգլերենին, որպեսզի շփվել կարողանամ գործընկերներիս հետ: Անհամեստաբար խոստովանեմ, որ բավականին առաջադիմեցի, այնպես որ 2 շաբաթ անց համաձայնեցի զեկուցել իմ բաժնում, ինչպես նաև ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում տարվող առավել հետաքրքիր թեմաների մասին: Երբ հարցրին՝ քանի րոպե կպահանջվի, հաշվի առնելով լեզվական հնարավորություններս, ասացի, որ կաշխատեմ լինել այնքան հակիրճ, որքան դա անհնարին է. կատակը դուր եկավ: 50 լուրջ գիտնականներ համբերատար լսեցին համարյա մեկ ժամ տևած զեկույցս: Վերջում ինձ հղած հարցերից պարզ դարձավ, որ նրանց առավել հետաքրքրում են ոչ թե մեր գիտական նվաճումները (թեև դրանք իրենց սպասածից բարձր էին), այլ սովետական տարօրինակ մարդ արարածի ու իր առեղծվածային երկրի հանելուկը: Արժե առանձնացնել հարցերից մեկը.

– Ինչպե՞ս եք հայթայթում Ձեր բաժնին անհրաժեշտ ֆինանսավորումը:

– Շատ պարզ, – վստահ արձագանքեցի, – գնահատում եմ

---

1 «Հրավեր հետաքննության»

հաջորդ տարվա պահանջարկը ու բազմապատկում ութով...
Յարցականի մեծ նշան բոլորի դեմքերին...
– Բացատրեմ. նախահաշիվս ներկայացնում եմ ինստիտուտի տնօրենին, որը բաժանում է գումարը երկուսի ու ներկայացնում Ակադեմիա: Այնտեղ կատարում են նույն գործողությունը և նախահաշիվը ուղարկում Մոսկվա: Վերջինս այն բաժանում է երկուսի ու ես ստանում եմ պահանջվող գումարը...
Ընդհանուր ծիծաղ, բացականչություններ՝ «ճիշտ մերի նման»: Սառույցը կոտրված է... Homo-Sovieticus-ի այդ նմուշահատը կարծես կոմպլեքսավորված չէ, ոչ էլ դասը սերտած թութակ: Յաջորդում են հրավերները՝ տներ, ռեստորաններ, անբռնազբոսիկ զրույցներ տարբեր թեմաներով՝ մշակույթից մինչև քաղաքականություն... Շարունակում են զարմանալ՝ ճանաչում եմ բոլոր խոշոր և որոշ նորարար ամերիկյան գրողներին... «Այո, 68-ի ներխուժումը Չեխոսլովակիա ագրեսիա է»... Կիսվում են կիսափակ գիտական թեմաներով, նվիրում հոդվածներ, գրքեր, այդ թվում և ծառայողական օգտագործման նյութեր... Այն ժամանակ չէի պատկերացնում, թե մեկ տարի անց ինչպիսի չարիքի կվերածվի իմ (խորը ներշունչ) «դյուրահաղորդակցվելիությունը» (օ˜ֆֆֆ):
Անգլերենի զարգացման տեմպը նվազեց, քանզի նույն այդ ժամանակ ընկա հայրենակիցներիս գիրկը: Բարեհոգի ու զգոն Սեպպոն «բերման ենթարկեց» MIT-ի պետական պաշտոնյա Ասքանազ Բեդրոսյանին: Չեմ կարծում, որ նա չգիտեր իմ գոյության մասին, սակայն քանի որ կատարում էր մեր առաջին բաժնի ֆունկցիաները, ըստ երևույթին զգուշանում էր: Առաջին հանդիպումից դարձանք ջերմ ու անկեղծ բարեկամներ: Զարմանալի հմայիչ ու խոհեմ, համայնքում մեծ հարգանք վայելող՝ անգամ միմյանց հետ անհաշտ կուսակցություններում. նա դարձավ իմ գիդը: Նրան եմ պարտական համայնքի պատվարժան անձանց հետ ծանոթությամբ: Շատ կուզենայի մանրամասն խոսել յուրաքանչյուրի մասին, մանավանդ, որ շատերի համար այսօր դա հետմահու հուշ է: Սակայն շարադրանքիս բուն նպատակն այլ է: Բավարարվեմ համառոտ թվարկումով:
*Տեր Յայր Արսեն Սիմոնյան:* Յանդիպածս ժամանակ (69-ին) արդեն 89 տարեկան, առույգ, ապշեցուցիչ հիշողության տեր (նման բան 80-ականներին հանդիպեցի Յայրիկ Մուրադյանի մոտ): Ճանաչել է Եկմալյանին, Կոմիտասին (վերջինիս

մասին հուշերի գրքույկը ինձ նվիրեց), Խրիմյան Հայրիկին (հիշում էր նրա դիմավորումը Թիֆլիսում և Հայրիկի խոսքերը. «Չպիտի մեռնիմ, մինչև այս մատովս հայ իշխան չօծիմ»): Վահան Տերյանի ու Սահակ Տեր-Գաբրիելյանի (37-ին 4-րդ հարկից գցեցին Ստալինի հայ գործակալները) օգնությամբ փրկել և էջմիածին է ուղարկել 187 «սնդուկ» հայկական ձեռագրեր Մոսկվայի Լազարյան ճեմարանից, ուր դասախոսել է: Ինքը ևս ավարտել է Ներսիսյան դպրոցը, եղել է Ղրիմում և Նախիջևանում, ապրել Մոսկվայում: Այդքան բարի գործերից հետո զարմանալի կլիներ, եթե չաքսորվեր Սիբիր: 2-րդ համաշխարհայինի ժամանակ որդու՝ Արշալույսի հետ փոխադրվում են Բոստոն: Որդին՝ փոքրամարմին, մեղմ, քաղաքավարի, կիրակնօրյա և միջնակարգ դպրոցների հոգաբարձուների խորհրդի անդամ էր: Պրն. Ասքանազի խնդրանքով բերում է իր հետ քարտեզներ, կախում իմ առջև ու մանրամասն ներկայացնում ամբողջ համակարգը: Հպարտությամբ նշում 2 ֆուլ (լրիվ) դպրոցների բացման փաստը: Պրն. Ասքանազը չի ուզում վշտացնել Արշալույսին, սակայն առանձին գրույցում «ցավ ի սիրտ» հասկացնում է, որ առանձնապես ոգևորված չէ այդ փաստով. «Այստեղ ծնված սերունդը արդեն անգլախոս է, թեև հայերենն ավել կամ պակաս (կախված ընտանիքից) գիտե»: Լրիվ դպրոցները Սիրիայից և Լիբանանից գաղթականների նոր ալիքի՝ անգլերենը չիմացող երեխաների համար է՝ «Տեսնենք 10 տարիեն ետքը ինչ կըլլա... Ուրախ կըլլամ, եթե խորհածս սխալ պարզվի»: Խորապես տառապում է՝ գիտակցելով հայ համայնքի անկասելի ուծացումը և քայքայումը, սակայն, դրսևորելով հոգեկան հիացնող կորով ու մտքի սթափություն, չի փորձում ինքնախաբեությամբ մխիթարվել: Զսպելով հույզերը՝ անողոքաբար ներկացնում է ճշմարտությունը: Այստեղի համար պարտադիր ժպիտն անզոր է թաքցնելու աչքերի խորքում դարանակալած թախիծը: Մեկ անգամ հազիվ է զսպում իրեն: Սուրբ Ստեփանոս կիսադատարկ եկեղեցում կիրակնօրյա ժամերգության ժամանակ, նայելով կից դպրոցից խումբ-խումբ ներս մտնող կոկիկ հագնված, դուրեկան երեխաներին, շշնջաց. «40 տարի ամեն կիրակի եկեղեցի կուգամ ազգիս հուղարկավորությանը, կխորհիմ՝ ինչ կըլլա 40 տարի ասկե ետքը...» ու ձայնը խզվեց... Լռեց, որ չդավաճանի իրեն: Ես չդիմացա. այդքան հոգեկան կարծրություն չունեմ... «Նազուշին (այն ժամանակ

ՀՍՍՀ Գերագույն Խորհրդի նախագահ) ըսե, թե հնար մը ունի, հայերու չու նորեն բերե Հայաստան, հասկացրու, որ սա տեղի 50000 հայը հայ չեն, հոն 5000-ն ալ հայ են... Հոս մենք ապագա չունինք...»: Ինքը Մարաշում է ծնվել, կինը՝ տիկին Զաբելը, ԱՄՆ-ում, լիարժեք տիրապետում է հայերենին, դուստրը՝ Կարինը, և որդին՝ Ռոբերտը, այբբենարան են կազմում ու նկարազարդում կիրակնօրյա դպրոցների համար: Հետագայում, մասամբ իմ առաջարկությամբ ու միջնորդությամբ, Ռոբերտը կատարելագործում է իր հայերենը (և Հայոց Պատմությունը)՝ կես տարի ուսանելով Երևանի համալսարանում և Մատենադարանում:

Նագուշ Հարությունյանին չհաջողվեց Ասքանազի խնդրանքը կատարել... Դրա «փայլուն» լուծումը հաջողացրին անկախ Հայաստանի իշխանությունները...

Նույն խնդրի շուրջը խոսակցություն բացվեց մեկ այլ առիթով: Պարոն Ասքանազը ծանոթացրեց 4 դաշնակցական գործիչների հետ, որոնց մեջ իր լեզվաիմացությամբ և զարգացմամբ առանձնանում էր բժիշկ Երվանդ Խաթանասյանի փեսան՝ Թաթուլ Փափազյանը: Փոխադարձ հաջողությամբ ներում ենք մեկս մյուսին. ես, մասնավորապես, մեղադրում եմ դաշնակցությանը 15 թվի եղեռնի նախապատրաստումը չնկատելու, բաց թողնելու մեջ: Փորձում են առարկել, սակայն պարոն Խաթանասյանը, իրենց համար անսպասելի, բռնում է իմ կողմը: Իսկ նա, ինչպես կտեսնենք ստորև, հարգված է ու հեղինակավոր:

Քաջ գիտակցելով հայ եկեղեցու լեզվա- և ազգապահպան առաքելությունը պետականազուրկ մեր դարերում չեմ արդարացնում եկեղեցաշինության նախապատվությունը դպրոցաշինության նկատմամբ, այն էլ երկփեղկված համայնքի՝ էջմիածնականների ու անթիլիասականների «առողջ սոցիալիստական մրցմամբ» խթանված: Եկեղեցին պետք էր Օսմանյան բարբարոս տիրապետության պարագայում, որպես հոգևոր և ֆիզիկական պատսպարան, ԱՄՆ-ում ֆիզիկական եղեռն չի սպառնում, այստեղ անհրաժեշտ են հակաուծացման կենտրոններ: (Ցավոք այսօր էլ՝ 21-րդ դարի շեմին, ազգակործան արտագաղթի պայմաններում «հոգատար հայրերը» աշխատատեղեր ստեղծելու փոխարեն «մի գլուխ» եկեղեցի են շինում: Հավանաբար արտերկրի զբոսաշրջիկների համար):

Ի պատասխան երիտասարդության մեջ հայերենի ոչ բավա-

րար իմացության՝ ինձ դեմ տվին պատին՝ նշելով Մոսկվայի, Ռոստովի, Կրասնոդարի հայ երիտասարդության հայերեն լեզվի բացարձակ չիմացությունը, «250.000-անոց հայ գաղութ ունեցող Բաքվու՞մ է բարվոք, թե՞ Թիֆլիսում: Մայրաքաղաք Երևանում ո՞ր լեզուն ավելի հաճախ կլսես... Ձեր որոշ կեղծ-մտավորականներ իրենց ընտանիքներում այնպես հուսալի են պատսպարել երեխաներին մայրենի լեզվից, որ համարյա բացարձակ անգրագետ են...»: Ի՞նչ կարող ես ասել... Ինքս եմ ցնորվում այս փաստից: «Որովհետև այնտեղ չկա դաշնակցություն», – եզրափակում է Թաթուլը: Կավելացնեի նաև եկեղեցին: Պարզվում է լավատեղյակ են մեր կյանքի նիստ ու կացի մանրամասներին. «Մեր անգրագետ հայրերը, – շարունակում է Թաթուլը, – որ փրկվել էին յաթաղանից ու գաղթել այստեղ, սենթ առ սենթ փող էին հավաքում և ուղարկում արևելյան գաղութները, քանի որ ԱՄՆ-ը դիտում էին որպես ժամանակավոր օթևան: Հիմա, երբ տեսանք, որ դա երկարատև է, ուշադրությունը շեղեցինք այս տեղի վրա»:

*Բժիշկ Երվանդ Խաթանասյան:* «Հայրենիքի» նախկին խմբագիր, հայերենին հիանալի տիրապետող ու հարուստ գրադարանի տեր, անկեղծ հայրենասեր և հմայիչ անձնավորություն. բուժակ է եղել Անդրանիկի մոտ: Երբ ասացի, որ հայրիկս էլ է կամավոր եղել այնտեղ, նվիրեց զորավարի հուշամեդալը: Մեկ ամիս անց, երբ արդեն Կրասնոդարում պատմեցի հայրիկիս, նա սաստիկ հուզվեց. «Մենք նրան «ֆերշալ» Երվանդ էինք ասում»: Ուզեցել է վերադառնալ հայրենիք, Ավետիք Իսահակյանը խորհուրդ չի տվել, և փառք Աստծու՝ 37-ին կկորչեր...

Ինձ կատակով ներկայացավ որպես «դաշնակ շուն». «Ձեր թերթերում այս բառակապակցությամբ են մեզ հիշում: Բայց ես չեմ նեղանում. վերևից թելադրված է»: Տիկին Վերժինեի հետ այցելել է Երևան 2750 ամյակի տոնակատարության օրերին: Թափառել է Հայաստանով մեկ՝ հանգիստ հանդուրժելով մեր «չծանծրացնող» սերվիսի անակնկալները: Հավատում ես, որ այդ բարձրահասակ, գեղեցկադեմ 75-ամյա «պատանու» հայրենասիրությունը առօրյայից վեր է, դա նրա հոգին է՝ էությունը: Բերկրանք է ապրել մեր շինարարական թափը և կառույցները դիտելիս. «Ձեր հասարակության առավելությունը դա է, օգտվեք, կառուցեք ինչքան հնարավոր է... վատը կգնա, դա կմնա...»: Ուրախացնում է մեր մտավորական կյանքը, ժողո-

վուրդը: Նրբանկատ և ճիշտ է խոսում մեր թերությունների մասին, անգամ լավատես է: Աչքից չի վրիպել տարածված կաշառակերությունը և գողությունը պետական ձեռնարկներում ու կոլխոզներում, սակայն արդարացնում է դա տնտեսական ոչ իրատես հիմքերով: Ես ներքուստ շնորհակալ եմ նրան այդ մխիթարանքի համար, բայց դա չի քնեցնում հոգուս մեջ վաղուց բույն դրած տագնապը. ինձ համար կաշառակերությունը եղել է և մնում է ամենազազրելի հանցանքը՝ բարոյական սպիդ, ժողովրդի այլասերման ու նրա ապագայի կորստի գործընթացը: Ավաղ այսօր, երբ այդ ախտի ճամփին վերացրել են բոլոր իրավական արգելքները և ցինիկ «բեսպրեդելը» ցուցադրում է իշխանավորները, «մետաստազները» պատել են ողջ մարմինը:

Թող ինձ ներվեն այդ խոհեմ ու խորհող հայրենասերի 30-ամյա վաղեմության մտորումներ-մեջբերումները. նրանք այսօր էլ ուսանելի են: Մասնավորապես այս մեկը. «Մենք բաց թողեցինք 15 թիվը... Պետք է անել ամեն ինչ, որ դա չկրկնվի: Մեր իդեալը անկախ Հայաստանն է, բայց ոչ Ռուսաստանից անհապաղ անջատվելը (համարձակվում եմ ընթերցողիս հիշեցնել Պարույր Հայրիկյանի հետ փարիզյան իմ վեճը), դա անմտություն է և իզուր են դա մեզ վերագրում: Բայց ժողովուրդը պետք է պատրաստ լինի ապագայի հնարավոր բարդացումներին, որպեսզի անզեն ու անպաշտպան չհայտնվի թշնամու առջև: Համայնավար պետությունների միջև վերջերս (այսինքն 60-ականներին) խորացող խզումները ցույց են տալիս, որ Սովետական Միության շահերը հակադրվում են ոչ միայն կապիտալիստների, այլև համայնավարների շահերին...»:

Անկեղծ խոստովանեմ, որ այն ժամանակ ես միամտություն համարեցի ԽՍՀՄ-ի փլուզման հնարավորությունը, քանզի չէի տեսնում ո՛չ արտաքին, ո՛չ էլ ներքին ուժերի այն շարժը, որը կարող էր անգամ նման գործընթացի սկիզբը դնել: «Իրոք, – մտածում էի ես, – մեր երկրում յուրաքանչյուր 4-րդը КГБ-ի գործակալ, յուրաքանչյուր 5-րդը ապականված ու ամայի հոգու տեր, գող կամ կաշառակեր է, որի իդեալը լեփ-լեցուն տունն ու սառնարանն է: Այս միջավայրում անհրաժեշտ կրիտիկական զանգված չի առաջանա. տեղն ու տեղը կմատնեն: Երվանդի սուր հայացքը ծակեց ապագայի մշուշը, թեև չգուշակեց այն պղտոր ալիքը, որը հեղեղեց մեզ՝ ապականելով ամեն ինչ:

*Ռուբիկ Գրիգորյան:* Պրոֆեսոր երաժիշտ, խմբավար,

դասախոսում էր Բոստոնի կոնսերվատորիայում, տնօրինում ս. Ստեփանոս եկեղեցու երգչախումբը, զբաղվում երեխաների հետ: Կիրթ, հաճելի դեմքով (նույնը և իր բարեհամբույր տիկինը). «Երջանիկ եք, որ կարող եք հայրենիքին ծառայել», – տխուր ժպտաց ինձ: Նվիրեց իր մշակմամբ և իր երգչախմբի կատարմամբ ձայնագրած միջնադարյան շարականների ձայնապնակը: Մինչ օրս պահպանում եմ: Իսկ Ռուբիկը չկա. 90-ականներին մասնակցեցի նրա հուշ երեկոյին:

*Պերճ Ժամկոչյան:* Հայտնի երգեհոնահար. լսելով իմ մասին՝ հրավիրեց իր համերգին: Բարեկամացանք. մի քանի անգամ եղավ Երևանում համերգներով, միշտ մեծ հաջողությամբ: 88-ից հետո չի եկել:

*Պերճ Հաճյան:* Հայտնի մաթեմատիկոս (վերջերս ընտրվեց ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ). նրա և իր տիկնոջ՝ Թամարի հետ ծանոթությունը վերածվեց բազմամյա բարեկամության, կասեի՝ եղբայրության: Դառան փոքրիկներիս կնքածնողները, իրենց վրա վերցնելով միությունում չլսված պամպերսներով և այլ մանկական հանդերձանքով նրանց մատակարարման պարտականությունները: Երկուսն էլ ակտիվ հայրենասերներ. մասնակցել են համայնքի կյանքին: Թամարը՝ միջազգային իրավագետ, մասնակցել է եղեռնին նվիրված հակաթուրքական բողոքակցիաներին, ելույթներ ունեցել հեռուստատեսությամբ: Հատկապես ակտիվորեն մասնակցել են Հայաստանի կյանքին անկախացումից հետո: Զգալի նյութական օգնություն է ցույց տվել Պերճը մեր մաթեմատիկոսներին: Այդ զույգին մենք դեռ մեկ անգամ չէ, որ կհանդիպենք մեր հուշերում:

*Պարոն Ասքանազը* թեև ավելի հակված է դաշնակցության կողմը, սակայն ազնվաբար պահպանում է անաչառությունը, կազմակերպում է իմ հանդիպումները համայնքի մյուս կեսի (ռամկավարների) ներկայացուցիչների հետ: Մասնավորապես, հյուրընկալվում եմ Թումանյան եղբայրների կողմից: Ավագ եղբայրը՝ պրոֆեսոր Հայկը, զբաղվում է գրական գործունեությամբ և շատ լավ նկարում: Շատ հաճելի տպավորվեց Պետրոս-Նենսի զույգի ընտանիքը: 4 սիրունատես հայեցի կրթվող երեխաների մայր, բարակիրան Նենսիին 20-ից ավելի չէիք տա՝ չմեղանչելով խղճի դեմ: Ծանոթացա համեմատաբար երիտասարդ Ժիրայր և Սիլվա Թեքեյան զույգի, լենինգրադցի Արտո և Նինա Շահրիդյանների և այլոց հետ:



Վերակառուցման «ծիծեռնակները»...



«Մի խումբ էքստրեմիստներ»



Օպերայի հարթակում են լուսահոգի Հայրիկ Մուրադյանը, ժողովրդական նկարիչ Սարգիս Մուրադյանը և ակադեմիկոս Լեոնդրուշ Խուրշուդյանը

Համայնքը երկփեղկված է: Քանի որ դաշնակները ավանդաբար հակասովետականի պիտակ են ստացել, ապա ռամկավարները անշուշտ պետք է պրոսովետական լինեն: Սակայն այցելության գալով հայրենիք, ի տարբերություն դաշնակների, շատ հիվանդագին են անդրադառնում հյուրանոցների չափից դուրս «հայկական» սերվիսին: Յուրաքանչյուր կեսը ունի իր եկեղեցին:

Այդ օրերին Նյու-Յորք և Բոստոն այցելության եկավ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Խորենը: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն I-ը նախապես կոնդակ էր հղել իր թեմին՝ զերծ մնալ այդ այցելությանը որևէ մասնակցություն ունենալուց: «Արժանապատիվ չէ... վայել չէ», – վշտացած եզրահանգում է պ-ն Ասքանազը: Ինչպե՞ս ասեմ պ-ն Ասքանազին, որ դա կաթողիկոսի հրահանգը չէ, այլ՝ Մոսկվայինը: Կաթողիկոսի պատվին կազմակերպված բազմամարդ հավաքույթից առաջ պ-ն Ասքանազը ներկայացնում է ինձ հայրապետին: Ես, աջը համբուրելու փոխարեն, սովետաբար թոթվում եմ այն, նրա՝ հիվանդ մարդու, ծանր հայացքի ներքո: Հիշելիս մինչև հիմա ամոթից ցնցվում եմ:

Մի սիմպտոմատիկ փաստ ևս. նամակ ստացա մի հայրենադարձ երիտասարդ կնոջից, որը վերջերս մեծ դժվարությամբ հաջողացրել էր Հայաստանից վերստին փոխադրվել ԱՄՆ: Իմացել էր, որ Բոստոնում եմ, շտապել էր կիսել իր ուրախությունը: Գրում է, որ երջանիկ է, որ այստեղ է, Հայաստանում չէ, որտեղ չկար նվազագույն կարգուկանոն, նվազագույն օրինականություն... այլ՝ կոռուպցիա, գողություն, կաշառք... Իրենց լավ են զգում միայն պղտոր ջրում ձուկ որսացողները: Կարդում եմ նամակը, գիտակցում, որ իրավացի է, որ այդ նույն արատները ինձ էլ՝ Մոսկվայից հայրենադարձվածիս են խելագարեցնում, սակայն սրտնեղվում եմ նրա ուրախությունից և անիծում իրավիճակը, որը դրդում է հայրենիքը լքելուն: Հիշեցնեմ՝ մենք գտնվում ենք 1969-ում, այսինքն ժամանակային առանցքի այն հատվածում, որն այսօրվա ողբալի դիտակետից թվում է երանելի: Կարծեմ նույն այդ 60-ականներին էր, որ ֆրանսահայ հայրենադարձները, անտեսելով Խքը-ի աչալուրջ «կերբերոսներին», գցում էին իրենց Պինոյի ավտոյի անիվների տակ՝ աղաչելով ազատել սովետական բանտ-դժոխքից: Ուրեմն այնքան էլ բարվոք ու երանելի չէր երկիրը: Առկա էին այն բոլոր արատները, որոնք Մոսկվա-Երևան բազմաստիճան ուղղահայացի քայքայ-

վելուց ու նոր իրավական դաշտի բացակայության պայմաններում «ծաղկեցին» փարթամորեն: Իրոք, Լենին-Ձերժինսկի արյունոտ տանդեմով ծերբազատված, կարմիր *տեռորի* (այ-այ-այ... պարզվում է՝ սովետական առաջին տեռորիստը մեր փառապանծ առաջնորդն է, Ստալինը ընդամենը զարգացրեց այն... Ու դեռ ճշգրտում է՝ «կարմիր», կարծես, տեռորը կարող է երկնագույն էլ լինել), անմարդկային կուլակաթափության (այսինքն՝ պորտաբույծների ձեռքով աշխատասեր գյուղացու թալանի), ոչ պակաս դաժան, պարտադիր կոլեկտիվացման՝ զրկելով գյուղացուն հողից, իսկ երիտասարդին՝ անձնագրից, նրանց փաստացի ճորտացման ենթարկեց), 33-ին սկսված, 53-ին ավարտված ստալինյան հրեշավոր մսաղաց 37-ի ու գուլագների, վերջապես համաշխարհային պատերազմի միջով անցած սովետական մարդը մշակել և յուրացրել էր կենսագոյության, այսինքն պետության թերավճարը լրացնելու յուրահատուկ մոդել: Այլ կերպ ասած, քանի որ ազգային հարստությունը պետական էր (մասնավոր չկար), ապա գործում էր "Все кругом колхозное, все кругом мое"[1] չօրինականացված, սակայն բոլորի կողմից լռելյայն ընդունված բանաձևը. պետական արտադրանքի համատարած, չընդհատվող արտահոսք աշխատավորների շալվարների ու «ծոցաբուչախների» փոխադրամիջոցներով: Ռայկոմի քարտուղարների «փայը» հասցվում էր տուն (վայել չէ դաշտից քարշ տալը), որից հետո գործի էին անցնում կոլտնտեսականները, անշուշտ, ըստ պաշտոնացուցակի, պահակը «օգտվում» էր իր պահպանած պահեստից, խանութի գործակատարը «կիսվում» էր հաճախորդների հետ, չինովնիկը՝ «անկաշառ լավություն» անում, բժիշկը՝ «ձրի» վիրահատում, ուսուցիչը՝ հիմնական գիտելիքները տալիս էր իր տանը՝ «տերթոդիկանոցում», մտավորականը՝ գողանում լույսը, «լույսի մարդը»՝ բռնացնում նրան և, ի վերջո, վերցնում այն, ինչը պիտի մուծվեր պետգանձարան, ուղևորը 3 կոպեկանոց լավություն էր անում տոմսավաճառին, որպեսզի հանկարծ այդ գումարը չգնա տրանսպորտի վիճակի (որից ինքը սիստեմատիկ ու խիստ բողոքում է) բարելավմանը և այլն, և այլն...

Անշուշտ, 37-ի համեմատությամբ խրուշչովյան «ձնհալը» և

---

1 «Շուրջս ամեն ինչ կոլխոզինն է, շուրջս ամեն ինչ իմն է...»

բրեժնևյան «լճացումն» իր «психушка»-ներով[1] երջանկություն էին: Կասկածից վեր է նաև, որ սովետական մարդու գեների մեջ մտած, կյանքի նորմա դարձած գողությունը չէր կարող վերանալ թեկուզ խեղված, բայց կայուն օրինապահ դաշտի փլուզումով... Այն պետք է ընդուներ անսանձ ու անսքող վարքաձև, ինչը և հասցրեց այսօրվա ողբալի վիճակին՝ շատ ավելի վատթար, քան բրեժնևյանը: Եվ խեղճ ու կրակ ժողովուրդը, չգիտես ինչու, միակ ելքը վատթարից տեսնում է դեպի վատը վերադարձի մեջ: Կարծես՝ երրորդը տրված չէ: Ուստի, ծածանելով բեղերից արյուն կաթող մարդակերի մռութ-պատկերը՝ պահանջում է վերադարձ դեպի 37-ը (քանզի դա է ստալինյան էպոխայի սիմվոլը): Ու երբ դրանց մեջ տեսնում եմ այդ դժոխքում չապրած անմորուս աքլորների, ակամա մտածում եմ, որ յուրաքանչյուր սերունդ սովորում է իր սխալների վրա և ոչ՝ նախորդ սերնդի, պապերի, նախնիների...

Այն օրերին ԱՄՆ-ում զարմացրեց ուրիշ փաստ ևս. գիտական սիմպոզիումում հանդիպեցի Մոսկվայի մթնոլորտի ֆիզիկայի ինստիտուտի նախկին ասպիրանտ մի երիտասարդ կնոջ. ամուսնացել է ամերիկացու հետ և 3 տարի առաջ փոխադրվել ԱՄՆ: Չի ափսոսում, գոհ է ու երջանիկ: Դա նախկին մոսկվացու համար անըմբռնելի է. թողնել Մոսկվան, որը հայ երիտասարդների համար գիտական, սոցիալական, օրինականության, սիրային արկածների Մեքքա է... Ինձ՝ Մոսկվան Երևանով փոխածիս համար դա հավասարազոր է խելքի պղտորման (առաջին տարիներին երազում հայտնվում էի Մոսկվայի փողոցներում ու արթնանում կարոտով): Պարզվում է, Մոսկվան էլ դեռ «Ռիո դե ժանեյրո» չէր:

MIT-ում ինձ հյուրընկալած բաժնի ղեկավարությունը դիմել էր պետ. դեպարտամենտին՝ իմ գործուղումը երկարացնելու խնդրանքով: Վերջինս հայցում էր արել մեր ներկայացուցչությունն: Թույլտվությունը, անշուշտ, եկավ, սակայն ճիշտ այն պահին, երբ ինքնաթիռս վարէջք կատարեց Մոսկվայի Շերեմետևոյում: Ո՛չ շուտ, ո՛չ ուշ: Երկու մեծ ճամպրուկներիցս մեկը լեփ-լեցուն էր գիտական գրականությամբ: Ճամպրուկիս ծանրությունը ոգևորեց մաքսակետի աշխատողներին, բովանդակու-

---

[1] Բանտային «հիվանդանոց», ուր այլախոհը հասցվում էր հոգեհիվանդ վիճակի:

թյունը՝ հիասթափեցրեց: Լիավճար գանձելու նրանց բաղձանքին ես պատասխանեցի անսպասելի առատաձեռնությամբ՝ առաջարկելով ամբողջ ճամպրուկը որպես նվեր, քանզի ինչքան հասկացա այդ գրականությունը նրանց ավելի է հետաքրքրել, քան գիտական այն օջախներին, որոնց համար նախատեսել էի: "Забирай и вали отсюда"[1], – եղավ «քաղաքավարի» առաջարկ: Գրականության մի մասին տիրացան օրգանները, մյուս մասը ցրեցի Հայաստանի ու Ռուսաստանի գործընկերներիս:

*Նորից ԱՄՆ (ոչ բարով):* Ավա՜ղ, վաղուց է ասված, որ պարզապես հիմարն այնքան վտանգավոր չէ, որքան նախաձեռնող հիմարը: Իմ փութաջանությունն արջի ծառայություն մատուցեց հենց ինձ: Օրգանները գնահատեցին տարբեր բնավորության տեր մարդկանց հետ մերձենալու անմիջականությունս, հաղորդակից դառնալու ունակությունս: Հաշվի չառան լոկ մի հանգամանք. դա գործում է մաքուր խղճի ու ետին նպատակների բացակայության պարագայում...

Հայտնի է, որ հաջորդ արտասահմանյան ուղևորությունը հնարավոր էր առնվազն երկու տարի անց: Ու հանկարծ, առանց մի խնդրանքի, նախարարությունից գալիս է առաջարկ՝ ինձ, որպես Հայաստանի միակ ներկայացուցչի, ընդգրկել սովետական գիտնականների պատվիրակության կազմի մեջ՝ 1970-ի գարնանը Նյու-Յորքում կայանալիք միջազգային կոնֆերանսին մասնակցելու: Հետագայում պարզվեց, որ միակ զեկուցողն էլ ես էի: Զեկուցման նախապատրաստության եռուզեռը քնեցրել էր զգոնությունս, թեև կասկածի նախանշաններն առկա էին: Կասկածը ծանր տագնապի հետ նստեց սրտիս արդեն Մոսկվայում, երբ Ֆելիքս Էդմունդովիչի անխոնջ հայացքի ներքո ծանր բազմած չարագուշակ շենքից զանգահարեցին ու առաջարկեցին ներկայանալ Ձերժինսկու հրապարակ այսինչ ժամին: Դիմավորեց միջին տարիքի, բարձրահասակ, կոպիտ, ծանր դիմագծերով, ձեռքերի հսկա ափերով մի մռայլ քեռի ու վերից վար դեմ տալով հայացքը՝ թելադրեց անելիքս. համոզել MIT-ի կոլեգաներիս աշխատել մեզ վրա: Զսպելով տագնապս ու զայրույթս՝ ասացի, որ նման ծառայություն ոչ ոքի չեմ խոստացել, գնում եմ գիտական զեկույցով: Սաստիկ դժգոհեց, մրթմրթաց

---

[1] «Հավաքիր ու ռադ էղի»

մեր օրգանների աշխատողների հասցեին ու հեռացավ: Ուղևորությունս դարձավ դժոխք. պատվիրակության «հատուկ» մասնակիցը ֆիզիկական նույն պարամետրերով, սակայն երիտասարդ ու մասնագիտական առումով բանիմաց, անքող «հովանավորում» էր ինձ ու, չնայած իմ չոր, համարյա կոպիտ պահվածքին, սիրալիր էր անտակտության աստիճանի, այնպես, որ պատվիրակությունը հասկացավ իմ միսիայի առանձնահատկությունը:

Նյու-Յորքում, սուզվելով զեկույցիս նախապատրաստման մեջ, առժամանակ անջատվեցի հովանավորից ու նրա հետ կապված տհաճություններից, հատկապես, երբ հյուրանոցում կարողացա բնակվել հաճելի լատվիացու հետ: Զեկույցիս հետ կապված տեխնիկական հարցերում մեծապես օգնեց կոնֆերանսի աշխատախմբի հայ երիտասարդը՝ Հայկ Մանուկյանը՝ բարեկիրթ, հաճելի դիմագծերով, հայերենը՝ իմ անգլերենին զիջող: Ծնողնորի վրա ամերիկության անգամ բարակ շերտ չկար. տիպային ու հարազատ, տոհմիկ տաճկահայեր: Հայկը փորձում էր ինձ և ծնողներին համոզել, որ ինքը ամերիկացի է և ոչ թե հայ, բայց ինձ ցույց տված շահագրգիռ օգնությունը դավաճանում էր իրեն: Անցել է 30 տարի, այլևս չհանդիպեցինք, սակայն ջերմությամբ եմ հիշում միասին անցկացրած 2–3 օրը: Կասկածում եմ, որ մասամբ նրա միջամտությամբ զեկույցիցս հետո (նվիրված էր Երևան-Բյուրական լազերային բազմականալ հեռախոսագծին, դա առաջինն էր իր տեսակի մեջ) կազմակերպվեց մամուլի ասուլիս ինձ հետ, և «Նյու-Յորք Թայմս»-ում տպվեց մեծ հոդված: Վերջինիս շնորհիվ ինստիտուտի տնօրենը պոկեց լրացուցիչ հաստիքներ Մոսկվայից: «Չկա չարիք…» և այլն: Շահարկեցի հատուկ վիճակս, թույլտվություն ստացա պատվիրակության ղեկավարից՝ թղթակից անդամ Սիֆորովից, և մեկ օրով մեկնեցի Բոստոն, ուր սպասում էին MIT-ի և համայնքի բարեկամներս: Գիշերեցի Պերճ Հաճյանի տանը, որի մոտ հավաքվել էր ազգ ու տակը: Այնպես որ, քնել չհաջողվեց. լուսադեմին նստեցի Նյու-Յորքի, ի զարմանս, արխային գնացքը:

Քանի որ «հովանավորիս» իմ միջոցով գիտնականների հետ «սերտ» կապեր հաստատելու ջանքերն ի դերև եղան, մի երեկո հյուրանոցիս դուռը բացեց…հայրենակիցս: Դեմքը ծանոթ էր. հանդիպել էի Հայաստանի կառավարության շենքում: Ներկայացավ՝ Ազարյան Վովա, ու պարզ հասկացրեց, որ պետք է իմ

հայեցողությամբ ռեստորան հրավիրեմ Քեննեդիին և այլոց, ուստի ինձ գումար կպահանջվի. պարզեց «կանաչների» տպավորիչ կապոց: Ձեռքը հետ մղեցի ասելով, որ դեռ չգիտեմ՝ երբ եմ ծախսելու մեզ հատկացված 60 դոլարը: Սկսեց նյարդայնանալ ու պնդել՝ օրինակ բերելով ընկերներիցս մեկին, որը օգնում է պետությանը, իսկ ես չեմ ուզում: Փորձեցի բացատրել, որ իմ անմիջականությունը գործում էր, երբ ետին նպատակ չկար, այժմ կկաշկանդվեմ, իսկ ինչ վերաբերում է գիտական գրականությանը, առանց այն էլ ձեռք եմ բերում: Շարունակեց պնդել... ի վերջո պայթեցի. «ցավում եմ, որ չարդարացրի ձեր հույսերը, որոնց առիթը չէի տվել. կգերադասեմ կյանքիս հետագա տարիները անցկացնել Սիբիրում, բայց "стукач"[1] չեմ դառնա...Խորթ է ինձ...»: Հեռացավ, դժգոհելով նաև Երևանի գործիչներից. խակ գործ էին փոխանցել... Հետզիետե ջուրը զուլալվեց, ու պատկերն ամբողջականացավ: Գիտության նախարարությունում համապատասխան օրգանների պարտադիր դրածոն երիտասարդաբար մոլորվել էր իմ չարաբաստիկ անմիջականությունից ու որոշել, որ ես «հասունացել» եմ: Բարյացակամներիս համար իմ պնդաճակատությունը մնաց անըմբռնելի: Իրոք, տարեկան 2–3 անգամ տարբեր երկրներում «զվռնելու» և այլ «արտոնություններից» օգտվելու փոխարեն... 20 տարի (մինչև 90-ը) դարձա "невыездной"[2] ու կորցրեցի հազիվ կայացած գիտական շփումները զարգացնելու առիթը: Իրոք, ո՞վ էր խելացին, ե՞ս, թե՞ նրանք... Չգիտեմ... Սակայն մինչ օրս, հաստատելով ձեռք բերածս աճականը, չեմ փոշմանել: Իմ պնդաճակատությունը, ինչպես պարզվեց, որակավորվել էր որպես "провал"[3], քանզի իրենք «բացահայտվել էին»: Ուստի մի քանիսին դա լուրջ տհաճություններ պատճառեց և փոխատեղումների պատճառ դարձավ: Անհամբեր երիտասարդին ուղարկեցին այլ հանրապետություն. Ազարյանին նեխող արևմուտքից ետ վերադարձրին ծաղկող հայրենիք, ինչը նա ինձ չներեց ու նաև Մոսկվայի առջև արդարանալու համար շատ կեղտոտ «լեգենդ» ներկայացրին: Վերջին այցելությունս կասեցնելու առիթ չէր տալիս, հետևաբար գործի դրվեց նախորդ այցելությանս ընթացքում պատերազմին

---

1 Մատնիչ
2 Արտասահմանյան գործուղումները արգելված
3 Տապալում

գերի ընկած ու ԱՄՆ փոխադրված մեր հայրենակցի հետ կարճատև ու անմեղ հանդիպումը, որի ընթացքում հասցրինք նայել ընտանեկան լուսանկարները: Լեգենդի հերոսը, տվյալ դեպքում՝ ես, համաձայն օրգաններում գործող դրվածքի, ոչինչ չպետք է իմանա լեգենդի բովանդակության մասին, այն լի ու լի լցվում է տրամաբանազուրկ գրպարտանքներով: Այլապես կարելի էր տալ ամենաակնհայտ հարցը. «Ինչու՞ թույլատրեցիք այդ նոր ուղևորությունը, եթե զանցանքը կատարել էր նախորդ անգամ»...

Ի պատիվ մեր փառապանծ օրգանների, ասեմ, որ նրանք բաց չթողեցին մանրոգի ռևանշ-վրեժի առիթը: Կես տարի անց պետք է կայանար լազերներին վերաբերող կոնֆերանս Ճապոնիայում: ԱՄՆ-ի գործընկերներս նամակներում հանդիպման հույս էին հայտնում: Ինստիտուտի գործընկերներս և հորդորեցին դիմել: Ժխտական արդյունքը կասկածից վեր էր, պարզ չէր մերժման ձևը՝ արժեր պարզել: Փաստաթղթերը ընդունեցին անխոս, արյան և մեզի անալիզները նույնպես: Ընդունեցինք արևմտյան քայքայիչ վիրուսի դեմ շիճուկը: Չափսոսացին Մոսկվայի գործուղման ծախսը: «Տեսա՞ր, որ իզուր էր քո հոռետեսությունը», հանդիմանեցին իմ ուղեկիցները՝ Վիլիկ Յարությունյանը և Մելիստ Մովսիսյանը: "Еще не вечер"[1], – խոստացա ես: Վաղ առավոտյան մեկնում ենք: Գիշերը՝ ժամը 12-ին զանգ հյուրանոցի մեր համարը: «Յաղորդեք Ղազարյանին, որ նա չի մեկնում»: Պատասխանը դրոշմվել էր Վիլիկի դեմքին: Ճապոնիայում դիմավորելու եկած ամերիկացի հիասթափված բարեկամներիս գրեցի, որ շատ էի զբաղված: Մի քանի տարի անց գիտությունների ակադեմիայում պրոֆեսորի դիպլոմ ստանալիս կողքս նստած Վովա Ազարյանն անմեղ ժպիտով հետաքրքրվեց՝ ինչու՞ այլևս չեմ լինում արտասահմանում: «Ձեր աղոթքներով», – երախտիքս հայացքում՝ վերադարձրի ես:

Յանուն արդարության, մի դիտողություն և. տարիներ անց մեզ մոտ, Ծաղկաձորում կազմակերպված միջազգային գիտաժողովում, երբ մեկ ուրիշ ներդրված փութաջան «դոդիկ» համն այն աստիճան հանեց, որ Տոմսկի նոր գործընկերներս ռուսական պարզախոսությամբ կիրառեցին նրա նկատմամբ ամենատարածված «մաթեմատիկական բանաձևը» (ռուսերեն վերծա-

---

1 Դեռ երեկո չէ:

նությամբ), մեկուսանալով ամերիկացի բարեկամիս հետ՝ խոստովանեցի իրեն վերաբերող ինձ արած առաջարկությունը, նա ժպտաց՝ «Շատ մի վշտացիր, ինձ էլ մերոնք էին նույնն առաջարկում քո նկատմամբ»:

Այսպիսով, տակավին սկիզբ չառած, անփառունակ վախճան ունեցավ կրկնակի լրտես դառնալու իմ գրավիչ կարիերան:

*1971 թ., հունիսի 17:* Շանթ... Անիծեծք պատահարը տարավ Պարույրին...

Исчез, оплаканный свободой,
Оставя миру свой венец.
А. Пушкин

Լուրեր սողացին պատվիրված բռնարարքի մասին: Պատահարի մանրամասներն ուսումնասիրելուց հետո Սարգիս Մուրադյանը և ճարտարապետ Ջիմ Թորոսյանն ի վերջո եկան այն եզրակացության, որ պատճառը Պարույրի վարորդական անփորձությունն էր և իմպուլսիվ խառնվածքը:

Թույլ մխիթարանք...

*1970–1986 թթ:* Անձնական կյանքում ծանր փորձությունների տարիներ. ընտանիքիս ներսում անհաշտ մթնոլորտ, ընտանիքիս վերջնական քայքայում, ըստ որում, ինչպես դա նման կոնֆլիկներում է լինում, դժվար է մեղքը մի կողմին վերագրել, երեխաներից թեպետև մասնակի առանձնանալու հետևանքով համակած ու տարիներ տևած հոգեկան դաժան տառապանքներ, մենակություն՝ Աշտարակամերձ գիտավանում... Ինքնակործանումից ետ պահեցին յոգան, «Հայր մերը» և աշխատանքը դոկտորականի վրա, որը 73-ին պաշտպանեցի Մոսկվայում:

Հոգեկան առողջացումս սկիզբ առավ 75-ին, երբ ամենատես Աստված, համարելով, որ կրածս տառապանքներով վաստակել եմ ներում, ինձ տվեց իմ Գրիզելդային, որի համար արդեն 26 տարի ամենօրյա աղոթքում երախտիքս եմ հայտնում Ամենաբարձրյալին:

Դրան հետևեցին երեխաներին ինձանից վանելու հակառակ կողմի անխոհեմ քայլերը: 72-ին Կրասնոդարում վախճանվեց հայրս. նոր գիտակցեցի՝ ոչ մի տող չեմ գրել Անդրանիկի զինվո-

րի հուշերից: Թվում էր՝ միշտ էլ կհասցնեմ: Ների՛ր, հայր, անխոհեմիս: Տարիներ պահանջվեցին, որ ամեն ինչ խաղաղվի: 79-ին ամուսնացա Գրիգելդայի հետ և, չնայած 26 տարվա տարիքային տարբերությանը, նա դարձավ հավատարիմ ու հարազատ էակ, ծնեց սքանչելի երեխաներ, պարգևեց լիակատար ընտանեկան երջանկություն. շարժման առաջին օրերից իմ մարտական ընկերն է:

* * *

Չնայած ստեղծագործական աշխատանքով հագեցածությանը՝ իմ մեջ դարանակալած գայթակղիչ դևը անդուլ նյութում էր իր հերթական դավը: Հասարակության մեջ վաղուց հաստատվել էր չհռչակված մի ճշմարտություն. 37-ականների հրեշավոր մսաղացից հետո միայն հատուկենտ երանելիներն են անցել պարտիայի շարքերը ոչ անձնապաշտ մղումով: Բացարձակ մեծամասնության համար պարտտոմսը դարձել էր «հացի» և անձնական կարիերայի խնդիրների լուծման, ինչպես մաթեմատիկայում է ընդունված ասել՝ անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման: Առանձնահատուկ փութաջանություն էին դրսևորում ստալինյան կոտորածում զոհվածների ժառանգները. հավանաբար անմեղ հոր նահատակությունը լցրել էր անհուն հավատով ու սիրով «Մեծն Ղասաբի» ու նրա գործի նկատմամբ: Եվ, հետո, կյանքի ընթացքում Յանուսի «անկեղծությամբ» խաղում էին հարազատ պարտիային հոգով ու մտքով նվիրյալի սիրողական դերը: Ու, քանի որ ձգտումը համընդհանուր էր, իսկ քվոտան (կարգադրագիրը)՝ սահմանափակ, ջանքեր էին պահանջվում պարտիայի շարքերը սողոսկելու համար (ի տարբերություն ՀՅԴ-ի, որտեղ քվոտա-սահմանափակում և այլ ձևականություններ չկային). մշակվել ու գործածության մեջ էին դրվել մի քանի միջոցներ: Երիտասարդների համար, բանակում օրինակելի վարքի դեպքում հաջողության գրավականը բարձր էր: Մյուս ուղին կոմերիտական աշխատանքն էր՝ ցատկահենակ դեպի պարտիայի շարքերը: Միջակ ուսանողը լուծում էր 2 խնդիր՝ թվանշանների և ապագա պարտիական կարիերայի: Բարձր կարգի մասնագետներին դա առաջարկվում էր վերևից: Առկա էր, անշուշտ, հովանավորչության և խնամիության գործոնը. գնալով ավելի ու ավելի վավերական էին դառնում կաշառքով պարտտոմս ձեռք բերելու լուրերը: 70-ականների վերջում

նշվում էր և տաքսան՝ տաս հազար ռուբլի: Մի գեղեցիկ օր մշտարթուն դևս շշնջաց մի ցնցող ճշմարտություն. բոլորը գիտեն ու ոչ մի պարտիական չի բողոքում, չի ըմբոստանում այդ խայտառակության դեմ: Ուրեմն չկա՞ գոնե մեկ սկզբունքային կուսակցական, որը, անկախ իրեն սպառնացող հետևանքներին, չհանդուրժեր դա: «Դու պայքարիր, – շշնջում էր դևը, – չէ՞ որ մարտնչող արդարամարտիկ ես ...Слабо? Кишка тонка?...»[1], – անցավ նա ռուսերենի... Դևն իր նպատակին հասավ. երկիրը պատրաստվում էր 26-րդ համագումարին (81 թ.): Խորհրդակցեցի Սարգիս Մուրադյանի հետ: Վերջինս՝ ինձ նման համոզված անպարտիական (անգամ դառնալով նկարիչների միության նախագահ՝ դիմացավ Դեմիրճյանի հորդորներին ու չլրացրեց անհրաժեշտ փաստաթղթերը), խրախուսեց մտադրությունս. Մոսկվա՝ համագումարի պրեզիդիում սլացավ հետևյալ «տրտունջը» (ռուսերեն բնագիրը տե՛ս Հավելված, էջ 274).

ՍՄԿԿ 26-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Այս օրերին, երբ երկիրը պատրաստվում է կուսակցական բարձրագույն համաժողովին, որը կոչված է բացահայտելու թերությունները և նշելու 11-րդ հնգամյակի հսկայածավալ ծրագրի կատարման ուղիները, չեմ կարող չարտահայտել իմ անհանգստությունը ժողովրդական տնտեսության տարբեր ոլորտներում ղեկավար կադրերի ընտրության գործում երբեմն կիրառվող ոչ ճիշտ մոտեցման առթիվ:

Այժմ գործող պրակտիկան շատերի մոտ այն կարծիքն է հարուցում, որ քիչ թե շատ պատասխանատու նշանակում կարող է ստանալ միայն կուսակցության անդամը: Ուզում ես գլխավորել արտադրություն, ԳՀԻ կամ ԲՈՒՀ, ֆակուլտետ կամ ամբիոն, դառնալ պահեստի կամ խանութի վարիչ, դատախազ կամ շրջսոովետի նախագահ, գործուղման մեկնել արտասահման և այլն, նախ դարձիր կուսակցության անդամ: Հետո միայն հաշվի կառնենք քո մասնագիտական ունակությունները:

Լավ է, երբ կուսակցության անդամ են դառնում լավագույնները: Իսկ եթե տեղի ունի այն, ինչի մասին խոսում է Լեոնիդ Իլյիչը իր «Խոպան» վեպում, երբ գործում են ընկերական հարաբերությունները կամ հարմար, համակերպվող կատարողի ունենալու նկատառումները՝ այդ դեպքում սողանցքներ են բացվում ճարպիկների և նպատակաուղղված կարիերիստների համար, որոնք պարտիական տոմսը լավագույն դեպքում համարում են իրենց մասնագիտական թերարժեքության լրացում, վատագույնում՝ ժողովրդական բարիքների բանալի: Այդ դեպքում ի հայտ են գալիս պահեստների գող վարիչներ, կաշա-

---

[1] Չոքերդ թուլացա՞ն...

ռակեր՝ դատախազներ և ստուգողներ, շրջ- և քաղսովետների աշխատակիցներ, ԲՈՒՀ-երի ընդունելության հանձնաժողովների անդամներ: Առաջ են գալիս ոչ բանիմաց, բայց ինչ-որ մեկին հարմար արտադրության դիրեկտորներ, ուսումնական հաստատությունների ղեկավարներ, որոնք ներկայացնում են պլանների կատարման կամ առաջադիմության կեղծ տվյալներ:

Եվ ամենասարսափելին այստեղ արտադրությանը հասցվող վնասը կամ դիպլոմավոր տգետներով ԳՀԻ-ները և արտադրությունը ծանրաբեռնելը չէ, որը վերջին հաշվով վնասում է երկրի պաշտպանունակությանը, այլ այն, որ նման գործիչները խաթարում են կուսակցության հեղինակությունը և անցանկալի ընդհանրացումների տեղիք տալիս լայն զանգվածներում:

Արդարացվա՞ծ է, արդյոք, ղեկավար կադրերի նման ընտրությունը: Չէ՞ որ ոչ ոքի մոտ նման մոտեցման միտք անգամ չի ծագում սպորտում կամ կատարողական արվեստում... Հազիվ թե ունենայինք այսօրվա հաջողությունները սպորտում կամ արվեստում, եթե գործեինք այս ձևով: Նախ սպորցմենը կամ ջութակահարը հասնում է բարձր արդյունքների և եթե միաժամանակ նա դաստիարակում է իր մեջ բարձր բարոյական և գաղափարական որակներ կամ հատկանիշներ, ապա նոր միայն նրան երաշխավորում են կուսակցության անդամության: Դա նորմալ ուղին է: Այդ դեպքում ինչու՞ սահմանափակել արտադրության և գիտության ղեկավարների ընտրությունը: ԳՀԻ-ն կամ ԲՈՒՀ-ը ներկայացնում են հեռանկարային երիտասարդի թեկնածությունը արտասահման գործուղվելու նպատակով: Սակայն նա անպարտիական է: «Ինչպես եք մտադիր լուծել Ձեր պարտիականության խնդիրը», – հարցնում են նրան ընտրական հանձնաժողովում: «Ես կապեր ունեմ, հուսով եմ՝ կլուծեմ», – պատասխանում է ոմն միամիտը: Կամ, «Ինչու՞ դու երկրորդ տարին մ նացիր պրոֆմիության նախագահ, չէ՞ որ չէիր ուզում»: «Հասկանու՞մ ես, շեֆս խոստացել էր՝ եթե մեկ տարի էլ համբերեմ՝ կերաշխավորի կուսակցության անդամությունս»: Կարելի է բերել բազում նման օրինակներ:

Պարտիայի համագումարին դիմելու իմ որոշումը հասունացել է ինձ մոտ Լեոնիդ Իլյիչի սեփական մտքերի և աշխատանքի փործի տպավորության ներքո, որոնք նա շարադրել է իր ուսանելի «Խոպան» գրքում[1]:

Հայրենական Մեծ Պատերազմի վետերան,
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ռ. Ա. Ղազարյան
378410, Աշտարակ-2, ՖՀԻ ԳԱ ՀՍՍՀ, շ. 6, բն. 6

Արձագանքը նմանվեց շղթայական ռեակցիայի. Մոսկվայից զանգ կենտկոմ՝ «Պարզեք՝ Հայրենականի այդ վետերանի ինչն է պակաս՝ ա՞ղը, թե՞ մաղը»: Կենտկոմից՝ Աշտարակի շրջկոմ, նույն հարցումով, շրջկոմից՝ ինստիտուտի տնօրենին... Վերջին երկուսը զայրացած, շփոթված ու նեղացած են. «Քո պատճա-

---

1 Որը, ի՞նչ մեղքս թաքցնեմ, նույնիսկ չէի էլ բացել:

ռով տուժում է լավ մարդ»: Այսինքն ինձանից երիտասարդ շրջկոմի քարտուղար Գ. Խաչատրյանը թերացել է իմ՝ 60-ին մոտ «անբեղ, անմորուս պատանուս» դաստիարակության գործում: Պայթում եմ. «Շատ լավ, այսօր Ներ կդիմեմ Մոսկվա խնդրանքով՝ ոչ ոքի չմեղադրել իմ քարացած հետամնացության մեջ, ես պաթոլոգիկ դեպք եմ»: Դա տագնապ առաջացրեց ինստիտուտի ղեկավարության մեջ. ուշ երեկոյան զարմացա ու ակամա զվարթացա՝ նկատելով տնօրենին ու փոխտնօրենին շենքիս շուրջբոլորը զբոսնելիս. հավանաբար նոր նամակիս առաքումը խափանելու նպատակով:

Հետո կանչեցին կենտկոմի բաժիններից մեկը. ովքեր էին՝ չգիտեմ, հեռու եմ եղել այդ շրջանակներից: Ներս մտնելուն պես մի քանի զույգ հետաքրքրությամբ լի աչքեր գամվեցին դեմքիս: Հավանաբար հանձնարարված էր պարզել՝ առիթը շահարկող բո՞շա եմ, թե՞ «երանելի»: Առաջինը, անշուշտ, գերադասելի է: Ինչպես ընդունված էր, համագումարին կզեկուցվեր, որ, ասենք, «տնային կառավարչին խիստ նկատողություն է արված և այսուհետև «Մատրյոնա Միտրաֆանովնայի մարտկոցները նորմալ ջեռուցվում են, այնպես, որ թոշակառու Մատրյոնան տրուսիկով է ճախրում բնակարանով մեկ»:

Իմ դեպքը ծանրացավ.

– Դուք մեքենայի կարիք ունե՞ք...

– Ոչ՛, մեքենա ունեմ...

– Գուցե ի՞նչ է...

– «Թափ թագա» (407 «Մոսկվիչս» թափվում էր "на ходу"[1]):

– Մի գուցե բնակա...

– Ունե՛մ (ապրում էի Աշտարակամերձ գիտավանի գերատեսչական բնակարանում: Երևանում չունեի)...

– Փորձել եք պարտիայի շարքերն անցնել ու ծեզանից կաշա՞ռք են ուզել...

– Ոչ, չեմ փորձել, բայց շատ լավ գիտեք, որ վերցնում են...

Երկխոսությունը երկար չտևեց, ամեն ինչ պարզ էր. իրենց առջև Դոն Քիշոտ է, «երանելիի» առանձնահատուկ տարբերակ:

Հիմա հասկանում եմ, որ շատ հեռու չէին իրականությունից: Ի՞նչ զեկուցեցին Կրեմլ՝ չիմացա: Ասեմ, որ ոչ մի ճնշման կամ հետապնդման չեմ ենթարկվել, իսկ 86-ին բնակարան ստացա

---

[1] Ընթացքում, ոտքի վրա

Երևանում՝ զարհուրելի փլատակ 5-րդ հարկում, որը մինչև օրս կարգի եմ բերում:

86-ին առաջին անգամ այցելեցի Ղարաբաղ: Մինչ այդ էլ էին համոզում, խուսափում էի. թվում էր՝ կտեսնեմ նրա գեղեցիկ բնաշխարհը, որբացած Գանձասարը, բարբարոսաբար քանդած «Ղազանչեցոց»-ը... Ու սիրտս կպայթի. մերն է ու մերը չէ: 2 տարուց կատարվեց աներևակայելին ու հիմա Արցախը մերն է (Աստված վերջը բարին անի): Վերջերս ընկերներս ու տնեցիներս համոզում են, որ այցելեմ Արևմտյան Հայաստան...«Ոտդ խերով է», փափագում եմ, սակայն նույն ահը՝ Աղթամարը տեսնեմ՝ սիրտս կպայթի... Կատակում եմ՝ ասելով, որ կգնամ, երբ հերթը Ամերիկյան դեսպանատան առջև կվերանա, իսկ երկրի բնակչությունը՝ դեռ ոչ...

* * *

Գիտական աշխատանքի արգասավոր տարիներ. հետազոտություններ, գիտարշավներ, համագործակցություն միության կենտրոնների հետ, գիտաժողովներ...

84-ին և 85-ին Մոսկվայում լույս տեսան 2 մենագրություններս մթնոլորտային լազերային կապի վերաբերյալ. դրանցից մեկը աշխատակիցներիս հետ հեղինակակցությամբ, մյուսը՝ "Итоги науки"-ի խմբագրության անձնական պատվերով, իսկ 86-ին Երևանում՝ հայերեն լեզվով տեսական ռադիոտեխնիկայի բուհական ձեռնարկ, որից մինչ օրս օգտվում են պետական և ճարտարագիտական համալսարաններում: Նույն 86-ին ընտրվեցի ՀԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի թղթակից անդամ: Եթե չեմ սխալվում երկրորդն էի, որ ընտրվեցի՝ չլինելով պարտիական: Ընտրվելուս նպաստեցին ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Միքայել Տեր-Միքայելյանը և վերը հիշատակած մենագրությունները:

*1986–1988 թթ.* Առեղծվածային ամիս է ապրիլը, ծայրահեղությունների ամիս, «մաքսիմալիստ» ամիս՝ բնության զարթոնքի ու քրիստոնեության հարության... Սակայն նաև... Ապրիլի 20-ին ծնվել է Հիտլերը, ապրիլի 22-ին՝ Լենինը, 24-ին՝ ողջ հայության Գողգոթան, 26-ին... ՉԵՌՆՈԲԻԼ... Ինձ, ինչպես և հարազատներիս համար, նաև անձնական ողբերգության

տարեթիվ: «Կրեմլյովկայում» սրտի ծանրագույն վիրահատություն տարած և դեռ չապաքինված միակ եղբայրս՝ Վազգենը, ինչպես արդեն հիշատակել էի, առաջիններից մեկը մեկնեց Չեռնոբիլ, մասնակցեց սև արկղի բացմանը. նրա տված եզրակացությունը հաստատվեց հատուկ մասնագիտական հանձնաժողովի երկարատև հետազոտությունների արդյունքում: Քաղցկեղից չխուսափեց և 91-ի ապրիլին (նորից այդ ապրիլը) կնքեց իր մահկանացուն՝ դժոխային տառապանքներ կրելով:

Մի բնորոշ մանրամասն. երբ քննարկվում էր ատոմակայանի կառուցման վայրը, մեր հարևանները բողոքում էին Մոսկվա, որ Կազարովը իր «զեմլյակներին» է նպաստում: Չեռնոբիլից հետո քրիստոնյա մեր հարևանները խաչակնքում էին «ոտ ու ձեռով», մահմեդականներն իրենց կարգով Ալլահին փառք էին տալիս՝ «չարը խափանեց»: Նույն 86-ին սկիզբ առավ ու թափ հավաքեց էկոլոգիական շարժումը: Դժվարանում եմ նաև հստակել, թե ով ինչ չափով և ինչ հերթականությամբ, սակայն ակտիվ գործիչներից կնշեի Կարեն Սիմոնյանին, Խաչիկ Ստամբոլցյանին, Յակոբ Սանասարյանին, Կարինե Դանիելյանին: Կարենը մտավորականների ժողովների շարք էր կազմակերպել: Յիմնական թիրախներն էին «Նաիրիտը» և (Չեռնոբիլից հետո) Ատոմակայանը: Աշխատում էի բաց չթողնել այդ հավաքները: Դրանցից մեկում մանրամասն հարցազրույց ընթացավ ազնիվ, բարեխիղճ և բանիմաց Բադալ Մուրադյանի հետ: Ի վերջո քննարկում-բողոքը դուրս հոսեց օպերայի հրապարակ՝ դառնալով Արցախյան շարժման նախերգանքը: Մինչ այդ Տոմսկի գիտական կոնֆերանսում հանդիպել էի այնտեղի՝ մթնոլորտի օպտիկայի ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Զուևին: Անձնական (այսօր կասեին՝ էքսկլյուզիվ) զրույցում նա ասաց, որ Երևանը միության ամենաաղտոտված մթնոլորտով 4 քաղաքներից մեկն է: Այդ մասին 5 տարեկան Վազգենիս, նստեցնելով ուսերիս, հայտարարեցի միտինգում: Տարբեր առիթներով հայտարարած համոզմունքս էր, որ մի երկիր, որը կարող է հսկայական գումարներ ծախսել Սևանը դատարկելու, իսկ հետո տասնապատիկ անգամ ավելին՝ այն փրկելու վրա, կարող է նաև միջոցներ տրամադրել «Նաիրիտը» քաղաքից հեռացված տարածք հետզհետե (սկսած ամենավնասակար արտադրություններից) փոխադրելու վրա:

1987-ի դեկտեմբերի 25-ին «Սովետական Յայաստան»-ում հրապարակվեց մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ

Սարգսյանի ծավալուն հարցազրույցը. նա ընդունեց, որ բնակչության դժգոհությունն անհիմն չէ, որ Երևանն իրոք ամենաաղտոտված քաղաքներից մեկն է, որ ինչպես 30-ականների՝ շինարարության վայրի ընտրությունը, այնպես էլ 51-ի և 66-ի վերակառուցումը, ինչպես նաև վնասակար արտանետումները և հնարավոր պայթյունները կանխելու խնդիրները լուրջ չեն կշռադատվել: Այնուհետև մանրամասն թվարկել է արված և անելիք աշխատանքները, որոնք հնարավոր են դարձնում փակել բարոյապես և ֆիզիկապես հնացած «Կաուչուկ-1»-ը:

Այնուհետև 87-ի ՀԿԿ կենտկոմի հուլիսի 25-ի պլենումում առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը ելույթ ունեցավ թերթում երեք էջանոց զեկուցումով, որի մի էջը զբաղեցնում էր Գորբաչյովին ուղղված հայ կոմկուսի երախտիքը՝ վերակառուցման գործում տեղապտույտ տալու, կաշառակերության, հովանավորչության, սպեկուլյացիայի դեմ պայքարի բացակայության առթիվ նույն թվի ՍՄԿԿ հունիսյան պլենումում հնչած «սուր և արդարացի» քննադատության համար: Ոչ մեծ պարբերություն նվիրված էր Հայաստանի մինիստրությունների քննադատությանը՝ բնապահպան օբյեկտների շինարարության ծավալի թերակատարման, ինչպես նաև կենսաբանական մաքրման մի շարք կառույցների շինարարության ձախողման համար: Ավելի ուշ ԽՍՀՄ մինիստրների խորհուրդը որոշում ընդունեց «Երևանի էկոլոգիական վիճակի բարելավման լրացուցիչ միջոցառումների մասին»:

Մինչև արցախյան շարժման սկիզբը մնում էր մեկ ամսից մի փոքր ավելի:

Անձնական առումով ինձ համար շատ ծանր էր ատոմակայանի խնդիրը: Միության մեջ և արտասահմանում եղբորս՝ Վազգեն Կազարովի (Ղազարյան) ղեկավարությամբ կառուցած բազմաթիվ ջերմա- և ատոմակայանների շարքում Հրազդանի ՊՇԷԿ-ը և հայկական ատոմակայանը առանձնահատուկ տեղ էին գրավել նրա ջինջ հայրենասերի սրտում: Այն, որ ատոմակայանը հարևան հանրապետությունների մրցակցության արդյունքում բաժին ընկավ Հայաստանին, որոշ չափով պայմանավորվեց միության մինիստրների խորհրդում և էներգետիկայի ոլորտի գործիչների մոտ Վազգենի վաստակած մասնագիտական և մարդկային արժանիքների շատ բարձր վարկանիշով: Առանց չափազանցության և ազգակցական կապերի շահարկ-

ման կարող եմ ասել, որ էներգետիկայի նախարարությունում, միության տարբեր ծայրերում գործող օբյեկտներում նա դարձել էր անբիծ բարոյականության և բարձր մարդկային հատկանիշների խորհրդանիշ:

«Նաիրիտի» և ատոմակայանի խնդիրների հետ ստիպված եղա ընդհուպ շփվել ավելի ուշ: Ավա՜ղ... Այնքան էլ անխռով ու խաղաղ չանցան այդ տարիները:

# ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ ԱՊԱԳԱՅԻՆ

Սեղմ ինքնակենսագրականս ընթերցողին անհամեստաբար մատուցելիս իմ առջև խնդիր եմ դրել փոխանցել երիտասարդությանը մեր երկրի ապագայի համար, ըստ իս, կենսական նշանակության որոշ գործոնների և նրանց դրսևորումների մասին եզրահանգումներս:

Նախ, փորձել եմ ցույց տալ, թե ինչպես տարանջատված անհատների սրտերում անարդարության դեմ բուն դրած խեղդված բողոքն, ապրելով զարգացման ընդերքային փուլ, փնտրում է միավորվելու և օգտվելով քաղաքական հովերի ելևեջներից՝ բողոքը լսելի դարձնելու ուղիներ: Ինչպես են ըմբոստների անձնազոհ օրինակներն արթնացնում քնած հոգիները և նախապատրաստում զանգվածները համազգային պոռթկումի, երբ ստեղծվում է քաղաքական բարենպաստ իրավիճակ (գլասնոստ):

Ինձ կառարկեն՝ այն օրերի և այսօրվա իրավիճակների միջև ընդհանուր բան չկա, ուստի այն փորձն անօգուտ է... Վերջինի հետ համաձայն չեմ:

Անշու՛շտ, տարբեր են և՛ իրավիճակները, և՛ բողոքի առարկան. 70 տարի բորբոքվում էր պատմական անարդարության խարույկը, ինչպես որ սեղմվում էր միակուսակցական գաղափարախոսության կապանքը: Ճնշված էր ազատ խոսքը: Բարենպաստ գործոններից էր «երկաթյա վարագույրը», որը մեզ միասնական էր պահում և թույլ չէր տալիս, որ բնակչության քանակը իջնի «կրիտիկական զանգվածից» ներքև: Գլասնոստն այն կայծն էր, որը բռնկեց Արցախյան ազատագրական ակտիվ շարժման ջահը:

Այսօր բողոքն առավելապես սոցիալական բնույթ ունի, ուղղված է պետության և ժողովրդի մարմինը հոշոտող սեփական գիշատիչների, անբնական բազմակուսակցականության (հիշիր Նժդեհի սպանիչ որակումը) և երկրի բարոյական մթնոլորտի խաթարման վրա այդ գործոնների քայքայիչ ազդեցության դեմ:

Բացասական գործոններ. դեպի արտերկիր լայն բացված «դարպասը»՝ խնդրի՝ ոգով թույլերի կողմից որդեգրած լուծման

միջոցը, և անհամար աղանդների ազատ մուտքը նույն «դարպասով»:

Դրական գործոններ. խոսքի ազատություն, սփյուռքի հետ ազատ կապ և գործարարություն, համաժողովրդական ընտրություններ... Այո՛, այո՛... Նրանց վերջնական վարկաբեկման մեջ ոչ պակաս մեղք ունի ինքը՝ ժողովուրդը. մեկ անգամ, հանուն երեխաների ապագայի, զերծ մնան կաշառքից զեղծարարները և ընտրակաշառքից՝ ընտրողները...

Այո՛, այլ են իրավիճակը, նպաստավոր ու աննպաստ պարագաները, սակայն նույնն է պայքարի զարգացման և խորացման գաղափարախոսությունը:

Այս գլխում արծարծված մյուս գործոնը վերաբերում է հայրենադարձության հետ առնչվող ադապտացիոն (միջավայրին հարմարվելու) ոչ դյուրին պրոցեսին: Անշուշտ, այս դեպքում ևս ունիվերսալ դեղատոմսը բացառվում է: Բազմաթիվ են իրավիճակների և մարդկային գործոնի առանձնահատկությունները: Ադապտացիան դյուրի՞ն կընթանա, թե՞ հիվանդագին՝ կախված է այն բանից, թե ո՞ր երկրից և պատմական ո՞ր ժամանակահատվածում ես հայրենադարձվում, առաջի՞ն անգամ ես գալիս, թե՞ երկար բացակայությունից հետո, կամովի՞, թե՞ հանգամանքների թելադրմամբ (փախստական), ո՞րն է գալուդ հիմնական նպատակը, հոգեկան խառնվածքը, մայրենի լեզվի իմացության չափը և այլն, և այլն...

Մի բան է, երբ գալիս են հանուն բարվոք, ապահով կյանքի կամ ծառայողական հեշտ կարիերայի հույսով, ուրիշ բան՝ հայրենիքի բարգավաճմանը, ազգի վարկանիշի բարձրացմանը, նրա բարի համբավի տարածմանը նպաստելու կամ օրհասական ժամին հանուն հայրենիքի արյուն թափելու և կյանքը զոհելու:

Կարծում եմ, 40-ականների հայրենադարձների ողբերգությունը հայրենիք գալու գերակայող դրդապատճառի մեջ էր, այն է՝ սոցիալիստական դրախտում կուշտ ու անհոգ կյանքի գայթակղությունը: Շփվելով իրականության և տեղացիների «հարգալից» ու «նրբանկատ» վերաբերմունքի հետ՝ հայրենադարձվածները բոլոր միջոցներով փորձեցին ճողոպրել: Խոսքս բոլորի մասին չէ. ովքեր խարսխվել էին հայրենասիրական իդեալներով, մնացին ու մերվեցին: Միամիտ «աղբարներին» «ծեռ

առնողները» տիեզերական *հատուցման* (կարմայի) անշրջանցելի օրենքի համաձայն այսօր հայտնվել են առավել նվաստ վիճակում՝ եվրոպայի ճամբարների կերակրատաշտերի առջև:

Շատ ավելի ծանր եղավ ադրբեջանահայ փախստականների ճակատագիրը. թողնելով սերունդների ջանքերով ստեղծված բարեկեցությունը՝ նրանք հայտվեցին քայքայվող ու պատերազմող հայրենիքում, հաճախ նաև անմաքուր չինովնիկների քաշքշուկին դեմ հանդիման: Նմանվելով «լճացման» տարիներին այսօր երանի տվող սովետական ժողովրդին՝ շատերը մեղադրեցին իրենց այդ օրին հասցրած Արցախյան շարժումը՝ չգիտակցելով, որ վերջինիս բացակայության դեպքում ևս Ադրբեջանի անկախացումից անմիջապես հետո ստիպված կլինեին արցախցիների հետ մեկտեղ բռնել գաղթի ճամբան ճիշտ այնպես, ինչպես այսօր գաղթում են ռուսները Միջին Ասիայից: Ընդվզեցին հայերենի իմացության դեմ և, իբրև հետևանք, շատերը հայտնվեցին Ռուսաստանում և այլուր: Համոզված եմ, որ նմանատիպ խորթության դեմ առան Հայաստանից գաղթած ադրբեջանցիները և, գուցե, կարոտով են հիշում իրենց կյանքը Հայաստանում:

Անգամ հայրենիքին անշահախնդիր ծառայելու վճռականությամբ տոգորված հայրենադարձին է սպասում ադապտացիոն տարբեր տևողության ու հոգեկան ապրումների շրջան՝ կախված նրա խառնվածքից և այն ջանքերից, որոնք նա պատրաստ է ներդնել մերվելու պրոցեսը մեղմացնելու և արագացնելու համար: Խոսքը մեր ազգի այն մեծերի մասին չէ, որոնք 20-ականներին, թողնելով բարվոք եվրոպան, եկան փլատակների տակ մխացող սովյալ Հայաստան: Նրանք Առաքյալներ էին, դա քչերին է հասու... Սովետական մահկանացուներիս դեպքում մեկն անպարկեշտ է համարում շրջապատին պարտադրել իր իմացած լեզուն և առաջին օրվանից թքերը քշտում է մայրենին կատարեգործելու ավյունով, մյուսը, տեսնելով հիմնարկներում տիրող ռուսերենը և փողոցի խառնալեզուն, թեթևացած շունչ է քաշում ու տասնամյակներ ապրելով հայրենիքում՝ զրկում իրեն մայրենիի հարստությունը, գեղեցկությունը (վրացի գրող Լևոն Չիվաձեն անվանել էր գրական հայերենը Աստվածային), Նարեկացու ֆանտաստիկ բառաստեղծ հանճարը ընբռշխնելու երջանկությունից: Որոշ խավերի հետ շփվելիս ողջ կյանքում մնում ես լեզվային պատնեշի մյուս կողմում: Մեկը միանգամայն

անտարբեր է տրանսպորտի տհաճությունների կամ փողոցում թափված սիգարետների մնացորդների նկատմամբ, մյուսը... Ասենք Ձեր խոնարհ ծառան...

Չեմ հանդիպել, բայց ընդունում եմ, որ Ռուսաստանում էլ լույս գողացող կար, բայց՝ համատարա՞ծ... Պետական հիմնարկներից գողություն կար, բայց՝ անխտի՞ր... Մեկը գանգատվում է ընկերոջը. «էդ անտեր Երգեսում ընենց մաքուր ա, սկի փոշի էլ չկա, տոկն էլ խոմ վեդրոյի մեջ չես լցնի հանես... Չէ, ապե, մնալու տեղ չի...»:

Գողությունը դարձել էր ապրելաոճ: Պարզ չէ՞, որ պետական առևտրի ցանցի աշխատողը, խանութի պահեստի վարիչը կամ մեծ տոներին տալոնով սառեցված մսի ու յուղի բաշխման կետերի հարգարժան «մկները» այսօր մղկտում են, քանզի սեփականատերը՝ «շան որդին», չի թողնում, որ գողանան: Նա ինքն է գողությամբ ու թալանով դարձել սեփականատեր, շատ լավ տիրապետում է այդ «արհեստի» նրբություններին...

Կար փնթի վերաբերմունք բնության հանդեպ, բայց նման վերաբերմունք միակ գոհարի՝ Սևանի նկատմա՞մբ՝ ողջ ափով մեկ խոզերի խրախճանքի աղբակույտեր... Գուցե Ռուսաստանում չէի նկատում, բայց այստեղ ինձ ցավ էին պատճառում անձնական հիգիենայի ցածր կուլտուրայի՝ անթրաշ դեմքերի ու անխնամ ատամների փաստերը և այլն, և այլն: Երբ զայրույթն ու հուսահատությունն էր պատում, հիշում էի մեր մեծերին ու մեղա մրմնջում: Մի օր էլ նկատում ես, որ մեկ շաբաթ նախկինում կարոտալի Մոսկվայում վազվզելուց հետո կարոտում ես Հայաստանը, մերոնց ջերմությանը, անմիջականությանը, ընկերասիրությանը: Ուրեմն՝ Հայաստանը նվաճել է քեզ, և նահանջի ճամփա չկա...

Իսկ հոգումդ սիրտ առած նվաճողը «վրա է տալիս». «Պիժոն, դու պատկերացնու՞մ ես քո վիճակը Մոսկվայում պարտպատմության դեմ քո դեմարշից կամ 26-րդ համագումարին քո գրած նամակից հետո՞... Իսկ քեզ կոչումներ են շնորհել, Ամերիկա ուղարկել...»:

Ինձ նորից կարող են առարկել. «Դա այն ժամանակ էր, իսկ այսօրվա Հայաստա՞նը...»: Եվ նորից կպատասխանեմ՝ այո՛, այլ է այսօրվա Հայաստանը, սակայն այլ է Մոսկվան, Կրասնոդարը, (ասենք, քրեական վիճակը, հակահայկական տրամադրությունները և այլն) կուշտ Արևմուտքի մեր ազգային նկարագրին խորթ

բարքերը... Կա նպաստավորը և աննպաստը, սակայն ադապտացիայի գաղափարախոսությունը նույնն է: Միայն ավելացնենք՝ կիսադատարկ հայրենիքն առավել քան երբևէ ծեր՝ նախաձեռնողի ու մարտնչողի կարիքն ունի... Սպասում եք՝ երբ թոշակառուներն ու երեխաները կշտկեն վիճա՞կը...

Խորհե՛ք...

# 1988:

# ՍԿՍՎԵ՛Ց

# ՓՈՒԼ I. «ՏԱՐԵՐՔ»

"Если какая бы то ни была нация удерживается в границах данного государства насилием, если ей, вопреки выраженному с ее стороны желанию — все равно, выражено ли это желание в печати, в народных собраниях, в решениях партии или возмущениях или восстаниях против национального гнета, — не предоставляется право свободным голосованием, при полном выводе войска присоединяющей или вообще более сильной нации, решить без малейшего принуждения вопрос о формах государственного существования этой нации, то присоединение его является аннексией, т. е. захватом и насилием."

В. И. Ленин (т. 35, с.14)

«Եթե որևէ ժողովրդի բռնությամբ են պահում տվյալ պետության սահմաններում, եթե անկախ իր ցանկությունից, կարևոր չէ, այն արտահայտվել է մամուլում, ժողովրդական հավաքներում, պարտիայի որոշումներում, հուզումներում կամ ազգային ոտնահարման դեմ ապստամբություններում, թույլ չի տրվում ազատ ընտրությամբ, միավորող կամ ընդհանրապես ավելի ուժեղ ազգի զորքերի լրիվ դուրսբերմամբ, առանց որևէ պարտադրանքի լուծել այդ ազգի պետական կեցության ձևի խնդիրը, ապա նրա միավորումը անեքսիա է, այսինքն՝ զավթում և բռնություն:»

Վ. Ի. Լենին (հ. 35, էջ 14)

1965-ին սկիզբ առած ղարաբաղյան պահանջատիրության «զարոբյանա-սևակյան» ալիքը ճնշվեց ու մարեց 67-ին: Թվաց՝ եթե ոչ ընդմիշտ, ապա նրա ուրվագիծը կորչում էր ապագայի մշուշում: Ու թեև 87-ին միացա էկոլոգիական շարժմանը, ինձ, ինչպես և վաքսունականի ակտիվիսներից մի մասի համար աննկատ անցավ գլասնոստի հուսադրող զեփյուռով «ծովափից» հեռու սկզբնավորված նոր ալիքի ծնունդը. թափ առնելով ու ահագնանալով՝ այն ընդհուպ մոտեցավ «ափին» և կուրացրեց ու խլացրեց մեզ գահավիժման պատրաստ «9-րդ ալիքի» տեսքով ու դղրդյունով:

Երկարականջ մեր բարեկամի ականջում իմ նինջը կարելի

է մասամբ բացատրել մասնագիտական (գիտական) զբաղվածությամբ:

Փետրվարի 22-ին վերադարձա հերթական գործուղումից ու շանթահարվեցի ամպրոպ-լուրից... Սկսվե՛լ է...

Մեր ժողովրդի հոգեմաշ համբերության «բիկֆորդյան քուղի» ղարաբաղյան ծայրում 10 օր առաջ պայթած հանրահավաքկայծը հասել է «քուղի» մյուս ծայրին՝ օպերայի հրապարակ. 3 օր առաջ բռնկված «հրդեհի լեզուները» արագ տարածվում են ողջ երկրով: Փա՜ռք քեզ, Ամենաողորմած Տեր...

Բողոքը սաստկացել էր փետրվարի 21-ին ՍՄԿԿ քաղբյուրոյում Գորբաչովի մերժողական ելույթից հետո: Փետրվարի 22-ին, ելույթ ունենալով հայկական հեռուստատեսությամբ, Կարեն Դեմիրճյանը ինքնատիրապետման, վերակառուցման գործին ավելի եռանդով կցվելու ու ժողովուրդների ինտերնացիոնալ եղբայրությունը ամրապնդելու կոչ արեց:

Հաջորդ օրը ժամանեցին Դոլգիխը և Լուկյանովը: Շտապեցի Բաղրամյանով ներքև: Կենտկոմի առջև հավաքվել էր ոչ մեծ բազմություն: Դիմացի՝ Գիտությունների Ազգային Ակադեմիայի շենքի աստիճաններին բարձրախոսն էր: Միկրոֆոնը տնօրինում էր Սամսոն Ղազարյանը: Իրար չէինք ճանաչում: Առանց մի պահ վարանելու խնդրեցի միկրոֆոնը. չքացել էր ինձ հատուկ անվճռականությունը. գիտական զեկույցներ տարբեր գիտաժողովներում՝ ինչքան ուզես, սակայն այնտեղ պատրաստվում ես շաբաթներով, չափում-ձևում ամեն մի խոսքը, իսկ սա՝ առաջին քաղաքական, հրապարակային ու պատասխանատու, հանպատրաստից ելույթ... Ու ոչ մի տարակուսանք, միայն արտասովոր անհամբերություն: Սամսոնը, անշուշտ, նկատեց հուզմունքս, բնականաբար, զգուշացավ... Մերժեց: Սակայն ինձ կարող էր կանգնեցնել միայն «հանդիպակաց տրամվայը»: Չգիտեմ՝ ինչով կվերջանար մեր վեճը, եթե ինձ ճանաչող ոմն չմիջնորդեր: Իմաստ չունի այստեղ վերարտադրել ելույթս, մանավանդ, որ չեմ ձայնագրել ո՛չ այն, ո՛չ էլ հետագա բազմաթիվ ելույթներս: Անքուն գիշերների մտորումներում, շատ շատերի բողոքներում ու սրտամաշ զրույցներում արտահայտած պատմական, իրավական ու հուզական հանրահայտ թեզերն էին, որոնք ավելի կամ պակաս հաջողությամբ և նույնպես հանպատրաստից կարող է «կրակել» մեր պատմությամբ հիվանդ ամեն մի հայ: Խոսեցի ռուսերեն՝ դիմելով հյուրերին: Չգիտեմ՝ ինչ

տպավորություն թողեցի նրանց վրա, ինչ վերաբերում է հավաքվածներին՝ ցնցված էին, թեև, կրկնում եմ, իրենց համար մի նոր բան չասացի: Սամսոնը ներողություն խնդրեց և շնորհակալություն հայտնեց ելույթիս համար: Նա արդեն համագործակցում էր այն օրերի անվերապահորեն ճանաչված լիդերի՝ Իգոր Մուրադյանի, ինչպես նաև Աշոտ Մանուչարյանի և այլոց հետ: Չէի ճանաչում ոչ ոքի, սակայն այդ «պատնեշը» հեշտությամբ հաղթահարվեց: Իսպառ վերացել էր մանկությունից ինձ նեղը գցող ամոթխածությունը, կասկածը սեփական ուժերի նկատմամբ: Յուսահատության ամպով պատած երկնքում 70 տարի անց հանկարծ ծնվեց ցավ-բարդույթի լուծման «հուսո աստղը»: Ժողովրդի տարերային հավաքները օր-օրի ավելի հսկայազանգված էին դառնում՝ ստեղծելով հրճվանքի աստիճանի ոգևորության աննախադեպ մթնոլորտ:

Տարիներ անց փորձել եմ ինձ համար հստակեցնել արցախյան պահանջատիրության այս վերջին ալիքի ծննդյան պահը: Ակնհայտ է նախապայմանը. դա անշուշտ գլասնոստն է: Սակայն ո՞րն էր այն միջադեպը, կոչը կամ ելույթը, որը «կայծքար-Արցախից» դուրս կորզեց «կայծը», ծնեց «ալիքը»: Մտովի հերթազննում եմ հնարավոր խթանիչները. Սերգեյ Միկոյանի «Լիտերատուրնայա գազետա»-յի 87 թ. սեպտեմբերի 2-ի հոդվա՞ծը կամ հոկտեմբերի հարցազրու՞յցը ԱՄՆ-ում, Աբել Աղանբեկյանի հարցազրու՞յցը Փարիզում 87-ի հոկտեմբերին (իր գրգռված պատասխանի մեջ Բախտիար Վահաբզադեն «անոթխածաբար» շրջանցում է անվիճելի պատմական փաստերը, ընտրովի շարադրում իր վարկածին համապատասխանները), թ՞ե Սուրեն Այվազյանի մենորանդումը Գորբաչովին 87-ի մարտին կամ 75.000 ստորագրություններին կից նրա պետի՞ցիան 87-ի օգոստոսին, Զորի Բալայանի՝ հայ գրողներին ուղղած խո՞սքը («Յիմա է՞լ լռենք») 87-ի սեպտեմբերին կամ հարցազրու՞յցը Սերգեյ Միկոյանի հետ 88-ի փետրվարի 6-ին, վերջապես Իգոր Մուրադյանի բաց նամա՞կը «Պրավդա»-ին 87-ի հոկտեմբերին, ղարաբաղցիների կո՞չը ղարաբաղցիներին 88-ի փետրվարի սկզբին (Իգոր Մուրադյանի, Մանվել և Սլավա Սարգսյանների և այլոց ստորագրությամբ), ղարաբաղցիների պատվիրակությու՞նը Մոսկվա 88-ի հունվարին, «էկոլոգիախառն» երթե՞րը Երևանում 87-ի հոկտեմբերին... Իսկ գուցե ավելի վա՞ղ... Ազգություններին նվիրված խմբագրակա՞նը 86-ի

դեկտեմբերի 23-ի «Պրավդա»-ում, ակադեմիկոս Բրոմլի նմանատիպ հոդվա՞ծը «Պրավդա»-ում 87-ի փետրվարին, Յու. Ռեշետնիկովի և Ա. Վոսսի երկխոսությու՞նը Մոսկվայի ռադիոյով 87-ի հունվարին, Ե. Լիգաչովի՝ Արևմուտքին ուղղված մեղադրա՞նքը Սովետական Միությունում ազգայնության խրախուսման առթիվ 87-ի սեպտեմբերին, թե՞ փետրվարի սկզբին սկսված հեռագրերի հոսքը ԼՂԻՄ-ից Մոսկվա՝ Հայաստանին միանալու պահանջով, թե՞ այլ դրդապատճառներ...

Կարծում եմ պատասխանը մեկն է և անվիճելի. անշուշտ, բեկումնայինը և ոգևորիչը եղավ Ստեփանակերտի փետրվարի 13-ի հանրահավաքը, որին նախորդել էին շրջաններում տեղի ունեցած տարերային հավաքները, և այն զայրույթը, որը առաջացրել էին Ադրբեջանի ղեկավարները փետրվարի 12-ին Ստեփանակերտում կազմակերպված նիստում: Պիտակներով և սպառնալիքներով ահաբեկելու նրանց ջանքերին անսպասելի հակահարված տվեցին Մաքսիմ Միրզոյանը, Արկադի Կարապետյանը և ուրիշներ:

Անշուշտ, այս կամ այն չափով ազդել են վերը թվարկված բոլոր գործոնները: Տեղի է ունեցել կամային լիցքի կուտակում և ի վերջո՝ քանակի փոխակերպում որակի՝ որպես դասական դիալեկտիկայի փայլուն դրսևորում:

Փետրվարի 20-ին ԼՂԻՄ-ի պատգամավորների խորհուրդը (դեպուտատների Սովետը) ընդունեց Հայաստանի կազմի մեջ մտնելու հայտնի որոշումը: Ադրբեջանի ԶԼՄ-ները դատապարտեցին դա ու հայերին հորջորջեցին էքստրեմիստ և՝ ի հաստատումն այդ պիտակի, Աղդամի «խաղաղության աղավնիները» քշեցին դեպի Ասկերան: Ընդհարման ընթացքում ադրբեջանցի ոստիկանների զոհ դարձած թուրքի մահը պրովոկատոր-դատախազ Կատուսևը վերագրեց հայերին՝ ավելի բորբոքելով թուրքերի կրքերը:

23-ին մոսկվացի բարձրաստիճան հյուրերի հետ հանդիպմանը Հայաստանի կենտկոմ հրավիրվեցին մտավորականության և ցուցարարների ներկայացուցիչներ: Ակադեմիկոս Լեռնսեր Աղալովյանի վկայությամբ տեղի ունեցավ փոխադարձ կոշտ երկխոսություն:

Նույն օրը հանրապետության կուսակցական ակտիվի ժողովը հավանություն տվեց ՍՄԿԿ քաղբյուրոյի փետրվարի 21-ի (մերժողական) որոշմանը՝ որպես խնդրի միակ ճիշտ լուծման տարբերակի և խնդրեց ՍՄԿԿ կենտկոմին առաջիկա՝ ազգային

քաղաքականության պրոբլեմներին նվիրված պլենումում «մյուս պրոբլեմների կոմպլեքսում բազմակողմանիորեն քննության առնել Լեռնային Ղարաբաղի հարցը»: Այդ օրը կայացավ նաև Դոլգիխի հեռուստաելույթը: Տկարամիտներիս հասկացրեց, որ ԼՂԻՄ-ի միացումը Հայաստանին միանգամայն հակառակ է ողջ հայության շահերին: Փետրվարի 25-ին Գորբաչովին նամակ ուղարկեց Կաթողիկոս Վազգեն Ա-ն: Գիտակցելով պահի սրությունը՝ հաջողություն է մաղթում երկրի դեմոկրատացման գործում և հույս հայտնում ԼՂԻՄ-ի խնդրի սահմանադրական արդարացի լուծման առթիվ:

Միաժամանակ Գորբաչովին նամակ են հղում մեր ժողովրդի լավ բարեկամ բանաստեղծ Միխայիլ Դուդինը և Միության Ակադեմիայի ակադեմիկոս Ա. Թախտաջյանը, որում հայկական տարածքի՝ այսինքն ԼՂԻՄ-ի խնդրի արդարացի լուծման կոչ են անում:

ՍՄԿԿ ԿԿ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Մ. Ս. ԳՈՐԲԱՉՈՎԻՆ

Մեծարգո Միխայիլ Սերգեևիչ

Վերջին օրերի դեպքերը ցույց տվեցին, որ Լեռնային Ղարաբաղի խնդիրը պահանջում է անհապաղ լուծում: Խնդիրը այսօր չէ, որ ծնվել է. այն ունի երկար պատմություն և ճիշտ լուծումը պետք է հաշվի առնի բոլոր գործոնները: Ակնհայտ է, որ այդ հարցը արձագանք գտավ հարյուր հազարավոր մարդկանց սրտերում և հաշվի չառնել դա անթույլատրելի է: Մինչդեռ հեռուստահաղորդումներում և մամուլում միանգամայն անտեսվում է հասարակական լայն ռեզոնանսը, Ղարաբաղյան պրոբլեմի կարևորությունը: Կարիք կա՞ ասելու, որ այդ ամենը հիշեցնում է մեր ոչ վաղեմի անցյալը, երբ խնդրի արմատական լուծման փոխարեն այն հանվում էր՝ էլ ավելի բարդացնելով իրավիճակը:

Մենք դիմում ենք Լեռնային Ղարաբաղի վարչական կարգավիճակի ամենալուրջ քննարկման խնդրանքով. դիտարկել դա իրազեկ մասնագետ պատմաբանների, ազգագիրների, տնտեսագետների մակարդակով, զերծ մնալ հապճեպ եզրահանգումներից և լուծումն ընդունելիս հաշվի առնել, որ ողջ հայությունը դիտում է ԼՂ-ն որպես իր պատմական հայրենիքի անօտարելի մաս և որ ինքնավար մարզի հիմնական բնակչությունը հայեր են:

Ձեզ հետ միասին մենք ևս համարում ենք, որ վերակառուցումը և հասարակության դեմոկրատացումը թելադրված են ժամանակով, դրանցից է կախված մեր առաջխաղացումը: Մենք սպասում ենք, որ ԼՂ խնդիրը կստանա ճիշտ լուծում՝ համապատասխանելով այն հեղափոխական փոփոխություններին, որոնք բնորոշում են մեր ժամանակաշրջանը:

ԽՍՀՄ և ՀԽՍՀ ԳԱ իսկական անդամ ակադ. Ա. Լ. Թախտաջյան,
բանաստեղծ, սոցաշխատանքի հերոս Մ. Ա. Դուդին:
Լենինգրադ, 25.02.88 թ.

Փետրվարի 26-ին Գիտությունների Ակադեմիայի նախագահությունը պատմական տեղեկանք է պատրաստում Ղարաբաղի վերաբերյալ, որը մարտի 4-ին նախագահության ընդլայնված նիստի որոշմամբ ուղարկվում է ՍՄԿԿ կենտկոմ:

Փետրվարի 21-ին Ստեփանակերտ ժամանեցին Դեմիչևը և Ռազումովսկին:

Երևան և Ստեփանակերտ ժամանած մեծապատիվ հյուրերի ներկայացմամբ ժողովրդի ճնշող մեծամասնությունը դատապարտում է մի խումբ (միլիոնից ավելի) էքստրեմիստ-ազգայնամոլների (այդ թվում և դասադուլական ուսանողների) պրովոկացիոն գործողությունները: Իրենց հավաստմամբ իրավիճակը հանդարտվում է և մտնում բնականոն հունի մեջ:

Բաղիրովը մեղադրեց մարզի ղեկավարության և հանրապետության որոշ չինովնիկների պասսիվությունը, «գռմռաց» էքստրեմիստների հասցեին: ԼՂԻՄ-ի մարզկոմի քարտուղար Կևորկովը ազատվեց պաշտոնից: Ստեփանակերտցիք (հիմնականում՝ կանայք) քարտուղարի աթոռին «բերման ենթարկեցին» խոհեմ, հայրենասեր Հենրիկ Պողոսյանին: «Իզվեստիան» կրկնեց «ժողովրդի կողմից դատապարտված» (ըստ երևույթին խոսքը փետրվարի 24-ի 200.000-անոց միտինգավորների մասին էր) ազգայնամոլ-էքստրեմիստների մասին «մուղամը»: Ու քանի որ իրավիճակը «հանդարտվում ու մտնում էր բնականոն հունի մեջ», Երևանը լցվեց զորքերով ու շրջապատվեց հրետանային տեխնիկայով:

Արդեն ծանոթացել էի Իգոր Մուրադյանի ու նրա գործընկերների հետ: Հասկացրել էի, որ ուզում եմ օգտակար լինել (ավելի ճիշտ՝ չէի պատկերացնում ինձ շարժումից դուրս) անկախ կարգավիճակիցս: Ելույթներ ունեցա միտինգներում: Դիկտոֆոն չունեի՝ չեմ ձայնագրել: Մի փոքր անց Հաճյանների նվիրած մի քանի դիկտոֆոնները գերադասեցի բաժանել ուրիշներին, սակայն ինձ համար թողածը էլի չօգտագործեցի. Ղարաբաղի շուտափույթ միացման անհամբեր սպասումով կլանված՝ անտեղի էի գտնում ինքնահավերժացման նման քայլերը:

Բուտիրյան բանտում համոզվեցի, որ բոլոր ելույթներս

խնամքով ձայնագրված ու թարգմանված են՝ տեղ-տեղ զվարճալի աստիճանի տառացիությամբ: Ինձ մոտ պահպանվել են միայն վերին ատյաններին ուղղածս դիմումները ու բողոքները, որոնցից և կօգտվեմ: Ուստի տպավորություն չստեղծվի, թե հիմնականում ես եմ բողոքել:

Իգորը անմիջապես տրամադրում էր իր կողմը: Նրա խոշոր մարմինը ճառագում էր անմիջականություն, վստահություն, ազնվություն, մի խոսքով՝ լայն հոգու մարմնացում և նման խառնվածքի մարդկանց հատուկ՝ կրքերին տիրապետելու ու «դիվանագիտություն» բանեցնելու անկարողություն: Նաև՝ անհիշաչար ու շուտ հանդարտվող: Զգացվում էր Բաքվի նկատմամբ նրա մեջ կուտակված բացասական լիցքը: Անշուշտ՝ հայրենասեր: Հետագայում ապացուցեց, որ հանուն շարժման ունակ է անձնական ամբիցիաներից վեր կանգնելու: Չգիտեմ՝ ինչպես, բայց ապահովում էր միտինգները շարժական հեռուստաստուդիայով: Ցավոք, բնավորության վերը նշված գիծը և հայերենի թույլ իմացությունը խանգարեցին նրան մնալու շարժման լիդերների խմբում: Ափսոս...

Տարիներ անց հաճելի տպավություն թողեց քաղաքատնտեսական ոլորտին նվիրված նրա հոդվածաշարը, որի էջերում նա դրսևորեց ոչ ստանդարտ մտածելակերպ և վերլուծական ունակություն:

Այդ օրերին, իբր թե, գործում էր գաղտնի կոմիտե, որի մեջ, բացի Իգորից, մտնում էին արցախցիներ Մանվել Սարգսյանը, Գագիկ Սաֆարյանը, գուցե և այլ անձինք, որոնց ազգանունները չիմացա: Իգորի խնդրանքով դրամարկղում բացվեցին հաշիվներ ակադեմիկոս Գրիգոր Գուրզադյանի և իմ անուններով, որպեսզի ժողովրդին հնարավորություն տրվի իր նպաստը բերել շարժմանը: Պայման դրեցինք դրամի հետ գործ չունենալ, լիազորեցինք Սաֆարյանին: Ժողովրդի ակտիվությունը բարձր էր, սակայն ինչ գումարներ հավաքվեցին՝ չեմ հիշում: Կարծեմ ավելի ուշ Իգորը դժգոհել էր Սաֆարյանի կողմից գումարի մի մասն աննպատակ ծախսելու առթիվ: Որքանով էր ճիշտ՝ չիմացա: Մի հավելում ևս. իմ ընկալմամբ Իգորի կերպարը մինչ օրս նկատելի կոռոզիայի չի ենթարկվել:

Առաջին շրջանում ակտիվ էր նաև դերասան Վաչե Սարուխանյանը: Նրա կրակոտ ելույթները ոգևորիչ էին: Հետո հանկարծ չքացավ և ուսանողները բացահայտ կասկած նետեցին

Իգորի երեսին: Պարզվեց, որ Սարուխանյանը հյուրընկալվել էր ընկերոջ տանը՝ շրջանում: Վերջացավ նրանով, որ Իգորը, ցուցաբերելով «հրեշտակային» հանդուրժողականություն, հենց բեմում հարձակվեց Վաչեի վրա Օթելլոյի հնարքը կիրառելու վճռականությամբ. հազիվ բաժանեցինք: Այնուհետև Վաչեն տեսադաշտից անհետացավ:

Աշոտ Մանուչարյանն ամենուրեք էր, որտեղ, իր կարծիքով, իր կազմակերպչական կամ հաշտարարի ունակությունների կարիքն էր զգացվում: Կազմակերպչական (կոմերիտական) երբեմն չափից ավելի ջիղը երբեք չմարեց, սակայն ինչպես այն օրերին, այնպես էլ հետագայում, նրա մոտ չտեսա պաշտոնաբաղձության կամ նյութապաշտության ակնարկ: Ավելի ուշ գնահատեցի նրա զուտ մարդկային արժանիքները, ուստի մինչ օրս մտերիմ բարեկամներ ենք, չնայած որոշ հարցերում տարակարծիք ենք: Իմ կարծիքով, օժտված է քաղաքական և դիվանագիտական հոտառությամբ, իրավիճակների վերլուծման ունակությամբ, ինչը հաջողությամբ դրսևորեց անվտանգության խորհրդականի պաշտոնում: Յամոզված եմ՝ Լևոնը, ազատվելով Աշոտից, վնասեց գործին, վնասեց և անձամբ իրեն, քանզի Աշոտը նաև բարոյական կանխարգելիչ էր: Տարիների ընթացքում ավելի ու ավելի համոզվեցի, որ նրա կազմակերպչական ակտիվությունը միշտ եղել է անձնական շահերից վեր՝ ուղղված, իր համոզմամբ, ի սպաս ընդհանուր գործի՝ երկրի շահերին: Յանուն դրա պատրաստ էր ներել և համագործակցել անգամ իրեն վիրավորած կամ լքած գործչի հետ: Երախտագիտությամբ եմ հիշում 96-ի ընտրությունների հետ կապված մի դրվագ: Աշոտի խնդրանքով ժամանակավորապես ինձ վրա էի վերցրել ԳիԱրՔՄի կազմակերպության ղեկավարի դերը (նախկին ղեկավարը՝ Գ. Գրիգորյանը, բանտարկվել էր անհիմն մեղադրանքով) և պետք է պաշտպանեի նախագահի մեր ներկայացրած թեկնածուին՝ Աշոտին: Ընտրարշավի ընթացքում պարզ դարձավ, որ Լևոնին կարելի է հաղթել՝ համախմբվելով Վազգեն Մանուկյանի անձի շուրջ: Ներողություն խնդրեցի Աշոտից և իր կազմակերպած ընտրարշավն օգտագործեցի hօգուտ Վազգեն Մանուկյանի: Ու թեև Վազգենը մինչ այդ մերժել էր Աշոտի հետ համագործակցության իմ առաջարկը, Աշոտը մազաչափ չնեղացավ, և մեր բարեկամությունը մնաց անխաթար: Դա միակ դեպքն էր, երբ Աշոտը համաձայնել էր դնել իր թեկնածությունը: Սովորա-

բար սատարում է իր համոզմամբ ամենաարժանիին:

Տեսնում էի նաև Համբարձում Գալստյանին: Տեսնում էի նաև Վանոյին ու Բաբկենին: Լսել էի, որ Վանոն ամիսներ առաջ գրողների միությունում իր ելույթով ներկայացրել էր ըմբոստացման հայտը: Այդ օրերի միտինգներից մեկի ժամանակ, լսելով, որ համալսարանից է, ծանոթացա Վազգեն Մանուկյանի հետ: Թվաց՝ նա հակասական մտորումների մեջ է, իր ինչ անելը դեռ չի հստակեցրել: Շուտով նրա ակտիվությունը բարձրացավ, ի հայտ եկավ նրա կոորդինացնող ունակությունը: Դա զգացին և ընդունեցին ապագա կոմիտեի կորիզը կազմող տղաները: Իգո-րը ևս սերտ համագործակցության մեջ էր այդ խմբի հետ: Հիմնական հավաքատեղին (եզակի բացառություններով) Վազգենի բնակարանն էր:

Փետրվարի 26-ի հանրահավաքը ցնցեց ոչ միայն քանակապես: Այն ի հայտ բերեց նոր որակ: Տարբեր գնահատականներից նվազագույնի պնդմամբ մասնակիցների թիվը կես միլիոնից պակաս չէ: Եկել էին Լենինականից և մյուս, համեմատաբար հեռու շրջաններից: Դուրս էին եկել նախորդ օրը և ոտքով կտրել ողջ ճամփան: Միջանցիկ գյուղերում սեղաններ էին բացել երթի մասնակիցների համար: Ողջ ժողովուրդը, բացառությամբ չչեղրինյան "премудрый пескарь"-ների, դարձել էր մի բաբախող սիրտ, մի ոգի, մի կամք, արժանապատիվ ու հպարտ ազգ...

Երբ թվով և զենքով գերազանցող թշնամին հարձակվեց խաղաղ բնակավայրերի վրա, մեր ժողովրդի որդիները զենք վերցրին, արյուն թափեցին ու հաղթեցին...

Ի՞նչ ապաշնորհ, անհոգի ու անաստված վիժվածք պիտի լինես, որ քանդես այդ հրաշք ժողովրդի երկիրը ու թալանես (տարիներ շարունակ)... Քանդես ու թալանես... Եվ թալանածը կուտակես արտերկրի բանկերում՝ չփորձելով անգամ ներդնել սեփական երկրի տնտեսության մեջ, աշխատանք տաս թալանվածին... Դառնացրին ու պղտորեցին այդ ժողովրդի հոգին, բարոյալքեցին ու չարացրին նրան, ոգեղեն բարձունքից գլորեցին հուսահատության և հուսախաբության անդունդը... Հասցրին այն բանին, որ բոլոր միջոցներով լքի այն հողը, որի համար արյուն թափեց... Ու էլի չեն հագենում...

* * *

Գորբաչովի հետ Զորի Բալայանի ու Սիլվա Կապուտիկյանի հանդիպումը, իրենց ներկայացնելով, շատ հուսադրող էր: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ դա, մեղմ ասած, չափազանցված էր: Սակայն Զորին համոզել էր տիկին Սիլվային՝ ներկայացնել դա լավատեսորեն՝ ժողովրդի թափը չկոտրելու համար: Այսօր դժվար է պնդել՝ ճի՞շտ էր դա, թե՞ ոչ, քանզի պատմության տարբերակված կրկնությունն անհնար է: Մնում է փաստել, որ բազմություն կազմող միամիտներս դեռ 1–2 ամիս վանկարկում էինք «Լենին, պարտիա, Գորբաչով»: Ամաչում ես հիշելիս. գոնե 60-ն անց երանելիս պարտավոր էի իմանալ պարտդպրոցի ու ղեկավար պարտաշխատանքի ճիզվիտացման բովով կոփված ֆունկցիոների խոսքի արժեքը:

Գորբաչովը պատվիրակների միջոցով խնդրել էր դադարեցնել հանրահավաքները, իրեն մեկ ամիս ժամանակ տալ խնդիրը բազմակողմանի ուսումնասիրելու և որոշում կայացնելու համար: Իգորը հայտարարեց միտինգադադար մինչև մարտի 26-ը:

Փետրվարի 27-ին սկսվեց Սումգայիթը: Լուրը ցնցեց, տակնուվրա արեց հոգիներս: Մանրամասները կատաղեցնում էին խելագարության աստիճանի, պղտորում երևակայությունը ամենադաժան վրեժի պատկերներով... Իգորը մնաց անհողդողդ. պայմանը պայման է: Ողորմածիկ Սամվել Շահմուրադյանը կազմակերպել էր վկաների և տուժածների վկայությունների գրառում Գերագույն Խորհրդի շենքում, որոնք հետագայում հրապարակեց առանձին գրքով: Ինքնաբերաբար կազմակերպվեց ավագանիների խորհուրդ (Սոս Սարգսյան, Սարգիս Մուրադյան, Հայկ Ղազարյան, Սիլվա Կապուտիկյան և ես (թող ինձ ներվի, եթե որևէ մեկին բաց եմ թողել)): Կառավարությունը (Վլադիմիր Մովսիսյան, Վլադիմիր Մարգարյան) գումար էր տրամադրել ի նպաստ Սումգայիթի այն փախստականների, որոնք կհամաձայնվեին վերաբնակվել Ղարաբաղում: Տեղացիների, հատկապես երևանցիների հետ վերջիններիս շփումները սահմանափակելու նպատակով նրանց տեղավորել էին Երևանից հեռու, առողջարաններում ու հյուրանոցներում:

Առաջին իսկ այցելությունները տհաճ անակնկալ մատուցեցին. բարեկարգ, հարուստ կահավորված հյուրանոցների ինտերիերը հասցվել էր անմխիթար վիճակի: Զարմանալի անխղճու-



«Ով որ քաջ է, ինչ կսպասե», – հորդորում է Վազգենիկը



Գրիգելղան պաշտպանում է Ստարովոյտովայի թեկնածությունը

թյամբ, կարծես ներքին չար մղումով, կտրատվել էին բազմոցների ու բազկաթոռների կաշվե երեսպատումները, թափվել դրանց լցոնը, կտրատվել էին ու պոկոտվել վարագույրները, փչացվել վերելակները, զուգարանները, հեռախոսները, ապականվել հատակը, գորգերը... «Զարացած են, ամեն ինչ կորցրել են», – արդարացնում էր հյուրանոցի վարչությունը ու լռում:

Պարզվեց՝ Ղարաբաղ տեղափոխվելու հեռանկարը շատ քչերին էր գայթակղում. դեռ շոկի վիճակում էին: Սոսը, որին կառավարության հատկացված 2 մլն ռուբլին անսպառ էր թվացել, առաջարկեց յուրաքանչյուր փոխադրվողին 2000 ռուբլի: Զգույշ ակնարկեցինք, որ այդ դեպքում կկարողանանք միայն մեկ հազար հոգի վերաբնակեցնել: Ապշել էր. չէր ուզում հավատալ:

Հանգիստ չէր տալիս սումգայիթյան վանդալիզմին հաջորդած մեր լռությունը: Հատկապես զայրացրել էր մարտի 2-ի Հայկոմկուսի պարտակտիվի ժողովում Լուկյանովի շպրտած մեղադրանքը. "Из-за вас в Сумгаите гибнут наши парни..."[1], հստակ տարբաժանել էր «միասնական Սովետական ժողովուրդը» «մերոնց» և «ծերոնց»:

Ի վերջո հայտարարեցի Իգորին, որ Սումգայիթում տուժածների և նրանց հարազատների երթ եմ կազմակերպում: Համաձայնեց: Եթե չեմ սխալվում մարտի 5-ն էր: Տուժածների անվան տակ երթի էր դուրս եկել Աշտարակի ակտիվ զանգվածը:

Քաղաքում համարյա ամեն օր տարածվում էին կոմիտեի և այլ կազմակերպությունների նորանոր կոչեր, դիմումներ ժողովրդին և բողոքներ իշխանություններին: Բովանդակությամբ իրար մոտ. մեր արդար պահանջի պատմական հիմնավորումներ, մամուլի և Մոսկվայի լռությունն ազերիների վայրագությունների մասին, տոկունություն դրսևորել մեր պահանջների պաշտպանության գործում: Բավական երկարաշունչ էին, հիմնականում՝ ռուսերեն: Որպես օրինակ բերեմ մարտի 5-ի համեմատաբար սեղմ մեր դիմումը, որը զուգադիպեցրել էինք երթին. (ռուսերեն լրիվ բնագիրը տե՛ս Հավելված, էջ 275)

ԴԻՄՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Քանի որ ԶԼՄ-ները շարունակում են լռության տալու քաղաքականությունը և աղավաղում են ԼՂԻՄ-ում, Հայաստանում և Ադրբեջանում տեղի

1 «Ձեր պատճառով Սումգայիթում զոհվում են մեր տղաները...»

ունեցող իրադարձությունների վերաբերյալ ինֆորմացիան, նպատակահարմար ենք գտնում հաղորդել այն Ձեզ.

- Ղարաբաղը (Հայաստանի պատմական Արցախ տարածքը) դարեր ի վեր Հայաստանի անօտարելի մասն է:
- 1923 թ. մարզը մեքենայությունների շնորհիվ մտցվեց Ադրբեջանի կազմի մեջ: Մարզի բնակչության 96%-ը հայեր էին՝ նրա հինավուրց բնակիչները: 1971 թ. մարդահամարով հայերը մարզում 123 հազար էին, ադրբեջանցիք՝ 37 հազար:
- Հայաստանի հետ Ղարաբաղի վերամիավորման հարցը մեկ անգամ չէ, որ բարձրացվել է, սակայն առանձնահատուկ սրություն է ստացել հրապարակայնության, դեմոկրատիայի և վերակառուցման մեր օրերում:

...այնուհետև բերված է փետրվար ամսվա ընթացքում ԼՂԻՄ-ում, Հայաստանում և Ադրբեջանում ծավալված մեզ հայտնի իրադարձությունների սեղմ ժամանակագրությունը....

*Ղարաբաղի և Հայաստանի բնակչությունը պահանջում է իր սահմանադրական իրավունքների ապահովում...*

Կոմկուսի կենտկոմի հանձնարարությամբ 6 գիտնական՝ Տ. Ս. Խաչատուրովը, Ն. Ս. Ենիկոլոպովը, Ի. Գ. Աքաբեկովը, Լ. Ս. Սարգսյանը, Մ. Ա. Սարգիսովը, Ռ. Ա. Սրապյոնյանցը, գործուղվում են ԼՂԻՄ իրավիճակին ծանոթանալու և բնակչության հետ հանդիպելու նպատակով: Մարտի 5-ին հրապարակած իրենց 14 էջանոց հաշվետվության մեջ, պատմաաշխարհագրական ակնարկից բացի, խոսվում է սոցիալ-մշակութային ոլորտում տիրող անմխիթար վիճակի, խտրականության ճչացող փաստերի, ԱԽՍՀ ղեկավարության պրովոկացիոն ելույթների մասին. մասնավորապես, Սումգայիթի և Ասկերանի դեպքերն անմիջականորեն կապում են Բաղիրովի այցելությունների հետ:

Մարտի 9-ին Ռոյ Մեդվեդևը հրապարակում է «Ազգային խնդիրների սրումը ԽՍՀՄ-ում» և «Գորբաչովի ռեֆորմները» բովանդակությամբ հոդվածները:

Լավ հիշում եմ այդ օրերին ինձ համակած անհամբեր, լարված սպասումը. թվում էր՝ եթե ԼՂԻՄ-ի խնդրի դրական լուծումը ձգձգվի ևս մեկ ամիս, սիրտս կպայթի: Համոզված եմ՝ միայնակ չէի: Չէր լքում այսօրվա որակմամբ ապշեցուցիչ միամիտ համոզմունքը. եթե ինչպես հարկն է բացատրենք «ինչն ինչոց է», ապա բացառված է մեր պահանջատիրության մերժումը: Նման «սրտառուչ օպուսների» օրինակներ են կոմիտեի ընդարձակ դիմումը ժողովրդին (իմ խմբագրմամբ) և իմ նամակը ՍՄԿԿ կենտկոմի քարտուղար Ա. Յակովլևին (տե՛ս Հավելված, էջ 277, 280):

Մարտի 19-ին Յակովլևի՝ Նախկինում ղեկավարած ինստիտուտի աշխատակիցները, իրեն ուղղված նամակում, դատելով Արցախյան ազատագրական շարժման նկատմամբ իշխանությունների վերաբերմունքից, գալիս են այն եզրակացության, որ երկրի ղեկավարությունը թերագնահատել է շարժման թափը:

Չեմ կարծում, որ այդ դիմումի և նամակի տողառտող թարգմանության կարիքը կա. նորից մեր պատմական իրավունքների, 20–21 թթ. Ստալինի և կարաևների խարդավանքների մասին է, որոնց ջանքերով Ղարաբաղը և Նախիջևանը բռնանջատվեցին Հայաստանից, Մեծ եղեռնի և Կարսի նահանգի կորուստը, Սումգայիթը և ԶԼՄ-ների անբարո վարքը...

Վերջում հայտարարում ենք, որ բոլոր այդ խարդավանքները չեն կոտրի հայ ժողովրդի վճռականությունը ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու գործում:

Ինչ վերաբերում է Յակովլևին հղած նամակին, ապա ի հավելումն վերը շարադրվածի հայության ցավն ըմբռնելու համար նրան խորհուրդ է տրվում կառուցել Ռուսաստանի պատմության հայկական տարբերակը... («սո՜ւրբ պարզություն»):

Մեր կարգապահ վարքին Գորբաչովը հակադրեց կենտրոնական մամուլի զայրացնող, սադրիչ գրոհը: Միտումը պարզ էր. իրեն պարգևած մեկ ամսում գործել մաքսիմալ «արդյունավետությամբ» և վերջ տալ շարժմանը: Անամոթ խեղաթյուրմանը, շարժման վրա տարբեր (ազգայնամոլական, էքստրեմիստական և այլ) պիտակներ կախելուն զուգընթաց սկիզբ է առնում սիաբեկյան, խունձապի մթնոլորտի ներմղման կամպանիան: Պաշտոնական ինստանցիաներում շշնջում են, սակայն այնպես, որ ամենուրեք լսելի դառնա, մոտալուտ ու անխուսափելի դաժան հաշվեհարդարի, համատարած բանտարկությունների մասին լուրը: Մարտի 8-ին հսկա բազմությունը (մեծամասամբ՝ կանայք) շարժվում է դեպի եղեռնի հուշարձան: Պաստառներն են՝ «Սումգայիթի սպանդը 20-րդ դարի խայտառակությունն է», «Մամուլի ապատեղեկացումը սադրեց սպանդը Սումգայիթում» և այլն: Կենտրոնական ԶԼՄ-ները իրենց հերթին ծավալել էին իրական դեպքերի խեղաթյուրման սանձազերծ ու լպիրշ կամպանիան: Չէին խորշում «ծովահենային» միջոցներից. սադրիչ հոդվածների տակ երբեմն հայտնվում էին հայ գործիչների ստորագրություններ: Այսօրինակ «կատակ» «Պրավդա»-ն խաղաց Հրաչյա Ղափլանյանի հետ: Բողոքը ուշացումով տպվեց, այն էլ՝ այլ թեր-

թում: Նման դիվերսիա իրագործվեց Յուրի Առաքելյանի նկատմամբ: Միշտ համակրել եմ «Լիտերատուրնայա գազետա»-յին, եղել եմ նրա մշտական բաժանորդը: Նա չմիացավ փնովողների ոհմակին (դրա համար էլ շնորհակալություն), սակայն երկար լռեց. հավանաբար «ցնցված» էր: Անգամ մարտի 9-ի գրողների համագումարում Մարկովի երկարաշունչ զեկուցման մեջ «Սումգայիթ» «ուշունցը» չհնչեց: Եվ միայն մարտի 23-ի "Разум должен восторжествовать"[1] խորագրի տակ տարբեր ազգերի վշտացած գրողների՝ երկու եղբայր ժողովուրդներին ուղղած թախանձանքների շարքում առանձնացավ ռուս գրող Շեստինսկու ձայնը. հավանաբար հայ տատի արյան կանչով նա առաջին անգամ հիշատակեց Սումգայիթը և կոչ արեց խստորեն պատժել հանցագործներին: Վերջապես մայիսի 4-ին հայտնվեց Սերգեյ Բարուզդինի շնորհակալական խոսքը Հենրիխ Բորովիկին նրա «Պոզիցիա» հաղորդաշարի "Нагорный Карабах. Размышления вслух"[2] հաղորդման համար:

Բայց մինչ այդ: Թեև Երևանում հանրահավաքները ժամանակավորապես դադարեցվել էին, սակայն Ստեփանակերտում, Մոսկվայում, Սփյուռքի տարբեր քաղաքներում անցնում էին բողոքի ցույցեր՝ ուղղված ԶԼՄ-ների և իշխանությունների կողմից սումգայիթյան դեպքերի լուսաբանման ու որակման զազրախաղի դեմ: Անթիվ նամակ-բողոքներ առանձին քաղաքացիներից, գիտա- և արտադրական ձեռնարկություններից երկրի իշխանավորներին, ԶԼՄ-ների խմբագիրներին:

Նշեմ մի քանիսը. Գիտությունների Ակադեմիայի մի քանի ինստիտուտների միասնական նամակը «Իզվեստիա»-յի խմբագրություն և «Վրեմյա» հեռուստածրագրին 247 ստորագրություններով, Արմեն Հովհաննիսյանի փետրվար-մարտ ամիսների ադրբեջանական մամուլի ծաղկաքաղը, Սերո Խանզադյանի, ՀԽՍՀ Գրողների Միության անդամ քուրդ գրող Մախմուդովի, Կալիֆոռնիայի նահագանպետ Ջորջ Դոքմեջյանի նամակները Գորբաչովին, Հրաչյա Հովհաննիսյանի նամակը ԽՍՀՄ Գրողների Միության նախագահությանը, ԲՈՒՀ-երի նամակները և շատ, շատ ուրիշներ: Գրում էին և մեզ: Գալիս էին Միության հեռուներից, իրենց համերաշխությունը հայտարարում միտինգի հարթակից:

---

1 «Բանականությունը պետք է հաղթանակի»

2 «Լեռնային Ղարաբաղ. բարձրաձայն մտորումներ»

Արժե առանձնացնել երկուսին: Առաջինը շարժման առաջին օրերին հայտնվեց Երևանում: Բարձրահասակ, քչախոս, իր նկատմամբ ուշադրությունից խուսափող: Ընկերացավ ինձ և բժիշկ Ռ. Սեդրակյանի հետ: Հետագայում նամակագրության մեջ էր երկուսիս հետ: Շահագրգիռ էր շարժման հանդեպ, բայց զգուշավոր: Ակնարկներից հասկացա, որ այլախոհության համար նստել է: Իսկական ազգանունը չիմացա. նամակները ստորագրում էր «Կարամազով», «Կարամազյան» կամ պարզապես Վ. (Վոլոդյա): Քաղաքականապես գրագետ էր, վերլուծող, կանխատես: Մանրամասն վերլուծականով (գուցե պահպանվել է Սեդրակյանի մոտ) եկել էր այն եզրակացության, որ մեզ փաթաթելու են տևական պատերազմ: Ավա՜ղ, իրականացավ: Կոմիտեի տղաները նրան ուշադրության չարժանացրին:

Երկրորդը՝ Շտեֆանը (Steffan), կնոջս՝ Գրիգելդայի, գերմանացի դասընկերը ջերմ նամակ հղեց Մոսկվայից այնպիսի հայերենով, որը պետք է ամաչեցնի մեր հայրենակիցներին, որոնք 30–40 տարի Հայաստանում բնակվելուց հետո երկու ոտքից կաղում են մայրենի լեզվից, հավանաբար նրա և հայ մշակույթի հանդեպ տածած «մեծ սիրուց»:

Մեզ հղած բազմաթիվ արձակ և չափածո ուղերձներից առանձնացնեմ մեկը. թիֆլիսցի ֆիզիկոս Դավիդ Մելիքջանովը, նմանակելով Շեքսպիրին, գրում է.

Невыносима жизнь в потоке лжи,
В империи разврата и цинизма,
Где простота, поверив в миражи,
Встречает натиск глума в "новой жизни",
Где кровопийц к расплате, в час потерь,
Взывают тщетно бренные останки,
Прах старцев, искалеченных детей,
Растоптанная честь простой армянки,
Где всю народа творческую мощь
Пленят хромые силы пантюркизма,
Где из Арцаха немощная вошь
Высасывает кровь. И та же призма
Разнузданно все вывернет до дна,
И ложь страну охватит как чума.

Մարտի 13-ին Ս. Գրիգորյանցի կոնֆերանսից (Մոսկվա) հայտնի դարձան Արևելագիտության Ինստիտուտի եզրակացու-

թյունները և առաջարկները, որոնց նա հանգել էր կենտկոմի հանձնարարությամբ կատարված սիտուացիոն վերլուծության հիման վրա: Ահավասիկ դրանք.

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆՑԻ ԵՎ Ն. ՇԵԼԿՈՎԻ 1988 Թ. ՄԱՐՏԻ 11-Ի ՊՐԵՍԿՈՆՖԵՐԱՆՍԸ:
(«Գլասնոստ» ամսագիր, N 17, էջ 97)

Մեզ հայտնի դարձավ, որ ՍՄԿԿ ԿԿ հանձնարարությամբ Արևելագիտության ինստիտուտի ընդհանուր պրոբլեմների բաժինը կատարել է Հայաստանի իրավիճակի սիտուացիոն վերլուծություն: Եզրահանգումները, որոնք շարադրել է ԳԱ թղթ.-անդամ Գեորգի Կիմը, հետևյալն են.

Հանձնաժողովը որքան հնարավոր է պետք է ձգձգի հարցի քննարկումը: Մշակութային, սոցիալական և կենցաղային ոլորտներում զիջումների միջոցով, գուցե նաև զոհաբերելով որոշ ղեկավարների և մեղքը գցելով երկրորդական անձանց վրա, փորձել հանգստացնել բնակչությանը: Բոլոր դեպքերում ԼՂ-ն չպետք է միացվի Հայաստանին: Հիմա պետք է ձևացնել լիակատար հրապարակայնություն և ուռճացնել ամենափոքր ընդհարումները՝ մեղադրելով հայերին: Պետք է ակտիվորեն ներթափանցել հայկական միջավայր, այդ թվում նաև հայերի նկատմամբ բարեկամաբար տրամադրված, Հայաստանի տարածքում ապրող քրդերի օգնությամբ և աշխատել պառակտում մտցնել նրանց հարաբերությունների մեջ:

Դատելով ամեն ինչից՝ հենց այդ առաջարկներն են այսուհետև իրականացվելու: («Կանչ», N 2, էջ 3)

Ապագան ցույց տվեց, որ հենց այդ ցինիկ արտաքորանքը դարձավ կենտրոնական իշխանությունների գործողությունների մարտավարությունը:

Հանրապետության ղեկավարությունը հայտնվել էր պրոստրացիայի վիճակում, որին հետևեց լեթարգիական քունը. փոխարենը, տեսնելով Մոսկվայի բարեհաճ վերաբերմունքը, մոլեգին ակտիվացել էր ադրբեջանական կողմը: Այս կապակցությամբ ժողովրդին ուղղված իր դիմումում «Ղարաբաղ» կոմիտեն նշում է, որ «...այս հանձնարարականները կարող էին զառանցանք թվալ (այսինքն՝ ուռճացնել ամենամանր ընդհարումները՝ դրանցում մեղադրելով հայերին), եթե դրանք հետագայում չիրականանային. սրվում է իրավիճակը Հայաստանի այն շրջաններում, ուր կան ադրբեջանցիներ, այստեղ բռնկվում են ազգամիջյան ընդհարումներ և այդ ամենը՝ պարտիական և իրավապահ օրգանների լիակատար անգործության պայմաններում, այսինքն՝ գործի են դրվում զանգվածային ընդհարումները և լարվածու-

թյան կտրուկ աճը իրականություն դարձնելու համար բոլոր միջոցները: Շարունակվում է հայերի վարկաբեկումը ԶԼՄ-ներում...» («Կանչ», N 2, էջ 3):

Ցավով պետք է փաստել, որ այս էլ արդեն որերորդ տարին է, ինչ մենք, ունենալով հոգուտ մեզ անվիճելի պատմաիրավական փաստեր, անոթխած արդարանում կամ լռում ենք, մինչդեռ ազերիները նախանձելի լպիրշությամբ հրամցնում են միջազգային հանրությանը կանխահայտ սուտ, ի վերջո պարտադրում են մեզ պատերազմ և պարտվելուց հետո գոռում հայերի ագրեսիայի մասին՝ վտարելով կես միլիոնից ավելի հայեր Բաքվից, Շահումյանից, Գետաշենից և այլ հայաբնակ տարածքներից, ողբում են ուռճացրած մեկ միլիոն փախստականների դարդը՝ նրանց բռնի պահելով վրանային պայմաններում: Քանի որ 1918 թ. պատմական թատերաբեմում հայտնված երկու հիմնական բնիկների՝ հայերի և քոչվոր թուրքերի միասնական պետությունը կոչվեց Ադրբեջան, ապա այդ տարածքներում երեք հազար հինգ հարյուր տարի բնակվող հայերին հայտարարում են եկվոր և, չունենալով սեփական պատմական հուշարձաններ, ոչնչացնում կամ յուրացնում են հայկականները և այլն և այլն: Ընդ որում քաղաքակիրթ աշխարհը լավատեղյակ է այդ մասին. պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանը պատմում է, որ հանրահայտ Գոբլը իր հետ անձնական զրույցում թվարկել էր այդ բոլոր փաստերը... Բայց՝ ի՞նչ փույթ... «Մաեստրո» Գեբելսը ասել է. «Հաճախակի կրկնվող սուտը դառնում է ճշմարտություն»: Եվ ի՞նչ... Զավեշտ է, սակայն միջազգային հանրության համակրանքը թեքվում է նրանց կողմը: Ցավոք, դա էլ չի զգաստացնում մեր իշխանավորներին. անձնական և խմբային շահերը ամեն ինչից վեր են:

Մարտի 17-ին ԼՂԻՄ-ի մարզկոմի պլենումում մարզի խնդիրների մասին զեկուցումով հանդես եկավ նորընտիր քարտուղարը՝ Հ. Պողոսյանը: Մարտի 21-ին «Պրավդա»-յում պայթեց Օվչարենկոյի "Эмоции и разум"[1] լպիրշ սադրանքի գլուխգործոցը: Այն ընթերցելուց հետո սրտի կաթվածից հանկարծամահ եղավ ակադեմիկոս Ռաֆայել Ալեքսանդրյանը: Մինչ այդ նման ապրումներից կյանքին հրաժեշտ էր տվել կինոռեժիսոր Հենրիկ Մալյանը: Իր «Վերջին մտորումներ»-ում նա գրել էր.

---

1 «Հույզեր և բանականություն»

«Այս օրերին ես լսեցի իմ ազգի ճիչը: Երբ ողջ ազգն է ճչում, դա ողբ չէ, խնդրանք-աղերսանք չէ: Դա նախ և առաջ պահանջ է: Պահանջ է հինավուրց մի ժողովրդի, որ դարերի ընթացքում բազմիցս անարդար կողոպտվել է: Կողոպտվել է իր մերձակա բոլոր հարևաններից, հարավից և հյուսիսից, արևելքից և արևմուտքից: Կողոպտվել է իր թշնամիներից, իր փոքր ու մեծ եղբայրներից: Կողոպտել են նաև մեր մագաղաթյա ու քարե հուշարձանները, մեր լեռներն ու արոտավայրերը, մեր Արարատներն ու Վանա լիճը, մեր մշակույթը, մեր պատմությունը, մեր անցյալը, մեր երեկը, նաև այսօրն ու վաղը: Հայաստանի տարածքը վաղուց դարձել է տարբեր պետությունների բազմատեսակ դաշինքների առուծախի առարկա: Մեր հողերը շռայլորեն բաշխել են իրար, համբերություն ու խաղաղություն քարոզելով մեզ: Եվ մենք հաշտվել ենք, հաշտվել ենք վիրավորված, խեղդված կոկորդներով ու բռունցքները սեղմած, բայց միշտ հույս ու հավատով ու հավատով Աստծո: Բայց վայ թե Աստված էլ է մեզ խաբել... Եվ հիմա ցուրտ ու տաքի փետրվարյան օրերին հայությունն անսպասելիորեն միավորվեց, միաձուլվեց ու ճչաց: Մինչև հիմա մենք գիտեինք, որ մեր ազգը զարմանալիորեն գիտե և կարողանում է անջատվել: Հիմա իմացանք, որ մենք հրաշալիորեն գիտենք նաև միավորվել: Միավորվել համընդհանուր մի գաղափարի շուրջ...»:

Ու ցնցված համաժողովրդական այդ երկշաբաթյա պոռթկումով՝ հպարտությամբ եզրակացնում է.

«Բոլորը, բոլորը առանց բացառության,
Մենք հաղթանակեցինք, որովհետև միացած ենք,
Մենք հաղթանակեցինք, քանզի վերջապես,
Հենց այս տասը օրերի ընթացքում
Ճանաչեցինք ինքներս մեզ...»

Առաջին արձագանքը Օվչարենկոյի «գլուխգործոցին» եղավ Սիլվա Կապուտիկյանի հեռագիրը Գորբաչովին:

<u>Срочно! Москва. ЦК КПСС тов. Горбачеву М.С.</u>

Позорная статья в "Правде" провоцирует и поощряет новые Сумгаиты. В Ереване поднялась новая волна возмущения. Пожар, который Вашим обращением удалось потушить, после лживой статьи может превратиться в кровопролитие. Срочно нужно Ваше вмешательство.

Сильва Капутикян
21.03.88 г.[1]

---

1 Շտապ Մոսկվա, ՍՄԿԿ ԿԿ՝ Մ.Ս Գորբաչովին: «Պրավդա»-ի խայտառակ հոդվածը սադրում և հրահրում է նոր սումգայիթներ, Երևանում բարձրացել է զայրույթի նոր ալիք: Այն հրդեհը, որը Ձեր ուղերձից հետո հաջողվեց հանգցնել, այդ ստահոդ հոդվածից հետո կարող է վերածվել արյունահեղության: Պահանջվում է Ձեր շտապ միջամտությունը:
Սիլվա Կապուտիկյան

Յուրահատուկ արձագանք Լենինգրադից.

<u>**Телеграмма из Ленинграда**</u>

Идет сбор подписей под обращением.

Мы, христиане Ленинграда солидарны с чаяниями армянского народа о воссоединении Карабаха с Арменией и сочувствуем его новым страданиям. Надеемся на положительное решение вопроса. Призываем к терпению и сохранению христианского достоинства независимо от политического результата.[1]

Նույն օրը Յու. Առաքելյանը գրավոր բողոք ուղարկեց «Պրավդա»-յի խմբագիր Աֆանասևին՝ իր անունն առանց իր իմացության այդ հոդվածի տակ զետեղելու առթիվ, սակայն՝ անպատասխան: Հաջորդ օրը Գորբաչովին հեռագիր հղեց ակադ. Հրաչիկ Սիմոնյանը: Մի քանի օր անց Գորբաչովին բաց նամակ ուղարկեց Իգորը: Անշուշտ, և շատ ուրիշներ:

Հիշատակման է արժանի ուկրաինական կինոդրամատուրգ Ալեքսանդր Շպալինի նամակը «Պրավդա»-ին: Հեղինակը հիանում է հայաստանցիների ցուցաբերած բարձր կազմակերպվածությամբ և զսպվածությամբ՝ ի պատասխան կենտրոնի ծավալած ճնշումներին ու հանձնարարված ապատեղեկացմանը: Հատկապես տպավորված էր ժողովրդի պահանջով այդ օրերին սպիրտային խմիչքների վաճառքն արգելելու որոշմամբ «ալկոհոլի ազդեցության տակ «անհամությունններից» խուսափելու նպատակով»: Զարմանում է, որ անգամ այդ համաժողովրդական կարգապահությունը «Պրավդա»-ն, հիասթափության լեղին կուլ տալով, որպես մեղադրանք է որակում շարժման դեմ (հիշեցնեմ, որ զսպվածության կոչը ժողովրդին արել էր կոմիտեն):

– Չգիտես ինչու՞, – զարմանում է հեղինակը, – երկրորդ համաշխարհայինից հետո Բուկովինայի և այլ մարզերի միացումը Ուկրաինային օրինական էր, իսկ ԼՂԻՄ-ի պահանջը՝ «աննախա-

---

[1] Հեռագիր Լենինգրադից: Ստորագրահավաք է գնում հետևյալ դիմումի տակ. Մենք՝ Լենինգրադի քրիստոնյաներս, համերաշխ ենք հայ ժողովրդի հետ Ղարաբաղը Հայաստանին միացնելու իր ակնկալիքներում և կարեկցում ենք նրա նոր տառապանքներին: Հուսով ենք, որ հարցը դրականապես կլուծվի: Կոչ ենք անում պահպանել համբերություն և քրիստոնեական արժանապատվություն՝ անկախ քաղաքական արդյունքից:

դեպ»: Որովհետև առաջինը վավերացված էր վերևից, իսկ վերջինը բարձրացված էր ներքևից:

Ինքս էլ կաթվածի եզրին էի: Նման դեպքերում նոպայից սպրդելու միակ միջոցը որևէ կերպ լիցքաթափվելն է: Չայիոյանքից ու ալկոհոլից գերադասեցի գրիչը: Զայրույթից գալարվելով ու գրչածայրից ծուխ հանելով՝ գրեցի հայտնի բաց նամակը: Սպասածից ավելի մեծ արձագանք ու տարածում ստացավ, թեև այսօր այլ կերպ կգրեի... (ռուսերեն բնօրինակը տե՛ս Հավելված, էջ 282)

## ԲԱՑ ՆԱՄԱԿ «ՊՐԱՎԴԱ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

*«Ոչ ոք կույր չէ այնքան, որքան նա, ով չի ցանկանում տեսնել»*
*(անգլիական ասացվածք)*

Գիտակցում եմ ձեր թերթի գլխավորած՝ փաստերը լռության մատնելու, վերախառնելու, հաճախ էլ խեղաթյուրելու կամպանիայի դեմ պայքարի ողջ անհուսությունը, սակայն լռելը ուժերիցս վեր է, որպեսզի չկիսեմ իմ մաթեմատիկոս գործընկերոջ՝ ակադեմիկոս Ռաֆայել Ալեքսանդրյանի կամ կինոռեժիսոր Հենրիկ Մալյանի ճակատագիրը, որոնք ինֆարկտի զոհ դարձան ձեր հոդվածի ընթերցումից հետո (21.03), և որոնց ոչ մի կերպ հնարավոր չէ կասկածել ո՛չ էքստրեմիզմի, ո՛չ էլ Կենտրոնական Հետախուզական Վարչության (ԿՀՎ) հետ ունեցած կապերի մեջ:

Եվ այսպես, փրկարար բանաձևը գտնված է. այս ամենի պատճառը ո՛չ լենինյան ազգային քաղաքականության ոտնահարումն է, ո՛չ 70-ամյա ազգայնամոլական դիսկրիմինացիան և հուշարձանների սպիտակ ջարդը, ո՛չ հայ բնակչության բռնի արտագաղթը Արցախի և Նախիջևանի բնիկ տարածքներից, ո՛չ էլ 70 տարիների ընթացքում անարդարությունների հետևանքով կուտակված համաժողովրդական ցավն ու վիրավորանքը, որոնք դուրս ժայթքեցին արդարություն գտնելու հույսի առաջին իսկ շողարձակման հետ, այլ ԿՀՎ-ի գործակալների ու արևմտյան գործակալությունների մեքենայությունները: Մի խոսքով՝ «Զարդիր ջհուդներին, փրկիր Ռուսաստանը»:

Ես հասկանում եմ՝ դեմոկրատիայի և հրապարակայնության դեռ հզոր հակառակորդների կողմից կա «ցուցում», և հարկ է խեղաթյուրել ու խեղդել արդարությունը վերականգնելու համար մղվող պայքարի ամենադեմոկրատական և սահմանադրական միջոցները: Ճիշտ այնպես, ինչպես «ցուցում» կար ներկացնելու ժողովրդի թշնամիներ Բուխարինին, Տուխաչևսկուն, Բլյուխերին և ուրիշների, ու «Պրավդան» բոցաշունչ խոսքով նշավակում էր նրանց, «ցուցում» կար ներկացնելու ակադեմիկոս Սախարովին, որը տիտանական մենամարտ մղեց անհատի պաշտամունքի և լճացման շրջանի զազրելիությունների դեմ, ու «Պրավդան» գտնում էր «ճշմարտացի» փաստեր նրա կենսագրությունից, որպեսզի կեղտաջրեր թափի արդարության մարտիկի վրա... «Ցու-

ցում» կար քարկոծել Ելցինին, որ համարձակվել էր ձեռք բարձրացնել իշխանության հասած կոնֆորմիստների անձեռնմխելիության վրա (նրա ճառի աղագրությունը, ավաղ, չհրատարկված՝ շրջում էր երկրով մեկ) և քարկոծեցին... Մի խոսքով՝ միայն թե «ցուցում» լինի, իսկ օվչարենկոներ կգտնվեն:

Ի դեպ, ԿՀՎ-ի և նրա մեղսակիցների մասին: «Միտինգային», ինչպես դուք այն անվանում եք, դեմոկրատիան սկսվեց Հայաստանում, ի բողոք իրականության աղավաղման դեմ, որ սանձազերծեցին կենտրոնական հեռուստատեսությունը և մամուլը: Իսկ գործադուլը նոր դադարեցրած ղարաբաղցիները վերսկսեցին այն ապրիլի 4-ի ձեր հոդվածը կարդալուց հետո: Այնպես որ, ո՛չ մի սադրիչ այնքան փայլուն կերպով չէր հաջողացնի լուծել կրքերը բորբոքելու խնդիրը, ինչպես դա հաջողվեց ձեզ:

Իսկ հիշողության ինչպիսի ապշեցուցիչ մթագնում մամուլի աշխատողների մոտ, որոնք հիմնավորապես մոռացության են տալիս այն փաստը, որ կառավարության վրա «միտինգային ճնշում» գործադրելուն նախորդել է ԼՂԻՄ-ի դեպուտատների ժողովը, որը ձայների մեծամասնությամբ արտահայտել է ժողովրդի կամքը ՀՍՍՀ-ի հետ միավորվելու մասին, և հետագայում նույնպիսի որոշում է ընդունել ԼՂԻՄ-ի մարզկոմի պլենումը (վերջինիս մասին, ի հաստատումն հրապարակայնության «հաղթանակի», կենտրոնական մամուլը ոչ մի խոսք չգրեց): Իսկ չէ՞ որ մարզկոմի պլենումն իրոք աննախադեպ էր: Սովետական իշխանության 70 տարիների ընթացքում առաջին անգամ է տեղի ունեցել նման փաստ: Այդ առթիվ, իբրև դեմոկրատացման և հրապարակայնության վառ դրսևորման, ուրախանալ էր պետք: Թե՞ այդտեղ նույնպես նշմարվում է ԿՀՎ-ի թաթը: Ոչ ոք չի՞ մտածել այն մասին, թե ինչ կաներ ԿՀՎ-ն, եթե կառավարությունը կատարեր ժողովրդի գերակշռող մեծամասնության սահմանադրական եղանակով արտահայտված օրինական պահանջը: Այդ պարագայում եթե նույնիսկ լինեին ցույցեր, ապա դրանք միայն երախտագիտություն կարտահայտեին ոչ միայն կես դար առաջ զրպարտված ու սպանված, այլև կենդանի ժողովրդի հանդեպ վերականգնված արդարության առթիվ:

Ձեզ քաջ հայտնի է, որ համաժողովրդական բողոքի (մեկ միլիոնանոց ցույց՝ երեք միլիոն բնակչություն ունեցող հանրապետությունում) պատճառները ո՛չ սոցիալ-տնտեսական էին և ո՛չ էլ, մանավանդ, էկոլոգիական (վերջիններս առկա են ՍՍՀՄ գրեթե բոլոր ռեգիոններում, և մենք նույնպես, ինչպես և ամենուր, փոփոխակի հաջողությամբ պայքարում ենք մեր ֆունկցիոներների դեմ, որոնք քիչ բանով են տարբերվում այդպիսիններից ողջ Միությունում): Պետք չէ կեղծել. հիմնական պատճառը տերիտորիալ-ազգային է, մնացածը երկրորդական է:

Հեշտ է խոսել ինտերնացիոնալ եղբայրության մասին՝ չենթարկվելով ո՛չ ցեղասպանության, ո՛չ դիսկրիմինացիայի: Իսկ դուք փորձեցի՞ք ձեզ դնել տեղն այն ժողովրդի, որը բազմադարյան անհավասար պայքարից հետո՝ արդեն 20-րդ դարում, տարել է մարդկության պատմության մեջ մեծագույն ողբերգություններից մեկը՝ լիակատար բնաջնջում և աքսոր իր 4000-ամյա բնիկ տարածքների 8/10-րդ մասից, բնաջնջում, որն իրականացվում էր Եվրոպայի և Ռուսաստանի անտարբեր հայացքների ներքո, մինչդեռ վերջինիս էքսպանսիայի հանդեպ հայերի ցուցաբերած աջակցության համար թուրքերը նրանց, իբրև ներքին թշնամու հետ, հաշվեհարդար տեսան: Դեռ ավելին, հե-

դափոխությունից անմիջապես հետո թուրքերին մատուցվեց Ռուսահայքի զգալի մասը՝ իբրև «ընծա մաքուր աշխատանքի համար» բնիկ ժողովրդին բնաջնջելու գործում: Վերջապես դեռ մնում էին Նախիջևանը (կոտորածից հետո՝ 1920 թ.-ի շեմին, 58%-ը հայ) և Արցախը (ԼՂԻՄ-ը՝ 92%-ը հայ): Ի դեպ, Նախիջևանի ԻՍՍՀ-ն (ներառյալ Հին Գողթնը) հայրենիքն է հայ ժողովրդի հնագույն (4000-ամյա) էպոսի, և նախահեղափոխական քարտեզի վրա ողողված է հնագույն հայկական հուշարձաններով, որոնց զգալի մասը ներկայումս ոչնչացված է:

Ինչպես ծեզ հայտնի է, Նարիմանովը պաթետիկ ոգևորությամբ ընդունում է, որ այդ տարածքները վերամիավորվեն Հայաստանի հետ: Այնպես որ Սումգայիթը ոչ թե ինչ-որ խուլիգանների ու թմրամոլների անկարգություն է, այլ պանթյուրքիզմի ավանդական տակտիկա:

Առանձնապես խոր ցավ է պատճառում ղարաբաղցիների վիճակը: Այդ մի բուռ խիզախ ու ազատասեր ժողովուրդը պահպանում էր իր անկախությունը նույնիսկ այն ժամանակ, երբ ողջ Հայաստանն արդեն բաժանված էր Թուրքիայի ու Պարսկաստանի միջև, և միայն 1647 թ.-ին Արցախը բռնի կերպով միացվեց Պարսկաստանին, և 1848 թ.-ին հին հայկական Վարարակնը դարձավ Խանքյանդի (այժմ՝ Ստեփանակերտ): Եվ ահա նրանց միացնում են թուրքերին (անվանափոխված ադրբեջանցիներ), որոնք հենց նոր (1918–1920 թթ.) գրեցին ցեղասպանության վերջին էջը՝ կոտորելով 30 հազար հայ Բաքվում և 32 հազար՝ Շուշիում՝ Արցախի այն ժամանակվա հոգևոր կենտրոնում:

Չիչերինի փորձը արյունաքամ ժողովրդին (6 միլիոնից՝ պատմական տարածքի վրա, մնում էր մոտ 700 հազար՝ ՀՍՍՀ տարածքում) աճուրդի հանելու քայլերը կանգնեցնելու և Հայաստանի ռուսական մասը վերադարձնելու ուղղությամբ ճնշվում է Ստալինի կողմից (հղումներ չեմ բերում համապատասխան փաստաթղթերի վերաբերյալ, վստահ եմ՝ դրանք ծեզ ծանոթ են): Իսկ չէ՞ ոչ «յաթաղանից» փրկված և աշխարհով մեկ սփռված 1.5 միլիոնը երազում էր վերադառնալ հայրենիք (և ոչ թե Ալթայ, որտեղ հայտնվեց 1946–1948 թթ. ներգաղթածների զգալի մասը, որը հավատացել էր ներգաղթի ստալինյան թակարդին):

Հետո գալիս է «եղբայրական» ինտերնացիոնալիզմի 67-ամյա սանձեզերծ երթը, որի սկիզբը դրեց Կարաևը (առանձնացնելով 200 միլիոն ռուբլի Զանգեզուրում, Նախիջևանում և ԼՂԻՄ-ում հայկական կուսակցական և մշակութային կադրերի դեմ հալածանք ծավալելու համար) և շարունակեցին Ալիևն ու Բաղիրովը:

Ադրբեջանի կառավարողների (այո՛, հենց կառավարողների և ոչ ժողովրդի, որի մի մասը սիստեմատիկորեն «թունավորվում» է գոյություն ունեցող և զուգահեռ մզկիթների կողմից) հետևողական «ինտերնացիոնալիզմի» օրինակներից են վերը նշված կոտորածները Բաքվում և Շուշիում, ոչ մի տեղ չհիշատակվող հազարավոր հայերի կոտորածը Շուշիում 1935 թ., սիստեմատիկ հալածանքները, շանտաժն ու հաշվեհարդարը կուսակցական, ադմինիստրատիվ և մշակույթի բնագավառի հայ ազնիվ աշխատողների նկատմամբ, ֆիզիկական (ճանապարհազրկությունը) և հոգևոր (դպրոցներում Հայաստանի պատմության դասավանդման արգելումը, ԼՂԻՄ-ի ռուսական դպրոցներում հայոց լեզվի արգելումը, Հայաստանից հեռուստահաղորդումներ

ստանալու նպատակով ռադիոռելեական գիծ կառուցելու արգելումը, ուսումնական պիտույքների ստացման ճանապարհին արհեստական դժվարությունների ստեղծումը և այլն) սոցիալ-տնտեսական դիսկրիմինացիա, բացարձակ ճանապարհազրկություն ԼՂԻՄ-ի ներսում, վերջապես, կանգուն մնացած եկեղեցիներից գոնե մեկը գործող դարձնելու վերաբերյալ հավատացյալների խնդրանքի մերժում, քանի որ այդ ժամանակ արդեն ձգնում էին եկեղեցիները դասել ադրբեջանցիների երևակայական նախնիների ստեղծագործությունների շարքը:

*ԱՐԴՅՈՒՆՔԸ.* Նախիջևանի ԻՍՍՀ-ում մնացել են գրեթե 1.5 տոկոս հայեր, ԼՂԻՄ-ում 92 տոկոսից 75 տոկոսը (այն էլ՝ շնորհիվ արցախցիների համառության և տոկունության): ՍՍՀՄ 1939 և 1959 թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակաշրջանում բնակչության նվազում արձանագրվել է միայն ԼՂԻՄ-ում (չհաշված Լենինգրադը և Լիտվան, որոնց վրայով դաժանորեն անցել էր պատերազմը): Բազմահազար ղարաբաղցիներ արտագաղթել են առանց այն էլ գերբնակեցված ՀՍՍՀ և այլ ռեգիոններ: Եվ մի վերջին բնորոշ գիծ. պատմության հակագիտական, բռի աղավաղում: Նախ հնագույն և միջնադարյան հուշարձանների անխիղճ ոչնչացում (կոնկրետ օրինակը 19-րդ դարում Շուշիում կառուցված և դեռ բոլորովին նոր եկեղեցու բարբարոսական կործանումն է մոտ 10 տարի առաջ), այնուհետև, ուշքի գալով, դրանց անամոթ յուրացում, ընդհուպ մինչև հին հռոմեական պատմագիրների վերանայում (ռևիզիա): Ոչ միայն հայ պատմաբանները չեն համարձակվում բողոքել, այլև ռուս և այլազգի գիտնականների (Յակոբսոն և ուրիշներ) հերքումները չեն հրապարակվում: Բանը հասնում է զավեշտի. Իռլանդիայի պատմաբանները հայկական ճարտարապետությանը նվիրված գիտաժողովներում (Իտալիա, ՍՍՀՄ) ապացուցում են, որ խաչքարերը բնորոշ են միայն հայկական քրիստոնեական ճարտարապետությանը և միջնադարում Իռլանդիա (Հայաստանից բացի միակ երկիրը, որտեղ դրանք կան) են բերվել հայ վանականների կողմից, իսկ ադրբեջանցի վայ-գիտնականները (Բունիաթով, Մամեդով, Ախունդով) ապացուցում են, որ Հայաստանի պատմական տարածքում 7–13-րդ դարերի եկեղեցիներն ու խաչքարերը իրենց նախնիների ստեղծածն են (իսլամը հոգ չէ). ինքնըստինքյան հասկանալի է, որ այդպիսի պնդումներն արվում են ոչ թե վերը նշված գիտաժողովներում՝ խայտառակությունից խուսափելը անհնար կլիներ, այլ Ադրբ. ՍՍՀ-ի պատերի ներսում՝ գունազարդ և բազմատիրաժ ալբոմներում և դիսերտացիաներում:

Հստակ պատկերացնելու համար իրավիճակը՝ անցկացնենք մի զուգահեռ. Կուլիկովյան ճակատամարտում հաղթում է ոչ թե Դմիտրի Դոնսկոյը, այլ թաթարները (թող ներեն ինձ թաթարները անկանխակալ մոդելի համար): Վերջինները գրավում են ողջ պատմական Ռուսաստանը, իսկ հետո, քրիստոնեական Եվրոպայի հետ պատերազմում համոզվելով, որ ռուսները ձգվում են դեպի իրենց հավատակից եղբայրները, մորթում են նրանց գրեթե ամբողջ տարածքում: Այնուհետև, որպեսզի ամրապնդեն իրենց պատմական իրավունքը, սեփականացնում են վլադիմիրյան և պսկովյան եկեղեցիներն ու հուշարձանները: Իսկ մի փոքր հողակտորի վրա կենդանի մնացած մի բուռ ռուսներ զրկված են իրենց իրավունքները պաշտպանելու հնարավորությունից, որպեսզի հանկարծ չարժանանան էքստրեմիստ-նացիոնալիստների խարանին (տե՛ս

փետրվար-մարտի կենտրոնական մամուլը) և այսպես շարունակ: Ռուսների համար սա սոսկ մղձավանջային մոդել է, իսկ մեզ համար՝ մղձավանջային իրականություն, ցավ, վիրավորանք, զայրույթ: Եվ երբ տասնամյակներ շարունակ կուտակվող այդ վիրավորանքը, նոր հովերից հուսավառված, դուրս հորդեց իբրև արդարության համաժողովրդական կոչ, որն ի դեպ Մ. Ս. Գորբաչովի դիմումից անմիջապես հետո ընդհատվեց, սկսվեց աննախադեպ, միտումնավոր մի հալածանք: Որպես մեղադրանք դիտվեց նույնիսկ խաղաղ, սահմանադրությամբ թույլատրված (այժմ հանրապետությունում այն հաճախ կերպով արգելված է) պահանջներ ներկայացնելու միտինգային եղանակը: Հարց է ծագում՝ էլ ինչպե՞ս: Սումգայիթի եղանակո՞վ: Բարբարոսներ չենք, ընդունակ չենք երեխաներ խեղդելու և բռնություններ գործելու: Նամակներո՞վ: 60 տարվա ընթացքում կառավարության հասցեով ուղարկված են մի քանի պարկ: Եվ՝ ի՞նչ: Որևէ բարեփոխում եղա՞վ սոցիալ-մշակութային բնագավառում: Գոնե ինչ-որ կերպ արձագանքեցի՞ն այդ բողոքներին: Այո՛: Ուժեղացնում էին ճնշամիջոցները Ադրբ. ՍՍՀ ղեկավարության կողմից, կատարելագործվում էին դիսկրիմինացրայի միջոցները: 60-ական թվականների կեսից (ապաստալինացման թա՛րմ հովերից հետո) բողոքի բուռն ալիք բարձրացավ, եղավ բազմահազարանոց ցույց՝ տասնյակ հազարավոր ստորագրություններով ԼՂԻՄ-ից, Հայաստանից և Ադրբ. ՍՍՀ-ի քրդական բնակչությունից. *արդյունքը*՝ ճնշամիջոցներ ակտիվիստների նկատմամբ (որոնց, ինքնըստինքյան հասկանալի է, անմիջապես վերագրեցին կապեր ԿՀՎ-ի հետ) և դրության կտրուկ վատթարացում ԼՂԻՄ-ում:

Ուրեմն, ինչպե՞ս վարվել: Չէ՞ որ ակնհայտ է՝ եթե չլինեին միտինգները, նույնիսկ հիմա էլ չէր լինի ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման հապճեպորեն մշակված ներկա ծրագիրը՝ մի կիսամիջոց (պալիատիվ), որով ձգտում են նենգափոխել կենսականորեն կարևոր այն հարցը, որ բարձրացրել է ողջ հայությունը: Այդ ծրագրի կետերը ճչում են ժողովրդի կեսդարյա կոպիտ դիսկրիմինացիայի և արժանապատվության ոտնահարման մասին: Իսկ նրա բովանդակությունը մղում է ակնհայտ մի եզրահանգման՝ ծրագրի իրականացումը որքան ավելի բնական կլիներ ՀՍՍՀ շրջանակներում, մինչդեռ Ադրբ. ՍՍՀ շրջանակներում (ինչպես վկայում է անցյալի փորձը) այդ ծրագիրը արագորեն կտանի դեպի ազգային կազմի տոկոսային փոփոխություն՝ հօգուտ ադրբեջանցիների: Հոդվածների հայտնի շարքի հեղինակներից մեկը (չեմ հիշում՝ ով) առանձնապես շատ էր անհանգստանում ԼՂԻՄ-ի ազգային փոքրամասնության մասին: Դե ինչ, սպասենք, թե երբ ԼՂԻՄ-ի ազգային փոքրամասնությունը կդառնան հայերը: Ճիշտ է, Նախիջևանի ԻՍՍՀ-ում նրանք վաղուց արդեն փոքրամասնություն են, սակայն և չգիտես ինչու՝ փոքրամասնության սրտացավ պաշտպանին դա ամենևին չի անհանգստացնում: Իսկ նա գիտե՞, որ հայերի արտագաղթը Նախիջևանից անշրջելի է դարձնելու համար հայերի մուտքը ՀՍՍՀ-ից Նախիջևան արգելված է (նույնիսկ էքսկուրսիաների ձևով), թեև սահմանը տասնյակ կիլոմետրերի վրա է, իսկ Նախիջևանից ՀՍՍՀ ադրբեջանցիների մուտքն ազատ է, թեև սահմանը (Արտաշատի շրջանում) տասնյակ մետրերի վրա է: Իսկ ի՞նչ կպատահի, եթե «փոխադարձ» պատասխան տրվի՝ արգելվի ադրբեջանցիների մուտքն Նախիջևանից Հայաստան: Չէ՞ որ Նախիջևանը կկտրվի Ադրբ. ՍՍՀ, քանի որ ամբողջությամբ ընկած է

Հայաստանի մեջ: Պատկերացնում եմ, թե ինչպիսի աղաղակ կբարձրանա հայերի նացիոնալիզմի մասին: Իսկ ադրբեջանցիներին ահա 67 տարի է, ինչ ամեն բան թույլատրված է:

Վերջապես, հանրապետության ղեկավարության կողմից ադրբեջանցի ազգաբնակչության «ինտերնացիոնալ» դաստիարակության վառ օրինակներ. Հայրենական Մեծ Պատերազմում զոհված 350 համագյուղացիների հիշատակին կանգնեցված հուշարձանի կործանումը հայկական Բայան գյուղում 1969 թվականին, անցյալ տարի Չարդախլուում տեղի ունեցած նմանօրինակ այլանդակությունները և հենց վերջերս կատարված վանդալիզմը՝ ցեղասպանությունը Սումգայիթում: Ադրբ. ՍՍՀ-ում բնակվող քուրդ ազգաբնակչության բռնի ձուլումը, որի մասին նրանք բազմիցս ու ապարդյուն դիմել են կառավարությանը:

Մյուս կողմից հայերի «վրդովեցուցիչ էքստրեմիզմն ու նացիոնալիզմը»: Նրանք համարձակվում են բողոքել ցեղասպանության և իրենց բնիկ հողերի «խաղաղ» բռնագրավման դեմ, «եղբայրական» ժողովրդի գազանությանը ոչ մի արյունալի հակաքայլով չեն պատասխանում, թեև բոլոր հնարավոր միջոցներով նրանց մղել են և մղում են դրան: Չէ՞ որ պիտակն արդեն կպցրել են, անհրաժեշտ է հիմնավորել (հանրապեության ՆԳՄ-ի հիմնական հոգսն այս օրերին եղել է թուրքական ազգաբնակչության կողմից հնարավոր պրովոկացիաների կանխումը, որոնք կաշխատեին վերագրել հայերին, իսկ այդպիսի պրովակացիաներ, արյունալի հետևանքներով, շարունակվում են առ այսօր): Քրդերը նույնպես «հուսախաբ» արեցին ինչպես ՀՍՍՀ-ում, այնպես էլ Ադրբ. ՍՍՀ սահմանակից շրջաններում: Կոլեկտիվ նամակներում նրանք հայտարարեցին, որ ամբողջ Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում միայն ՀՍՍՀ-ում են ստեղծված քուրդ փոքրամասնության հոգևոր և սոցիալ-մշակութային զարգացման համար բոլոր պայմանները (թերթեր, դպրոցներ, ԳԱ-ի բաժանմունք և այլն), այն դեպքում, երբ Ադրբ. ՍՍՀ-ում բռնի ուծացում է գնում: Այս պատճառով էլ Ադրբ. ՍՍՀ-ում՝ ՀՍՍՀ-ի և ԼՂԻՄ-ի միջև ընկած շրջանում ապրող քրդերը դիմել են՝ խնդրելով իրենց մտցնել ՀՍՍՀ-ի կազմի մեջ: Նման խնդրանքով դիմել են նաև Բոգդանովկայի շրջանի (Վրաստան) ռուս դուխոբորները:

Բայց ու՞մ են պետք փաստերը: Կան «ցուցումներ»... Ուստի հիանում են ադրբեջանցիների ինտերնացիոնալիզմով և ջանք չեն խնայում հայերի մեղքերը փնտրելու մեջ:

Այդ ամենը բնական կլիներ Բրեժնև-Ալիև «փառավոր» ժամանակներում, երբ ԿՀ-ն, ի տես ողջ Միության, ցույց էր տալիս Ալիևի կողմից «մեր օրերի Լենինին» (Ալիևի ձևակերպմամբ) «համեստ» հուշանվեր հանձնելու սրտաշարժ տեսարանը: Բայց այսօ՞ր: Հրապարակայնության այդքան բացահայտ աղավաղում և ճնշում: Մի՞թե դեռ չեն չորացել Ալիևի կողմից գործի դրված կանալները: Ակամայից մտածում ես այդ մասին, երբ ծանոթանում ես, թե ինչ մակարդակների վրա են անոթխածորեն կտրվում Ուզբեկստանում և Սումգայիթում տարվող հետաքննությունների թելերը (իզուր չէ, որ Շահումյանի շրջանի ադրբեջանցիները ծիծաղում են հայերի վրա. «Դուք ստորագրություններ հավաքեք, իսկ մենք՝ փող: Տեսնենք՝ ով կհաղթի»): Կամ դեռ թարմ մի փաստ: Կրոնի հարցերով պատասխանատու մի ընկեր Մոսկվայի ԿԿ-ից (ազ-

գանունը չգիտեմ) Աղբը. ՍՍՀ և ՀՍՍՀ ներկայացուցիչների հետ միասին դիտում էր ԼՂԻՄ-ի եկեղեցիներն այն նպատակով, որ դրանց հայ հավատացյալների խնդրանքով գործող դառնալու իրավունք տրվի: Երբ նա սկսեց անկեղծորեն վրդովվել ադրբեջանցի գիտնականների լկտիության դեմ, որոնք ձգնում էին սեփականացնել այդ հուշարձանները, նրան շտապ կերպով կանչեցին հեռախոսի մոտ (կանչ Բաքվից): Դրանից հետո նա շտապ թռավ Բաքու և այլևս ԼՂԻՄ չվերադարձավ: Ի պատասխան ՀՍՍՀ ԿԿ-ից արված հեռախոսազանգերին (ի՞նչ անել, թույլ կտա՞ք բացել)՝ անորոշ փնթփնթոց, թե իբր դեռ պետք է ապացուցել, որ այդ եկեղեցիները հայերն են կառուցել... Մի խոսքով «ամենաողորմածաբար մերժված է»: Այնուամենայնիվ, մտնելով վերոհիշյալ չինովնիկի դրության մեջ, ուզում ենք առաջարկել ավելի «պատշաճ» վարկած. սաստեցին Մոսկվայից, քանի որ դեմոկրատիայի և հրապարակայնության հակառակորդներին անհամեմատ ավելի վախեցրեց բողոքի հենց դեմոկրատական, սահմանադրական եղանակը, քան «սումգայիթյանը»:

Հակառակ դեպքում ինչպե՞ս բացատրել այն հանգամանքը, որ մարտի 26-ի համար հայտարարված միտինգի նախօրյակին օպերատիվ կերպով զորքեր հայտնվեցին Երևանում, որը բռնության կամ իրավախախտման ամենափոքր արարքով անգամ իրեն չէր վարկաբեկել ողջ այս լարված ժամանակահատվածում, հանգուցային խաչմերուկներում ցուցադրաբար կանգնեցին զրահամեքենաներ՝ կապույտ բերետավորներով (ավտոմատներն առաջ թեքած), իսկ Երևանի երկինքը գիշեր-ցերեկ իրենց ռռնդյունով լցրին տասից ավելի զինվորական ուղղաթիռներ (չփորձեք «Արգումենտի ի ֆակտի» ամսագրի նման ձևացնել անտեղյակության սուրբ միամտություն՝ ուղարկում եմ, ինչպես և նրանց, համապատասխան լուսանկարներ), ըստ որում զինվորներին ներշնչել էին, որ նախապատրաստվում է հակասովետական հեղաշրջում, որ ավելի թեժ վիճակ է լինելու, քան Աֆղանստանում, որ հայերը գազանություն են անում խեղճ ադրբեջանցիների հանդեպ: Ո՞վ մատուցեց այդ սուտը զինվորներին ու ռուս ժողովրդին: ԿՀԿ՞-ն:

Ես մասնակցել եմ միտինգների մեծ մասին, բայց ինչ-որ ոչ մի անգամ չեմ լսել ո՛չ Հայրիկյանին, ո՛չ էլ ուրիշ «սադրիչների»՝ ԿՀԿ-ի «գործակալների»: Եվ, իհարկե, ոչ մի սադրիչ կամ էքստրեմիստ չէր կարողանա հաշված օրերի ընթացքում ոտքի հանել ողջ ժողովրդին, եթե չլիներ 70-ամյա արյունածոր վերքը, որի վրա մամուլն ու ԿՀ-ն առատորեն աղ էին ցանում:

Հրապարակայնության և ճշմարտության նկատմամբ որպես անքաքույց ծաղր պետք է բնութագրել «Պրավդա»-յի և ԿՀ-ի վերաբերմունքը Անդրկովկասում տեղի ունեցած փետրվար-մարտյան իրադարձությունների նկատմամբ: Ոչ թե լուսաբանել, այլ աղավաղել, քաշքշել ու լռության մատնել փաստերը, ոտնատակ տալով տարրական տրամաբանությունը. այսպիսին էր, կարծես, մամուլում եղած բոլոր հրապարակումների նշանաբանը: Այդ ամենի հետ «ազնիվ» զայրույթ ընդդեմ արտասահմանյան զրպարտիչների: Մինչդեռ մենք՝ իրադարձությունների մասնակիցներս և ականատեսներս, դառնությամբ համոզվեցինք, որ արտասահմանյան «ձայները» նույն Հայրիկյանի և Գրիգորյանցի բերանով հաղորդում էին շատ ավելի օբյեկտիվ տեղեկություններ, քան մեր լրատվական միջոցները: Իրոք, թերթում ես լրագրերը, նայում ԿՀ. մի կողմից՝ մեկը մյուսից ավելի վիրավորական ու անարդարացի մակդիրների

և պիտակների անխոնջ որոնումներ՝ վարկաբեկելու համար ԼՂԻՄ-ի դեպուտատների ժողովը և Հայաստանի ցույցերը, մյուս կողմից՝ ապաշնորհ ջանքեր՝ հրեշավոր վանդալիզմը՝ Սումգայիթի ցեղասպանությունը, ներկայացնելու իբրև խուլիգաններ ու մի կույտ թմրամոլների անկարգություն, և հիացական գովասանքներ զոհերի մի մասին ապաստան տված խարևանների հասցեին: Անսահման շնորհակալ ենք նրանց: Բայց ոչ ոք իրեն հարց չի տալիս, թե ինչու նրանք, որ մի օր առաջ զգուշացնում էին իրենց հայ հարևաններին վտանգի մասին (հետևաբար նախապես տեղեկացված էին), տագնապի ահազանգ չհնչեցրին համապատասխան ատյաններում: Իսկ այն փաստը, որ կեղտոտ, բարբարոսական արարքը հայերի նկատմամբ, որոնք ռուսների հետ մասին կառուցել են Սումգայիթը, մշակվել և նախապատրաստվել է հանրապետական ղեկավարության աստիճանից ոչ պակաս մակարդակով, ակներև է դառնում ականատեսների վկայություններից: Իրոք.

1. Սերիական կերպով պատրաստվել էին ստանդարտ չափերի երկաթաձողեր, որոնք քարակույտերի հետ միասին մեքենաներով տեղափոխվել ու լցվել էին քաղաքի տարբեր մասերում,

2. Դեռ մեկ շաբաթ առաջ ԲՇԿ-ներից հայերի մասին տեղեկություններ էին հավաքվել,

3. Գիշերային ջարդարարական հարձակումների ժամանակ կանոնավոր կերպով և օպերատիվորեն աշխատում էին բեռնատար մեքենաներ, որոնց վրա արագորեն բարձում էին պատուհաններից ցած նետված ունեցվածքը, ինարավոր է և դիակներ: Բեռնատարների հետևից գնում էին ջրցան մեքենաները:

Աղդամցիների հարձակումն Ասկերանի վրա սկսվեց առավոտյան Բաղիրովի՝ այնտեղ գիշերելուց հետո: Եվ նրանց երրորդ արշավանքի առաջն առավ ոչ թե խանումը, այլ այն լուրը, որ Ասկերանի հայերը (ինչպես և կիրովաբադցիները) պատրաստ են հակահարձակման, և դրան ավելացրած այն փաստը, որ այդտեղ արդեն զինվորներ էին բերվել: Այդ պատճառով էլ Սումգայիթում այդ «հերոսները» ներխուժում էին ոչինչ չկասկածող, քնած մարդկանց տները: Եվ տեղի միլիցիայի «օպերատիվությունն» էլ, կարծում եմ, ձեզ հայտնի է՝ ավաղ, զորքերը հայտնվեցին ջարդերն սկսվելուց մի ամբողջ օր հետո:

Իսկ ու՞մ է պետք է այդ անվայել ու սրբապիղծ խաղը զոհերի թիվը թաքցնելու ուղղությամբ: Չէ՞ որ ճշմարտությունը միևնույն է կբացահայտվի և մեր լրատվական միջոցների կենսագրության մեջ կմնա ևս մեկ անհրապույր էջ:

Մի կողմ թողնենք ԿՀՎ-ն: Եկեք դիմենք փաստերին. կարո՞ղ եք բացատրել, թե ինչու մոտ 3000 փախստականներ, որոնք ապաստանել են Հայաստանում, նույնիսկ հարազատների այցելություններից պարսպապատված են միլիցիայով: Էլ ավելի խիստ ռեժիմի տակ են այն տուժածները, որոնց տեղափոխել են Բաքու: Կարծես քիչ է այն սարսափը, որ նրանք կրել են, դեռ գումարվում է ռազմագերու ստորացուցիչ դրությունը, Հայաստանում կամ Ռուսաստանում գրանցվելու վիրավորական արգելքը, նորից Սումգայիթ, որտեղ նրանք վանդալիզմի ականատես եղան, ետ շպրտվելու վտանգը: Թե՞ հավերժական պատանդներ են պետք է արդարացնելու համար «համառ» հայերին վախեցնելու նպատակով տարածվող և սպառնալիք դարձած բանաձևը.

«Եթե պահանջեք ԼՂԻՄ-ը, կլինի հավերժ Սումգայիթ»: Պետությունը, որ դատաստան տեսավ ֆաշիզմի հետ, խուսանավում է «խուլիգանների կույտի» առաջ: Թե՞ դա անհրաժեշտ է վերակառուցման համար:

...Այնուհետև թվարկված են ԶԼՄ-ների և պաշտոնական անձանց կողմից սումգայիթյան դաժանությունների վերաբերյալ թյուր մեկնաբանությունները...

Մամուլը և ԿԴ-ն համառորեն ժխտում էին երեխա զոհերի առկայությունը: Իսկ գեներալ-մայոր Ալեքսանդրովը, որ մասնակցել է կարգուկանոնի հաստատմանը տեղում, ընդունում է այդ, ինչպես նաև հաստատում է հղի կնոջ փորը պատռելու և զինվորների զոհվելու փաստը:

Իմ ժուռնալիստական «էթիկայի» մեջ անփորձառու գլխում ոչ մի կերպ չի տեղավորվում այդպիսի քամելեոնությունը: Մի կողմից կրքոտ, ուրախություն պատճառող հակահարված վերակառուցման աշխուժացած հակառակորդներին («Պրավդա» 06.04) կամ անհատի կուլտի ժամանակաշրջանից մի մռայլ պատկեր (Իվան Դեմուրայի գործը 19.04 «Իզվեստիա»-յում, որը փոթորկեց իմ՝ 9-ամյա տղայի հոգում 1933 թ.-ին կրած համանման տառապանքի ողջ կսկիծը), մյուս կողմից՝ տասնամյակների ընթացքում մշակված ոճով փաստերի անվերջանալի աղավաղումներ և լռության մատնելու համառություն: Ի՞նչ է պատահել: Անցե՞լ ենք թույլատրված սահմանը: Այդ դեպքում վերակառուցման կամպանիան սկսելուց առաջ պետք էր հրատարակել «դեմոկրատական ճաշատեսակների ցուցակը», որոնք չէին խանգարի մեր՝ հրապարակայնության անսովոր ստամոքսները: Այդ դեպքում դարաբաղցիներն էլ կսպասեին: Թե չէ, Աստված մի արասցե, կվնասենք վերակառուցմանը, ինչպես կարծում են ոմանք: Իսկ մենք վերակառուցման մասին երազում ենք շատ ավելի, քան որևէ այլ ժողովուրդ Միությունում, որովհետև նրա հետ ենք կապում-մեր հույսերը ողջ հայ ժողովրդի համար կենսականորեն կարևոր հարցերի լուծման ուղղությամբ, որոնց ֆոնի վրա աննկատ մնացին նույնիսկ այնպիսի՝ ուրիշ ռեգիոնների համար «ծանր» փորձություններ, ինչպիսիք էին հակաալկոհոլային միջոցառումները:

Ռ. Ա. Ղազարյան
Հայրենական Պատերազմի մասնակից,
ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ,
Երևան, Հալաբյան 11, բն. 28
28.04.1988 թ.

Հ.Գ. 1: Մեկն եմ այն «դյուրահավատներից» (կենտրոնական մամուլի բնորոշմամբ), որ թույլ եմ տվել իմ անունով հաշիվ բացել Սումգայիթից փախածներին օգնելու համար: Քանի որ հանրապետության կառավարությունը, որ պատրաստակամությամբ օգնության ձեռք մեկնեց Չեռնոբիլի և Վրաստանի աղետների ժամանակ, այս անգամ կտրուկ կերպով հակառակվեց, իսկ ԿԴ-ն և մամուլը, որ այդ օրերին «վալիդոլ էին կուլ տալիս» սպանված պադեստինցու և տնային կենդանիների ծանր վիճակի պատճառով, բնականաբար, չկարողացան ուշքի գալ և գոնե ցավակցություն հայտնել ֆիզիկապես և բարոյապես տուժած հազարավոր սումգայիթցիներին: Ցուրայինների համար նրբազգացությունը ավելորդ շռայլություն է. մեկ է՝ ճար ու ճամփա չունեն:

Հ.Գ. 2: Նամակս ձեզ ուղարկելու նախօրյակին «Դիրքորոշում» ծրագրով ելույթ ունեցավ Հ. Բորովիկը: Մեծապես շնորհակալ ենք նրանից: Ափսոս, որ ինչ-որ մեկի «հոգատար» ձեռքը հիմնավորապես կտրտել էր հայ մտավորականության ներկայացուցիչների խոսքը:

Մարտի 28-ին Երևանում՝ մտավորականների հավաքում, Հենրիխ Բորովիկը կրկնեց Գորբաչովի զգուշացում-սպառնալիքը. «ԼՂԻՄ-ի միացումը Հայաստանին կնշանակի հավերժ Սումգայիթ»: Երկրի ղեկավարն, ըստ իս, չգիտակցելով իր ասածի տրամաբանական մեկնաբանությունը, բացեիբաց խոստովանեց, որ գերհզոր պետությունը, իր սահմանադրությամբ հանդերձ, չի կարող հուսալիորեն պաշտպանել ազգային փոքրամասնության ոչ միայն իրավունքները, այլև կյանքը: Այդքանից հետո նեղացավ, երբ ԱՄՆ-ում մեր առաջին արտագաղթողներին անվանեցին փախստական: Ստիպեց, որ մեկնողները հայտարարեն, թե իբր մեկնում են ընտանիքները վերամիավորելու նպատակով («Սով. Հայաստան», 30.08.88 թ.): «Եղբայրությունը» պահպանելու միակ ելքը՝ մնալ սպանդը կազմակերպողի ենթակայության տակ: Այսինքն՝ սիրաշահել նրան ամեն ձևով:

Գորբաչովը իր խոստումը «կատարեց»: Դեռ չէր բոլորել նրա խնդրած մեկ ամիսը, երբ նա, հավանաբար «ծանոթանալով պրոբլեմի մանրամասներին», միամիտներիս գլխներին իջեցրեց առաջին հուժկու հարվածը. մարտի 23-ին ԽՍՀՄ Գխ նախագահությունը կտրուկ մերժեց տարածքային խնդրի քննարկման իսկ հնարավորությունը. «Անթույլատրելի համարել, երբ ազգային-տերիտորիալ բարդ հարցերը փորձում են լուծել պետական իշխանության մարմինների վրա ճնշում գործադրելու միջոցով»: Այլ կերպ ասած՝ սովետական սահմանադրությամբ (համաձայն որի գործում էր ԼՂԻՄ-ը) դա լուծելի հարց չէ: Ինչպես այդ որոշման, այնպես էլ մեկ օր առաջ միութենական հանրապետությունների Գխ-ների նախագահությունների և մեկ օր անց ՍՄԿԿ կենտկոմի որոշումներում ոչ մի խոսք Սումգայիթի մասին: Համարյա միաժամանակ հրամանագիր ընդունվեց ժողովների և հանրահավաքների անցկացման նոր կարգի վերաբերյալ: Տարիներ անց նման որոշում ընդունեց Լևոն Տեր-Պետրոսյանը, ըստ էության ուղղված իր նախկին գործընկերների դեմ (որոնք «հիացած» չէին նրա հանցախմբի «հայրենանվեր» գործունեությամբ) և նախորդներից ավելի բծախնդիր

կերպով հսկեց դրա կատարումը: Ցավոք, նույն վերաբերմունքը դրսևորվեց նաև Քոչարյանի օրոք:

Երկու հանրապետությունների իշխանություններին Միության Մինիստրների Խորհրդի և պետպլանի մասնակցությամբ հանձնարարվեց մշակել ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական ոլորտի զարգացման 88–95 թթ. ծրագիր արցախցիների առաջ քաշած հիմնական խնդրի փոխարեն: Տրամադրվելիք 400 մլ. ռուբլու տնօրինումը հանձնվում էր Ադրբեջանին՝ ձեռ առնելու չափ սահմանափակելով Հայաստանի մասնակցությունը: Արցախցիք Գորբաչովին ուղղած նամակում, (31.03.88 թ.) զայրույթով հրաժարվեցին «լավությունից»: Արժանապատիվ պահեցին իրենց ԼՂԻՄ-ի ղեկավարները, հատկապես Հ. Պողոսյանը:

Մարտի 24–25-ին Ռուսաստանից քաղաք բերված միլիցիայի ուժեղացված կարգախմբերից բացի բերվել էին տասից ավելի ռազմական ուղղաթիռներ՝ "ласточки перестройки"[1], կապույտ բերետավորներ, БТР-ներ՝ զինվորներով: Բոլորին տարաբաշխել էին քաղաքի հրապարակներով և հանգուցային խաչմերուկներով: Այդ մասին «բլուրից» այն կողմ (արտասահմանից) հայտնում էին բոլոր «չար ձայները»: Բերվել էին, իբր, բոլոր հնարավոր պրովոկացիաները խափանելու նպատակով՝ իրականում բնակչությանը ահ տալու համար: Միակ վտանգը գալիս էր երեխաներից. դրանց ուրախությանը չափ չկար (որի համար տատիկները շնորհակալական նամակներ էին հղել Յազովին), շրջապատում էին զրահամեքենաները, մագլցում դրանց վրա, փորձում մանեկների ամրությունը: Թատերական հրապարակ չէին թողնում անգամ մանկական սայլակներով տատիկներին. շատ հնարավոր է դրանք խցկված լինեին պայթյունավտանգ թոռնիկներով: Կենտրոնական մամուլը «սուրբ պարզությամբ» զարհուրում էր մի խումբ էքստրեմիստների ծրագրվող հրեշավոր դավերի առթիվ: Փորձեցի դուրս բերել նրանց «կոմայի» վիճակից "Аргументы и факты" պարբերական ուղարկելով թունախառն մխիթարանքս: Անշուշտ չտպեցին, թեև ստացման հեռագիրն ուղարկեցին: Մի բան, սակայն, պարզ գիտակցում էինք. մարտահրավեր հիշեցնող այդ թատերականացված ներկայացումը կարող է բորբոքել տաք գլուխներին (գուցե դա հենց բուն նպատակն էր)՝ մղելով նրանց խելահեղ քայլերի:

---

[1] Վերակառուցման ծիծեռնակներ

Հատկապես գրգռիչ էին երկնքում զօր ու գիշեր սպառնալից գռմռացող ուղղաթիռները (քաղաքացիներին քաղցր երազներ բերելու «բարի» նպատակով): Վիճակը դարձել էր պայթյունավտանգ, ուստի ցրվել էինք քաղաքով մեկ զինվորների հետ հնարավոր բախումը կասեցնելու նպատակով: Ինձ բաժին էր ընկել ֆիլհարմոնիայի դիմացի փողոցում առաջացած դիմակայությունը: Եղավ պահ, երբ ստիպված եղա գցել ինձ ամբոխի և զինվորների միջև` սթափության կոչ անելով երկու կողմին: Հաշվի առնելով իրավիճակը` կոմիտեն կոչ արեց ժողովրդին առժամանակ խուսափել հավաքներից ու նաև բոյկոտել զվարճատեղերը, ինչպես նաև մայիսմեկյան տոնակատարությունը: Փողոցները սակավամարդ ու խաղաղ էին: Զինվորները, որոնց ներշնչել էին, որ հակասովետական հեղաշրջում է պատրաստվում, որը կլինի ավելի թեժ, քան Աֆղանստանում, տարակուսանքի մեջ էին: Աղջիկները և կանայք ծաղիկներ էին նվիրում նրանց` բարի գալուստ մաղթելով: "Ну спасибо, ребята, — դիմում է զինվորներին մի տարեց կին, — 300 лет ждали вас, особенно 1915-м, когда под одобрительные взоры царских министров нас поголовно вырезали турки..."[1]: Արժե հիշատակել Սարատովցի ՆԳՆ կուրսանտների նամակը, որը նրանք հասցեագրել էին Երևանի բնակիչներին.

**Дорогие друзья!**

Наконец настал тот час, когда мы должны покинуть вас. Мы очень сожалеем о том, что преждевременно уезжаем из этого прекрасного города. Мы надеемся, что скоро вернемся, но не в форме курсанта, а как туристы.

Мы желаем, чтобы в вашей солнечной республике царила дружба и мир.

От всего сердца желаем вам самого наилучшего в жизни и труде.

(Письмо рабочими подобрано на взлетной полосе ереванского аэропорта "Звартноц").[2]

---

1 «Դե շնորհակալություն, տղաներ, 300 տարի ենք ձեզ սպասել, հատկապես 1915 թ.-ին, երբ ցարական մինիստրների խրախուսող հայացքների ներքո մեզ գլխովին մորթում էին թուրքերը»

2 Սիրելի բարեկամներ: Հասավ Ձեզ հրաժեշտ տալու ժամը: Շատ ենք ափսոսում, որ ժամանակից շուտ ենք հեռանում այս չքնաղ քաղաքից: Հուսով ենք` շուտով կվերադառնանք, սակայն որպես զբոսաշրջիկներ:

Հետզհետե այդ վայրահաչ ժխորը փորձում էին ճեղքել այլազգի ներկայացուցիչների խղճամիտ ձայները: Սկիզբը դրեց Հենրիխ Բորովիկի «Պոզիցիա» հեռուստահաղորդումը, որի վարողը առաջին անգամ խոսափում է «ազգայնական» պիտակից, հաղորդում որոշ, թեև ոչ լրիվ փաստեր սումգայիթյան դեպքերից, անգամ՝ հիշատակում 1915-ի եղեռնը: Ու թեև հաղորդման մեջ տրված էր ճշմարտության համեստ մասը, Ադրբեջանում ցույցեր անցան «Մա՛հ Բորովիկին» կոչերով: Լենինգրադի «Ավրորա» ամսագրում լույս է տեսնում Վասիլևսկու "Тучи в горах"[1] հոդվածը, որում հեղինակը հեգնում է ԶԼՄ-ների հոգատարությունը սովետական ընթերցողի հանդեպ՝ զերծ պահելով նրանց «կուսական» անմեղությունը սումգայիթյան վանդալիզմի նկարագրությունից: Դրան հետևեցին հեղինակի հանդեպ ոստիկանական հետապնդումները: Կոմիտեի համաձայնությամբ հեռագիր կազմեցի միտինգավորների անունից՝ հասցեագրելով այն Լենինգրադի գրողների միություն և մարզկոմ:

Ленинград, ул. Воинова 16 союз писателей Ленинграда, копия ленинградскому Обкому партии

Мы, участники 400-тысячного митинга трудящихся Еревана, решительно протестуем против полицейских угроз и преследования автора статьи "Тучи в горах" Александра Василевсого, опубликованной в десятом номере журнала "Аврора" лишь за то, что он вопреки злой руководяшей воле поправшей гласность и развязавшей позорную тенденциозную травлю борющегося за свои попранные национальные права армянского народа нашел в себе мужество и порядочность сказать правду. В случае продолжения травли Василевского мы будем защищать его по законам правового государства.

От имени участников митинга Казарян Рафаэль, Манукян Вазген, Тер-Петросян Левон и другие.

Обр. адрес: Ереван-38 ул. Алабяна 11, кв. 28. Казарян Р.[2]

---

Ցանկանում ենք, որ Ձեր արևշատ համրապետությունում հաստատվի բարեկամություն և խաղաղություն: Ամենայն բարիք կյանքում և աշխատանքում:

(նամակը գտել են «Զվարթնոց» օդանավակայանի թռիչքուղում):

1 «Ամպեր լեռներում»

2 Լենինգրադ, Վոյնովի փողոց 16, Լենինգրադի Գրողների Միություն, պատճեն Լենինգրադի կուսակցության մարզկոմ: Մենք՝ Երևանի աշխատա-

Նոգինսկ քաղաքի գիտական կենտրոնի 247 աշխատակիցներ դիմեցին «Իզվեստիա»-յին՝ մեղադրելով Կատուսևին և Դոլգիխին իրականության խեղաթյուրման մեջ, որը հանցագործ կրքեր բորբոքեց: Այդ օրերին էր՝ Միխայիլ Դուդինը գրեց.

Опять над Араратом в небе рваном
В один поток смещая времена,
Из темных туч мелькает ятаганом
Холодная и мокрая луна.

Не в первый раз ты терпишь неудачу,
Не в первый раз тебя гнетет печаль,
И я с тобой об этом вместе плачу,
Твоей судьбе заглядывая в даль.

Где все опять на прошлое похоже,
И эта ночь о будущем скорбит,
И возникает, как мороз по коже,
Ошеломленный кровью Сумгаит.

Нам души жжет любви печаль земная
Той памяти извечно молодой,
А жизнь летит, все на пути сминая,
И с нашей не считается бедой.

А мы еще в душе лелеем сад свой
И спорим с обнаженную тоской,
А мы еще надеемся на братство
И откровенье совести людской.

Михаил Дудин. Март 1988 г.

---

Վորներս, 400.000 միտինգավորների անունից կտրուկ բողոքում ենք «Ամպեր լեռներում» («Ավրորա») հոդվածի հեղինակ Ալեքսանդր Վասիլևսկու դեմ սանձարձակած ոստիկանական սպառնալիքների և հետապնդումների առթիվ, որովհետև նա, ի դիեճուկս իրականությունը աղավաղող ղեկավար չար կամքին, ազնվություն և համարձակություն ունեցավ ասելու ճշմարտությունը:
Միտինգավորների անունից՝ Ռաֆայել Ղազարյան, Վազգեն Մանուկյան, Լևոն Տեր-Պետրոսյան և ուրիշներ:
Յետ հասցե. Երևան-38, Յալաբյան 11, բն. 28, Ղազարյան Ռ.

* * *

Սակայն առողջ գլասնոստի այդ նվազ կարկաչը երկար չտևեց. զրպարտանքի ու խեղաթյուրման պղտոր «իններորդ ալիքը» խլացրեց այն երկար ժամանակով:

«Կոմսոմոլսկայա պրավդա»-ն (03.04.88 թ.) հիշեցնում է Ստեփանակերտի գործադուլավորներին՝ իրենց հետ համագործակցող ձեռնարկությունների հանդեպ ունեցած պատասխանատվության մասին: «Մոսկովսկիե նովոստի»-ն (03.04.88 թ.) տրտնջում է «չար ձայների» կողմից իրավիճակը շահարկելու առթիվ, «Իզվեստիա»-ն (01.04.88 թ.) տպագրում է հարցազրույց մետաքսի գործարանի պարտկոմ Ռոբերտ Քոչարյանի և դերասանուհի Ժաննա Գալստյանի հետ. առաջինը ամաչում է իր և ստեփանակերտցիների համար, որոնք գործադուլով խանգարում են երկրի ղեկավարներին ծառացած խնդիրները լուծելու, Ժաննան ավելի շատ բողոքում է երկրի ղեկավարությունից, թեև համաձայն է, որ տևական գործադուլը վնասում է. «եկեք աշխատենք», – դիմում է նա համաքաղաքացիներին: "Закон о границах и границы закона"[1] խորագրի տակ հետաքրքիր հարցազրույց է տպագրում «Նովոյե վրեմյա» ամսագիրը (01.04.88 թ., N 14): Նախ զրուցակիցներից մեկը (Մուկսինովը) հիշեցնում է թղթակցին, որ հանրապետությունների միջև տարածքների խաղաղ փոխանակման նախադեպերը բազմաթիվ են, կա անգամ Իրանի հետ փոխանակման օրինակ: Այնուհետև զրուցակիցները համոզմունք են հայտնում, որ մեզ մոտ չեն հաղթահարվել ֆեդերացիայի մասին ոսկրացած պատկերացումները, մինչդեռ այն մեծ հնարավորություններ է պարունակում, մասնավորապես ԼՂԻՄ-ի խնդրի լուծման առնչությամբ: Փոխհանդուրժողականության կոչ են անում երկու ժողովուրդներին: Զրուցակիցները համեստորեն շրջանցում են Սումգայիթը, քանզի պարզ է, որ վերջինս հռետորական է դարձնում փոխզիջման կոչը:

Այստեղ տեղին է հիշատակել այդ հարցազրույցին ի պատասխան Վլադիմիր Նազարյանի ուղարկած "Вокруг Нагорного Карабаха, закон и национальная справедливость: поиск

---

1 «Սահմանների մասին օրենքը և օրենքի սահմանները»

альтернативы"[1] նամակը: Ու թեև հետագա տարիների նրա վարքը դժվար է անխոցելի համարել, սակայն հոդվածը, հույզերի իսպառ բացառմամբ, սահմանադրության և պատմական ոչ հեռու փաստերի վրա հիմնված իրավաբանական կուռ տրամաբանության դասական նմուշ է՝ ուսումնական ձեռնարկում տեղ գրավելու արժանի:

Բանաստեղծ Եվտուշենկոն, բարի մղումով տոգորված, փորձեց զղջման արցունքներ կորզել՝ գովերգելով Խուրաման խանումի լաչակը... Հայրենակիցներիս ռեակցիան չարդարացված լուրջ էր: Չմեղմացրեց անգամ այն հանգամանքը, որ ինչպես ոտանավորը, այնպես էլ նախորդ հարցազրույցը լույս էին տեսել ապրիլի 1-ին: Ապրիլի 4-ին «Պրավդա»-յում «Սադրիչներ» խորագրի տակ փայլեց մեր «անխոնջ բարեկամ» Օվչարենկոն: Այս անգամ «չար ծայների» հետ մեկտեղ «իրենցը ստացան» նաև Հայրիկյանը և Իգոր Մուրադյանը:

Ապրիլի 5-ին Սիլվա Կապուտիկյանը բաց նամակով դիմեց մշակույթի, գիտության և մամուլի ռուս ազնիվ գործիչներին (Ս. Ս. Ավերինցև, Վ. Վ. Իվանով, Վ. Ա. Կավերին, Մ. Ա. Ուլյանով):

Ապրիլի 9-ին փակվեց «Կաուչուկ-1»-ի հին արտադրությունը: Ապրիլի 10-ի «Սովետական Հայաստանը» կոչ է անում արժանավայել դիմավորել XIX համամիութենական կուսակցական կոնֆերանսը: Հայ կինեմատոգրաֆիստները հրաժարվում են մասնակցել Բաքվում կայանալիք կինոփառատոնին: Ապրիլի 30-ին Ղարաբաղում ընդունեցին հայկական հեռուստածրագիրը:

Միության Լուսավորության Նախարարության օրգան "Народное просвещение"[2] մայիսյան համարում հայտարարվեց, որ Սումգայիթի և Աղդամի շրջանները հաղթել են միութենական սոց. մրցումը և ստանում են փոխանցիկ կարմիր դրոշները «երիտասարդության գաղափարա-քաղաքական և բարոյական դաստիարակության գործում փայլուն արդյունքների հասնելու համար»... Դե գնա ու մի ասա...

«Ղարաբաղ» կոմիտեն այդ կապակցությամբ հայտարարեց, որ մեր ԶԼՄ-ների գործունեությունը հանգեցրել է նրան, որ մեր քաղաքացիների նորանոր զանգվածներ ստիպված են լսել «չար

---

1 «Լեռնային Ղարաբաղի շուրջ, օրենքը և ազգային արդարությունը. այլընտրանքի որոնում»

2 «Ժողովրդական լուսավորություն»

ծայներ», որոնք զուսպ և ճշմարիտ տեղեկություններ են հաղորդում դեպքերի ծավալման մասին, ուստի փոխանցիկ կարմիր դրոշը քաղաքացիներին դեպի ինֆորմացիայի ճշմարիտ աղբյուր մղելու համար պետք է հանձնել ՁԼՄ-ներին:

Այլևս ոչ ոք չէր վանկարկում «Լենին, պարտիա, Գորբաչով» կարգախոսը: Մարում էին և Ղարաբաղի խնդրի շուտափույթ (եթե չասենք՝ ընդհանրապես) լուծման հույսերը: Յիշում եմ. հունիսի սկզբի միտինգներից մեկում խոստովանեցի, որ այլևս չգիտեմ՝ ով է Գորբաչովը և ով՝ Լիգաչովը: Կարելի է փոխատեղել՝ գումարը չի փոխվի: Ապրիլի վերջին «փոխատեղում» տեղի ունեցավ նաև շարժման առաջնորդ խմբերի միջև: Յերթական անգամ, երբ հավաքվել էինք Վազգեն Մանուկյանի տանը, Վազգենի կինը՝ Վարդուհին, և աները՝ պրոֆ. Ռաֆայել Իշխանյանը, խիստ և ուլտիմատիվ տոնով հայտարարեցին Իգորին, որ նա իր հայերենի աղքատիկ բառով չի կարող հավակնել հայ ժողովրդի շարժման առաջնորդի դերին: Չգիտեմ՝ ինչպես մյուս ներկաների, սակայն ինձ համար այդ դեմարշը անսպասելի էր ու ծանր, թեև ինչ-որ տեղ հասկանալի: Իգորը լսեց դա լուռ, մեղավորի թեթև ժպիտով ու մեր հավաքներին այլևս չերևաց: Յաջորդ միտինգում նրա կողմնակիցները փորձ արեցին գրավել հարթակը, սակայն ետ մղվեցին գերակշիռ «ուժերի» կողմից: Տխրությամբ նշեցի, թե ինչ հեշտությամբ մեր ժողովուրդը համակերպվեց երեկվա կուռքի տապալման հետ, թեև նա իրեն չէր հասցրել արատավորել: Էլ ավելի հարգեցի Իգորին. նա կարողացավ անձնականից վեր կանգնել, մնաց շարժմանը հավատարիմ ու իր մեջ հետագայում բոլորիս հետ համագործակցությունը շարունակելու ուժ գտավ:

Ապրիլի 30-ին ՅՍՍՅ Մինիստրների Խորհրդի հանձնարարությամբ Սումգայիթի փախստականների համար Երևանից Ստեփանակերտ է ուղարկվում անկողնային պիտույքներով բեռնված ավտոշարասյուն: Այն կանգնեցվում է Կիրովաբադում Ադրբեջանի ՆԳՆ աշխատակիցների կողմից և ստորացուցիչ ստուգումից հետո, 14 ժամից ուղարկվում ետ՝ Երևան:

Ապրիլի վերջին օրերն էին: Մի երեկո աշտարակամերձ գիտավանի գերատեսչական իմ բնակարանում մեքենայով իրեն տեղ հասցրած ընկերոջ հետ հայտնվեց համակրելի արտաքինով ու բարեկիրթ պահվածքով քառասունի մոտ տղամարդ: Ներկայացավ՝ մատենադարանի գիտաշխատող, դոկտոր Լևոն Տեր-

Պետրոսյան: Եկել է «Պրավդա»-յին հղած բաց նամակս բրոշյուրելու, բազմացնելու և Միությունով տարածելու համաձայնությունս ստանալու պատրվակով: Ասացի, որ միայն շնորհակալ կլինեմ, քանզի ինքս այդ հնարավորությունը չունեմ: Զրուցեցինք, լսեցինք Հայրիկ Մուրադյանի սան 7 տարեկան Վազգենիկիս կատարմամբ ժողովրդական երգերը և իրարից գոհ բաժանվեցինք: Ավելի ուշ Սարգիս Մուրադյանը պատմեց, որ նմանատիպ այցելությամբ Լևոնը արժանացրել է նաև իրեն ու խնդրել բարեխոսել նրան լիդերների խմբի մեջ ներգրավելու համար: Եվս մի քանի օր անց (կարծեմ՝ ապրիլի վերջերին) զանգահարեց Վազգեն Մանուկյանը. խնդրեց հանդիպել իր մոտ: Պարզվեց՝ պայմանավորվել են կոմիտեի նոր կազմ հավաքագրելու, խնդրում էր նրա կազմի մեջ ընդգրկվելու իմ համաձայնությունը: Ասացի՝ դրա կարիքը չկա, առանց այն էլ իրենց հետ եմ և շարժման մեջ, ավելի լավ է երիտասարդներ ընդգրկի: Փորձեց հիմնավորել, որ ես նրանց միջի ամենաերիտասարդն եմ: Առանց մեծ ջանքերի համոզեց: Տարիներ անց խոստովանեց. ինձ ընդգրկեց, որպեսզի տպավորություն չստեղծվի, որ կոմիտեն հիմնականում ներկայացնում են իրենց ոլորտում անհաջողակները կամ լուրջ հաջողությունների չհասած անձինք: Իգորը նրա կազմում չկար: Հետո հարցրեց՝ ինչ կարծիքի եմ ոմն Լևոն Տեր-Պետրոսյանի մասին: Պատմեցի իր այցելության մասին. հաճելի տպավորություն է թողել: Ասաց՝ իրեն խորհուրդ են տալիս ընդգրկել նրան: Ո՞վ՝ չհարցրի, ու այլևս երբեք դրան չանդրադարձանք, քանզի շուտով Լևոնը դարձավ հիմնական գործիչներից մեկը:

Ինչ վերաբերում է նորաստեղծ կոմիտեի մյուս անդամներին, ապա այսօր դժվարանում եմ հստակեցնել, թե կոմիտեի մյուս անդամներից ով երբ դարձավ շարժման ակտիվ մասնակից:

## ՓՈՒԼ II. ՂԱՐԱԲԱՂ ԿՈՄԻՏԵ:

### *Ժողովրդավարության ծիլերը Սովետական կայսրությունում*

Պարզ էր դառնում մի բան. Արևելյան Եվրոպայի զգալի մասը սպրդել էր սովետների երկաթյա կրնկի տակից: Սակայն, չնայած Գորբաչովի հռչակած «գլասնոստին», վստահություն չկար, որ «գուլագ»-ները և «փսիխուշկա»-ները հեռացան անդարձ: Թերևս դրանով կարելի է բացատրել այն օրերին շրջող չարագուշակ քառատողը.

Товарищ, верь, пройдет она
В стране объявленная гласность,
И вот тогда госбезопасность
Припомнит наши имена.

*Մայիս:* Միտինգներ, տարբեր մակարդակներին ուղղված դիմում-բողոքներ, բանակցություններ հանրապետության ղեկավարների հետ: Մայիսի 6-ի կենտրոնական թերթերից մեկը վստահեցրեց, որ Ստեփանակերտում վերականգնվել է լիարժեք աշխատանքային օրը: Մայիսի 13-ին Ադրբեջանի Գերագույն դատարանը սկսեց սումգայիթյան դեպքերի վերաբերյալ դատական փարսը, որի հետ կարող են համեմատվել մեր հանրապետությունում այս օրերին ընթացող դատական շոուները: Նույն օրը ՍՄԿԿ կենտկոմում ԶԼՄ-ների ղեկավարները մեղա էին գալիս երիտասարդների ուղեղների լվացման գործում իրենց թերացումների առթիվ: Մայիսի 27-ին ՀԽՍՀ կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնից «առողջական վիճակի (վատ, թե լավ՝ չնշվեց) պատճառով» ազատվեց Կարեն Սերոբի Դեմիրճյանը և նշանակվեց Սուրեն Գուրգենի Հարությունյանը: 19-րդ պարտկոնֆերանսի առթիվ հրապարակած թեզիսներում կենտկոմը կոչ է անում ազգային բոլոր պրոբլեմները լուծել «վերակառուցման հունով» (!?): Մայիսի 29-ին Ս. Հարությունյանը Իջևանում և Ղազախում հանդիպում է Ադրբեջանի առաջին քարտուղար Ա. Վեզիրովի հետ: «Վերակառուցման դրամա» իր էսսեում Վարդգես Պետրոսյանը կանխատեսում է վտանգներ,

որոնցով, ինչպես ամեն մի հեղափոխություն, հղի է վերակառուցումը, քանզի ոչ միայն հանում, այլև ընդդեմ է ինչ-որ բանի:
Լևոնը, շնորհիվ իր խոսակցական բարձր կուլտուրայի և հաճելի արտաքինի, շուտով դառնում է կոմիտեի հիմնական խոսափողը, ինչին մեծ չափով նպաստում է Վազգեն Մանուկյանը: Վերջինս դժվարությամբ էր տրամադրվում ելույթի, գերադասում էր կոորդինատորի դերը: Հունիսի 1-ին Լևոնը էկոլոգիայի և մշակույթի խորհրդի լենինգրադյան մասնաճյուղում զեկույց է կարդում Արցախում տիրող իրավիճակի մասին, որից հետո խորհրդի անդամները դիմում են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին և XIX պարտկոնֆերանսին ի պաշտպանություն հայ ժողովրդի արդար պահանջի:
Սովորաբար քննարկումները ընթանում էին գիշերով՝ բուռն վեճերի մեջ: Չէի ասի, որ Լևոնը այդ շրջանում առանձնապես ակտիվ էր վեճերում: Գուցե այդ տպավորությունը հետևանք էր նրա զուսպ և հավասարակշիռ պահվածքի. նա, ինչպես և ես, անընդունակ էինք «ընթացքից» ընդհատել խոսողին սեփական կարծիքը հրամցնելու նպատակով: Ուստի ձայնս խլանում էր ընդհանուր ժխորի մեջ՝ առաջացնելով մեջս անբավարարվածության ու անզորության զգացում: Առավոտյան կողմը մշակվում էր միտինգի ծրագիրը, բաշխվում էին ելույթները: Ելույթ էինք ունենում բոլորս. ոմանք՝ հաճախ, մյուսները՝ դեպքից դեպք: Հաճախակի ելույթ ունեցողներն էին Լևոնը, Աշոտը, ես, «քչախոսները»՝ Բաբկենը, Վազգենը: Այսօր դժվարանում եմ ելույթների թեմատիկ հստակ տարաբաժանումը տալ: Հուսով եմ՝ չեմ սխալվի, եթե ասեմ, որ Վազգենը հիմնականում իր վրա էր վերցրել գաղափարական և ռազմավարական հանգուցային խնդիրները[1], Լևոնը հնչեցնում էր կոմիտեի հերթական որոշումները, դիմումները, բողոքները: Կյանքում ընդգծված կիրթ ու քաղաքավարի, ոչ տպագիր խոսքից շատ հեռու Աշոտը կերպարանափոխվում էր հարթակում ղեկավարների անձնավորված դաժան քննադատությամբ, այնպես, որ երբեմն խնդրում էինք մեղմանալ, սակայն մեր հորդորները ապարդյուն էին: Ես ելույթներիս թեման հաճախ ինքս էի որոշում... Աշխատում էի պահպանել ժողովրդի ոգին, ուստի չէի խուսափում կատակից, որի

1 Վերջերս Վազգենը հրապարակել է իր ելույթների և հոդվածների ժողովածու:

համար նկատողություն ստացա Ալեքսանից: Ինձ դուր էր գալիս Դավիթի ոճը՝ սուր, անսպասելի համեմատություններով ու գտածոներով: Իշխանավորներին ուղղված սուր քննադատություններով առանձնանում էր նաև բուռն բնավորության տեր Համբարձում Գալստյանը: «Կռուտոյ» Վանոն իր վրա էր վերցնում իշխանություններին (տեղական և Մոսկվայի) ուղղված կտրուկ դեմարշները այն ոճով, որը իր զարգացման գագաթնակետին հասավ «Արշալույսգեյթ»-ում: Միտինգները վարում էինք հերթով, ես՝ շատ հազվագյուտ: Հետագայում քննարկումները էլ ավելի տաք և բուռն բնույթ ստացան, երբ կոմիտեն ընդլայնվեց ապագա պահեստային կոմիտեի անդամներով և առավել ակտիվ մասնակիցներով: Կոմիտեի գործունեության մշտական մասնակիցներ դարձան Արշակ Սադոյանը, Հրանտ Բագրատյանը, Ալբերտ Բաղդասարյանը և ուրիշներ: Վանոյի «կտրուկ» ջանքերով զբաղեցրել էինք «Տեխնիկայի տունը», որտեղ ստեղծվեցին նաև օժանդակ ծառայություններ: Ավելի ուշ նիստերը հաճախ վարում էր Լևոնը, որին ինչ-որ չափով հաջողվում էր տնօրինել մեր գերակտիվությունը: Ինչպես և ապագայում, այն ժամանակ էլ իր տարերքի և ամպլուայի մեջ էր անկոտրում, անհաղթահարելի, անզիջում Արշակը: Ուստի և մի գեղեցիկ օր, հավաքվելով հերթական նիստի, պատին կախած թերթիկի վրա կարդացինք. «Արշակի դեմ ազատագրական պայքարի պատրաստ կամավորներին խնդրում ենք ցուցակագրվել»: Հիշում եմ՝ մյուսների համեմատությամբ ավելի համեստ էր ու անհամարձակ Հրանտ Բագրատյանը: Ու քանի որ մեր նիստերում ռեգլամենտն իրագործվում էր տարերայնորեն, ապա նրա կոնցեպտուալ ելույթի փորձը մնաց անավարտ: Առավել ակտիվ էր նաև Ալբերտ Բաղդասարյանը: Ծառայություններից մեկը մարմնավորում էր հարևան փոքրիկ սենյակում ծվարած սուսիկ-փուսիկ Ալիկ Արզումանյանը: Նիստերին չէր երևում, նրա պարտականությունն էր պատի թերթի նմանակությամբ ՁԼՄ-ներից կտրածոների մատակարարումը: Անզոր եմ արտահայտել իմ զարմանքն ու ցնցումը, երբ ոչ հեռու ապագայում արդեն նախագահ Լևոնը երկու Ամերիկաներում լիազոր ներկայացուցիչ նշանակեց... Արզումանյանին, որը, համաձայն սփյուռքի հայրենակիցների, «փայլեց» ինչպես ներկայացուցչական ժողովներում իր «օրինակելի» էթիկետով, այնպես էլ համայնքի նկատմամբ ոչ նրբանկատ, եթե չասեմ՝ ամբարտավան վերաբերմունքով: Սակայն,

չեմ կասկածում, որ այդ տարիների ընթացքում որոշակի հմտություն և կարևոր կապեր այնուամենայնիվ ձեռք է բերել:

Բարոյական նորմերի նկատմամբ ընդգծված նրբանկատ Աշոտ Մանուչարյանը իր նախաձեռնությամբ ստեղծել ու ղեկավարել էր էթիկայի հանձնաժողով, որը կոչված էր հսկել կոմիտեականների վարքը: Մի օր էլ «կպել» էր Վազգեն Մանուկյանից՝ տեսնելով նրան համեմատաբար թանկ սիգարետ ծխելիս: Քանի որ երբեք, ինչպես և Աշոտը, չեմ ծխել, չեմ հիշում դրա անունը: Վազգենը սառնասրտորեն հետ մղեց Աշոտի գրոհը. «Երբ դու «քյասիբ» ուսանող էիր, ես արդեն դոցենտ էի. ծխել եմ ու կծխեմ իմ ուզած սիգարետները»:

Արխիվումս պահպանվել է 88-ի ամառվա այդ օրերի ելույթներից մեկի սևագրությունը: Այն հասցեագրված է ռուս բարեկամին (հավանաբար՝ ի պատասխան ինչ-որ նամակի), որում բաց տեքստով խոստովանում եմ Գորբաչովից վերջնական հիասթափության մասին: Բերեմ մի երկու պարբերություն.

<u>Обрашение русскому другу!</u>

Мы уже не наивны, как месяц-два назад. Прав Лигачев — нет разногласий в советском руководстве. Оно единым фронтом выступает против любой попытки выйти за рамки дозволенного. Карабахское движение — яркий пример. Я не верю, что Сумгаит — самовольная акция Багирова. Не верю, что нынешний судебный фарс Азербайджан взял на себя по своей воле. Не верю уверениям Лигачева, будто бюрократическая верхушка в центральном правительстве и на местах, душившая все прогрессивное и разумное, вдруг, по призыву Горбачева стала рьяной поборницей перестройки. Не верю, что противники перестройки, якобы, запретили Горбачеву направить соболезнование пострадавшим в Сумгаите армянам (!?). Если Горбачев так слаб, то непонятно почему он до сих пор у власти... *և այլն...*[1]

Հունիսի 13-ին թատերական հրապարակում ընթացող հերթական հանրահավաքում ելույթ ունեցավ կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը և հրապարակեց Հայաստանի՝ 2 օրից կայանալիք Գխ նստաշրջանի որոշումների նա-

---

1 Ուղերձ ռուս ընկերոջը: Մենք արդեն այնքան էլ միամիտ չենք, որքան մեկ-երկու ամիս առաջ: Լիգաչովն իրավացի է՝ սովետական ղեկավարության մեջ տարաձայնություններ չկան: Այն միասնական ճակատով

խագիծը: Քանի որ իմ կողմից ոչ մի գրառում այդ օրերին չի արվել, ներքոշարադրվածը քաղել եմ «Կանչ» ինֆորմացիոն թերթից: Ահավասիկ նախագծի համառոտ թարգմանությունը.

1. Բազմակողմանի ուսումնասիրելով ԼՂԻՄ-ի Մարզային Խորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի նստաշրջանի որոշումը և հաշվի առնելով ԼՂԻՄ-ում ստեղծված իրավիճակը և ԼՂԻՄ-ի ու Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնության կամքը՝ ՀԽՍՀ Գերագույն Խորհուրդը, ղեկավարվելով ազգերի ինքնորոշման իրավունքին վերաբերող ԽՍՀՄ սահմանադրության 70-րդ հոդվածով, որոշում է իր համաձայնությունը տալ ՀԽՍՀ-ի հետ ԼՂԻՄ-ի վերամիավորմանը:

2. Երկրորդ կետով ՀԽՍՀ ԳԽ-ն դիմում է Ադրբեջանի ԳԽ-ին հայցելով այդ միացման համաձայնությունը և հույս է հայտնում, որ դա չի խախտի ավանդական բարիդրացիական հարաբերությունները մեր ժողովուրդների միջև...

Չնկատելով նախագծում թաքնված վտանգը՝ հանրահավաքի բազմահազար մասնակիցներն ընդունեցին այն բուռն ծափահարություններով: Մինչդեռ Մոսկվայի խարդավանքն ակնհայտ էր. Հայաստանի ԳԽ-ն դիմում է Ադրբեջանի ԳԽ-ին ԼՂԻՄ-ի խնդրի դրական լուծման միջնորդությամբ: Վերջինս, անշուշտ, մերժում է: Մինչդեռ, օգտվելով ազգերի ինքնորոշման իրավունքից, ԼՂԻՄ-ը Ադրբեջանին դիմելու անհրաժեշտությունը չուներ (2 օր անց այդ մասին նստաշրջանում իր ելույթում հիշեցրեց պատգամավոր Հովհաննես Չեքիջյանը): Եվ մի ճչացող բացթողում նախագծի մեջ. սումգայիթյան գազանությունները դատապարտող ոչ մի խոսք: Ուստի երբ Ս. Հարությունյանը տեքստն ընթեր-

---

հանդես է գալիս թույլատրելիի սահմաններից դուրս գալու ցանկացած փորձի դեմ: Ղարաբաղյան շարժումը՝ դրա վառ օրինակն է: Չեմ հավատում, որ Սումգայիթը Բաղիրովի ինքնակամ ակցիան է: Չեմ հավատում, որ արդի դատական խեղկատակությունն Ադրբեջանն իր կամքով է վերցրել իր վրա: Չեմ հավատում Լիգաչովի հավաստիացումներին, թե կենտրոնական և տեղական կառավարման բյուրոկրատական վերնախավը, որը խեղդում էր ցանկացած առաջադիմություն և բանականություն, Գորբաչովի կոչով դարձավ վերակառուցման անզիջում ջատագով: Չեմ հավատում, որ վերակառուցման հակառակորդներն իբր արգելել են Գորբաչովին ցավակցության կոչ հղել Սումգայիթում տուժած հայերին: Եթե Գորբաչովն այդքան թույլ է, ապա անհասկանալի է, թե ինչպես է նա մինչ այժմ իշխում... *և այլն...*

ցելուց հետո հարցրեց ինձ ու Լևոնին՝ բավարարվա՞ծ ենք արդյոք այդ նախագծով, մենք, բնական է, տվեցինք բացասական պատասխան՝ բերելով վերը նշված նկատառումները: Հարությունյանն ինձ առաջարկեց գալ կենտկոմ՝ տեքստը վերջնականապես համաձայնեցնելու համար: Ինչպես նշված է «Կանչ»-ում, ինձ այնտեղ տարավ քաղկոմի քարտուղար Լ. Սահակյանը: Անձնական զրույցում հանգեցինք «Ղարաբաղ» կոմիտեի առաջարկած շարադրանքին, որում, ի տարբերություն նախորդ նախագծի, ի լրումն առաջին կետի ավելացված էր մի կետ ևս. խնդրել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին ուսումնասիրել և դրականապես լուծել Հայաստանի հետ ԼՂԻՄ-ի վերամիավորվելու խնդիրը: Բացի դրանից (ինչին ես կարևորագույն նշանակություն էի տալիս) Ս. Հարությունյանը խոստացավ ընդունել սումգայիթյան չարագործությունները դատապարտող որոշում: Գխ-ն նաև ցավակցություն կհայտնի տուժածների ընտանիքներին:

Հաջորդ օրը՝ 14-ին (դա լավ եմ հիշում), ինձ հրավիրեց գլխավոր դատախազ Ս. Հովսեփյանը (Օսիպովը) ու խնդրեց չկուտակվել նիստերի (Շահումյանի անվան) շենքի մոտ, այլապես Մոսկվան անցանկալի որոշման դեպքում կհայտարարի, որ այն ընդունվել է ամբոխի ճնշման ներքո: Խուսափելով կառավարության հետ առճակատումից՝ խոստացա համոզել գործընկերներիս և ժողովրդին: Նույն օրը միտինգում դիմեցի ժողովրդին այդ խնդրանքով, ավելացնելով, որ դավաճան կլինի նա, ով մոտենա Գխ նիստերի շենքին:

Սեսիան սկսվեց հունիսի 15-ին ժամը 10-ին: Թատերական հրապարակում հավաքվածներս լսում էինք այն ռադիոյով: Մեկը մյուսին հաջորդում էին պատգամավորների միալար, դժգույն ելույթները. ոչ մի խոսք Սումգայիթի և Արցախին վերաբերող սուր հարցերի մասին: Այն պատգամավորներին, որոնց խնդրել էի այդ հարցերը հարուցել, խոսք չէին տալիս: Եվ միայն Ալեքսան Մատվեիչ Կիրակոսյանը, անտեսելով նրան արգելելու՝ պրեզիդիումի ջանքերը, ելույթ ունեցավ այդ հարցերի վերաբերյալ և ավելացրեց 1915 թվի եղեռնի թեման, հայության պահանջատիրությունն Արևմտյան Հայաստանի նկատմամբ, ինչպես նաև սովետական մամուլի կողմից ղարաբաղյան խնդրի խեղաթյուրումը: Սումգայիթի հարցն այնպես էլ չմտցվեց օրակարգ, ու երբ եզրափակիչ խոսք վերցրեց Ս. Հարությունյանը, պարզ դարձավ, որ մեզ խաբել են: Դժվարանում եմ նկարագրել

այն, ինչ կատարվեց ինձ հետ: Նախ տեղնուտեղը դարձա քահանա Գարոն, այն տարբերությամբ, որ նա համոզեց գնալ, ես՝ չգնալ: Սակայն շատ ավելի սարսափելի միտք. սումգայիթյան դեպքերից հետո դա ԳԽ առաջին սեսիան էր, ու եթե այն չի բողոքում այդ գազանությունների դեմ, իսկ ԳԽ-ն «ժողովրդի կամքի արտահայտիչն է», ուրեմն հայ ժողովուրդը բնական է համարում իր անմեղ հայրենակիցների սպանդը, կանանց բռնաբարությունը, երեխաների նկատմամբ դաժանությունը... Այսինքն՝ խայտառակություն աշխարհով մեկ: Եվ վերջապես, մի՞թե պատգամավորներից ոչ մեկը չգիտակցեց կատարվածը ու չըմբոստացավ ամենակտրուկ կերպով: Տղաներն այն կարծիքին էին, որ այլևս ուշ է ինչ որ բան փոխելը, իսկ քունքերումս բաբախում էր. եթե չփոխեմ՝ ինքնասպանություն:

Անկեղծ ասած անհարմար եմ զգում շարունակել առաջին դեմքով. ինչպես էլ շարադրեմ՝ անհամեստության պահը կմնա, ուստի խոսքը տամ «Կանչ»-ին, ուր ինձ աննատչելի մանրամասնությամբ նկարագրված են հետագա դեպքերը: Նորից կբերեմ համառոտ թարգմանությունը.

«Մեզ խաբեցին», – բացականչեց Ռ. Ղազարյանը, իսկույն ներ նա, Լևոն Տեր-Պետրոսյանը, Խաչիկ Ստամբոլցյանն իրենց գցեցին տաքսի և սլացան դեպի ԳԽ նիստերի շենքը: Ռ. Ղազարյանը սկսեց տենդորեն փորփրել գրպանը, սակայն տաքսու վարորդը, կանխելով նրա մտադրությունը, ասաց, որ վճարելու կարիքը չկա, «շտապեցե՛ք», – ավելացրեց նա: Ղարաբաղյան շարժման 3 լիդերները հայտնվեցին դեմ առ դեմ շենքը շրջապատած զինվորների և ոստիկանության հետ: Ռ. Ղազարյանը բարձրաստիճան սպային ներկայացրեց Գիտությունների Ակադեմիայի թղթակից անդամության տոմսը և ասաց, որ Ս. Հարությունյանը տեղյակ է իր ներկայանալու մասին, նրան ներս թողեցին, Լևոն Տեր-Պետրոսյանին և Խաչիկ Ստամբոլցյանին մուտքն արգելեցին:

Նույն ժամանակ, գնահատելով իրավիճակը, Վազգեն Մանուկյանը և Վանո Սիրադեղյանը թատերական հրապարակում հավաքված ժողովրդին շտապ ուղեկցեցին դեպի նիստերի շենքը, ուր արդեն քաղաքի տարբեր ծայրերից արագ ներհոսում էր ժողովուրդը, որը հասկացել էր պահի լարվածությունը՝ հետևելով նստաշրջանի ընթացքին հեռուստատեսությամբ:

ԳԽ-ի շենքում ընդմիջման դուրս եկած պատգամավորները

ճանաչեցին Ռ. Ղազարյանին: Տեսնելով անվրդով զրուցող և ծխող պատգամավորներին՝ Ռ. Ղազարյանը հուզված դիմեց նրանց. «ինչպե՞ս պատահեց, որ որոշման մեջ ոչ մի բառ չմտավ Սումգայիթի մասին» ու կորցնելով ինքնտիրապետումը՝ խիստ մեղադրանքներ շպրտեց նրանց երեսին. «Ստրուկնե՛ր, տիկնիկնե՛ր, ստատիստնե՛ր... Չէ՞ որ դուք ողջ աշխարհին ցուցադրեցիք, թե ինչ ոչնչություն ենք մենք՝ նորմալ ենք համարում, երբ մեր աչքի առաջ բռնաբարում են ու տանջամահ անում մեր կանանց ու երեխաներին», այլևս չկարողանալով իրեն զսպել՝ նա, շարունակելով խոսել, հեկեկաց, որից հետո նրա մոտ սկսվեց սրտի նոպա, և նա հայտնվեց նախաինֆարկտային վիճակում: Նրան մոտեցրին «Շտապ օգնության» մեքենային և սրսկեցին. նա արդեն հույս չուներ, որ ԳԽ-ի որոշումը հնարավոր է փոխել: Եվ այստեղ նա հանկարծ մեքենայի պատուհանից նկատեց, որ փողոցը դարձել է մարդկային ծով, անգամ մերձակա շենքերի տանիքներն էին լեփ-լեցուն, իսկ աստիճանները, շենքը շրջապատված էին վահաններով ու մահակներով զինված զինվորներով: Նա իրեն դուրս գցեց մեքենայից ու շարժվեց դեպի ժողովուրդը՝ ուշադրություն չդարձնելով բժիշկների հորդորներին: Շպրտելով կողքին հայտնված ռուս գեներալին. «Ձեր մոսկովյան սցենարը չի անցնի»՝ նա սկսեց երբալով իջնել աստիճաններից: Ղազարյանը չգիտակցեց, որ իր գզգզված մազերը, կարմրած դեմքը և արձակված վերնաշապիկը կարող են ժողովրդի կողմից սխալ ընկալվել (որ իբր նրա նկատմամբ բռնություն է կիրառվել) և տագնապով հասկացավ դա, երբ ժողովուրդը փորձեց ճեղքել զինվորների շարքը: Բարեբախտաբար այդ պահին նրա կողքին հայտնվեց Խաչիկ Ստամբուլցյանը: Ղազարյանը նրանից շտապ խոսափող պահանջեց, որը հայտնվեց նրա ձեռքերում զարմանալի արագությամբ: Ղազարյանը գոռաց, որ ժողովրդի առաջին շարքերը նստեն գետնին: Նրա ձայնը խզվեց, ուստի հրամանը կրկնեց Խաչիկ Ստամբուլցյանը: Ղազարյանը հանգստացավ՝ հասկանալով, որ ընդհարման վտանգը վերացված է, դրանից հետո նա ուշաթափվեց և ինչ կատարվեց հետո՝ չի հիշում: Մի տեղում, սակայն, մի փոքր ընդհարում տեղի ունեցավ, և միտինգավորներին հաջողվեց ճեղքել զինվորների շղթան: Ակտիվներից էին նաև Ռ. Ղազարյանի՝ իր անձրևանոցը բանեցնող կինը՝ Գրիգելդան, իր եղբոր հետ:

Լևոն Տեր-Պետրոսյանը կանչեց իր եղբորը՝ սրտաբան Կամո Տեր-Պետրոսյանին, որն իր «Շտապ օգնության» մեքենայով Ղազարյանին տարավ Սարգիս Մուրադյանի քրոջ բնակարան»:

Ինչպես ավելի ուշ պարզեցի, գրգռված պատգամավորները, վերադառնալով ընդմիջումից, պահանջեցին անդրադառնալ որոշման քննարկմանը, իսկ Ս. Հարությունյանը «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին խոստացավ ընդունել մեր առաջարկած որոշումը, որը և ընթերցեցին ժողովրդին Սարգիս Մուրադյանը և Լևոն Տեր-Պետրոսյանը: Ավելացնեմ, որ երբ Կամո Տեր-Պետրոսյանի սրսկած թմրադեղի ազդեցությունն անցավ, աչքերս բացեցի. կողքս նստած էր Գրիգելդան: «Հաղթանակ», – ասաց նա միայն:

Մի երկու օր սիրտս լավ չէր, պառկեցի տանը: Հաջորդ օրը Գրիգելդային զանգահարեց Վիկտոր Համբարձումյանը, տեղեկացավ վիճակիս մասին: Կարճ ժամանակ անց լույս տեսավ Վանո Սիրադեղյանի «Ծանր լույս»-ը: Իմ ակամա «քաջնազարությունը» գնահատելով՝ իր գիրքը նվիրեց «պատգամավորների սարսափ» մակագրությամբ:

Պատմում էին, որ Գորբաչովը սաստիկ զայրացել էր Սումգայիթի հիշատակման համար. իր սցենարը տապալվել էր:

Հունիսի 17-ի «Իզվեստիայում» տպվեց ՀԽՍՀ ԳԽ նստաշրջանի մասին Բաբլումյանի հաղորդագրությունը, որում մասնավորապես նշվեց մասնակիցների կողմից սումգայիթյան ոճրագործությունների դատապարտումը, իսկ հունիսի 19-ի համարում՝ ԼՂԻՄ-ի վերաբերյալ ՀԽՍՀ ԳԽ խնդրանքի մերժման մասին ադրբեջանական ԳԽ նստաշրջանի որոշումը:

«Դիլետանտի համառոտ մտքեր հայկական հեղափոխության մասին» թեզիսներով նորից արձագանքեց մեր խորհրդավոր բարեկամ Վ. Կարամազովը: Բավական ճշգրիտ դասակարգում է մեր շարժումը և տալիս դրա փուլերի դիպուկ բնութագիրը: Շարժման սոցիալ-հակաբյուրոկրատական պայքարի փուլը համարում է եզակի կարևորության առաջին փորձ, որի սոցիալական ասպեկտը համառուսաստանյան նշանակություն ունի: Մարտավարության խորհուրդներ է տալիս, ըստ իս, խելամիտ, որոնցից մի մասը իրագործել ենք տարերայնորեն: Հետաքրքիր է անգամ ռետրոսպեկտիվ տեսակետից, ուստի զետեղում եմ այն Հավելվածում (էջ 291):

* * *

Մի երկու դրվագ կոմիտեի ներքին կյանքից: Կոմիտեի առօրյա աշխատանքը կապված էր որոշակի ծախսերի հետ (թռուցիկներ, հրապարակումներ, շրջանների մասնաճյուղերի հետ կապեր և այլն): Թե ինչպես էին տղաները տակից դուրս գալիս, չեմ հետաքրքրվել, սակայն ֆինանսական սղությունը ակնհայտ էր: Մի օր էլ Համբարձումի անդուլ պրպտող միտքը փայլատակեց... Իսկ դյուրաբորբոք խառնվածքը մղեց դրա իրագործմանը. պետք է մեկնել ծովափ (ինքը այնտեղ ընկերներ ունի) և հայցել ծովափնյա հայերի սպոնսորությունը: Սակայն քանի որ իր ջահելությունը («Եվ ինտելեկտից զուրկ դեմքը»-առիթը բաց չթողեց տղաներից մեկը) հազիվ թե մեսիայի տպավորություն թողնի, ապա իրեն պետք է ուղեկցի ակադեմիկոսը: Ու թեև կանխատեսումս լավատեսական որակելուց շատ էր հեռու, չմերժեցի և 7 տարեկան Վազգենիկիս հետ («Դա էլ կնպաստի», – որոշեց Համբարձումը) միացա նրան: Աղոտ եմ հիշում մեր գիշերօթիկը՝ և ինչպես դա հաջողվեց Համբարձումին (գուցե օժանդակեց առեղծվածային Գիվոն, որի հետ ծանոթացա այնտեղ), համենայն դեպս երեկոյան հայտնվեցինք ծովափնյա մի թեյարանում մի խումբ տեղացի հայերի շրջանակում: Որքան հնարավոր է՝ արժանավոր դիրքերից զրուցեցինք նպատակների և դժվարությունների մասին... պաուզան երկարեց: Այդ պահին նվագեցին լեզգինկա. ինձ թողնելով ապուշ կտրած վիճակում՝ Համբարձումը նետվեց պարողների շրջանը և ցուցադրեց կրակոտ կատարում: Ավա՜ղ, դա էլ չհալեցրեց մեր հայրենակիցների կարծր սրտերը: Վերադարձանք ձեռնունայն: Անչափ գոհ էին Ջրաշխարհի հաճույքները վայելած Վազգենիկը և ծովափի հանգստացողները, որոնց նա հիացրել էր՝ նմանակելով Կարակլաիչի և Ջո Դասենի երգերը և տեքստերը (անշուշտ՝ անիմաստ): Մի ուրիշ անգամ որոշվել էր Վանոյին ուղարկել Սերծբալթիկա՝ կապեր հաստատելու նպատակով: Վազգենը հատկացրել էր երկրում հաստատագրված չափորոշիչներով հասանելիք գործուղման գումարը: Վանոյի արժանապատվությունը մահացու խոցված էր. «Ուրեմն մի անգամ ռեստորան էլ չմտնե՞մ...»: Գիտակցեցինք մեր ընկերոջը սպասող ծանր վիճակը, աղերսեցինք Վազգենի առատաձեռնությունը...

* * *

Յուլիսի 21-ին ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների խորհուրդը որպես ղարաբաղյան բարդ խնդրի միակ հնարավոր լուծում առաջարկում է ԼՂԻՄ-ը անմիջականորեն ենթարկել ԽՍՀՄ-ին: Այդ առաջարկը ևս մերժվում է:

*Յուլիսի 5: Օդանավակայան:* Բիրտ ուժի (ժանդարմային) առաջին դրսևորում «քաջարի գեներալ» Մակաշովի սցենարով՝ որպես գլասնոստի խոսուն ապացույց: Միտինգ էր օպերայի հրապարակում. իմացանք, որ օդանավակայանում հավաքվել են պիկետավորներ, որպեսզի լսեն օդանավակայանի աշխատակիցների գործադուլը շարունակելու նպատակահարմարության մասին ղեկավարության հայտարարությունը, և զորքերը շարժվում են նույն ուղղությամբ: Քաղաքագլուխ Արտաշես Գեղամյանի հետ սլացանք այնտեղ: Սամսոն Ղազարյանը և Սամվել Գևորգյանը արդեն պատշգամբից համոզում էին հավաքվածներին ցրվել ընհարումից խուսափելու համար: Միացա նրանց: Մի լպիրշ երիտասարդ պրովոկատոր ներքևից մեգաֆոնով ձեռ էր առնում մեզ՝ հորդորում հակառակը: «Բանավեճը» շարունակվեց մինչև զինվորների հարձակվելը ներքևում նստած պիկետավորների ու սպասասրահում թռիչքին սպասող ուղևորների վրա: Այդ պահին պատշգամբներում հայտնվեցին օդանավակայանի և քաղաքի ղեկավարներից մի երկուսը: Գազազած պիկետավորները սկսեցին մածունի շշեր ու տպավորիչ քաշի քարեր շպրտել մեզ վրա: Պաշտոնյաներն ակնթարթորեն չքացան, ես, չգիտակցելով իրողությունը, գոռում էի՝ համոզելով ցրվել: Ու եթե կողքս կանգնած իմ ծանոթներից մեկը՝ Գեղամը, չքաշեր ինձ սյան ետևը, գանգս փշրվելու էր քարերի տարափից: Երբ հեռանում էինք օդանավակայանի շենքից, ես, տեղի ունեցածից այլայլված, մի քանի քայլ ետ մնացի Գեղամյանից ու իր ուղեկցից: Ճամփաս կտրեց մթագնած, վայրագ հայացքով սպա, տեսքս բարեկիրթ չէր, ուստի առանց այլևայլության բարձրացրեց բազմաջիղ, կապարապատ, մետրանոց քուղի կտորը գլխավերևս ու եթե այդ պահին առաջինները չգոռային՝ «նա մեզ հետ է», կիջեցներ գլխիս. լավագույն դեպքում կհայտնվեի հիվանդանոցում: Պարզորոշ ափսոսանքով իջեցրեց ձեռքը՝ պարգևելով պղտոր աչքերից հորդող ատելությունը: Համոզված եմ՝ կա՛մ լավ խմած էր, կա՛մ «ծակված»:

Թե ի՞նչ տեղի ունեցավ սպասասրահում, իմացանք ծեծված հայ և այլազգի ուղևորների վկայություններից. ջարդում էին «սրտանց», եռանդով ու անխտիր: Շատերը հայտնվեցին հիվանդանոցներում:

Իսկ ահա ռուս ուսանողի չափածո վկայությունը.

**Звартноц**

5 июля 1988 г.

Над Москвой прокатилась гроза,
Разрыдалась над всею страной,
Но страна закрывало глаза
На вояк, учинивших разбой.

Били женшин и даже детей,
В безоружных стреляли в упор.
Значит, Родине мало смертей,
И дубинки-ее приговор?

Повалился седой граждани,
Ухватившись руками за грудь.
Значит, партии мало равнин,
Где и так уже не продохнуть?

Били тех, кто ответить не мог,
Чтобы знали, как спорить с Москвой:
Преподали народам урок,
Как им жить нерушимой семьей!

Но по-прежнему сладок Арбат,
Иностранцы жевачку жуют:
Может, завтра его запретят,
А пока пирожки продают.

Кнут и пряник-извечный закон
Только лучше жевать сухари
И стоять, а не падать ничком
Перед сильными этой земли!

Вадим Пьянков, актер, студент ВГИК-а.

Թվում է՝ զորքերի նման վայրագությունը չէր կարող իրականացվել առանց առաջին քարտուղարի թույլտվության, սակայն վերջինս փորձեց մեղքը գցել կենտկոմի բաժնի վարիչներից մեկի վրա, վերջինս իր հերթին «ետ վերադարձրեց» հարվածը և այլն: Մինչև վերջ պարզ չդարձավ: Եղավ և զոհ՝ Խաչիկ Զաքարյանը, որին կրակելով սպանեցին տանկերի շարասյունը նկարելիս: Պաշտոնական Մոսկվան «համեստորեն» լռեց՝ ո՛չ կշտամբանք, ո՛չ նախատինք:

Լռելն ուժերից վեր էր. բողոքի ու զայրույթի թղթատարափ: Անմասն չմնաց և ծեր խոնարհի ծառան: Բողոքս հասցեագրեցի ԽՍՀՄ Գխ նախագահության նախագահ Գրոմիկոյին.

ԽՍՀՄ ԳԽ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ, ԸՆԿ. ԳՐՈՄԻԿՈՅԻՆ:

Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում ս.թ. հուլիսի 5-ին խաղաղ ցուցարարների և «ծեռի հետ» բանից անտեղյակ ուղևորների՝ զինվորների կող-

մից իրագործված անմարդկային ջարդը հայ ժողովրդին ահաբեկելու ևս մի փորձ է, որպեսզի նա դադարեցնի ԼՂԻՄ-ը Հայաստանին միացնելու համար մղվող իր սահմանադրական պայքարը: Այժմ շատերն արդեն չեն կասկածում, որ դա՝ ինչպես նաև Սումգայիթյան վանդալիզմը, հրահանգված էր Մոսկվայի որոշակի ուժերի կողմից: Այլապես դժվար է բացատրել այն, որ մինչ օրս ցավակցություն չի հայտնվել անմեղ զոհերի հարազատներին: Դրա փոխարեն իշխանական բոլոր մակարդակներում մեզ անընդհատ հիշեցնում են. «Կշարունակեք պահանջել ԼՂԻՄ-ը, կլինի հավերժ Սումգայիթ»: Սումգայիթյան հանցագործության դատական ֆարսը (գործի մասնատումն առանձին խուլիգանական արարքների) ապացուցում է ջարդի իրական կազմակերպիչներին քողարկելու իշխանությունների ջանքերը...

...այնուհետև գալիս է զինվորների վայրագությունների նկարագիրը....

Այդքանից հետո փաստերի խեղաթյուրման կենտրոնական հեռուստատեսության սանձազերծած կամպանիան զայրացուցիչ է: ԿՀ-ով ցուցադրվող «սառը զենքը» առգրավվել է մեքենաներից հետագա օրերին: Հայաստանում դառը կատակում են. «Հավանաբար դուրս են բերել Սումգայիթից»: Ցուցարարների միակ զենքը մածունի շշերն էին:

Ահաբեկման ևս մի փորձ: Վերջին օրերս ցուցադրաբար դատարկվում են հիվանդանոցները, Երևանից շտապ դուրս են բերվում արտասահմանյան հյուրերը, որպեսզի բնակչությանը ներշնչեն զանգվածային հետապնդումների մասին միտքը:

ՀՍՍՀ ԳԱ թղթ.-անդամ, տեխնիկական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հայրենական Պատերազմի մասնակից
Ռ. Ա. Ղազարյան

Հանգամանալից նամակ "Огонек"-ի խմբագիր Կորոտիչին ուղղել էին հանրապետության կլինիկական հիվանդանոցի նեյրոխիրուրգները: Ընդարձակ նամակ-բողոք ՀԽՍՀ իշխանությանն ուղղել էր Սամվել Գևորգյանը:

Կենտրոնական իշխանությունների, դատաքննչական օրգանների և թերթերի հասցեներով ուղարկվեցին կոլեկտիվ և անձնական բազմաթիվ նամակներ, բողոքներ, տուժածների վկայություններ: Այդ առիթով ուզում եմ հիշատակել հեռուստատեսության աշխատակից Էդուարդ Սալախովի ակտիվությունը շարժման սկզբից և հատկապես տուժածների վկայությունների հավաքման գործում:

Ավա՜ղ... ԶԼՄ-ները նախանձելի համառությամբ փորձում էին դեպքերը ներկայացնել որպես Սումգայիթի կրկնօրինակ: Ուստի իշխանություններին հնազանդ ԶԼՄ-ները մեղադրանքների, կեղծիքի, ամենալկտի ստի ու ցինիզմի ամիսներ տևած տարափ շուռ տվեցին հայության վրա. կանգ չառան անգամ ազգային

արժանապատվության ոտնահարման առջև: Պարզապես մի օրինակ. «Տրուդ» թերթի «վետերան» հավելվածի 16.10.88 թ.-ի համարում ոմն փոխգնդապետ Վ. Ռակիտինը, հուլիսյան դեպքերին անդրադառնալով, «վիժեց». «...մեր մարտիկներից ոչ մեկը չմեղանչեց իր խղճի առջև. մնաց հավատարիմ իր երդմանն ու պարտքին: Զգոնության րոպեանոց կորստի դիմաց նրանց առաջարկել են խոշոր գումարներ, սպիրտային խմիչքներ, թմրադեղեր, կանայք, սակայն ոչ ոք, կրկնում եմ, ոչ ոք տեղի չտվեց այդ պրովոկացիային...»: Սպայական պատվի «փայլուն» դրսևորում...: Չփորձենք վիճել տականքի հետ. հիշեք սարատովցի զինվորների նամակը երևանցիներին:

* * *

Եվ նորից ցավով փոխադրվենք այսօրվա իրականությանը և «հպարտանանք» մեր իշխանությունների «նվաճումներով»: Այժմ մեր կանայք ծախվում են Երևանի և Ստամբուլի փողոցներում:

* * *

Ստանդարտ մեղադրանքներով Ղարաբաղի ակտիվիստների (այսինքն՝ ԼՂԻՄ-ի ողջ ժողովրդի) նկատմամբ փայլեց մեկ այլ ոմն՝ հայազգի փոխգնդապետ Ուզլյանը:

Եվ նորից Վադիմ Պյանկովը.

Оболгали армянский народ.
Но воздастся, воздастся и вам
По заслугам, и вас не спасет
Ни закон, ни войска, ни Коран!

Ավելացնեմ, որ օգոստոսի 17-ին կոմիտեն ռուսերեն լեզվով հրապարակեց «Զվարթնոց»-ում հուլիսի 4–5-ի դեպքերի ներկաների և տուժածների վկայությունների հավաքածուն:

«Զվարթնոց»-ի դեպքերի ձևական հետաքննությունը մնաց անհետևանք: Թղթերիս մեջ պահպանվել է նաև ՅԽՍՅ պետապի գլխավոր վարչության կոլեկտիվի բողոքը հետաքննչական խմբի ղեկավար Նիկոլաևին, որում, զայրույթ հայտնելով օդանավակայանում տեղի ունեցածի վերաբերյալ, մասնավորապես ասվում է, որ զինվորներին զենք օգտագործելու հրաման արձակող-

ները ռուս-հայկական դարավոր բարեկամության թշնամիներ են:

Կենտրոնական ԶԼՄ-ները շարունակում էին դարաբաղյան գերխնդրի և դեպքերի «մթագնող լուսաբանումը»: Ի վերջո ինձ «պարտադրեցին» մի թունախառն հեռագիր նույն Գրոմիկոյին.

Москва. Кремль. президиум Верховного Совета СССР. т. Громыко А.А.

До сих пор правительство и средства информации последовательно реализуют рекомендации института востоковедения ЦК КПСС по вопросу Нагорного Карабаха. Просьба поручить им вычислить число необходимых жертв армянской национальности (в тысячах человек), чтобы правительство поняло — единственный выход из сложившейся ситуации — выполнение законного требования всего армянского народа.

Казарян Р. А.[1]

Եվ մի անպարկեշտ հեռագիր «Իզվեստիա» թերթին.

После того, как вы так блистательно обделались с гласностью, вам бумага, полагаю, требуется в неограниченном количестве. Деньги за подписку возвращать не надо, но ваш беспомощный листок больше не высылайте.

Что касается гласности, то ее, вместе с десятками зверски замученных в г. Сумгаите (большинство женщины и дети), матери и дочери Армении символически похоронили 8-го марта у памятника жертвам геноцида.

Казарян Р. А.[2]

Հուլիսի 16-ին Երևանում կայացավ հսկայական միտինգ: Հավաքվածներին ընթերցեցի ԽՍՀՄ ԳԽ նախագահությանը հասցեագրած դիմումս: Պայմանավորվեցինք, որ այն կգնա բո-

---

1 Մոսկվա, Կրեմլ, ԽՍՀՄ ԳԽ նախագահություն, ընկ. Ա. Ա. Գրոմիկոյին: Մինչ այժմ կառավարությունը և ԶԼՄ-ները հետևողականորեն իրականացնում են Արևելագիտության ինստիտուտի կողմից ՍՄԿԿ ԿԿ-ին ԼՂԻՄ-ի վերաբերյալ արված առաջարկները: Խնդրում ենք հանձնարարել նրանց հաշվարկել հայերից պահանջվող զոհերի թիվը (հազարներով), որպեսզի կառավարությունը հասկանա՝ ստեղծված իրադրությունից միակ ելքը համայն հայության օրինական պահանջի բավարարումն է: *Ռ. Ա. Ղազարյան*

2 Այն բանից հետո, երբ գլասնոստի հարցում դուք այդպես փայլուն արեցիք ձեր տակը, ենթադրում եմ՝ ձեզ թուղթ կպահանջվի անսահման

լոր մասնակիցների անունից: Ահա նրա սեղմ շարադրանքը (ռուսերեն լրիվ բնագիրը տե՛ս Չավելված, էջ 295).

ԽՍՉՄ ԳԽ ՆԱԽԱԳԱՉՈՒԹՅՈՒՆ

Ճիշտ չգնահատելով ադրբեջանական կառավարության 70 տարվա դիսկրիմինացիոն քաղաքականության ընթացքում կուտակված հակասությունների ամբողջ խորությունը, պոլիտբյուրոն շտապեց մերժել հայ ժողովրդի սահմանադրական պահանջը, անարդարացիորեն պիտակելով այն:

*...այնուհետև նամակում թվարկվում են մեր ժողովրդի ահաբեկման հայտնի դեպքերը և վստահեցնում, որ դրանք չեն կոտրի ժողովրդի կամքը և որ խնդրի միակ լուծումը հայ ժողովրդի պահանջի բավարարումն է: Նամակը հղված է 400.000-անոց հավաքի անունից...*

Չունիսի 28-ին 47 տարվա ընդմիջումից հետո Մոսկվայում հավաքվել էր ՍՄԿԿ XIX համամիութենական կոնֆերանսը: Գորբաչովի 7 էջանոց (Ստալինի մտցրած ծավալաչափն էր) զեկուցման մեջ ԼՂԻՄ-ը և «նրա շուրջը» չհիշատակվեց: Խոսեց հեղափոխական ռեֆորմների, «պերեստրոյկայի» խորացման, ազգային քաղաքականության մեջ լենինյան կոնցեպցիային (Աքաջուրքի «շտկումներով») անշեղորեն հետևելու անհրաժեշտության մասին: Չայտնեց մարքսիզմ-լենինիզմի անմահ ուսմունքի կենսունակությանը և կոմունիզմի լուսավոր ապագայի անխուսափելիության վերաբերյալ համոզմունքը: Վերջերս, (2000 թ.) հանձնելով Պուտինին «հավատարմագիրը», նախկին N 1 կոմունիստը հավաստիացրեց մեզ, որ քաղաքական-գաղափարական նախորդ համակարգին վերադարձ չկա: Իսկ ահա ԽՍՉՄ ԳԽ նախագահության հուլիսի 18-ի նիստում «ստացանք լրիվ ծրագրով». «Լեռնային Ղարաբաղի հարցի առթիվ Չայկական ԽՍՉ և Ադրբեջանական ԽՍՉ Գերագույն Սովետների որոշումների մասին» խորագրի տակ մեզ առաջարկվեց վերջնականապես թաղել տարածքային խնդրի լուծման հետ կապված հույսերը և ամեն ինչ անել հայ և ադրբեջանցի բնակչության եղբայրական հարաբերությունները վերականգնելու ուղղու-

---

քանակությամբ: Բաժանորդագրության գումարը պետք չէ վերադարձնել, բայց ձեր անճարակ թերթիկն այլևս չուղարկեք: Ինչ վերաբերում է գլասնոստին, ապա այն, Սումգայիթում զոհված տասնյակ զոհերի (մեծամասնությունը կանայք և երեխաներ) հետ միասին հայ ժողովրդի մայրերն ու դուստրերը սիմվոլիկ թաղեցին Եղեռնի հուշարձանի մոտ: *Ռ. Ա. Ղազարյան*

թյամբ (ասենք, սումգայիթցի հայերին վերադառնալ հոգատարությամբ իրենց մորթող եղբայրների մոտ): Յանձնարարվում է մշակել ԼՂԻՄ-ի համակողմանի զարգացման ծրագիր:

Յուլիսի 21-ի «Իզվեստիա»-ն «Փնտրել համերաշխություն» հոդվածում վերջապես «խոստովանության է գալիս» առ այն, որ ԼՂԻՄ-ի ու Յայաստանի պատվիրակների բերվող փաստարկներից խույս տալն անհնար է (!): Դրանց մեջ է և՛ 1915 թվի եղեռնի զոհ դարձած ժողովրդի հիշողությունը, և՛ Ղարաբաղի հարցի հակասական որոշումը (!!!), և՛ դժգոհությունը իշխանություններից, հայկական մեծամասնության իրավունքների ոտնահարումը, և՛ սումգայիթյան ողբերգությունը ու դրա մեղավորների նկատմամբ դատական քաշքշուկը: «Այդ ամենը, – ավելացնում է հոդվածագիրը (Լինյովը), – չի կարող կոնֆլիկտի մեջ չմտցնել այն հուզական տոնայնությունը, որը չի լսի միայն խուլը: Մեղադրում է իշխանության եկած ու թալանով տռզած կլանները: Յիշատակում է մեր կողմից առաջարկվող, սակայն սահմանադրությամբ չնախատեսված «պրեզիդենտական ենթակայության» տարբերակը: Տրտնջում է, որ Յայաստանի բաժանորդների մի մասը, ի բողոք, հրաժարվել է կենտրոնական թերթերի բաժանորդագրությունից (անշուշտ, ես միակը չէի):

Օգոստոսի 24-ի «Լիտերատուրնայա գազետա»-յում տպվեց «Վերակառուցումը վերաձևում չէ» հարցազրույցը, որտեղ աննկեղծորեն ակնարկվում է ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության օրենքի մշակման անհրաժեշտության մասին՝ սահմանադրական հաստատագրմամբ: Սակայն դա թերթի, և ո՛չ իշխանությունների ապաշխարանքն էր:

Յիմնահարցի նկատմամբ Գորբաչովը մնաց անսասան: Այլ բան չէինք սպասում և չնայած դրան՝ ազգովի տրտմեցինք: Յուսախաբությունը շարժման կամքն ու ոգին կոտրելու լուրջ վտանգ էր պարունակում: Յատկապես, եթե հաշվի առնենք շուտ ոգևորվելու ու նույնքան շուտ ընկճվելու ու սառելու մեր ժողովրդին բնորոշ գիծը: Այդ անհանգստությունս մի առիթով, դիմելով հավաքվածներին, խոստովանեցի հարթակից: Այդ վտանգը կանխելուն էր նվիրված հուլիսի 19-ի միտինգը: Ցավոք, ինձ մոտ պահպանվել է միայն իմ ելույթի սևագրությունը. հուսով եմ՝ կլինեն մյուս մասնակիցների հուշերը, որոնք կլրացնեն ու կամբողջացնեն պատկերը: Տպավորություն չստեղծվի, որ միայն ես եմ խոսել:

Անհրաժեշտ էր խնամքով հավաքել որոշման մեջ նշմարվող դրական միտումների փշուրները և փորձել սրտապնդել ժողովրդին: Ստիպված էի, հակառակ տրամադրությանս, «խանդավառվել», թեև, ըստ էության, ասվեց ճշմարտությունը:

ՅՈՒԼԻՍԻ 19-Ի ՀԱՆՐԱՀԱՎԱՔԻ ԵԼՈՒՅԹԸ

Եկել է 5-ամսյա մեր պայքարի արդյունքները սառը գնահատելու պահը: Դուք գիտեք, որ հուլիսի 5-ին պատրաստվել էր բացասական որոշում, որը հետաձգվեց և այսօր արդեն ունենք զգալի առաջխաղացում: Իրոք, այժմ ՀԽՍՀ և ԱզԽՍՀ ներկայացուցիչների հետ իրավիճակը հսկելու են միութենական Գխ և կենտկոմի ներկայացուցիչներ: Այդ նվաճումը հետևանք է ինչպես մեր ժողովրդի միասնական պայքարի, այնպես էլ ՀԽՍՀ ղեկավարության և մեր պատվիրակների գերազանց պահվածքի ու ելույթների: Երեկ մենք ունեցանք երկու նվաճում. նախ մեր ցավը դարձավ համընդհանուր քննարկման առարկա և հետո (ինչը ինձ առավել ուրախություն է պատճառում) առաջին անգամ ժողովուրդը և ղեկավարությունը միասին էին այդ ճակատագրական օրը: Շատ ափսոս, որ յոթուկես ժամ տևած նիստը հաղորդվեց երկուսուկես ժամում: Շատ բան չհաջողվեց լսել, սակայն համոզվեցինք, որ բոլոր մեր պատգամավորներն անխտիր գտնվեցին իրենց բարձրության վրա: Իմացանք և այն համարձակ առաջադրանքների մասին, որոնք ընկ. Հարությունյանը տվել էր պատվիրակներին: Ցավոք, կտրվել և ցույց չի տրվել Վարդգես Պետրոսյանի բանավոր մենամարտը Գորբաչովի հետ:

Մենք զգում ենք ժողովրդի տրամադրությունը. շատերը հիասթափված են արդյունքներից և հատկապես Գորբաչովի ճառից: Բայց համաձայնեք, որ չէինք էլ սպասում որևէ լավ բան: Այժմ, երբ այդ փոքր հաղթանակը տեղի ունեցավ, տխրեցինք, որովհետև հոգու խորքում երազում էինք ավելին, տվյալ պարագայում՝ հրաշք: Եկեք մտովի վերհիշենք նիստում տիրող մթնոլորտը: Բացառությամբ մի երկուսի, մասնավորապես Ռասուլ Համզատովի[1] և Բասովի, բոլորը կտրուկ մերժողական ելույթներ ունեցան: Իսկ մի քանի հասստամռուքներ որակավորեցին մեր շարժումը որպես հակավերակառուցողական, հակապետական և այլն: Եվ այդքանից հետո... նախկին բացարձակ մերժման ու հարցի փակման փոխարեն մեզ տվեցին պայքարը շարունակելու հնարավորություն: Չէ՞ որ դա պրեզիդենտական կառավարման կիսատարբերակ է: Եվ որ կարևոր է, իրավունք է վերապահում նորանոր առաջարկների քննարկման, այդ թվում և ստատուսին վերաբերող: Իսկ եթե հաշվի առնենք սահմանադրության սպասվող վերափոխումները և ավտոնոմիաների իրավունքների ընդարձակման խոստումները, ապա մեր պայքարի հեռանկարներն այդ նոր դիրքերից ավելի հուսադրող են:

---

[1] Որի համար նա հետագայում ենթարկվեց նախատինքով ու սպառնալիքներով լեցուն նամակային գրոհի Ադրբեջանից (տես "Литературная газета", 30.11.88):

Հատկանշական է, որ Հենրիկ Պողոսյանը (ԼՂԻՄ-ի առաջին քարտուղարը), որը հիացրեց սեսիայում իր հանգամանալից ու խիզախ ելույթով, վերադարձավ Ստեփանակերտ ոգևորված, իսկ Ադրբեջանի պատվիրակները, կարծես, մի-մի բաժակ նավթ կուլ տված լինեին: Դա էլ ինչ-որ բան է նշանակում:

Նույն հունով ընթացավ հուլիսի 21-ի միտինգը. ելույթ ունեցան Վարդգես Պետրոսյանը, Սիլվա Կապուտիկյանը, մյուս պատվիրակները: Նկարագրեցին սեսիայում իշխող մթնոլորտը, հաստատեցին ակնհայտ առաջխաղացումը: Կարծես՝ շունչներս տեղը եկավ:

Պետք է խոստովանեմ, որ մեր զգուշավորությունը ոչ բոլորին դուր եկավ: Ստացանք մեղադրական, անգամ՝ վիրավորական գրություններ միտինգի մասնակիցներից: Հատկապես տպավորվել է հիշողությանս մեջ ոմն դաշնակցականի կողմից անստորագիր պարսավանքը մեր երկչոտության առթիվ:

Հուլիսի 22-ի «Պրավդա»-յում նորից հայտնվեց անդադրում Օվչարենկոն: Նրանից «իմացանք», որ համայն բնակչությունը խանդավառությամբ ընդունեց սեսիայի որոշումը և Գորբաչովի ճառը: Վկայակոչեց մի քանի վետերանների և դերձակուհիների ելույթներն իրենց կոլեկտիվներում, փոխանցեց նրանց զայրույթը խառնակիչ կոմիտեականների հանդեպ: Ավելին, պարզվում է, «ականատեսները» պնդում են, որ «Ղարաբաղ» կոմիտեն ոչ մի անգամ չփորձեց կասեցնել օդանավակայանի գործողությունները, իսկ հիմա այդ բանդան արդարանում է, որ չէին ցանկանում դա և գործադուլների կոչ էին անում: Էս մինումը, ինչպես կասեին ղարաբաղցիք, ք.. էս կերալ... Օդանավակայանի դեպքերն արդեն նկարագրել եմ. ավելացնեմ, որ այդ նույն օրը՝ հուլիսի 5-ին, երբ կատարվածից ալեկոծված վերադարձա թատերահրապարակ, ուր դեռ շարունակվում էր հանրահավաքը ու բեմահարթակից կշտամբեցի կոմիտեի հետ չհամաձայնեցված ինքնակամ գործողությունների համար, ապա առաջին ու վերջին անգամ արժանացա շվոցի ու դժգոհության արտահայտման: Ժողովուրդը չէր զղջում՝ ստիպեց կենտրոնին հստակ գծանշել գլասնոստի սահմանները:

*Օգոստոս:* Վեզիրովը և Ս. Հարությունյանը ամսի 3-ին հանդիպում են Ստեփանակերտում: Մոսկվայի ներկայացուցիչ Վոլսկու և ԼՂԻՄ-ի առաջին քարտուղար Հ. Պողոսյանի հետ քննարկում են ԽՍՀՄ կոմկուսի կենտկոմի և ԳԽ ընդունած որո-

շումը ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մասին: Տպավորվել էի ԽՍՀՄ ԳԽ Նախագահությունում Հենրիկ Պողոսյանի խոհեմ, այն օրերին պարտքարտուղարից բավական համարձակություն պահանջող անաչառ ելույթով, որը տպվել էր «Մոսկովսկիե նովոստի» N 33-ում «Ղարաբաղ. ըմբռնման ուղի» խորագրով (Հավելվածում բերված է «Աշտարակ» թերթում նրա հայերեն արտատպությունը, էջ 295):

Ցավալի է՝ ԼՂ հետնորդ ղեկավարներից ոչ մեկը չունեցավ նրա լրջամտությունը և խոհեմությունը: Անշուշտ, չէր կարող դիմանալ «բարեկրթության և համեստության լուծը թոթափած» պաշտոնաքաղձների գրոհին:

Մեծ կարևորություն եմ տալիս օգոստոսի 19-ին «Ղարաբաղ» կոմիտեի՝ ժողովրդին ուղղված դիմումին: Այն ուղղված էր շարժմանը հակառուսիստների պիտակ կպցնելու անազնիվ ջանքերի դեմ: Նենգափոխության այդ փորձերը ցայսօր չեն մարել՝ մայրենի լեզուն ուշացումով իր իրավունքի մեջ վերահաստատելու անհրաժեշտության դեմ անխոնջ պայքար մղող որոշ վայ մտավորականների շնորհիվ, ուստի տեղին է վերարտադրել այն ամբողջությամբ.

АЗЬՊԵՍ ԿՈՉՎԱԾ ՀԱԿԱՌՈՒՍԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ԻԲՐ ԲՈՐԲՈՔՎՈՒՄ ԵՆ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԻՏԻՆԳՆԵՐՈՒՄ

1. Վերջին ժամանակներս Ղարաբաղյան շարժման դեմ ուղղված մեղադրանքներից մեկն է դարձել այն, որ, իբր, երևանյան միտինգներում հակառուսական տրամադրություններ են բորբոքվում: Սա պարզապես ստալինյան բռնապետության զինանոցից հանված հերթական մի հերյուրանք է, որով ավանդաբար ամբաստանվում է կենտրոնական իշխանությունների, սովետական բյուրոկրատիայի նկատմամբ արտահայտված որևէ դժգոհություն: Նման մոտեցումը, սակայն, ամենևին չի կարելի կապել իշխանությունների թեթևամտության կամ կարճատեսության հետ, քանի որ այն ունի շատ ավելի խոր պատմա-հասարակական և հոգեբանական արմատներ: Բանն այն է, որ երկրի բյուրոկրատիան առ այսօր բացահայտորեն առաջնորդվում է Սովետական Միության և Ռուսական պետականության նույնության գաղափարով: Նշենք թեկուզ մեկ փաստ. «Օգոնյոկ» շաբաթաթերթի այս տարվա հուլիսյան համարներից մեկում (N 29) ԽՍՀՄ ֆինանսների մինիստր Բ. Ի. Գոստևն առանց այլևայլության գրում է հետևյալը. «Այսօրվա առաջնահերթ հոգսը պետությանն առնչվող հոգսն է, մանավանդ մեր Սովետական պետության՝ Ռուսական պետության ամրապնդման հոգսը»: Ուստի միանգամայն պարզ է, որ նման մոտեցման դեպքում պետական մարմինների նկատմամբ արտահայտված որևէ դժգոհություն պետք է դիտվի որպես հակառուսական տրամադրություն:

Միաժամանակ հարկ է նշել, որ մեզ այդպիսի մեղադրանք ներկայացնողները տարօրինակ կերպով մոռանում կամ միանգամայն բնական են համարում այն փաստը, որ սովետական մամուլը ավելի քան մեկ տարի զբաղված է հայ ժողովրդին վերակառուցման թշնամի, էքստրեմիստ, նացիոնալիստ, ծրիակեր հռչակելու և դրանով հակահայկական տրամադրություններ սերմանելու գործով, որի հետևանքով, օրինակ, բանակում արդեն հալածանքներ են սկսվել հայ զինծառայողների հանդեպ:

2. Ղարաբաղյան շարժման նպատակն է սահմանադրական շրջանակներում ընթացող գործողություններով հասնել Ղարաբաղի վերամիավորմանը Հայաստանի հետ՝ որպես սկզբունք խուսանավելով որևէ ազգի կամ ժողովրդի, որևէ կրոնի կամ դավանանքի դեմ ուղղված թշնամական կամ վիրավորական արտահայտություններից: Սակայն դա չի նշանակում, որ մենք պետք է խուսափենք նաև մեր ազգային արժանապատվությունը վիրավորող այնպիսի իրողությունների սկզբունքային քննադատությունից, ինչպիսիք են, օրինակ, Ադրբեջանի մոլեռանդների կողմից Սումգայիթի հայ բնակչության նկատմամբ գործադրված ցեղասպանության և սովետական բանակի կողմից «Զվարթնոց» օդանավակայանում կիրառված բարբարոսության փաստերը: Վճռական հակահարված պետք է ստանան նաև հայ ժողովրդի հասցեին ուղղված այն բոլոր անպատասխանատու հայտարարությունները, որ անպատիժ կերպով հրապարակում են առանձին ղեկավար անձինք և մամուլի ու հեռուստատեսության մարմինները:

3. Հայ ժողովուրդը իսկապես շուրջ 300 տարի իր քաղաքական հույսերը կապել է Ռուսաստանի հետ և անկախ կրած բազմաթիվ հուսախաբություններից՝ այսօր էլ չի կորցրել իր համակրանքը ռուս ժողովրդի նկատմամբ, վերջինիս վերաբերմունքը հստակորեն տարբերելով իշխանությունների վարած մեծապետական շովինիզմի քաղաքականությունից: Սակայն այժմ, երբ Ղարաբաղի խնդրով զգալի հարված է հասցվել հայ ժողովրդի ազգային արժանապատվությանը, ապա կարող է վտանգվել նաև այդ համակրանքը: Հայ և ռուս ժողովուրդների անկեղծ բարեկամության ապահովման երաշխիքը ներկայումս գտնվում է Մոսկվայի ձեռքում, որի վտանգման պատասխանատվությունն էլ ընկնում է հենց նրա վրա:

4. Ղարաբաղյան շարժման հակառակորդների կողմից որպես հայ և ռուս ժողովուրդների բարեկամությանը հակասող երևույթ, որպես հակառուսական տրամադրությունների բորբոքման մեղադրանք է ներկայացվում նաև միտինգներում արտահայտվող այն մտահոգությունը, որ վերաբերում է հայոց լեզվի կիրառության ոլորտի ընդլայնման, հայկական դպրոցների բարենորոգման, հայ մշակույթի զարգացման և այլ հարցերի: Անհանդուրժողականություն է ցուցաբերվում նույնիսկ այնպիսի բնական և սահմանադրական կոչերի նկատմամբ, ինչպիսիք են օրինակ հայ մանուկներին հայկական դպրոց ուղարկելու, հիմնարկ-ձեռնարկություններում գործավարությունը Սովետական Հայաստանի պետական լեզվով իրագործելու, դիսերտացիաները հայերենով գրելու պահանջները և այլն: Ինչպես հայտնի է, նման պահանջներ ներկայացվում են համարյա բոլոր միութենական հանրապետություններում, դրական արձագանք գտնելով նույնիսկ կենտրոնական մամուլում: Այս փաստն ինքնին ցույց է տալիս, որ մայրենի լեզվի և ազգային դպրոցի ճակատագրի մտահոգությունը

համատարած երևույթ է և պահանջում է լուրջ վերաբերմունք ինչպես տեղական, այնպես էլ կենտրոնական իշխանությունների կողմից:

5. Հայաստանում հակառուսական տրամադրությունների իսկական հրահրողը, որքան էլ տարօրինակ է, հենց հանրապետության ղեկավարությունն է, հանրապետության բյուրոկրատիան: Ինչի՞ նման է օրինակ այն փաստը, որ համարյա բոլոր նոմենկլատուրային աշխատողների երեխաները ուսանում են ռուսական դպրոցներում, ղեկավար անձանցից շատերը չեն տիրապետում մայրենի լեզվին և գերադասում են ելույթներ ունենալ ռուսերեն լեզվով, ռուսական դպրոցներն օգտվում են առանձնահատուկ շնորհներից, մինիստրություններում ու հիմնարկ-ձեռնարկություններում հայերենը հանվում է գործածությունից, պաշտոնյաների առանձնասենյակների մակագրություններն արվում են ռուսերեն լեզվով և այլն: Այս բոլորը, բնականաբար, ժողովրդի մոտ ռուսաց լեզվի համար առանձնաշնորհված սոցիալական գերակայության և ծրագրված ռուսականացման պատկերացում է ստեղծում, որն արդարացի զայրույթ և ավելորդ գրգռվածություն է հարուցում լայն խավերի շրջանում:

6. Եզրակացությունը, թվում է, ինքնըստինքյան հասկանալի է, անկեղծ ձգտում հայ և ռուս, ինչպես նաև Սովետական Միության բոլոր ժողովուրդների բարեկամության ամրապնդման ուղղությամբ, սակայն դրա հետ մեկտեղ անհաշտ պայքար ազգային շահերի ոտնահարման, մեծապետական շովինիզմի և ռուսականացման քաղաքականության ցանկացած դրսևորման դեմ:

Ղարաբաղյան շարժման հայաստանյան կոմիտե
19.08.1988 թ.

Նույն օգոստոսի 19-ին կոմիտեն, հիմնականում Վազգեն Մանուկյանի նախաձեռնությամբ և խմբագրմամբ, հրապարակում է ՀՀՇ-ին վերաբերող մի քանի ծրագրային փաստաթղթեր. «ՀՀՇ-ի գործելակերպը, գաղափարական սկզբունքները, մոտակա նպատակները, խորացման, *խմբային անդամության* և կազմակերպչական ձևերը», որոնք բազմացրեցին մեծ տպաքանակով: Այն չեմ ներկայացնում, քանի որ ժամանակին բազմացվեց մեծ տպաքանակով և հրապարակվեց առանձին գրքույկներով: Այսօր կքննադատեի միայն ընդգծածս կետը, որն, ըստ իս, նպաստեց շարժման պղտորմանը: Խոսքս խմբային դիմումով ՀՀՇ-ի շարքերն ընդունվելու մասին է: Մինչդեռ, ըստ իս, յուրաքանչյուր դիմող պետք է անցներ նախապես մշակված ֆիլտրի (զրուցակարգի) միջով:

Հիշատակեմ նաև օգոստոսի 27-ին ԽՍՀՄ Գրողների Միության անդամ Սեդա Վերմիշևայի առաջարկները Ղարաբաղի ճգնաժամային իրադրությամբ թելադրվող սահմանադրական ճշգրտումների վերաբերյալ:

Ինչ վերաբերում է գործադուլներին... Այստեղ Օվչարենկոն (հուլիսի 22-ի վերը հիշատակված հոդվածում) տրորեց ամենացավոտ «կոշտուկս»: Գիտակցում էի կենտրոնական իշխանությունների վրա սովետական իրականության մեջ աննախադեպ այդ ակցիայի հզոր ազդեցությունը, սակայն ներքուստ համաձայն էի Վիկտոր Համազասպովիչի, Կաթողիկոսի և այլոց հետ, որոնք տագնապում էին տնտեսության համար գործադուլների քայքայիչ հետևանքների կապակցությամբ, իսկ Կաթողիկոսը նույնիսկ դատապարտեց դա: Պատասխան բաց նամակը Կաթողիկոսին հրապարակվեց հուլիսի 10-ի միտինգում, որում մասնավորապես ասվում է. «Անսալով Ձեր հայրական կոչին, մենք ջանք չենք խնայի զսպել ավելորդ հույզերը, կանխել առանձին անձանց անխոհեմ գործողությունները և մեր արդար ու օրինական պայքարը կշարունակենք քաղաքակիրթ ժողովրդին վայել բարձր կազմակերպվածությամբ: Այս խոստման խոսուն երաշխիքն է անցած հինգ ամիսների իրողությունը: Սակայն, Վեհափառ տեր, ներողամիտ եղեք, որ չենք կարող լծվել ստեղծագործ աշխատանքի, քանզի ստեղծված իրավիճակում գործադուլը մեր միակ խաղաղ զենքն է... Գործադուլի ճանապարհը խաղաղ է և ընդունված ողջ քաղաքակիրթ ու քրիստոնյա աշխարհում, որպես արդար պահանջների վերջին զենք, մի հորդորեք մեզ հրաժարվել այդ զենքից, քանզի մեր մնացյալ գործողությունները ցայսօր հնչեցին որպես «ձայն բարբառոյ յանապատի»...»:

Զգուշորեն խոսք էի բացում այդ մասին գիշերային նիստերում, փորձում համոզել, որ գործադուլների դիմենք ծայրագույն դեպքերում, այն էլ կարճատև... ու դեմ առնում կտրուկ մերժման: Հերթական անգամ, երբ ինձ հանձնարարվեց գործադուլի կոչը, ինքնակամ կարգադրեցի նախազգուշական երկժամյա գործադուլ, որի համար տեղնուտեղը ենթարկվեցի «գանակոծման» կոմիտեի գործընկերներիս կողմից:

Ինձ համար սկիզբ առավ ինքնախոշտանգման ծանր շրջան: Մասնակցությունը նիստերին դարձավ ներքին հարկադրանք: Ինքնաարդարացման առիթ էի փնտրում, որ բաց թողնեմ հերթական նիստը (տարիներ անց Վարդանյան Դավիթը նետեց ինձ դա որպես մեղադրանք): Մի պահ որոշել էի հեռանալ կոմիտեից: Խոստովանեցի Սոսին և Սարգսին, կտրուկ առարկեցին. «Պիտի մնաս որպես հակակշիռ»: Ավաղ, կշիռս գերծանր չէր:

Փորձեմ բացատրել ապրումներիս դրդապատճառը: Վերը արդեն հիշատակել էի, որ այս կամ այն չափով բոլորիս համակել էր ատեղային հիվանդությունը: Ոմանց ամբողջությամբ համակել, դարձել էր գերակայող Արցախի ազատագրման բաղձանքը, մյուսների (հատկապես անհայտությունից եկածների) մոտ, թեև առաջնայինը դա էր, սակայն զգացվում էր համաժողովրդական ճանաչման և վստահության գործոնը պահպանելու ներքին մղումը: Եվ որպեսզի այն չմարի, ավելի հաճախակի էին կազմակերպում հանրահավաքներ և գործադուլներ: Արտահայտածս անհանգստությունը, որ հաճախակի հանրահավաքները սկսում են ընկալվել որպես թատերականացված ներկայացումներ և ժողովուրդը գալիս է «թամաշա»-յի, մնաց անարձագանք: Այդ հարցում հատկապես անդրդում էր Վանոն: Դա էր ներքին անբավարարվածությանս հիմնական պատճառը:

Խոստովանեմ, որ տարիներ անց կասկածի ենթարկեցի զգուշությունս: Իրոք, միգուցե եթե չլիներ Մոսկվայի վրա այդ ուժեղ, դադար չառնող ճնշումը, շարժումը հետզհետե մարեր և չկայանար նրա հաղթական ավարտը:

* * *

Չեմ կարող չհիշատակել ազատագրական շարժմանն ի նպաստ մեր ժողովրդի շահագրգիռ ակտիվության մի դրսևորման մասին: «Ղարաբաղ» կոմիտեն բանավոր և գրավոր բազմաթիվ առաջարկություններ էր ստանում «գերզենքի» և էներգետիկայի ոլորտներին վերաբերվող մտքի գյուտարարական «փայլատակումներով»: Քանի որ կոմիտեի միակ ֆիզիկոսները ես ու Դավիթ Վարդանյանն էինք (իսկ վերջինս կոմիտեի հանձնարարությամբ զբաղված էր կազմակերպչական գործով), տղաները, հասկանալով, որ դրանց մեծ մասը, ճիշտ է, բարի մղումներով են թելադրված, սակայն միամտություններ են, վերահասցեագրում էին ինձ, ուստի հետագա երկու-երեք տարին ես ջանքեր էի թափում հերթական գյուտարարին ապացուցելու, որ նրա «հավերժական շարժիչը», ավաղ, չի գործի: Կային, անշուշտ, և լուրջ առաջարկություններ. մասնավորապես Վիկտոր Համազասպովիչին դիմել էր մոսկվացի, հոգեբանական գիտությունների դոկտոր Ա. Ի. Միրաքյանը ոչ ավանդական (իր մշակած մեթոդիկայի կիրառմամբ) հոգեբուժական կենտրոնի

ստեղծման առաջարկով: Փորձեցի օգնել, կենտրոնը ստեղծվեց, բայց հասկանալի պատճառներով հետագայում լուծարվեց:

Հավանաբար տրամադրություններիս արտահայտումն էր օգոստոսի 20-ի հանրահավաքում ընթերցած ու կառավարությանը հղած դիմումիս բովանդակությունը: Զգալի չափով այն թելադրվեց նաև սեսիայից հետո ՁԼՄ-ների ծավալած խեղաթյուրումների ու ճնշումների ալիքով: Ելույթումս այդ մասին ասվում է ավելի առարկայական: Բերեմ այն ոչ էական կրճատումներով: Փակագծերում այսօրվա անդրադարձս է:

## ՄԵՐ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ՝ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վերջին ժամանակներս սաստկացել է Ղարաբաղյան շարժման և նրա նախաձեռնող խմբի դեմ մեղադրանքների և պիտակների տարափը կենտրոնական մամուլի էջերից, որը բարեխղճորեն արտատպվեց հանրապետական թերթերում, ինչեց հեռուստաէկրանից: Այդ կապակցությամբ կցանկանայի մեկ անգամ ևս անդրադառնալ մեր դիրքորոշմանը, մասնավորապես Ղարաբաղյան շարժման հետ կապված հարցերում պաշտոնական մարմինների հետ մեր հնարավոր համագործակցության վերաբերյալ: Որովհետև այլ մեղադրանքների շարքում՝ քաղաքական ավանտյուրիզմ, էքստրեմիզմ, ստվերային տնտեսության հովանավորում, նեղճակատ ազգայնամոլություն, պաշտոնամոլուցք (ավա՜ղ... մեղա եմ, բայց իրոք այն ժամանակ համոզված էի, որ վերջինս զրպարտանք է) և այլն, մեզ մասնավորապես մեղադրում են նաև Ղարաբաղյան շարժման շրջանակներում սոցիալ-տնտեսական և մշակութային բարեփոխումներից խուսանավելու, անգամ դրանց խանգարելու միտման մեջ:

Խնդրում եմ չընդունել իմ ելույթն իբրև արդարանալու փորձ, որովհետև մենք չենք գտնում, որ մինչ այժմ թույլ ենք տվել ինչ-որ էական սխալ, որը բարդացրել է Ղարաբաղյան հարցի լուծումը: Խոսքը համագործակցությամբ այդ շարժումն ավելի արգասավոր դարձնելու միակ ցանկության մասին է: Ինչ վերաբերում է մեղադրանքներին՝ իմ գործընկերները նախորդ մեր համաժողովներում տվեցին դրա պատասխանը (հետաքրքիր է՝ հետո հիշե՞լ են): Մասնավորապես իմ մասին. ուղեղում երկուսից ավելի ծալք ունեցողը դժվար թե հավատա, որ գիտական որոշակի ճանաչում ու դիրք նվաճած, բարձր ռոճիկի ու հանգստի տեր մարդը, հանկարծ, վաթսունն անց հափշտակվել է պաշտոնամոլուցքով՝ չքարեհաճելով անգամ նախապես անցնել կուսակցության շարքերը:

Մեզ շատ են քարկոծում գործադուլների համար: (Sic! ինչպես կասեր Վլադիմիր Իլիչը): Անշուշտ մենք հասկանում ենք, որ գործադուլը, այդ թվում և օդանավակայանում, խրախուսելի է միայն կապիտալի աշխարհում՝ այնտեղ այն ի նպաստ է գործում աշխատավորության շահերին, մեզ մոտ՝ հակառակը: Այն էլ հիշենք, որ այնտեղ կան պրոֆմիություններ, որոնք պաշտպանում են աշխատավորների շահերը և որոշում կայացնում գործադուլի մասին: Մեզ

մոտ կա անդամավճար հավաքող կազմակերպություն, ուստի գործադուլի հարցը պետք է որոշի ինքը՝ ժողովուրդը. ինչպե՞ս՝ միտինգների միջոցով: Համաձայն ենք, գործադուլը ծայրահեղ և ծանր (առաջին հերթին հենց ժողովրդի համար) միջոց է, բայց չէ՞ որ մեր ազգն էլ տասնամյակների ընթացքում և վերջին կես տարում ինֆորմացիոն միջոցներով հասցվել է ծայրահեղ վիճակի: Բոլորս էլ գիտակցում ենք, որ «այլապես» սայլը տեղից չէր շարժվի: Կարելի է վիճել գործադուլի ժամկետի մասին՝ 2 օ՞ր, թե՞ 2 շաբաթ: Այստեղ իրոք կան տարբեր կարծիքներ: Ենթադրենք Կոմիտեն այդ հարցում չափն անցել է (նորից sic!): Եկեք, սակայն, գնահատենք հանդուրժողականության սահմանները: 70 տարում մենք մեր կուսակցությանը ներել ենք, ավելի ճիշտ, ինքն իրեն է ներել, շատ սխալներ և ոճիրներ, որոնք միլիոնավոր անմեղ զոհեր են տարել, քայքայել են գյուղատնտեսությունը, այլասերել (կոռումպացրել) հասարակարգի բոլոր ոլորտները: Կապիտալի «փտող» աշխարհում եթե որևէ կուսակցություն կամ կառավարություն ձախողում է ինչ-որ համապետական միջոցառում, անհապաղ հրաժարական է տալիս: Մեր կյանքում նման դեպք չեմ հիշում (այս տարիներին ևս): Լավագույն դեպքում քննադատել են հետմահու: Քննադատել են նրանց, որոնք կենդանության օրոք ինքնամոռաց ծափահարել են և բերկրանքից ուշաթափվել «միջազգային կոմունիստական շարժման ականավոր գործչի» կրծքին և այլ տեղերին հերթական շքանշանը կպցնելիս, քաղաքներ, հրապարակներ և հասարակական զուգարաններ նրա անունով կոչելիս... և միայն եգիպտական սարկոֆագի մեջ ամփոփելուց հետո հերթական անգամ ուշքի են եկել:

Սակայն լրջորեն վերադառնանք վերը նշված մեղադրանքին, այն է՝ իշխանությունների հետ համագործակցությունից խուսափելուն: Իրո՞ք, ինչու՞ չենք համագործակցել հանրապետության նախկին ղեկավարության հետ (Կ. Դեմիրճյանի): Այն, ինչպես գիտեք, հենց սկզբից ինքնամեկուսացվեց: Ըստ իս պատճառն ընդհանուր բնույթ է կրում: Այսօր առաջադեմ սոցիոլոգներն արդեն բարձրաձայն խոսում են այն մասին, որ մեր պետությունը չի կարելի անգամ միապարտիական համարել: Իրոք, տեռորի տարիներին եղել է դահիճների կատաղած ոհմակ և մահվան սարսափից կուչ եկած զանգված, որը դժվար է պարտիա անվանել: Նրան փոխարինել է այլասերված պարտիական բյուրոկրատիան (պայմանական անվանենք դրան ԱՊԲ), որը միայն վայելել է, հարստացել և պահանջել՝ ոչ մի պատասխանատվություն չկրելով, մյուս կողմից «բուռն, երկարատև ծափահարություններով» ողջունող և իր հավանությունն արտահայտող մասսա, որը ևս դժվար է պարտիա անվանել: ԱՊԲ-ն ենթարկել էր իրեն բոլոր իրավապահ օրգանները: Եվ երբ նրա շարքերում գտնվում է մեկը, որը, հասկանալով պետության անխուսափելի տնտեսական և քաղաքական կործանումը, սկսում է փրկության պայքարը, ապա նա ստիպված է սկսել հեղափոխություն վերևից, որովհետև ներքևում տեռորի և լճացման տարիները սպանել էին ամեն ինչ: Անշուշտ, ԱՊԲ-ն պետք է ջանք թափի իր բացառիկ դիրքերը պահպանելու և պատասխանատվությունից խուսափելու համար: Ինչպե՞ս... ստեղծելով խառնակ վիճակ, որն ապացուցի դեմոկրատացման քայքայիչ գործոնը: Այդ տեսակետից ամենահարմարն են ազգամիջյան հարաբերությունները, որոնք հենց սկզբից դրվել էին անառողջ հիմքերի վրա՝ ստեղծելով լարվածության օջախներ: Այդպիսի փոքր արվեց

Ղազախստանում, սակայն լինելով նեղ ազգայնական՝ անմիջապես ճնշվեց: Մյուսը Անդրկովկասն էր, որտեղ ազգամիջյան հարաբերությունները վաղուց ի վեր սրված են և, մասնավորապես, հայ ժողովուրդը Ղարաբաղում և ՀԽՍՀ-ում հարմար պահի է սպասում կուտակված անարդարությունների դեմ բողոքի պայքար սկսելու: Այստեղ, սակայն, ազգային-ազատագրական պայքարը վեր ածվեց ազգային-դեմոկրատականի, ուստի և անխուսափելիորեն՝ ազգային-հակաբյուրոկրատականի, ինչն տիաբեկեց բոլորին՝ և՛ ԱՊԲ-ին, և՛ չափավոր դեմոկրատացման կողմնակիցներին: Հայաստանի ԱՊԲ-ն համամիութենական օրգանական մասն է, անշուշտ, նա էլ չէր ուզենա համագործակցել մեզ հետ:

Ես մաղկայնորեն հասկանում եմ մեր նոր ղեկավարի (Սուրեն Հարությունյանի) դժվարին վիճակը և կարեկցում նրան: Նա պետք է դիմանա ԱՊԲ-ի պրեսինգին, եթե ուզում է ծառայել ժողովրդի շահերին, պայքարել վերջինիս արդար պահանջների բավարարման օգտին: Եվ այս դեպքում, ինչ խոսք, ժողովուրդը կգնա նրա ետևից: Սակայն դրա համար նա պետք է ապացուցի գործով, որ իրոք նրա նպատակն է մասնավորապես ԼՂ-ի վերամիավորումը, և ոչ թե այդ հարցի սառեցումը շեղող, երկրորդական (գոնե տվյալ շրջանում) միջոցառումներով: Ոչ մի կասկած, որ սոցիալ-տնտեսական և հոգևոր կապերը ԼՂ-ի հետ պետք է զարգացվեն և ամեն ոք պետք է իր լուման մտցնի: Բայց դա չպետք է քնեցնի հիմնական հարցը: Ո՞վ, եթե ոչ մեր կառավարությունը պետք է բողոքի ձայն բարձրացնի մամուլի խեղաթյուրումների դեմ, մասնավորապես օդանավակայանի տխրահռչակ դեպքերի մեղքը ժողովրդի վրա բարդելու նպատակով կենտրոնական հեռուստատեսությամբ կեղծ «զենքի» ցուցադրման դեմ: Ո՞վ, եթե ոչ նա, պետք է բողոքի, որ մինչ օրս կենտրոնական կառավարությունը չի ցավակցել Սումգայիթի զոհերի հարազատներին, փախստականներին: Մի՞թե ամբողջ ազգին հասցվող վիրավորանքը բողոքի լուրջ հիմք չէ: Մինչդեռ քիչ էր մնում ՀԽՍՀ ԳԽ-ի սեսիան լռելյայն անցներ դրա կողքով, ի լուր աշխարհի հայտարարելով, որ հայ ազգը բնական է գտնում իր նկատմամբ այդպիսի վայրագությունը և անարգանքը, ուստի և չի բողոքում: Գուցե մեզ մեղադրեն այդ թեման անվերջ որոճալու մեջ, սակայն հենց օգոստոսի 10-ի «Լիտերատուրնայա գազետա»-ում Ա. Պրոխանովն իր "Я был в Степанакерте"[1] հոդվածում հավասարության նշան է դնում Սումգայիթի և «Զվարթնոցի» միջև: Այդ «անմեղաչյա կույսը» խոստովանում է, որ ոչինչ չհասկացավ Երևանում, խճճվեց հակասությունների մեջ: Սահմանադրության մեջ կա յուրաքանչյուր հանրապետությանը Միությունից դուրս գալու իրավունք վերապահող 72-րդ հոդվածը: Այդ դեպքում ի՞նչ է նշանակում ինքնորոշմանը վերաբերող 70-րդ հոդվածը: Ո՞վ կտա նրա, ինչպես նաև «Ավտոնոմիա» առեղծվածի աներկբա մեկնությունը: Եվ ո՞վ պետք է պահանջի այն. կառավարությու՞նը, թե՞ մենք: Ո՞վ պետք է հարց բարձրացնի Նախիջևանից ճնշման ներքո տասնյակ տարիներ ի վեր տարագրվող հայ բնակչության ճակատագրի և մայրենի օջախ վերադառնալու նրա իրավունքի պաշտպանության վերաբերյալ: Ո՞վ պետք է բողոքի ՀԽՍՀ տարածքից դուրս մեր հուշարձանների ոչնչացման, նրանց սեփականացման և պատմության խեղաթյուրման դեմ: Ո՞վ պետք է դատական գործ հարուցի Ալիեվ-Բաղիրով-Գնոր-

---

1 «Ես եղա Ստեփանակերտում»

կով հանցախմբի դեմ: Չէ՞ որ հաստատված է և ամենուրեք արծարծվում են նրանց միտումնավոր չարաշահումները:

Այս (օգոստոս) ամսվա 23-ին շատ ուսանելի հաղորդում տրվեց հեռուստատեսությամբ: Երախտապարտ ենք դրա համար և հույս ենք հայտնում, որ նման հաղորդումները կկրկնվեն: Ելույթ ունեցան մի խումբ իրավաբաններ և այլ հարցերի շարքում որոշակիորեն ասացին, որ եթե ներպետական սահմանադրությունը ներքին հակասություններ ունի, ապա առաջնությունը տրվում է միջազգային օրենսդրությանը, տվյալ դեպքում 1970-ին ՄԱԿ-ի կողմից ընդունված և ԽՍՀՄ-ի կողմից ստորագրված դեկլարացիային: Կարծում ենք, մեր կառավարությունը պարտավոր է այդ հարցը սրել:

Եթե մենք տեսնենք, որ մեր կառավարությունը բարձրացնում է նման կարգի հարցեր, ինչ խոսք, ժողովուրդը և Ղարաբաղյան Շարժման ամբողջ ակտիվը պատրաստակամությամբ կհամագործակցի այդ սուրբ գործին:

Ռ. Ա. Ղազարյան
Մ. Սարյանի փող.
26.08.88 թ.

Կարող եմ պատկերացնել, թե այսօրվա ընթերցողը քանի անգամ է ընդհատել ընթերցումը՝ բացականչելով՝ «Բա էսօ՞ր ինչ ա... Բա սրա՞նք ինչ են... Ու սրանց...», անասելի ցավով համաձայնում եմ: Բայց աղաչում եմ, վերադարձեք մի պահ այն օրերը: Կա՞ արդյոք ասածի մեջ գոնե մի սխալ պնդում կամ զրպարտանք... Ո՛չ: Այսօրվա վիճակն էլ նախորդի բարոյական մթնոլորտի ժառանգորդն է: Իրոք, ովքե՞ր են այսօր անդրկովկասյան, Միջին Ասիայի, Ռուսաստանի ղեկավարները. նախկին բարձրա- և ցածրապաշտոն կոմունիստական նոմենկլատուրան: Ովքե՞ր են մեր նախորդ և այսօրվա ղեկավարների շրջապատում առանցքային և «քյալամ» պաշտոններում: Պարզ չէ՞, որ նրանք ի վիճակի չեն այլ ոճով աշխատելու, քան այն, որը մտել է արյան մեջ տասնամյակների պրակտիկայով: Պարզապես մեր ղեկավարներին սոցիալ-տնտեսականից բացի բաժին է ընկել Ղարաբաղյան գորդյան հանգույցը. հարամ արեցին առաջինը, հուսանք, որ երկրորդը չեն տապալի:

Մի այլ (ի տարբերություն մյուս հանրապետությունների) ծանր ու վտանգավոր փորձության դամոկլեսյան սուր է կախվել մեր գլխին. արտագաղթի ծավալները: Սոցիալ-տնտեսական (բոլորի համար ընդհանուր) գործոնից բացի այստեղ կենտրոնախույս դեր խաղաց հանրապետության բնակչության կրկնապատիկը կազմող Սփյուռքը (հեռու և մոտիկ ազգականներ): Տա՛ Աստված, այդ փորձությունից էլ անփորձանք դուրս գանք:

Սակայն վերադառնանք մեր գերխնդրին: Արցախցիք մեկ անգամ ևս փորձեցին բողոքել հիմնահարցի մերժման կապակցությամբ՝ հրաժարվելով իրենց առաջարկվող սոցիալ-տնտեսական բարեփոխումներից: «Ինձ համար բացասական վերաբերմունքն այդ ծրագրի նկատմամբ անհասկանալի է», – զարմացավ «միամիտ» Գորբաչովը: Իսկ համաշխարհային էկոնոմիկայի ինստիտուտի տնօրեն Եվգենի Պրիմակովն ավելացրեց. «Նախ և առաջ մենք կոմունիստներ ենք և միայն հետո՝ տարբեր ազգերի ներկայացուցիչներ»: Յարգարժան նախկին կոմունիստ, մարդիկ սովորաբար ծնվում են որպես որոշակի ազգի ներկայացուցիչ և հետո միայն դրանցից առավել «աչքաբացները» դառնում կոմունիստ: Նենգափոխում են պարագաների «նախ»-ը և «հետո»-ն: Նույնը ասում են այսօրվա եհովականները՝ «նախ եհովական, ապա՝ հայ»: «Կրեմլը կոմունիստներին հատուկ ցինիզմով ոտքի տակ տրորեց իր ժողովուրդներից մեկի ազգային հպարտությունը», – ասել է Ջորջ Բուշ ավագը: Ի բողոք ՁԼՄ-ների սանձազերծած «բեսպրեդելի», սոցիալական աշխատանքի հերոս Գագիկ Մանասյանը 11 ուսանողների ու «աֆղանացիների» հետ նստում են հացադուլի: Նույնն անում է Խաչիկ Ստամբուլցյանը: Նրան են միանում Ռուսաստանից եկած հավատքի նրա եղբայրը և քույրը: Այդ հացադուլը, եթե հիշողությունս չի դավաճանում, տևեց մոտ 20 օր:

Այստեղ միջնորդագրով միջամտելու թույլտվություն եմ հայցում ներողամիտ ընթերցողից: 400 մլն. ռուբլին այն օրերին փոքր գումար չէր: Ու թեև համոզված ենք, որ Ադրբեջանը (գումարի հիմնական տնօրենը) հնարք ու ծուղակ կգտներ գումարի զգալի մասը ԼՂԻՄ-ից դուրս յուրացնելու համար, բայց և այնպես ստիպված կլիներ ճչացող խնդիրների մի մասը (ասենք ճանապարհների անմխիթար վիճակը, Յայաստանի հետ հեռուստակապը և այլն) շտկել: Եվ իրոք, ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական վիճակը որոշակիորեն կբարելավվեր: Սակայն նորից հիշեցնեմ թեզերումս առաջ քաշած պնդումը. եթե ԼՂԻՄ-ը ընդուներ այդ նվերը և դադարեցներ պայքարը հանուն անկախության, ապա 2 տարի անց ընդմիշտ կհայտնվեր անկախ Ադրբեջանի կազմում:

Պարզ լսում եմ ինձ ընդհատող զայրույթի և դառնության բացականչություններ. «Բա սրա՞նք ինչ օրի հասցրին...»: Այո՛, բայց այն օրերին չէինք պատկերացնում, որ երկրի ու ազգի

մարմինը կիրշոտեն անբարո ու անկուշտ պատեհապաշտներ... Սակայն դրանք հավերժ չեն. իրար հոշոտելով կվերանան, իսկ հողը կմնա:

Այս առումով Սուրեն Այվազյանի՝ սեպտեմբերի 28-ին հրապարակած բաց նամակը, որում նա դատապարտում է միտինգավորների քաղաքական ամլությունը, կոչ անում գործադուլների փոխարեն շտապ յուրացնել 400 միլիոնը, իմ մեջ վերը շարադրածի համատեքստում մերժողական զգացումներ էր առաջացրել:

Ի վերջո, 400 միլիոնից հրաժարվելը համարժեք էր կաշառքից հրաժարվելուն և այդ իմաստով քաղաքականապես ավելի ուժեղ քայլ էր: Իրոք, գուցե արժեր ընդունել «կաշառքը» և շարունակել պայքարը... Սակայն որքանով դա բարոյական (ավելի ճիշտ անբարոյական) կլիներ:

*Սեպտեմբեր, հոկտեմբեր:* «Սովետական Հայաստան»-ի սեպտեմբերի 4-ի համարում արտատպվեց ԽՍՀՄ գլխավոր դատախազի միջազգային իրավական հարցերի գծով օգնական Պավել Լապտևի հարցազրույցը, որում նա թվարկում է Հայրիկյանի բազմաթիվ «մեղքերը» Սովետական Միության հանդեպ և հիմնավորում վերջինիս՝ Սովետական Միությունից վտարելու օրինական լինելը:

Սեպտեմբերի 18-ին և 21-ին ընդհարումներ Խոջալուում և այլ վայրերում: Կենտրոնական մամուլն անդրադառնում է դրանց՝ առանց ճշտելու դրդապատճառները և ուղեկցում խառնակիչ-էքստրեմիստների հասցեին ուղղված կրկներգով: ՀԿԿ պլենումում, բյուրոյում, ԳԽ Նախագահությունում խոսում են բացթողումների, լճացման, բյուրոկրատիզմի մասին, տագնապ հայտնում ՀԽՍՀ-ում և ԼՂԻՄ-ում տիրող իրավիճակի առթիվ, կոչ անում ժողովրդին, չհանելով օրակարգից Ղարաբաղի հիմնահարցը, լծվել ԽՍՀՄ ԳԽ և Մինիստրների Խորհրդի հուլիսի 18-ի որոշումների կատարմանը: Նման կոչով դիմում են գիտնականները («Սովետական Հայաստան» 23.09.88 թ.) և ԼՂԻՄ-ում՝ ՍՄԿԿ կենտկոմի և ԽՍՀՄ Գերագույն Սովետի Նախագահության կողմից արտակարգ լիազորություններով օժտված ներկայացուցիչ Արկադի Վոլսկին («Սովետական Հայաստան» 25.09.88 թ.): Նա պետք է կազմակերպեր և կոորդինացներ երկու հանրապետությունների և կենտրոնական իշխանությունների գործողությունները՝ ի կատարումն հուլիսի 18-ին ընդունված ԼՂԻՄ-

ի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի: Գորբաչովը Նյու-Յորքում քննարկում է՝ Ռեյգանի հետ քիմիական և միջուկային զենքի կրճատման և արգելման խնդիրը: Ամսվա վերջում թույնի հերթական (այս անգամ՝ արցունքախառն) բաժինը թափում է մեր «բարեկամ» Օվչարենկոն: Ողբը վերաբերում է փախստականներին, սակայն՝ ինչպե՞ս հեռացան ադրբեջանցիք Երևանից և հայերը՝ Բաքվից... Ոչ մի խոսք: Հոկտեմբերի 1-ին ԽՍՀՄ Գերագույն Սովետի արտահերթ նստաշրջան: Գորբաչովը կոչ է անում բարձրացնել տեղական սովետների դերը սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման գործում: ԼՂԻՄ-ի մասին ոչ մի խոսք, սակայն դրանից անմիջապես հետո Ստեփանակերտ, Բաքու, Երևան են մեկնում Ազգությունների Սովետների պատգամավորական հանձնաժողովներ: Հանդիպումներ պատգամավորների, բանվորական կոլեկտիվների հետ. համաձայնելով, որ գործադուլները վնասում են երկրի և ընտանիքի գրպաններին՝ ամենուր, բանվորից մինչև ակադեմիկոս, իրենց զայրույթն են արտահայտում ԶԼՄ-ների գրգռիչ, պրովոկացիոն գործելակերպի դեմ, ԼՂԻՄ-ի խնդրի շուտափույթ և արդարացի լուծման և սումգայիթյան ոճրագործների դատապարտման վճռական պահանջ ներկայացնում:

Սեպտեմբերին, ինչպես վերը նշվեց, «եղբայրական սիրո» նոր փայլատակում՝ Խոջալուի դեպքերը: Հիշեցնեմ՝ Խոջալուում հարձակվում են Ստեփանակերտի մարդատար ավտոբուսի վրա ու ջարդում ուղևորներին: Լուրը հասնում է Ստեփանակերտի միտինգավորներին, որոնք շարժվում են հայրենակիցներին օգնության: Փայտերով ու քարերով զինվածներին դիմավորում են որսորդական հրացաններով (հայ որսորդներից դրանք առգրավվել էին ավելի վաղ): Ընդհարում: Վայ-փոխգնդապետ Ուզլյանի ներկայացնելով էքստրեմիստները (այսինքն՝ հայերը) կիրառեցին հրահրման (պրովոկացիոն) իրենց փորձված մեթոդները: Գիտակցաբար շրջանցում է պատճառահետևանքային հաջորդականությունը այնպես, որ իր ասածից պարզ չի դառնում՝ ով է նախաձեռնողը, ասում է, որ խառնակիչները գործի դրեցին սառը զենք և հրազեն: Ստացվում է՝ երկուստեք: Այսինքն՝ ավտոբուսի ուղևորները՝ կանայք ու երեխաները, մթերքի փոխարեն զենք ու զրահով էին ճանապարհ ընկել: Այս առթիվ «Ղարաբաղ» կոմիտեն սեպտեմբերի 18-ին պատվիրանով դիմել էր ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի դեպուտատներին:

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱՆ ՀԽՍՀ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻՆ

Մտահոգված սույն թվականի սեպտեմբերի 18-ին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած ազգամիջյան բախումներից, որոնց հետևանքով հայ բնակչության մեջ կան տասնյակ վիրավորներ, և հանգելով այն եզրակացության, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի որոշումն ամենևին չի երաշխավորում մարզի բնակչության բնականոն զարգացումն ու նրա բնակչության կյանքի ապահովությունը և նույնիսկ նպաստում է լարվածության սրմանը՝ Հայկական ԽՍՀ աշխատավորությունը, հայտարարելով անժամկետ համազգային գործադուլ, պահանջում է մեկ-երկու օրվա ընթացքում գումարել Հանրապետության Գերագույն Խորհրդի արտահերթ նստաշրջան ընդունելու համար հետևյալ անհետաձգելի որոշումները:

1. Նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղում ստեղծված ծայրահեղ լարված իրավիճակը, տեղի ունեցած լուրջ ազգամիջյան բախումները և այդ առթիվ հանրապետության աշխատավորության իրավացի անհանգստությունը՝ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհուրդը դիմում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն Ադրբեջանի կազմից անհապաղ դուրս բերելու և դրանով մարզի հայության ինքնորոշման իրավունքը մասամբ բավարարելու պահանջով:

2. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհուրդը կրկնում է 1988 թ. հունիսի 15-ի որոշումը՝ ևս մեկ անգամ տալով իր համաձայնությունը Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի վերամիավորման առաջարկին:

3. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհուրդը պահանջում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդից արդյունավետ միջոցներ ձեռնարկել Ադրբեջանի հայ բնակչության անվտանգությունն ապահովելու համար:

4. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհուրդը պաշտոնապես ընդունում է 1915 թ. ցեղասպանությունը և դիմում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին՝ ճանաչելու ցեղասպանությունը և ապրիլի 24-ը հայտարարելու ոչ աշխատանքային օր:

Ղարաբաղյան Շարժման Հայաստանի կոմիտե
18.09.1988 թ.

Նկատի առե՛ք... Երբ 1990 թվականին դարձան իշխանություն, ապա անկախացած Հայաստանի առաջին հռչակագրում փորձեցին լռությամբ անցնել եղեռնը, և միայն մեր համառ պնդմամբ այդ կետը մտավ:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության վերապահած լիազորություններին համապատասխան ԼՂԻՄ-ում և Ադրբեջանական ԽՍՀ Աղդամի շրջանում հատուկ դրություն և պարետային ժամ է մտցվում: Ի պատասխան Մոսկվայի հերթական պրովոկացիոն հայտարարությունների, հանրապետությունում շիկանում է մթնոլորտը. նորից միտինգներ և գործադուլներ:

Հանրապետության իշխանությունները կոչ են անում կոմունիստներին, աշխատավորներին՝ հանդես բերել քաղաքացիական բարձր գիտակցություն, տոկունություն, պատասխանատվություն և այլն («Սովետական Հայաստան» 23.09.88 թ.):

ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահությունը մի քանի կետից բաղկացած խնդրանքով դիմում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին, մասնավորապես խնդրում է արագացնել ԼՂԻՄ-ին վերաբերող հարցերի փաթեթի քննարկումը, ինչպես նաև «խնդրել ԽՍՀՄ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհուրդների նախագահություններին անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել ապահովելու Ադրբեջանական ԽՍՀ տերիտորիայում հայ բնակչության անվտանգության ռեալ երաշխիքներ («Սովետական Հայաստան» 24.09.88 թ.)»:

Սեպտեմբերի 26-ի «Իզվեստիա»-յում և սեպտեմբերի 25-ի «Սովետական Հայաստան»-ում տպագրվել էր Ղարաբաղի ղեկավարության դիմում-հեռագիրը, որում դատապարտում էին Լեռնային Ղարաբաղի վերջին օրերի իրադարձությունների կապակցությամբ Երևանի միտինգներում տարածվող «լուրերն ու հերյուրանքները»: «Ղարաբաղ» կոմիտեի այդ առթիվ վերը բերված դիմումը հիմք չի տալիս նման մեղադրանքների, կարծում եմ՝ հեռագիրը պարտադրված էր Մոսկվայից:

«Անխոնջ» Ովչարենկոն «տանջվում» է «ու՞մ էր դա ձեռնտու» սակրամենտալ հարցով («Պրավդա» 28.09.88 թ.):

Խոջալուի իրադարձություններից անմիջապես հետո եղա Ստեփանակերտում, մասնակցեցի միտինգին: Գիշերեցի Բորիս Առուշանյանի տանը, որը տոնական տրամադրությամբ էր վերադարձել Մոսկվայից. իր տնօրինած էլեկտրատեխնիկական գործարանը դարձել էր Երևանի գործարանի մասնաճյուղ: Իմ վերադառնալուց հետո Ստեփանակերտում գործադուլ սկսվեց: Այդ կապակցությամբ Սուրեն Հարությունյանը մեղմորեն կշտամբեց ինձ՝ կապելով դա իմ այցելությանը: Սակայն իրականում ես մեղք չունեի:

Այսօր չեմ հիշում՝ ա՞յս, թե՞ մեկ այլ այցելության ժամանակ, այցելեցի Արկադի Մանուչարովի հիմնարկը: Ուղեկցեց ինձ Ռոբերտ Քոչարյան անունով համեստ մի երիտասարդ՝ հիմնարկի կուսքարտուղարը: Մանուչարովը, փայլելով իր կապտականաչ գեղեցիկ աչքերով, ոգևորված պատմում էր Գորբաչովի հետ իրենց պատվիրակության հանդիպման, իր արտասանած հուզա-

կան խոսքի մասին: Ռոբերտն այդ ընթացքում համեստորեն լռել էր: Մի քանի տարի անց Ստեփանակերտի համալսարանի հետ կապված միջոցառման կապակցությամբ ԳԽ հանձնաժողովի իմ տեղակալ գերազնիվ ու գերպարտաճանաչ Ռաֆիկ Աբգարյանի հետ այցելեցինք նաև ԼՂԻՄ-ի նախագահ դարձած Ռոբերտին: Մեր առջև, ձեռքերը արմնկակալներին, նստած էր *իշխանավոր*: Տեղից վեր չկացավ: Սակայն՝ «Իրո՞ք հանձնում եք ազատագրված տարածքների մի մասը» հարցիս նրա տված «Ինչի՞ մասին եք խոսում, ոչ մի մետր չենք հանձնի» պատասխանը պարզապես երջանկացրեց ու որոշիչ դեր խաղաց ինձ համար՝ կանխորոշելով 98-ի նախագահական ընտրություններում իմ չարչրկված ելույթն ի նպաստ Քոչարյանի:

* * *

Երկրում բողոքի կամպանիա էր ծավալվում ԽՍՀՄ սահմանադրության մեջ փոփոխություններ, լրացումներ մտցնելու դեմ: Առաջինն ըմբոստանում է Էստոնիան՝ ասելով «ոչ» օրենքի նախագծին: Մասնավորապես, առաջարկվում է 50-րդ հոդվածը լրացնել այսպես. «ԽՍՀՄ ԳԽ ամեն մի դեպուտատ իրավունք ունի ԳԽ օրգան «Իզվեստիա» թերթում տպագրման առաջարկել տարվա ընթացքում որոշակի ծավալ կազմող իր ընտրողների հոդվածները, որոնք պետք է տպվեն առանց բովանդակությունը փոփոխելու, մեկ շաբաթվա ընթացքում»:

Կոմիտեն հրապարակում է «Անցած Ուղին» խորագրով ռուսերեն ամփոփագրքույկը:

* * *

Այդ ընթացքում սումգայիթյան «հայճեպընթացը» տեղում (Սումգայիթում), պդտորաջուր խուսանավող հետաքննությունից հետո, հասավ դատարան: Բրազիլիայում 5 մարդասպանների ձեռքով 3 հնդկացների սպանությունը սովետական մամուլն անվերապահորեն որակեց որպես գենոցիդ, այս դեպքում, սակայն, եղեռն որակումից խուսափելու համար ակնհայտ ամբողջական գործը գործավարական դժվարությունների պատրվակով և գլխավոր դատախազի օգնական Կատուսևի «համոզմամբ» մաքսիմալ օբյեկտիվությունն ապահովելու նպատակով («Իզ-

վեստիա» 20.08.88 թ.), ինչպես նաև աշխատավորների խնդրանքներին (!?) ընդառաջելով մասնատվեց առանձին խուլիգանական արարքների, և դատալսումն առաքվեց տարբեր քաղաքներ: Կատուսևը որպես հերյուրանք է որակում դեպքերի նախօրեին հայերի ցուցակները կազմելու և որոշ ձեռնարկություններում մետաղաձողերի պատրաստման մասին լուրերը: Սակայն մի քանի տող ստորև պատմում է ոմն Իբիշովի մասին, որը բաժանեց մետաղաձողերը իր շուրջը հավաքված խուլիգաններին: Հարյուրի մոտ հանցագործների նկատմամբ հարուցված 19 քրեական գործերից մեկը, որ վերաբերում էր 3 մարդասպանների, լսվեց Մոսկվայում ԽՍՀՄ Գերագույն դատարանում հոկտեմբերի 18-ից մինչև նոյեմբերի 18-ը: Զավեշտային էր գլխավոր մեղադրող Կոզլովսկու՝ յուրաքանչյուրի հանցանքին տված ձևակերպումը՝ «սպանության նպատակով՝ խուլիգանական դրդումով…»: Զոհի այլ ազգության պատկանելը Կոզլովսկին չէր հիշատակում, ըստ երևույթին «պրոֆեսորական ցրվածությամբ»: «Էս շան տղա Հիտլերը Սովետների վրա հարձակվեց խուլիգանական դրդումով», –կատակում էին Հայաստանում: Հայաստանը ներկայացնող փաստաբան Ռշտունուն ապշեցրել էր Կոզլովսկու խոստովանությունը՝ «վատ է ծանոթ գործի մանրամասներին»: Նա անգամ չփորձեց հերքել մեղադրյալի զրպարտանքը քննչական գործընթացի հասցեին: Ռշտունին ստիպված էր բացահայտել սուտը: Նույնն անում էին հայկական և ԼՂԻՄ-ի մամուլները, սակայն բանդիտները համառորեն շարունակում էին պարզունակորեն ստել: Վկաների հիշողության մթագնման և հավկուրության համաճարակ էր բռնկվել: Գործը դատարան էր եկել «հում» վիճակում, դատը վարվում էր մակերեսորեն, զգացվում էր քաղաքական գնահատականից խուսափելու տենդենցը: Ռշտունին և Շապոշնիկովան ստիպված եղան պահանջել, որ գործը վերադարձվի լրաքննության և դիտարկվի ամբողջականությամբ: Տղաների առաջարկով կազմում եմ բոլորիս կողմից ստորագրված հետևյալ վերջնագիրը.

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿ. ՏԵՐԵԲԻԼՈՎԻՆ

Համոզվելով, որ ԽՍՀՄ իրավապահպան մարմինները, ամիսներ շարունակ ձգձգելով սումգայիթյան ցեղասպանների հետաքննությունը, խմբային բանդիտիզմի մեկ միասնական գործը տարրալուծելով խուլիգանական մղումներից

կատարված գործերի, ձգտում են քողարկել և խեղաթյուրել հայ ժողովրդի նկատմամբ կիրառված ահավոր ոճրագործության քաղաքականությունն ու մասշտաբները, թաքցնել նրա բուն կազմակերպիչներին ու գլխավոր հանցագործներին, մենք՝ ս. թ. նոյեմբերի 12-ին Երևանի թատերական հրապարակում տեղի ունեցած 200.000-անոց միտինգի մասնակիցներս, պահանջում ենք.

1. Քաղաքական գնահատական տալ սումգայիթյան ոճրագործությանը, որն իրագործված լինելով լոկ ազգային պատկանելության հատկանիշի հիման վրա, համապատասխանում է Միացյալ Ազգերի Կազմակերպության 1948 թ. համաձայնագրով սահմանված ցեղասպանություն հասկացությանը,

2. Հրապարակել զոհվածների և անհայտ կորածների ամբողջական ցուցակը,

3. Չեղյալ համարել ավարտված դատական պրոցեսներում կայացված վճիռները և դադարեցնել Ադրբեջանի ու Ռուսաստանյան Ֆեդերացիայի տարբեր քաղաքներում ընթացող դատավարությունները,

4. Սումգայիթյան դատավարությունը, որպես մեկ միասնական գործ, դնել ԽՍՀՄ գերագույն դատարանի իրավասության տակ:

Նշված պահանջները չբավարարելու դեպքում մենք, վերջնականապես համոզվելով սովետական արդարադատության սնանկության մեջ, ստիպված կլինենք կազմակերպել հասարակական լսումներ և դիմել միջազգային ատյաններին:

Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե

12.11.88 թ.

Չտարածվեմ, քանզի ձեռքի տակ ունենք լուսահոգի Սամվել Շահմուրադյանի տարեգրությունը և Հրայր Ուլուբաբյանի նյութերը: Հուսով եմ այդ գործին մասնակցած մեր իրավաբանները տվել են կամ կտան այդ խայտառակ էպոպեայի վերլուծությունը:

*Նոյեմբեր:* Մոսկվան ուժեղացնում է ճնշումը: Կոմիտեն զսպվածության կոչ է անում՝ չմատնվել պրովոկացիաներին: Շտապում ենք Կիրովական: ԳԽ բացօթյա նիստ: Դատարկվում են Մեղրիի շրջանի թուրքական և Նախիջևանի հայաբնակ գյուղերը: «Տիգրանի» շարունակական ճնշումը շարժման նկատմամբ: Ավելի է շիկանում մթնոլորտը համայն հայության շրջաններում. լինի դա ԼՂԻՄ-ում, Հայաստանում, մերձավոր կամ հեռավոր Սփյուռքում: Հանրահավաքները դարձել էին ավելի հաճախակի, կոմիտեն, ինչպես և տարբեր կազմակերպություններ ու անհատներ, կոչերով ու նամակներով դիմում են և՛ հայությանը, և՛ համայն մարդկությանը, պետական գործիչներին և պետությունների ղեկավարներին: Այդ կոչերի մի մասը կարելի է կարդալ 1989 թ.-ի Մ. Գորգիսյանի խմբագրությամբ «Հայ-

րենիք» հրատարակչության հրատարակած «Մեղադրվում են» գրքույկում: Ինձ մոտ այդ շրջանից պահպանվել է նոյեմբերի 5-ի հանրահավաքում ելույթիս տեքստը: Այն արտահայտում է տիրող մթնոլորտը և այլ կոչերի ուղղվածությունը.

## ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԵԼՈՒՅԹԸ

Միութենական ԳԽ-ի նախագահության հուլիսի 18-ի «կրտած» որոշումը, մեր ժողովրդի վզին երկարատև պայքարի ծանր լուծը և ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, զուտ ազգային-ազատագրական խնդիրներից բացի ժողովուրդը ստիպված եղավ մղել նաև սոցիալ-հակաբյուրոկրատական պայքար՝ դիմելով անգամ ծայրահեղ, թեպետև առաջին հերթին իրեն իսկ համար, ծանր միջոցների:

Սակայն վերջերս ի հայտ է գալիս անհանգստացնող վտանգավոր մի գործոն: Սկզբում շշուկների և ենթադրությունների մակարդակով հետզհետե ստույգության աստիճանի հավակնությամբ խոսում են ամենամոտ ապագայում Արցախի հարցի արմատական լուծման մասին:

Դա առաջին դեպքը չէ: Որոշ գործիչներ փետրվարին էլ փորձեցին հանգստացնել մեզ հարցի մոտալուտ լուծման խոստումով: Ինչի՞ հանգեցրեց դա... միայն պայքարի աններելի ընդհատման: Այժմ կա նույն ինքնահանգստացման, լիցքաթափման ապառնալիքը: Այսօրվա ելույթները ձեզ ցույց կտան, թե որն է իրականությունը, սակայն նախնական մի քանի դատողություն թույլ տվեք արտահայտել մինչ այդ:

Կարո՞ղ է որևէ մեկը մատնանշել մի պաշտոնական հաղորդագրություն մամուլում, ռադիոյով կամ հեռուստատեսությամբ... Ո՛չ... Խոսքս կենտրոնական կառավարության անդամների մասին է: Մենք չենք կասկածում հանրապետության և մարզի ղեկավարների անկեղծ ցանկության և արվող ջանքերի մեջ: Սակայն վճռողը ավաղ նրանք չեն՝ Մոսկվան է: Իսկ անցյալ ամիսները համոզիչ կերպով ցույց տվեցին կենտրոնական կառավարության «մտքի ճկունությունը և իրավիճակի ճիշտ ըմբռնման» նրանց ունակությունը: Մենք լավ ենք հիշում կենտրոնական ինֆորմացիոն կանալներով ամիսներ ի վեր մեր ժողովրդի գլխին թափվող աղբաջրերի գետը, ահաբեկիչ ակցիաները մարտին, մայիսին, հունիսին մեզ մոտ և Խոջալուն ԼՂԻՄ-ում:

Մենք տեսանք, թե ինչպես է իրագործվում սոցիալ-տնտեսական զարգացման գովերգած ծրագիրը, տեսանք՝ ուր են լցվում Հայաստանի սուտփախստական թուրքերը և ինչպես է պաշտպանում և հոգում կառավարությունը Սումգայիթի և Շուշիի փախստականներին...

Ուրեմն որտեղի՞ց է գալիս այդ լավատեսությունը... Միայն այն փաստից, որ մեր «երդվյալ բարեկամներ» «Իզվեստիա»-ն ու «Պրավդա»-ն վերջերս պապանձվե՞լ են, թե՞ այն փաստից, որ հանրապետական թերթերում, ընդ որում գլխավորապես հայալեզու թերթերում, վերջապես խոսվում է դառը ճշմարտությունը: Դա էլ երկիմաստ մեկնանք ունի: Համենայն դեպս, հենց որ հաջողվեց ստիպել, որ ռուսալեզու թերթերում ևս տպվի այդ ճշմարտության մի մասը, դրանց բաժանորդագրումը (հատկապես Հայաստանից դուրս) դար-

ծավ համարյա անհնարին: Օրերս նամակ ստացա Ռուսաստանից, որ «Սովետսկի Կարաբախ» չեն բաժանորդագրում:

Ուրեմն այդ ներհանրապետական ճշմարտախոսությունը, լավատեսական ոչ պաշտոնական փսփսոցը ես պարզապես կորակեմ այսպես. կենտրոնական ղեկավարությունը, ցուցաբերելով մտքի իրոք ապշեցուցիչ ճկունություն, որոշել է, խոսելով հենց ռուս գրականության պերսոնաժների անալոգիայով, «Ունտեր Պրիշեբեևի» գործելակերպից անցնել «Իվան Սուսանինի» մեթոդին: Ուստի, սիրելի հայրենակիցներ, որքան էլ ինձ համար ծանր լինի հետ համոզել ձեզ բաղձալի պատրանքներից, կոչ եմ անում՝ ոչ մի ինքնահանգստացում, ինքնախաբեություն չպետք է թույլ տանք և շարունակենք պայքարը մինչև հաղթանակ: Իսկ եթե լուծումը գա ավելի շուտ, քան մենք նախատեսել ենք, չքողոքարկել: Եվ, վերջացնելով, ուզում եմ դիմել ձեզ խնդրանքով. եկեք չքավարարվենք միայն լսելով, բռունցք բարձրացնելով ու ցրվելով: Միտինգի ամփոփումը պետք է դառնա հրատապ գործողությունների ծրագիր: Այդ է թելադրում իրավիճակը՝ մեկ ամիս անց կարող է ուշ լինել: Նորաստեղծ ընկերությունների մասին. արցախյան պլյուրալիզմ, բայց համագործակցության նպատակով, այլ ոչ՝ մեկը մյուսին խանգարելով:

*24-ը նոյեմբերի, 88 թիվ:* «Հայրենակիցներ, ս. թ. նոյեմբերի 24-ին մեր պայքարը հասավ իր գագաթնակետին՝ նշանավորվելով միաժամանակ և՛ մեծագույն հաղթանակով, և՛ մեր դեմ կիրառված ամենաբիրտ բռնությամբ»: Այս խոսքերով է սկսվում կոմիտեի նոյեմբերի 25-ի դիմումը: Հիրավի, նոյեմբերի 24-ը դարձավ Սովետների 7 տասնամյակների պատմության մեջ եզակի երևույթ. ժողովուրդը պահանջեց Գերագույն Խորհրդի բացօթյա նիստ և հասավ դրան: Օպերայի հրապարակում ծավալվեց շեքսպիրյան թատրոնի նմանակը. ժողովրդի և օրենսդրի միջև անմիջական կոնտակտ. կատեգորիկ հարց, զգույշ պատասխան, ժողովրդավարության ապոթեոզ... (չշփոթել դեմոկրատիայի հետ. վերջինիս թատերականացումը հեռուստահաղորդվում է մեր օրերին): Նույն օրը մտցվեց պարետային ժամ, քաղաքը վերստին լցվեց զորքերով, Ադրբեջանում դա ընկալեցին որպես խրախուսանք, և հայության նկատմամբ թափ առավ վայրագությունների նոր ալիք: Ի պատասխան դրան, վերջին միտինգի մասնակիցները միաձայն կոչ են անում անժամկետ գործադուլի, մինչև որ չհանվի պարետային ժամը և չապահովվի ադրբեջանահայության անվտանգությունը:

Բացօթյա այդ նիստի սկսվելուց մի ժամ անց մեզ մոտեցան երկու մեղրեցի ու մի գրություն պարզեցին շրջանի ղեկավարից (եթե չեմ սխալվում՝ Մեհրաբյանից): Բարոյական աջակցություն էր հայցում, անհանգիստ էր. շրջապատված են թուրքերով: Որ-

պես տարիքով «ամենաջահելի», խնդրեցին՝ ես գնամ: Մեղրի հասանք ուղղաթիռով: Առաջին անգամ էի տեսնում անկրկնելի ռելիեֆով Մեղրին: Վիճակն իրոք լարված էր և ոչ միայն ազգամիջյան ընդհարումների հնարավորությամբ: Որևէ փոքրաթիվ զինված խումբ կարող էր անպատիժ այլանդակություններ դիմել անզեն Մեղրիում:

Շրջանի ղեկավարության հետ հավաքեցինք ակտիվիստներին. գիտակից տղաներ էին: Ճշտեցինք գործելակերպը. խստագույնս խուսափել ընդհարմամբ հղի նվազագույն սադրանքից կամ կծու խոսքից, բաժանվել խմբերի և օգնել մերձակա գյուղերի թուրք բնակչությանը բեռնատար մեքենաներով ունեցվածքի բեռնելու գործում արտագաղթը (դեպի Նյուվադի) կազմակերպելու և մեղմացնելու նպատակով: Երաշխավորել էինք բնակարանների և թողած ունեցվածքի պահպանումը: Այդ պահին Մեղրի լցվեցին Նախիջևանի Բիստ գյուղի ծեծված ու թալանված հայ բնակիչները: Ջանք պահանջվեց նրանց կրքերը զսպելու համար... Արտագաղթն ավարտելուց հետո տղաները շրջեցին գյուղերով ու վնասազերծեցին դարանակալած բազմաթիվ ինքնասարք ռումբերը...

*Դեկտեմբեր:* Երկրաշարժ... Կոմիտեն կցվում է փրկարար աշխատանքներին: Առաջին հնգյակի ձերբակալումը: Բողոքի ցույց, որը վերջանում է տուրուդմփոցով: Կոմիտեն ընդհատակում: Աշոտ Մանուչարյանը հրապարակում է (ընդհատակից) իր հայտնի «Ինչպե՞ս դա եղավ» հոդվածը, որը թարգմանաբար տարածվում է նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով: Ակադեմիկոս Անդրեյ Սախարովն այցելում է Հայաստան, ԼՂԻՄ, Բաքու: Հանդիպում Սախարովի հետ Գիտությունների Ակադեմիայում: Ռուս մտավորականությունն ի պաշտպանություն Ղարաբաղի խնդրի ստեղծում է «Կրիկ» կոմիտեն: Սախարովի ղեկավարած «Մոսկովսկայա տրիբունա»-ն ևս համակրում է մեր պայքարին: Զիյա Բունիաթովը խուլիգանական «գոհարներով» լի պասկվիլ է հրապարակում հայապաշտպան հոդվածի հեղինակ Շելով-Կովեդյաևի դեմ: Վերջինս իսկական մտավորականին հատուկ կոռեկտությամբ ոչնչացնում է խուժան ակադեմիկոսին: «Նյու-Յորք Թայմզ»-ի դեկտեմբերի 8-ի համարում, D36 էջը զբաղեցրել է Գորբաչովի գլուխը՝ աչքերին սև կապ, կապի վրա գրված է. «Հազարավոր սովետական հայեր բռնի տեղահան են արվում իրենց տներից ու արտաքսվում: Եթե այդ տեռորը շարունակվի,

մեկը պետք է պատասխան տա...»: Նկարատակի տեքստը տեղեկացնում է, որ տեղահանումն ուղեկցվում է դաժան ծեծով և սպանություններով: Եվ հայտարարություն. «Ապրիլ ամիսը կանցնի սովետահայության ամերիկահայության կողմից օգնության նշանաբանով», ու փոստի համարը:

Հայության բռնություններով ուղեկցող տեղահանումը պատմականորեն հայաբնակ տարածքներից հղի էր համարժեք գործողությունների բռնկումով բուն Հայաստանում: Նման ցավալի միջադեպ պայթեց Կիրովականի մոտակա թուրքաբնակ գյուղում: Անսպասելի էր, ուստի կոմիտեի կիրովականյան խմբի տղաները մի փոքր ուշացել էին: Ավետիք Իշխանյանի և հետագայում մութ ուժերի զոհ դարձած Վիտյա Այվազյանի հետ մեկնեցինք Կիրովական: Տեղի ակտիվիստների հետ կազմակերպած հանրահավաքում կոչ արեցինք ի հեճուկս Մոսկվայի սպասելիքների տուրք չտալ կրքերին, խուսափել ամեն տեսակի բռնարարքներից:

Երևանում կոմիտեն դիմել էր նմանատիպ կոչերով. բարեբախտաբար դրանցից երկուսը պահպանել եմ:

ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

Սույն թվականի նոյեմբերի 20-ից Ադրբեջանում բարձրացել է հակահայկական մոլուցքի մի նոր ալիք: Հանրապետության ողջ հայ ազգաբնակչությունը ենթարկվում է ամենօրյա բռնությունների, ահաբեկումների, ուղղակի ֆիզիկական հաշվեհարդարի: Կան զոհեր, բազմաթիվ անհայտ կորածներ, հարյուրավոր վիրավորներ, ավերվել, հրկիզվել և թալանվել են հայերին պատկանող հազարավոր տներ և բնակարաններ: Օգտվելով ստեղծված խառը իրավիճակից՝ ադրբեջանական իշխանություններն իրականացնում են հազարավոր տարիներ իրենց պապենական հողի վրա բնակվող Գանձակի ու Հյուսիսային Արցախի հայությանը տեղահանելու հրեշավոր մի ծրագիր, որով Լեռնային Ղարաբաղը նվաճելու հող է նախապատրաստվում:

Արդեն շուրջ 120 հազար հայ բռնի տեղահանվել է Ադրբեջանից, որոնցից շուրջ 50 հազարն ապաստան են գտել Հայաստանում, մյուսները՝ Հյուսիսային Կովկասում և Միջին Ասիայում: Ահաբեկված հայերի տեղահանության ահավոր չափերից, ենթարկվելով Ադրբեջանի իշխանությունների հրահրումներին՝ զանգվածային արտագաղթի պրոցես է սկսվել նաև Հայաստանում բնակվող ադրբեջանցիների շրջանում, որի հետևանքով արդեն շուրջ 80 հազար ադրբեջանցիներ լքել են հանրապետության սահմանները: Դատելով այն բանից, որ տեղական և մանավանդ զինվորական իշխանությունները ոչ միայն չեն խոչընդոտում հայ և ադրբեջանցի բնակչության զանգվածային տեղափոխությանը, այլև ընդհակառակը, կարծես արագացնում են այդ պրոցեսը՝ ակնհայտ է դառնում, որ այն եթե ոչ ծրագրված, ապա գոնե խրախուսվում է Մոսկվայի

կողմից: Այսպիսով, կենտրոնական իշխանությունները հետևողականորեն իրականացնում են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության հուլիսի 18-ի անհեռատես որոշումից բխող հայ-ադրբեջանական սուր առճակատում ստեղծելու քաղաքականությունը, որը հավասարապես հակասում է ինչպես հայ, այնպես էլ ադրբեջանցի ժողովուրդների շահերին:

Հաշվի առնելով սույն իրողությունները և ելնելով սկսված պրոցեսի անշրջելիության գիտակցությունից՝ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն կոչ է անում անել ամեն ինչ խուսափելու համար տեղահանություններին ուղեկցող բախումներից, որոնք հանրապետության տարբեր շրջաններում արդեն հանգեցրել են որոշ ցավալի հետևանքների: Վստահ ենք, որ ո՛չ Մոսկվայի սադրանքները, ո՛չ էլ Ադրբեջանում տեղի ունեցող վայրագությունները չեն կարող հավասարակշռությունից հանել քաղաքական պայքարի փորձ ունեցող մեր ժողովրդին և մեզ շեղել մեր հիմնական նպատակից, որն է՝ Արցախի վերամիավորումը Հայաստանի հետ:

Ղարաբաղյան Շարժման Հայաստանի կոմիտե
02.12.1988 թ.

Նման բովանդակությամբ երկրորդ կոչով կոմիտեն դիմել էր աշխարհի ժողովուրդներին (տե՛ս Հավելված, էջ 298): Ասեմ, որ 1988-ի նոյեմբերից հունվար ամիսներին կոմիտեի կոչերն ու դիմումները բերված են վերը հիշատակած «Մեղադրվում են» գրքույկում:.

# ԱՄՊՐՈՊ ԱՆԱՄՊ ԵՐԿՆՔՈՒՄ

*88-ի դեկտեմբերի 7-ը, ժամը 11.42:* Երկար գիշերին նախորդեց ամենաաև օրը: Այդ ժամին գտնվում էի Էջմիածնի միլիցիայի բաժանմունքում, ուր ինձ հրավիրել էին մի քանի օր առաջ Էջմիածնում կազմակերպված միտինգի կապակցությամբ (Երևանում պարետային ժամ էր): Այն ընթացավ Գորբաչովի հասցեին սուր մեղադրանքներով: Այդ առթիվ իմ արտահայտած տարակուսանքին Լևոնը եռանդուն համոզում էր, որ Գորբաչովը «կզել ա», մի զարկ էլ տանք՝ «կիանձնվի»: Զանգ եկավ. միլպետը վերցրեց խոսափողը ու այլայլվեց... Մի քանի րոպե անց, առանց տուն մտնելու, ինձ Էջմիածին հասցրած Էդամի հետ սլանում էինք Սպիտակի ուղղությամբ: Թե ի՞նչ էր կատարվում մայրուղու երկայնքով, ով չի տեսել՝ լսել է: Սպիտակ հասանք մթնշաղին... Զարհուրելի էր... Գիտակցությունը ներքին աղաղակով վանում էր տեսածը... Փլատակներ, դիակներ... Կիրովական հասանք գիշերով. թվաց՝ փառք Աստծո, ավելի բավոք վիճակում է, ավելի ուշ իմացանք, որ արտաքուստ կանգուն շենքերը ներսում քանդվել էին: Կիրովականի մատույցներում հանդիպեցինք թուրքաբնակ գյուղերից արտագաղթողների կահկարասիներով լեցուն բեռնատարների շարասյունին, դուրս էին եկել աղետից ժամեր առաջ: Գյումրիի ճանապարհին, փորձելով շրջանցել մայրուղու խցանը գյուղամիջյան ճանապարհներով, խրվեցինք ծյունախառն ցեխաջրի մեջ:

Գորբաչովն ընդհատեց ամերիկյան իր ուղևորությունը՝ շտապ վերադարձավ Մոսկվա: Մոսկվայից եկող գնահատականներն ավելի էին ցնցում ու դժբախտացնում. ըստ մասնագետների, նման ուժգնության աղետի զոհերի թիվը հասնում է (բնակչության խտությունը հաշվի առնելով) 60 և ավելի հազարի: Աշխարհը ցնցվեց... Ցավակցեց... Ու շտապեց օգնության: Առաջինը հասան Վրաստանի կամավորները: Եկան իրենց տեխնիկայով (որը 2–3 օր շուտ հասավ, քան տեղականը), բերեցին 5000 վրան, դեղորայք, մթերք: Պարզվում է (ինչպես կասեր Զադորնովը. «բռնեք աթոռից, որ չընկնեք»)՝ աղետյալները հրաժարվում էին վրաններից (?!): Ուստի վրանները վերացան... Թե

ու՞մ ջանքերով և ինչպե՞ս՝ պարզ է: Վրացի կամավորներն աշխատում էին զոր ու գիշեր: Ձերմ երախտագիտությամբ են հիշում ոմն զոդող քեռի Գուրամին. կարճահասակ, շեկագլուխ, տարիքն առած այդ մարդը բերել էր իր սեփական զոդման սարքը: Անփոխարինելի էր, քանի դեռ տեխնիկան չէր հասցվել: Անդուլ և պատրաստակամ օգնության էր հասնում չորս կողմից իրեն կանչողներին:

Տեխնիկա, դեղամիջոցներ, մթերք, տնակներ բերվեցին ու բերվեցին Ռուսաստանից, մյուս հանրապետություններից, արտերկրից: Ադրբեջանով անցնող գնացքների պատերին դրոշմված էին շնորհավորանքներ: Ավելի ուշ, երբ սկսվեցին վերականգնողական աշխատանքները, ցեմենտը գալիս էր ջրած-քարացած, օրերով ուշացվում էր շինանյութի մուտքը՝ առաջացնելով դրսից եկած շինարարների բողոքն ու վրդովմունքը: Եվ վերջապես, մինչ օրս շարունակվող բլոկադա: «Տիզբոնին» հնազանդ հանրապետական ղեկավարությունը ողողել էր լրատվամիջոցները սրտխառնոց առաջացնող կեղծ «խանդաղատանքով»՝ Ադրբեջանից ստացվող «եղբայրական օգնության» առթիվ, համարյա լռությամբ անցնելով վրաց բարեկամների իրոք վեհ պահվածքը: Բազմակի օգտագործման այդ խայծը, «նրբանկատ» իշխանավորների համոզմամբ պետք է որ գորովանքի և երախտիքի արցունքներ քամեր Սումգայիթի ու Գանձակի փախստականների աչքերից: Կոմիտեն դեկտեմբերի 13-ի իր նամակ-հայտարարության մեջ սուր քննադատության էր ենթարկել հանրության առջև հայերին ապերախտ ներկայացնող այդ սադրանքը:

Անբարոյականությամբ և անգթությամբ ադրբեջանցիների հետ եռանդուն սոցմրցության մեջ էին մտել տեղական մեր տնաբույծ չինովնիկներն ու ղեկավարները (անշուշտ, ըստ պաշտոնի, պարտադիր պարտիական): Դեղամիջոցների ու մթերքների մի զգալի մասը հայտնվեց Միության տարբեր քաղաքների շուկաներում: Օգնության կարգով հասած տնակների դիմաց տուն, տեղ և հարազատ կորցրածից անբարոները դրամ էին շորթում: Տարիներ անց, գունափոխվելով ու իրենց փորձառությունը գործի դնելով, հեշտությամբ ուղիներ գտան դեպի նոր ղեկավարների սրտերը ու թևերը քշտելով՝ անցան անհամեմատ ավելի մասշտաբային թալանի: Նախագահի փոխեցինք, նրանք նորից գունափոխվեցին, նորից ուղի գտան դեպի նոր

ղեկավարների սրտերը և շարունակեցին «հայրենանվեր» գործը: Վերջին (2000 թ.) գնահատականներով՝ միայն շվեյցարական բանկերում կուտակվել է 2 միլիարդից ավելի դոլար: Եվ դա այն դեպքում, երբ աղբարկղը փորփրող թոշակառուն, ուսուցիչը և գիտաշխատողը ամիսներով սպասում են իրենց աղքատավարձին, երբ չի նվազում հայրենիքն արցունքներով լքող գործազուրկների ու հեռանկարից զուրկ երիտասարդների չուն: Եվ նորից աշխարհասփյուռ հայը կմրմնջա իր ողբ-«կռունկը»: Երևակայությունս ու սիրտս անզոր են ընկալելու հայազգի այդ թալեաթներին:

Ամենաջերմ դրվատանքի են արժանի Սփյուռքի բազմաթիվ մեր հայրենակիցները, որոնք, չբավարարվելով դրամական ու նյութական նվիրատվություններով, անձամբ եկան աղետի վայրը, տեղում «ծեռքից եկածն» ի սպաս բերելու: Միայն մի օրինակ՝ բժշկուհի Քերոլայն Նաջարյան: Բարձրահասակ այդ գեղեցկուհին, թողնելով Բոստոնի իր դղյակը և աշխատանքը, հագավ զինվորական սապոգները և անմիջապես հայտնվեց աղետի վայրում՝ ծյուն ու անձրևին «հունցելով» Գյումրիի և այլ վայրերի ցեխը: Օգնում էր որպես բժիշկ և նյութապես: Եվ մինչ օրս շարունակում է իր բարեգործական առաքելությունը (մասնավորպես ազատագրված տարածքներում):

Ավա՜ղ, օգնության ծեռք մեկնած աշխարհը ևս ունեցավ ցավալի կորուստներ... Դեկտեմբերի 11-ին Գյումրիի մատույցներում կործանվեց օգնության շտապող զինվորներով լեցուն ИЛ-76 ռազմական ինքնաթիռը: Հաջորդ օրը վթարի ենթարկվեց դեղամիջոցներով բեռնված հարավսլավական ինքնաթիռը:

Մեկ անգամ ևս գլուխ խոնարհենք հանուն մարդասիրության նահատակվածների շիրիմների առջև: Հավերժ հիշատակ նրանց:

Հանրապետության իշխանություններին կաթվածահար վիճակից հանեց Նիկոլայ Իվանովիչ Ռիժկովը, որին հայ ժողովուրդը մինչ օրս համարում է իր ամենասրտացավ բարեկամը: Դեկտեմբերի 10-ին Հայաստան ժամանած Գորբաչովն այցելեց աղետի գոտի: Անկեղծորեն ցնցված էր տեսածից և միաժամանակ զայրացել էր, երբ հարազատներին կորցրած ու փլատակների վրա հավաքվածները հարցեր ուղղեցին Ղարաբաղի խնդրի վերաբերյալ: Հոգու խորքում, գուցե, հույս էր տածում, որ հրեշավոր աղետը կհանգցնի հայերի պահանջատիրությունը:

Դեկտեմբերի 8-ին կոմիտեն տարածում է հայությանն ուղղված իր դիմումը՝ կոչ անելով տոկալ այդ ծանրագույն փորձության պահին: Միաժամանակ կոչ է արվում տեղական կոմիտեներին կազմակերպել փրկարար ջոկատներ և անօթևաններին օժանդակող խմբեր՝ համագործակցելով տեղական իշխանությունների հետ (տե՛ս «Մեղադրվում են», էջ 53–55): Նույն օրը հայտարարություն տարածվեց, որում, դիմելով արտերկրի բոլոր սատարողներին, խնդրում են չներդնել օգնության տարադրամը Մոսկվայի Արտաքին Առևտրի Բանկ, այլ հիմնել երկու կենտրոն՝ Եվրոպայում և Ամերիկայում՝ նշանակելով պատասխանատու անձեր: Առաջարկվում էր Ազնավուրի թեկնածությունը՝ Եվրոպայի, և Կալիֆոռնիայի այն ժամանակվա նահանգապետ Դոքմեջյանինը՝ Ամերիկայի համար: Կարճ ժամանակում այդ կենտրոնները ստեղծվեցին, ինչը Գորբաչովի կողմից ևս չներվեց կոմիտեին: Ինձ ցնցել էր նման արտակարգ իրավիճակներին համակարգի զարմանալիորեն անպատրաստ լինելու, իշխանությունների շփոթվածության, իրավիճակը տնօրինելու անկարողության այն պերճախոս ու բանիմաց վկայությունը, որը տվել է փրկարար աշխատանքներին կամավոր մասնակցած, Մոսկվայի համալսարանի երկրաբան ուսանողը՝ վերնագրելով այն «Թե ինչպես սկսեցի ատել» (հայերեն թարգմանությունը տե՛ս Յավելված, էջ 299):

**Артем Волынец**

<u>Как я стал ненавидеть</u>

Говорят, в экстремальных ситуациях люди становятся тем, что они есть на самом деле.

Так и советская система, создавшая за десятилетия определенную популяцию людей, показала свое истинное лицо, выглянувшее из-под развалин армянских домов.

Это пишет человек, который до поездки в Армению верил, сомневался, смеялся, с ума сходил, но все же в глубине души верил в возможность возрождения существующей в Союзе системы. Сейчас я с трудом удерживаю себя от желания взять автомат, пойти в Кремль и стрелять, стрелять... Толчок силой в 12 баллов разрущил до основания не только Спитак (город, где я работал), но и шаткую башню моих прошлых убеждений. Да и не только моих. Спросите у любого: "Как вы относитесь к Советской системе?" И каждый из нас, натурально или мысленно, сжав кулаки, ответит: "Я ее ненавижу!"

От имени всех тех, кто там был, кто имел глаза, чтобы видеть, и разум, чтобы понять, я утверждаю: "В большей части жертв виновато не само землетрясение, виноват наш строй. Виноваты наши многочисленные бюрократические системы руководства со славной коммунистической партией во главе". И я готов это аргументировать.

Как вы знаете по сообщениям центральной прессы, в Ленинакане, Спитаке и других разрушенных городах и селах работали многочисленные добровольные группы спасателей. Одна из них — мы — студенты геологического факультета МГУ. На следующий день после землетрясения наши ребята начали поход по общественным организациям типа профсоюзов и комитета ВЛКСМ МГУ с единственной просьбой: отправить нас в район бедствия. И ответ был один: сидите и не высовывайтесь, если быдет нужно, вас позовут. Людей там хватает.

Если мы на четвертый день (четвертый??? А вы понимаете, что такое день, нет даже час, минута под развалинами) с помощью армянского постпредства — единственной организации в Москве, которая действительно без проволочек что-то делала — мы не уехали бы в аэропорт, не купили бы билета за свои деньги и с дракой (!) не прорвались в самолет, то мы бы до сих пор сидели и ждали. Согласования и утряски, разрешения и благословения. Бумаги с Большой Печатью и инструктажа по технике безопасности. Я не встретил в Армении человека, которому удалось бы туда приехать сразу без усилий. Даже англичан, прилетевших из Лондона на следующий день после случившегося, держали в шереметьевском аэропорту двое суток вместе со всей их аппаратурой для поиска. И пока вопрос о возможности присутствия представителей капиталистической державы решался по многочисленным инстанциям — там, под тяжелыми бетонными плитами еще жили чудом уцелевшие в этом апокалипсисе люди. Жили и мучительно умирали, до самой последней секунды веря, что будут спасены. А вместе с ними умирала и наша вера в руководящую и направляющую силу коммунистической партии.

В аэропорту "Звартноц" в течении получаса после прилета к нам подошли четыре человека и попросили ехать к ним. "Ого, — подумали мы, — это так здесь люди не нужны!". И с каждой минутой жизни там, "ого" все чаще сменялось нецензурной бранью, а удивление переходило в злость.

Злость, когда на 12-й день после землетрясения мы вытаскивали еще свежие, не пахнущие трупы. Это значит — они жили там, жили до того, как мы смогли добраться до их каменных мешков, вытащить оттуда и, стряхнув пыль с лиц, похожих на человеческие, положить в гроб.

Ладно. Я отброшу эмоции. Я просто расскажу то, что мы видели и о том, что мы хотели видеть, но... не увидели.

А видели мы там специализированные команды спасателей из Анг-

лии, Франции, Италии, Болгарии, Польши, оснащенные по последнему слову техники (ни в одной из этих стран не было таких крупных землетрясений, как ташкентское или ашхабадское).

И не видели там ни одной из наших спасательных организаций (первая — полугражданской обороны — прибыла через полторы недели, наверное для того, чтобы вытаскивать из-под обломков дохлых коров и баранов), людей спасали добровольцы: студенты, альпинисты, туристы, спелеологи.

И видели поисковую технику тех же англичан, французов, итальянцев — тепловизоры и высокочастотные зонды. В СССР, как выяснилось при ближайшем рассмотрении, нет даже обученных собак. О приезде таких групп из-за рубежа с восторгом и умилением вещали дикторы ЦТ. А тепловизоры, как оказалось, у нас есть. Как и особого рода прицелы. Это оборудование находится на вооружении нашей доблестной армии. О них нам сообщил командующий Закавказским военным округом генерал армии Зайцев на 9-й (девятый!!!) день страдания и боли, когда мы как слепые работали в руинах, надеясь на интуицию и везение. Он искал специалистов по этим прицелам среди студентов (!!!), такие нашлись. Он обещал послать вертолет в Ереван, где находится завод, выпускающий эти приборы. Более ни генерала, ни вертолета, ни обещанных прицелов мы не видели.

А еще мы видели бетонные плиты, которые ломались в руках — в них просто не было цемента. Дома строились просто на земле — 10 см бетона нельзя назвать фундаментом. Кого винить в этом? Кого судить справедливейшим судом? Тех, кто продавал стройматериалы? Тех, кто их покупал? Тех, кто закрывал на это глаза? (*այն տարիների ղեկավարության ականջը կանչի – Ռ. Դ.*) Или самых виноватых — тех, кто с радостью согласился жить в этих домах и остался под руинами? А впрочем, все эти люди — жертвы системы, и хаотическое нагромождение обломков там, где раньше был микрорайон Черемушки, это тоже система. Чего мы не увидели нигде — так это организации, вместо нее был голый энтузиазм, на котором система спекулировала. Множество гражданских, партийных, военных властей занимались тем, что делили между собой сферы влияния, в то время как добровольцы работали, полагаясь только на свои силы и счастливый случай.

Врачи, которые приехали на скорой спасать извлеченную из-под обломков девочку, бегали искать у студентов шприцы. А мы, вытащив очередное тело, дезинфицировали руки чачей (спасибо армянам), так как ни спирта, ни любых других препаратов никто не выдавал.

И так со всем снабжением. Наши средства массовой информации упорно пытались доказать, что у нас все есть и что местные жители ни в чем не нуждаются. И не знаешь чему верить — то ли нашим газетам, то ли увиденному нами кошмару на стадионе, где люди дрались на ножах из-за теплых одеял. Складывалась такое впечатление, что где-то между нами и Ереваном продолжается катастрофа, которая

поглощает всю помощь человечества. Однако кое-что все же просачивалась. Людям попроще и вещи попроще, да поизношенней, ну а начальству — естественно пуховки с загнивающего Запада. Списки уцелевших не были составлены и через две недели после катастрофы, я очень сомневаюсь, что они есть и сейчас. И не было никакого распределения, кто успел прийти — тот взял, кто не успел или не был оповещен — остался ни с чем. Мародеры не только те, кто срывал с опухших трупов золотые украшения и копался в развалинах в поисках казначейских билетов и столового серебра, но и те, кто, пользуясь своим высоким партийным положением, набивал свои подвалы французскими мясными консервами и канадской сгущенкой. Озлобленные люди в отчаянии поджигали эти крысиные захоронения. А в деревне недалеко от Спитака люди, приходящие к складам, нуждающиеся в материальной помощи, на глазах у которых разгружались МАЗ-ы и КАМАЗ-ы со всей страны, Мерседесы и Шкоды из-за рубежа, получали только злобные окрики часовых и автоматные очереди над головами, а тем временем лживые статейки в газетах с красивыми правдивыми названиями сообщали практически нищим людям, что у них есть все (благодаря умным и неусыпным, а главное, своевременным заботами нашей эпохальной совести и чести).

Можно продолжать и продолжать. Рассказать о танках на каждом перекрестке и о милиции, и о солдатах на каждом шагу в бронежилетах с автоматами и дубинками. О том, как перед приездом товарища Рыжкова верзилы из полка гражданской обороны, вместо того, чтобы откапывать людей, собирали вдоль обочин дороги бумажки — это в городе, который просто превратился в груду мусора. О том, что единственное, чего было достаточно — это гробов. О плакате, выставленном отрядом Высшей комсомольской школы — "Советское — значит отличное" на фоне развалин. О том, что две трети армян верят, что Горбачев специально сделал землетрясение, чтобы отвлеч их от проблемы Карабаха. О том, как из Азербайджана шли поздравительные телеграммы и бились стекла в машинах, которые везли по железной дороге в Армению через Баку. О том, как мы откопали в одном доме пулеметные ленты, новые, в сундуке, а их оставшийся в живых владелец уверенно сказал: "Если бы не было землетрясения, была бы гражданская война". О том, что благодаря самоотверженным усилиям людей, врачей, водителей, студентов, инженеров, просто людей, приехавших со всего мира, несмотря на полную безалаберность и беспомощность наших органов, все же удалось многих спасти.

Но о большой трагедии не расскажешь на нескольких страницах. Мы — те кто там работали, и уцелевшие жители разрушенных городов и сел очень много взяли в свою душу. Это и ощущение смерти, которое, появившись раз — в момент соприкосновения с первым телом, извлеченным из-под развалин — уже не отпустит до конца

жизни, накатывая время от времени невесть откуда взявшимся трупным запахом. И страх. Страх находится в любом здании, подымая глаза в потолок и спрашивая себя: "А вдруг?"

И самое главное — Господи, какая еще катастрофа нужна, чтобы все поняли, что дальше так жить нельзя! Что общественное устройство, при котором люди, попавшие в беду, не могут рассчитывать на быструю и ощутимую помощь — это плохое общественное устройство.

Может быть, все это покажется вам слишком эмоциональным и предвзятым. Но трудно быть хладнокровным, когда речь идет о человеческой жизни. И никакие заздравные лозунги и газетная тянучка в духе перестройки истории и неубедительного самобичевания не смогут уверить нас в том, что система, не способная уберечь человеческую жизнь, имеет право на существование.

Мне очень хочется спать по ночам, но сон пропадает, как только я закрываю глаза: трупы, трупы...

И горячая ненависть подымается откуда-то снизу и захватывает меня целиком: я знаю, кто виноват, что этих трупов много. И я хочу, чтобы это знали Вы.

7 января 1989 ("Демократическая оппозиция" нр. 21)

Ինչ վերաբերում է վերականգնողական աշխատանքներին, ապա մեկ տարի անց աղետի գոտի այցելած, իշխանությունների նկատմամբ լոյալ «Լիտերատուրնայա գազետա»-յի թղթակից Յուրի Ռոստը (հոկտեմբերի 6, 1989 թ.) արտահայտում է իր հիասթափությունը տիրող իրավիճակի նկատմամբ, մասնավորապես բողոքում է երկաթուղային բլոկադայից և վերականգնողական աշխատանքների տեմպից:

Կիսում եմ Ա. Վոլինեցի զայրույթը ու տարիներ ի վեր տանջվում եմ դաժան մի ճշմարտությամբ. երկրաշարժի 25 հազար զոհերի մահվան մեջ մեղավոր են.

- այն շինարարները, որոնք, գողանալով ու վաճառելով ցեմենտը, փոխարինել էին այն հողով,
- այն զոդավորողները, որոնք «թքել-կպցրել» էին արմատուրան,
- տեղական այն իշխանիկները, որոնք շինարարությանը հսկելու փոխարեն մասնակցել են շինանյութի ապօրինի յուրացմանը,
- շինարարության նախարարությունը և հանրապետության ղեկավարները:

Ինձ թվում է, որ թվարկածս անձինք երբեք խորապես չեն գիտակցել, որ հազարավոր անմեղների սպանության մասնակից են, այլապես չէին կարողանա գոյատևել:

## ԿԱՆԱՅՔ ԵՎ ԸՆԴՀԱՏԱԿ

Դեկտեմբերի 8-ից Գրողների Միությունը մեծահոգաբար կոմիտեի տնօրինությանն էր հատկացրել համարյա ամբողջ շենքը: Առաջին հարկի գրասենյակում՝ հեռախոսների մոտ, իրար փոխարինելով, օր ու գիշեր հերթափոխում էինք կոմիտեի անդամներս: Անմիջականորեն համագործակցում էինք կառավարության և զինվորական ղեկավարության հետ, կոորդինացնում էինք թռիչքներն օրհասական վիճակում հայտնված Կիրովաբադի և այլ շրջաններում վտանգված հայությանը (կանանց և երեխաներին՝ առաջնահերթ) դուրս բերելու գործում: Դահլիճում Ալեքսան Հակոբյանի հսկողության ներքո և անմիջական մասնակցությամբ (աչքիս առաջ է հագուստի հսկա «բոխչայի» տակ ճկված Ալեքսանը) կամավոր կանանց ու տղամարդկանց մի ամբողջ գումարտակ սորտավորում էր հագուստը, անկողնու պարագաները, մթերքը ու հանում դուրս: Փողոցում ևս եռուզեռ էր. իրենց օգնությունը առաջարկողների մի բանակ էլ այստեղ էր: Իրար ետևից մոտենում էին բեռնատար մեքենաներ ու ավտոբուսներ. բեռնվելով և վերցնելով կամավորներին՝ ուղևորվում էին նշված վայրը կամ կոմիտեի տեղական շտաբ: Նույն եռուզեռը տիրում էր դեկտեմբերի 10-ին: Առավոտյան ժամերն էին: Հեռախոսների մոտ ես էի: Հիշում եմ՝ աշխույժ բանակցություններից մեջ էի գեներալ Սուրկովի ու նրա տեղակալների հետ Կիրովաբադի եկեղեցում պատսպարված կանանց ու երեխաներին դուրս բերելու խնդրով, երբ հանկարծ ներս մտան 3 բարձրաստիճան ռուս սպա և առաջարկեցին դադարեցնել միտինգը և ցրել դրսում հավաքված ժողովրդին: Ասացի, որ ոչ մի միտինգ չկա, բացատրեցի խնդրի էությունը: Համառեցին. դուրս եկանք փողոց՝ դիմեցի հավաքվածներին, խնդրեցի ցրվել տհաճություններից խուսափելու համար: Մի մասը հեռացավ, սակայն մոտենում էին նորերը: Մի խումբ մտահոգ կանայք անհանգիստ էին որբացածների ճակատագրով: Սպաները զգուշացրին, որ եթե նորից կուտակվեն, կդիմեն կտրուկ միջոցների ու հեռացան: Ինձ մոտ տպավորություն ստեղծվեց, որ լավ հասկանում էին բուն իրավիճակը, սակայն ստացել էին որոշակի հանձնարարու-

թյուն: Մի փոքր անց վերադարձան Լևոնը, Վազգենը, Բաբկենը, Սամվելը: Տեղեկացրի մեզ շնորհ արած այցելության մասին ու վազեցի երջանկահիշատակ Հայրիկ Մուրադյանի տուն, ուր նշվում էր նրա դուստր վաղամեռիկ Մարոյի տարին: Խոստացա մեկ-երկու ժամից ետ գալ: Վտանգի ոչ մի նախազգացում չունեի. քաղաքական գործունեությունը դադարեցված էր: Աներևակայելի էր համազգային աղետի այդ օրերին համերաշխ ու էֆեկտիվ աշխատող հանրապետական մասշտաբի մի ստրուկտուրայի (կոմիտեի) գործունեության կասեցումը: Ավա՜ղ, 2 ժամ անց, երբ վերադարձա, տղաներին տարել էին...

Լուրեր տարածվեցին, որ Գորբաչովը համաձայնել է կոմիտեի ձերբակալման առաջարկին: Տարել էին այն հինգյակին, որոնք այդ պահին Գրողների Միությունում էին՝ Վազգենին, Լևոնին, Բաբկենին, Սամվելին ու նաև «բեռնակիր» Ալեքսանին:

Նույն երեկո որոշվեց հաջորդ առավոտ հավաքվել Թումանյանի արձանի մոտ և բողոքի երթ կազմակերպել: Առավոտյան, համենայն դեպս, փորձեցինք բացատրություններ ստանալ ՆԳՆ փոխնախարար Երիցից: Հիշում եմ՝ մեզ հետ էին բանաստեղծուհի Մարո Մարգարյանը, նկարիչ Սարգիս Մուրադյանը: Երիցի մոտ նստած էր մի մեծագլուխ, ճաղատ մոսկվացի: Երիցը շատ շուտ հունից հանեց ինձ և Մարո Մարգարյանին իր թունոտ ժպիտով զուգակցվող քամահրական պատասխաններով. լեզվիս եկածը շպրտելով երեսին՝ դուռը շրխկացրինք ու դուրս եկանք. նկատեմ, որ Ելցինի կառավարության մեջ, ի զարմանս, դարձավ ՆԳՆ նախարար: Մի քանի «փայլուն» սայթաքումներից հետո անփառունակ հեռացավ ու կորավ տեսադաշտից: Միաժամանակ նրա և Վանոյի (որպես ՆԳՆ նախարարի) ուղիները խաչաձևվեցին:

Քաղաքի կենտրոնը փակ էր, ուստի երթը դուրս եկավ Խանջյանի փողոց. եթե չեմ սխալվում Մանկավարժական ինստիտուտի խաչմերուկում ճանապարհը փակեցին տանկերը և բարձրաստիճան սպաներ: Ասեմ, որ զույգ և քաղաքավարի էին: Բանակցելուց հետո, քանի որ կենտրոնը կրկին արգելվեց, որոշեցինք Վանոյի առաջարկով շարժվել դեպի Սովետաշենի գաղութը: Գիտեինք, որ տղաներն այնտեղ են: Ենթադրում էինք, որ խոչընդոտելու են, ուստի կոմիտեի անդամներս, նաև Խաչիկ Ստամբուլցյանը և ուրիշներ, շարժվում էինք առաջին շարքում: Հավանաբար ղեկավարության մեջ կար տագնապ, որ մենք

կփորձենք ազատել տղաներին, թեև մենք հստակ հասկանում էինք դրա անհնարինությունը և ավանտյուրիզմը: Զինվորները հարձակվեցին երկաթգծի կամուրջի մոտ, այն էլ՝ ոչ թե առջևից, ինչին սպասում էինք, այլ ետևից, որտեղ մեծ մասը կանայք էին: Գործում էին մահակներով: Գազազած երիտասարդները զինվեցին «պրոլետարիատի զենքով» (քարերով, որոնք անպակաս էին երկաթուղու հողաթմբին): Մի քանի տաք գլուխներ գրավեցին տանկերից մեկը: Վիճակը լրջացավ. դա այն էր, ինչին ձգտում էր հակառակ կողմը, որ մեզ մեղադրի փողոցային անկարգությունների սադրանքի մեջ: Սկսեցին կրակել պլաստիկ գնդակներով. Ավետիք Իշխանյանը մազապուրծ եղավ լուրջ վիրավորվելուց: Թողեցին արցունքաբեր գազ: Գոռացի, որ շնչեն թաշկինակների միջով ու սկսեցինք միմյանցից անկախ հանել մասնակիցներին դեպի կողքի բակերը ու նրբանցքները: Ետևից հասավ բարձրահասակ երիտասարդ մի զինվոր: Շրջվեցի նրա կողմը: Տեսնելով կրծքիս շքանշանների շերտերը՝ շփոթվեց ու իջեցրեց հարվածի պատրաստ մահակը: Երեկոյան ծեծկռտոց տեղի ունեցավ «Նաիրի» կինոթատրոնի մոտ: Այդ օրը դարձանք քրեապես հետապնդվողներ: Տանը մնալը վտանգավոր էր: Ձերբակալությունից չէի վախենում, սակայն արդեն մտադրվել էի բաց նամակ գրել Գորբաչովին, ուստի «ընդհատակվեցի» Աշտարակում՝ ընտանիքիս բարեկամ, ինստիտուտի աշխատակից Աստղիկ Հովհաննիսյանի մեկ սենյականոցում: Ինքը փոխադրվեց եղբոր մոտ: Ամեն գիշեր անհանգստացնում էին ընտանիքիս՝ անակնկալի հույսով: Կնոջս ասելով միլիցիոներները այնքան էլ գոհ չէին հանձնարարությունից՝ թեթևացած շունչ էին քաշում ծախողվելիս: Եթե քաղաքում կարճ ժամանակով ինձ գցում էի ընկերոջս մոտ, ապա 10–15 րոպե հեռանալուցս անց հայտնվում էր КГБ-ի մեքենան: Անզգույշ էի, ուստի Յուրի Շահբազյանի պնդմամբ փոխադրվեցի Աշտարակի՝ նրա ղեկավարած СКБ[1]-ի հյուրանոց: Մեքենագրում էի բաց նամակս: Ի վերջո, ընտանիքս գիշերային «ասպատակություններից» ազատելու համար հանձնարարեցի կնոջս. «Զանգիր ՆԳՆ նախարար Հուսիկ Հարությունյանին և ասա, որ 65 տարեկանիս չի սազում նապաստակի դերը, թող նշանակի օրը և ժամը, կներկայանամ»: Նրբանկատ Հուսիկն առաջարկեց երկու օր, տարբեր ժամերի:

---

1 Հատուկ Կոնստրուկտորական Բյուրո

Բաց նամակս ավարտել և ուղարկել էի պահեստային կոմիտե՝ բազմացնելու և առաքելու, ուստի վերցնելով տաք սվիտեր, մի-երկու գիրք ու ածելի՝ ներկայացա նախարարին: Ներկա էր նաև փոխնախարար Գ. Գրիգորյանը: Բարեկամական զրույց, որից հետո Յուսիկ Սուրենովիչը խնդրեց ստորագրել քաղաքից չբացակայելու գրությունը և առաջարկեց վերադառնալ տուն. «Մեզ վայել չէ Ձեզ նման մարդուն ձերբակալել որպես խուլիգանի»: Ու թեև 2 շաբաթ անց ստիպված եղավ ստորագրել ձերբակալման հրամանը, մինչ օրս ամենաանկեղծ բարեկամական զգացումներ ենք տածում մեկս մյուսի նկատմամբ: Անսպասելի պարգևած ազատությունը հնարավորություն ընձեռնեց ինձ հետագա 2 շաբաթը միաձնյա ներկայացնել կոմիտեն և կոորդինացնել ազատության մեջ գտնվող ակտիվիստների գործունեությունը:

Ստորև բերված է վերոհիշյալ բաց նամակս Գորբաչովին (անգլերեն թարգմանությունը տե՛ս Յավելված, էջ 303)[1]:

**Открытое письмо генеральному секретарю ЦК КПСС, председателю президиума ВС СССР тов. М. С. Горбачеву**

Горечь разочаривания и крушение последних надежд на справедливость — такова реакция армянского народа на Ваше интервью перед вылетом из Армении. Впрочем, есть и ликующие: та самая мафия, ворюги и взяточники всех рангов. Именно они были смертельно напуганы раскрепощением масс, ибо очень скоро это движение переросло в антибюрократическое, так что на митингах и собраниях в Ереване и районах поименно называли коррумпантов в руководстве республики и на местах, творивших произвол, торговавших государственной землей и квартирами. Привыкшие к бессловесной покорности, они растерялись, услышав от поверившего в перестройку народа заслуженную характеристику. Вы спасли их, сказав: "Ату этих чернорубашечников и бородатых!". Кстати, о чернорубашечниках. Их в Армении не видели. Видимо их Вы спутали с теми, кто размахивал лозунгами "Смерть армянам!" на улицах Баку и изуверствовал в Сумгаите. Что касается неоднократно высказанного Вами недовольства бородатыми, то это, по меньшей мере, нетактично по отношению к памяти основоположников марксизма, плеяды истинных революционеров и ученых. Если уж говорить о покровительстве коррумпантам, то не комитетчиков надо

1 Ֆրանսերեն թարգմանությունը տե՛ս "Campagne de soutien au comité 'Karabagh'", Solidarité franco-arménienne, 1989, էջ 85–88:

винить, а прежде всего тех, чья то ли родственная, то ли "замешанная" рука бережет в советниках обермафиози Алиева или неутомимо отводит меч Немезиды от организаторов сумгаитской бойни.

Мы — активисты движения, якобы мешали начавшейся перестройке. Неужто Вы настолько уверовали в единовластие, что сменой первого секретаря, при сохранении 90% "прежних"(с учетом равнозначных рокировок), надеетесь реализовать перестройку и демократию? Теперь Вы развязали им руки для расправы с людьми, чья честность и неподкупность мешала сведению счетов с ними. С людьми, наивно ждавшими Вашей поддержки в борьбе с застоем. Дальше — дело техники: облить грязью в условиях "односторонней гласности", свалить на нас все беды и грехи, в основном с "больной головы" и, хамелеонно скандируя ненавистные, но модные лозунги, укрепить свое пошатнувшееся нечистое благополучие. Причем схватили, заметьте, не после митинга, демонстрации или забастовки, а в дни, когда потрясенные свалившейся бедой комитетчики, понимая всю неуместность каких-либо действий в поддержку требования народа НКАО, целиком переключились на помощь пострадавшим, дабы частично компенсировать общую растерянность и отсутствие какой-либо организации в первые дни катастрофы. Через своих активистов и массу добровольцев организовали сбор и доставку одежды и пищи пострадавшим, в частности, в оставшиеся вне поля зрения села, реагировали благодаря общедоступности своих телефонов на просьбы и тревоги граждан. Сотни людей могут подтвердить, что именно комитетчики без устали втолковывали группам и отдельным лицам абсурдность подозрения в искусственности землетрясения, отвергали ложные слухи о вывозе детей. Их арестовали за этим занятием в день всенародного траура (10 декабря) по схеме "лучших времен" — ни слова о местонахождении, никаких свиданий с близкими. А в "Правде" за 14 декабря сказано, что они пытались организовать митинг того же 10 декабря (не выходя из помещения!). В действительности те же 300 человек толпились у входа в надежде на информацию или с предложением своих услуг. Одного из комитетчиков (Акопяна) схватили с мешком одежды, которую он принес для передачи добровольцам с целью рассортировки. Но ведь не докажешь — так сказал зам. министра внутренних дел Ерин, откровенно издевавшийся над представителями интеллигенции, пришедшими к нему со своей тревогой. И пошла гулять по стране очередная ложь. А то, что этот арест действительно спровоцировал на следующий день шествие протеста, лихо разогнанное дубинками, об этом молчок.

Оказывается, мы рвались к власти!... Члены комитета "Карабах" (кстати, безбородые) — люди, достигшие определенного положения в науке и литературе, если и мечтали о чем-либо, то о скорейшем решении карабахской проблемы, дабы вернуться к своим основным занятиям. Подавляющее большинство из них не удосужилось даже вступить в партию, а ведь это необходимое условие для восхождения

по административной лестнице или захвата прибыльного местечка.

Впрочем, не мне напоминать Вам о традиционной схеме "захвата власти": комсорг, парторг, ВПШ, секретарь райкома, обкома или республики, царственный прием светлейшей особы, еще лучше ценный подарок (разумеется, из своей зарплаты) и, глядишь, внутри московской стены. Ну а там — кто ловчее... И пока не прервется эта очередь нетерпеливо переминающихся (в ожидании следующего прыжка) инкубаторских кадров, трудно рассчитывать на оздоровление руководящего аппарата. После же того, как Вы конституционно узаконили то, что раньше считалось узурпацией, и сконцентрировали в своих руках всю неограниченную власть, думаю, надо похоронить затеплившиеся было надежды на демократию, несовместимую с единовластием.

Не скрою — как и многие, поверил в Вас, надеялся остаток жизни прожить в раскрепощенном обществе, радовался Вашим победам над "противниками перестройки"... Горько расставаться с иллюзиями. В самом деле — на что рассчитывать? Нет сталинских лагерей? Огромное спасибо Хрущеву. Нет брежневских психушек? Тоже спасибо. А дальше? Свобода разоблачать "прежних"? Не ново. При Хрущеве "смело" критиковали Сталина, при Брежневе — волюнтариста и т.д. Что же касается власть предержащего, то "миль пардон" — как и прежде. Та же единственность и непререкаемость мнения, то же раболепие, то же безграничное право осудить, очернить, прилепить любой ярлык при полной "поддержке" всеми средствами информации без какой-либо возможности отпарировать или оправдаться. Единственная дохленькая возможность, как и прежде — самиздат. Да и с ним, судя по репрессиям и дубиночному внушению в Армении, скоро покончим.

Что-то не попадалось мне на глаза за эти годы хоть слово критики в Ваш адрес в нашей прессе или по ЦТ. Или считаете — не за что? Думаю, есть. Хотя бы за антиалкогольную кампанию. Достаточно было учесть печальный опыт не очень древней истории (о которой Вы столь нелестно отозвались в Армении) с "сухим законом" в США, чтобы предвидеть бутлегерсконаркоманное фиаско категорического запрета, к тому же, как у нас повелось, во всех без исключения регионах. Так что в той же Армении, где 3000 лет пили сухое вино и не пьянели, теперь предлагают пить одну только водку и коньяк (они в продаже свободно). Авось, проймет. Я не говорю уже о 10-месячной травле и искажении, развязанной средствами информации.

Что же инкриминируется нам как угроза захвата власти? То, что в тревожные февральские дни поднявшийся в поддержку требования братьев в НКАО народ в условиях растерянности и трусливой самоизоляции руководства выдвинул тех, кому доверял? И они — комитетчики, в течение долгих, изматывающих силы месяцев удерживали его в конституционных рамках, несмотря на вандальские акции устрашения со стороны "братьев" и откровенно подстрекательские, оскор-

бительные выпады прессы? Разумеется, есть эволюция в лозунгах: от "Ленин, партия, Горбачев!" — весной и до ""Правда", где твоя правда о Сумгаите?" — осенью. Но только не комитет надо в этом винить.

Или история с перевыборами в Верховный Совет республики в городе Чаренцаване? Вместо проворовавшегося депутата руководство выдвинуло свою кандидатуру из ЦК, тоже с сомнительной репутацией и, несмотря на то, что на эту "операцию" была брошена "вся королевская рать" — от партаппарата и правохранительных органов до уголовных элементов, несмотря на оцепление города и грубейший подлог с бюллетенями (900 штук были пачкой заброшены в урну, отправленную к нескольким больным), народ впервые отказался участвовать в старой унизительной комедии "выбирай из одного арбуза наилучший" и, дав бой чинимым козням, провалил навязанную ему кандидатуру. Есть от чего прийти в ужас и возопить об узурпации власти. Неужто так опасен для перестройки тот факт, что в одном из освободившихся трех участков был избран комитетчик-коммунист (которого сейчас, невзирая на мандат, пытаются арестовать)? Не рухнет советская власть, а окрепнет, если наряду с 300 статистами (единогласно "за") будет один, способный сказать "нет".

Вас возмутили вопросы о Карабахе, заданные в эти страшные дни. Напрасно! Это лишь означает, что у армянского народа, наряду с новой огромной стихийной бедой есть старые глубинные незаживающие раны. Это многовековое персидское и османское иго, с угонами в плен, зверствами, окончившееся истреблением младотурками двух миллионов армян в 1915—1922 гг. и изгнанием уцелевших с двух третей исконной Армении. Это 24 тыс. кв. км (почти половина российской Армении), подаренная Турции в 1920 году. А ведь ее присоединению к России в прошлом веке русским войскам помогали армянские военачальники и многие тысячи добровольцев. Это, наконец, Нахичевань и Карабах, аннексированные у истерзанной Армянской республики в 1921 году. Что стало с древней армянской Нахичеванской областью, Вам известно. Еще в начале века с преобладающим армянским населением, она за 70 лет "интернационального братства" насильно очищена от армян полностью. То же грозило Карабаху. Поэтому борьба за Карабах — не просто борьба за крохотные 4 тыс. кв. км — с ней армянский народ связывает надежду на возможность возврата пусть малой толики потерь, надежду на свое будущее как народности. Вы убили эту надежду и даже подняли цену за нее — 500 млн. рублей. Народ этого не требовал. При всей многоликости Вольского какую-то объективную информацию о том, как выполняется эта социальная программа с марта месяца азербайджанским руководством, он, по-видимому, представил. У карабахцев по этому поводу никаких иллюзий не осталось. Подвергать же сомнению армянскую исконность Карабаха, приведшим всех в недоумение рассуждениями об одинаково обоснованных, но диаметрально противоположных исто-

рических доказательствах армянскими и азербайджанскими историками — значит утверждать, что истории как науки не существует. Такое утверждение справедливо, если судить об истории по "Краткому курсу истории ВКП(б)", давшему блистательный пример произвола над историческими фактами. Но существует еще и наука История, не менее строгая и доказательная чем агрономия или геология.

В вопросе же Карабаха вовсе не надо быть историком, чтобы убедиться в справедливости утверждения армянских ученых. Действительно, национальный состав на 90 с лишним процентом веками был армянским (лишь за последние 70 лет упал до 75%). На его территории нет мусульманских памятников (кроме шушинской мечети XIX века). В то же время памятников всех веков, охватывающих 1600-летнее христианство в Армении, множество. Надеюсь , Вы не принимаете всерьез абсурдные утверждения горе-ученых о том, что церкви и хачкары (крест-камни) с армянскими письменами — творения вымышленных предков кавказских татар (по В. И. Ленину) или кочевых тюрков (общепринятое в науке). С равным правом татары Горьковской области могут утверждать, что Владимирские церкви — творения их предков, поскольку их появление в России по времени совпадает с появлением тюркских кочевников в Закавказье. Впрочем, я не прав, много памятников они сотворили. Это шестьдесятс лишним тысяч могил армян, вырезанных в Шуше и в Баку в 1918—1920 годы.

Слепая стихия в эти дни унесла, по предварительным оценкам, около 25 тысяч. Невыносимо больно. А те 60 тысяч, как и в Сумгаите, вырезали слепые фанатики. Невыразимо дико!

Поверьте, не нужна была эта домашняя загатовка с вопросом комментатора и вашим ответом. Убивать надежду в такой беде — не верх чуткости. Человечнее было бы вовсе не касаться этого вопроса.

Убедительная к Вам просьба! Пожалуйста, прекратите ставить знак равенства между убийцами и убиенными (Сумгаит), между мирным митингом и вакханалией в Баку и Кировабаде, между лозунгами "Вся власть советам!" и "Смерть армянам!", между депортацией из Армении и погромами там.

И совсем уж цинично и аморально со стороны ЦТ в первый день беды умиляться азербайджанской помощью, когда ее в помине еще не было, когда в убитую горем Армению летели издевательские злорадные телеграммы, поезда из Баку приходили с выбитыми стеклами и надписями мелом "Поздравляем с праздником!", а на шестые сутки привезли три трупа из Баку, и в селах Северного Арцаха продолжались погромы. Естественно, что в Армении категорически отказались от их помощи, хотят помочь — пусть лечат жертв погромов и вернут разграбленное имущество. Да и как можно доверитьсвоих раненных организаторам массового отравления в Масисе? (Попробуйте поставить себя на наше место.) Не тут-то было — "не хотите добром — силой поможем" — на третий день силой прорвались под прикрытием БТР.

Вся Армения бесконечно тронута и благодарна людям доброй воли в Союзе и за рубежом, откликнувшимся на беду. Мы не забудем оперативную и глубоко человечную помощь соседей из Грузии, первыми прибывших в район бедствия. Но не надо из этого делать топорную, пронизанную фальшью, умилительную агитку о "братской" помощи из Аз. ССР. Пощадите!

В заключение повторю и хочу, чтоб Вы поверили: решения карабахского вопроса, как Вы убедились, ждет весь развеянный по миру армянский народ. Все прогрессивное человечество считает наше требование справедливым. Может быть, этим отчасти объясняется широкий искренный отклик на нашу беду. Не затяни и не осложни Вы его искусственно, давно наступил бы покой, мир и возросли бы вера в Вас и Ваш авторитет в мире. Теперь же, к сожалению, идет обратный процесс. Развязанные Вами ширикомасштабные репрессии в Армении и аресты активистов — еще большая ошибка. Народ не отступится, ибо это его боль, а не фантом, придуманный комитетчиками. Обезглавив же движение, Вы толкаете народ к непредсказуемым действиям, так как неизвестно, какие силы воспользуются его возмущением (очень возможно, поистине экстремистские). Как бы не изощрялись в клевете на комитетчиков спущенные с цепи душкевичи, лыневы и григоряны, как бы ни валили кучей на них все чужие грехи и дикости, в том числе имевшие место после их ареста и разгона, народ отличит правду от лжи, поймет истинные причины "крестового похода", развязанного коррумпированными "креслодержателями", воспользовавшимися для своего спасения народной бедой.

Провозглашенная Вами перестройка, хотите Вы того или нет, может быть остановлена лишь одним путем: возвратом к 37-му году. Судя по Вашим санкциям в Армении, Вы не исключаете эту возможность.

Ветеран Отечественной Войны и труда, член-корр.<br>
Академии наук Арм. ССР, д-р техн. наук, профессор,<br>
член распущенного "так называемого комитета<br>
"Карабах"" Казарян Р. А.<br>
г. Ереван, ул. Алабяна 11, кв. 28<br>
19 декабря 1988

**P.S.** Годы назад, не выдержав, послал письмо Брежневу на 26-й съезд, в котором в резкой форме высказался по поводу коррупции, охватившей страну и партию (в которую пролезали по взятке). Обратная реакция повергла в ужас партийные органы республики сверху до института. Оказывается, они были в ответе за то, что меня — беспартийного 60-летнего "юного недоумка не излечили от донкихотства". Пожалуйста, на этот разне вините никого — мне уже 65.

Նամակն անսպասելի մեծ արձագանք գտավ: 89-ի հունվարի 27-ին, երբ մենք ձերբակալված էինք, այն կենսագրականիս վերաբերող նախաբան-«գլխարկով» լույս տեսավ Փարիզում հրատարակվող «Ռուսսկայա Միսլ» թերթում: Տեքստը բաժանված էր դիպուկ ենթավերնագրերով առանձին հատվածների: Այն ինձ նվիրեցին, երբ ես 90-ի փետրվարին այցելեցի խմբագրություն: Բանտից դուրս գալուց հետո պարզեցի, որ այն թարգմանվել էր Եվրոպայի համարյա բոլոր լեզուներով: Ինձ մոտ պահպանվել է ֆրանսերենով նրա համառոտ սեղմագիրը: Հավելվածում բերված են նրա անգլերեն թարգմանությունը:



«Русская мысль» — № 3760 — 27 января 1989 — 7

СВИДЕТЕЛЬСТВА, ДОКУМЕНТЫ

«Горько расставаться с иллюзиями»

Открытое письмо Михаилу Горбачеву

*Это письмо было написано известным армянским ученым Рафаэлем Казаряном через несколько дней после того, как 10 декабря 1988 года в Ереване была арестована первая группа членов комитета «Карабах». Неизвестно, дошло ли это письмо до адресата, но 9 января Р.Казарян был арестован вместе с другими активистами национального движения (среди них — депутат Верховного Совета Армянской ССР А.Манучарян). В середине января Р.Казаряна, других членов комитета «Карабах» и депутата Верховного Совета АрмССР Х.Стамболцяна перевезли в Москву. По последним данным, Р.Казарян находится в Бутырской тюрьме. 17 и 18 января в Ереване в Институте физики АН АрмССР проходило собрание по выдвижению кандидатов на съезд народных депутатов. Участники собрания забаллотировали кандидатуры директора института и его заместителя, а кандидатом в депутаты был выдвинут арестованный Рафаэль Казарян. 28 января Р.Казаряну исполнилось 65 лет. Со всех концов Армении ему были посланы тысячи телеграмм.*

надежду в такой беде — не верх чуткости. Человечнее было бы вовсе не касаться этого вопроса.

Убедительная к Вам просьба: Пожалуйста, прекратите ставить знак равенства между убийцами и убиенными (Сумгаит), между мирным митингом и вакханалией в Баку и Кировабаде, между лозунгами «Вся власть Советам!» и «Смерть армянам!», между депортацией из Армении и погромами там.

И совсем уж бесчеловечно и аморально со стороны ЦТ в первый день беды умиляться азербайджанской помощью, когда ее в помине еще не было, когда в убитую горем Армению летели издевательские злорадные телеграммы, поезда из Баку приходили с выбитыми стеклами и надписями мелом «Поздравляем с праздником!», а на шестые сутки прибыли три трупа

* * *

Այդ օրերի ամենանշանակալի իրադարձությունը լեգենդար մարդու՝ Անդրեյ Դմիտրիևիչ Սախարովի ժամանումն էր իր կնոջ՝ Ելենա Բոններ-Ալիխանյանի, Գալինա Ստարավոյտովայի, դոկտոր Լեոնիդ Բատկինի և Մոսկվայի Արևելագիտության ինստիտուտի մի քանի երիտասարդ գիտաշխատողների ուղեկցությամբ: Բուն նպատակը «Ղարաբաղ» կոմիտեի անդամների հետ հանդիպումն էր, որպեսզի իր համար պարզի՝ արդյո՞ք պիտի զիջի Գալյա Ստարավոյտովայի և այլոց թախանձանքին ու ելույթ ունենա ի պաշտպանություն ձերբակալվածների, սակայն այդ օրերին այցելության բուն նպատակի մասին հայտարարելը համարժեք էր անպատշաճության: «Միհանա» դարավ ղարաբաղյան խնդրի կարգավորման նշված ինստիտուտի առաջարկության քննարկումը Գիտությունների Ակադեմիայում: Գալյան

ուզում էր Սախարովին հանդիպեցնել Աշոտ Մանուչարյանի հետ: Սակայն Աշոտը Գալյայի ու ինձ հետ «Անի» հյուրանոցի մոտ հանդիպմանը չեկավ «պոչի» կասկածով: Տղաների հետ հանդիպելու հաջորդ փորձի կազմակերպումն իր վրա վերցրեց Պետրոսյան Շահենը: Ուշ երեկոյան ուժեղ ձնգալի պայմաններում մեքենայով շարժվեցինք Բաղրամյանով վեր. առջևում՝ Շահենը, հետևում՝ Գալյան, Բատկինը և ես: Հանդիպումը պետք է կայանար մասնավոր բնակարանում, որի տեղը հայտնի էր Շահենին: Շահենը, շոյված ու ոգևորված կոնսպիրատորի իրեն վստահված դերից, ետևից ձյան վրայով քարշ եկող բոլոր մեքենաներում «պոչ» էր կասկածում ու ստիպում խեղճ վարորդին «բուքսելով» խուսանավել կողքի փողոցիկներով: Ի վերջո կանգ առանք մի բարձրահարկի առջև, բարձրացանք մի քանի հարկ ու զանգահարելով՝ մտանք ւսնծանոթ մի բնակարան. «լուլ» տանտիրոջ հյուրը միլիցիայի սպա էր: Հասկացանք, որ «արհեստավարժ» կոնսպիրատորը սխալ հասցեով է ներս ընկել: Մեծ ջանքեր պահանջվեցին հյուրասեր տանտիրոջ գրկից դուրս պրծնելու համար: Հյուրի ներողամիտ ժպիտը պարզ հասկացրեց, որ նա գլխի է ընկել մեր ով լինելու մասին: Երդվեցինք, որ այլևս երբեք չենք նստի Շահեն-կոնսպիրատորի մեքենան: Սակայն Տեր-Պետրոսյանի ուրույն կադրային քաղաքականության կամքով մի քանի տարի անց ստիպված եղանք նստել Շահեն-ավիատորի տնօրինած ինքնաթիռները: Այստեղ գոնե ինքը, ըստ լուրերի, ավելի հաջողակ գտնվեց. «անփորձանք վայրէջք» կատարեց սեփական հյուրանոցում:

Անդրեյ Դմիտրիևիչի հետ հանդիպումը կայացավ Գիտությունների Ակադեմիայում: Վերոհիշյալ ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողներից մեկը փորձում էր հիմնավորել Գոբլի «դոկտրինայից» համարյա չտարբերվող լուծում: Ավելի ուշ Զորին ու Գալյան ինձ բացատրեցին, որ դա Ա. Սախարովի համար Երևան այցելելու առիթ էր, իսկ ինչ վերաբերում է ներկայացվող ծրագրին, ապա դրան ոչ մի նշանակություն չէր տալիս: Ի զարմանս ինձ, շուրջս նստած ակադեմիկոսներից մի քանիսը դեմքերի խորիմաստ արտահայտություններով հավանության կիսաձայն արտահայտություններ էին անում: Թվում էր, որ միայն աշխարհից «բեխաքար» երանելին չի տեսնում թյուրք էթնոսի առնետային «պտղաբերությամբ» պայմանավորված սողացող էքպանսիայի վտանգը: Դա ապշեցրեց ու տագնապեցրեց, ուստի

առանց թույլտվություն խնդրելու մոտեցա ամբիոնին ու, ըստ սովորության բաց թողնելով հույզերս տնօրինելու պահը, բավական կտրուկ կերպով փորձեցի հասու դարձնել վերը շարադրվածը, երբ Սախարովը, որը գրեթե չեր լսում զելույցը, վեր կենալով տեղից ու մոտենալով ամբիոնին՝ ձեռքը դրեց ուսիս: Ու, ասես դահլիճում միայն ես ու նա ենք, հանդարտ ու կիսաձայն ասաց. «Ուզում եմ Ձեզ հետ առանձին խոսել»:

– Ինձ համար դա պատիվ է, որի մասին չէի կարող երազել, – պատասխանեցի: Եվ այդ բոլորը լուռ դահլիճի առջև: Ժողովը մարեց: Անդրեյ Դմիտրիևիչը մոտեցավ Վիկտոր Համազասպովիչին ու խնդրեց տրամադրել իր աշխատասենյակը: Առանձնացանք Անդրեյ Դմիտրիևիչը, Ելենա Գեորգիևնան, Գալյան և Բատկինը: Անբռնազբոսիկ զրույցը նրբանկատորեն ընթացավ կանխամտածված հունով, որի արդյունքում նա, թեպետև տնտղելով միայն մեկ ներկայացուցչին, կարողանա կարծիք կազմել «Ղարաբաղ» կոմիտե կոչեցյալ պտուղների ողջ «զամբյուղի» մասին և իր համար որոշում կայացնի՝ արդյոք արժե՞ պաշտպանել ձերբակալված հնգյակին: Ի վերջո հնչեց սակրամենտալ հարցը, թե ինչ եմ մտածում մեզ կարիերիզմի ու պաշտոնաբաղձության մեջ մեղադրանքի մասին: Կտրուկ ու ներքին անսահման համոզվածությամբ դեն շպրտեցի այն. «Անձնվեր հայրենասերներին վարկաբեկելու ծեծված, ստոր միջոց... Համաձայնեք՝ ոչ մեկս Սախարով չենք, հայտնի չէ, թե ինչ վախճան դա կունենա մեզ համար և հետո... Վերցնենք թեկուզ իմ դեպքը... Ինչի՞ս է պետք ինձ՝ 65 տարեկանիս, երջանիկ ընտանիքի ու հետաքրքիր աշխատանքի տեր մարդուն ինչ-որ պաշտոն, էլ չասեմ, որ ողջ կյանքումս հակակրանք եմ ունեցել վարչական բնույթի աշխատանքի նկատմամբ...»: Ասացի ու շփոթվեցի՝ հիշելով որևէ համեմատությունից վեր նրա զոհողությունը հանուն արդարության ու մարդկային արժանապատվության: Կարծում եմ անկեղծությունս էր, որ նրան համոզեց: Հասկանում եմ, որ խախտում եմ համեստության սահմանները, սակայն շոյված էի այն գիտակցությամբ, որ մեր հանդիպումը վստահություն ներշնչեց նրան, և հետագայում մեկ անգամ չէ, որ նա հանդես եկավ մեզ ազատ արձակելու պահանջներով: Չեմ ուզում միանձնյա «սեփականաշնորհել» այդ պատիվը: Համոզված եմ, որ Գալյան լավագույնս է բնութագրել իր գիտական գործընկերներ Համբարձումին և

Ալեքսանին, անշուշտ, նաև Աշոտ Մանուչարյանին:

Ուղիղ մեկ տարի անց Անդրեյ Դմիտրիևիչը թողեց այս աշխարհը: Ու ամեն անգամ, երբ չամոքվող տրտմությամբ հիշում եմ դա, մի գաղտնի սրբապիղծ ձայն շշնջում է. «Փառք Աստծո, որ նա չտեսավ իմ գործընկերների և նրանց շուրջը հայտնված գունափոխ պատեհապաշտների բանակ-ոհմակի պաշտոնազավթության և թալանի խրախճանքը»: Բայց, միևնույն է, ամեն անգամ մեր զրույցը հիշելիս գետինն եմ մտնում ամոթից...

* * *

Խումբը 2 օրով գնաց Ստեփանակերտ: Վերադարձին Բատկինը զանգահարեց ինձ և խնդրեց հանդիպել: Իր պարտքն էր համարել զգուշացնել, որ Վոլսկու մոտ զրույցի ժամանակ շարժման ակտիվիստներից մեկն այն կարծիքն է հայտնել, որ կոմիտեն պետք է մեկուսացվի, այլապես խաղաղություն չի լինի: Ազդվեցի ու վշտացա, քանզի վերագրեցի դա պարզունակ խանդի, սակայն շարժմանը չվնասելու համար ո՛չ այն ժամանակ, ո՛չ էլ ապագայում ոչ ոքի չեմ ասել այդ մասին: Մանավանդ, գործընկերներիս մետամորֆոզը հաշվի առնելով, հետին թվով միարժեք որակել դա չեմ կարող: Եվ այդ օրերի մի էպիզոդ: Ակտիվիստներից մի քանի հոգի (վստահ հիշում եմ Շավարշ Քոչարյանին ու Դավիթ Պետրոսյանին) հանդիպեցին ինձ ու խնդրեցին համաձայնությունս իմ՝ ԽՍՀՄ ԳԽ պատգամավոր առաջադրվելու առթիվ: Խորհուրդ տվեցի առաջադրել Գալյա Ստարավոյտովային. «Ոչ հայազգի բարեկամի խոսքը շատ ավելի ազդեցիկ կհնչի, քան հայինը»: Ինձ լսեցին ու նախընտրական անզիջում արշավ տարան. դա արդեն մեր ծերբակալությունից հետո: Բոյաջյան Գուրգենի կես կատակ, կես լուրջ պնդմամբ ամենակրքոտ վստահված անձը կինս՝ Գրիզելդան էր, որն իր ելույթներն ավարտում էր, իր համոզմամբ ամենածանրակշիռ փաստարկով. «Ռաֆայել Ավետիսովիչը շատ էր ուզում, որ Գալյան ընտրվի»: Գալյան ավելի քան արդարացրեց իրեն՝ մինչև վերջ մնալով մեր բարեկամը: Աստված խաղաղեցնի Ստարավոյտովա նահատակի հոգին...

Չեմ հիշում մինչև նոր տարի՞ն, թե՞ անմիջապես հետո ինձ հրավիրեցին գլխավոր դատախազի մոտ. Օսիպովին փոխարինել էր վերադասի կամքին ավելի հնազանդ Վլադիմիր Նազա-

րյանը: Սակայն ընդունեց ինձ մոսկվացի գեներալ Վլադիմիր Ալեքսանդրովիչ Տիտովը (Միության գլխավոր դատախազի տեղակալն էր): Քաղաքավարի հանգամանալից զրույց մեր ազգային պատմական «դարդերի» ու մեր նպատակների մասին, գործընկերներիս մասնագիտությունների և կոչումների թվարկում, մեզ էքստրեմիստ որակելը փաստազուրկ նպատակաուղղված զրպարտանք է և այլն, և այլն: Պայմանավորվում ենք նոր հանդիպման վերաբերյալ: 2 օրից՝ նոր հրավեր: Այս անգամ Տիտովից բացի տարիքավոր մի գեներալ-լեյտենանտ: Ծանոթացանք՝ Նովիկով, Վասիլի Գեորգևիչ: Միության ներքին գործերի զորքերի շտաբի պետ. համակրելի, կիրթ անձնավորություն: Փոխադարձ համակրանքը դառնում է անսքող, երբ պարզվում է, որ տարեկիցներ ենք ու պատերազմին մասնակցել ենք նույն ճակատում: Երկրորդ և վերջին անգամ հանդիպեցինք արդեն Բուտիրկայում:

Հանդիպումներիս լուրը հասցրել էին տղաներին:

*1989թ. հունվարի 7-ը: Չերքակալություն:* Դարձա կոմիտեի բանագնաց. լսելով գեներալների հետ իմ զրույցների մասին՝ տղաները ցանկություն հայտնեցին հադիպել ինձ, ծանոթանալ զրույցների բովանդակությանն ու մթնոլորտին և առաջարկել Տիտովին հանդիպել նաև իրենց՝ ցուցումներ տալու նպատակով, եթե նա երաշխավորի նրանց անվտանգությունը: Քանի որ ապրում էի Աշտարակամերձ գիտավանում, ապա այդ երեկո աշխատանքից հետո եկա Սարգիս Մուրադյանի մոտ: Միլան (Սարգսի կինը), ըստ սովորության, անմիջապես կանչեց ընթրելու, իսկ մի փոքր անց եկավ ծանոթ երիտասարդը (ցավոք, անունը չեմ հիշում) և ասաց, որ տղաները սպասում են: Չնաթաց, մութ երեկո էր: Մեքենաս թողեցի փողոցում և վերցնելով չարաբաստիկ պայուսակս (հատուկ եմ նշում ամիսների ապրումներ ինձ պատճառած այդ մանրամասը) նստեցի ուղեկցիս «Զապոր»՝ պառավ յաքուի ավտոտարբերակը: Եկանք մի քանի հարկանի շենքերով կառուցապատված անծանոթ մի թաղամաս: Այս անգամ հանդիպատեղի անվտանգությունն իր վրա էր վերցրել Դաքաղյան Աշոտը, կարծեմ աշխատակցուհու բնակարանում: Ընդմիջումից հետո հուզված էինք, ուրախ, ոգևորված, ուստի «ընդհատակյա փսփսոցը» լսվում էր հարևան շենքերում: Մոտ մեկ ժամ անց հայտնվեց տանտիրուհու ամուսինն իր ընկերների ուղեկցությամբ: Դեմքին դրոշմված խիստ

դժգոհությունն անսքող էր: Միջանցքում ամուսինների միջև կայացավ «սիրալիր» որակումից հեռու երկխոսություն, որից հետո եկածները հեռացան: Կես ժամից հայ սպայի ուղեկցությամբ հայտնվեցին ռուս զինվորներ ու համեմատելով իրենց ձեռքին եղած ցուցակի հետ՝ «զտեցին» կոմիտեականներին: Երբ հերթն ինձ հասավ, ասացին, որ ազատ եմ: Մյուսներին լցրեցին ավտոբուս: Հավանաբար գործել էր Յուսիկ Հարությունյանին տված՝ չբացակայելու ստորագրությունս: Տհաճ կասկած սողոսկեց ուղեղիս մեջ. «Այժմ հասկացանք քո միտինգային ակտիվության ու խիզախության գինը... Յույսդ կապել էիր քո ակադեմիական անձեռնմխելիության հետ», – կասի ժողովուրդը: Հաջորդ կասկածը տագնապող էր. պատերազմի մասնակից ակադեմիկոսին դժվար է պարզունակ խառնակիչ որակել... Ուրեմն ինձ առանձնացրին, որպեսզի մյուսների հետ հաշվեհարդար տեսնեն... Արագ իջա ներքև. տղաներով լցուն ավտոբուսը շարժվեց, ՊԱԿ-ի «վոլգան» դեռ կանգնած էր: Խնդրեցի՝ ինձ էլ վերցնեն. «Ուզում եմ իմանալ՝ ուր տարաք տղաներին ու լինել նրանց հետ»: Թույլ տվեցին: Եկանք օպերայի մուտքի մոտ: Տղաներին արդեն ներս էին մտցրել: Պահանջեցի, որ ինձ էլ տանեն ներս: Խնդրեցին սպասել մեքենայի մեջ, իրենք ներս մտան: Կես ժամ անց դուրս եկան 2 ռուս սպա և հրավիրեցին ներս: Դավիթը զայրացավ. «Ինչու՞ եկաք, չէ՞ որ Ձեզ ազատ էին թողել»: Վշտացան և հայ միլիցիոներները: Հետո իմացա. կապվել էին նախարարության, թե գլխավոր դատախազ Նազարյանի հետ. «Պահանջում է, որ իրեն էլ վերցնենք տղաների հետ»: Պատասխանեցին. «Շատ է ուզում՝ վերցրեք»: Հանկարծ գիտակցեցի, որ պայուսակս ձեռքումս է. կատարյալ խուճապ պատեց ու լարվածության մեջ ինձ պահեց բանտային ամիսների ընթացքում: Այլ անցանկալի, սակայն ոչ լուրջ թղթերի հետ այնտեղ էր նաև հեռախոսագրքույկս...

Հասուն ընթերցողը կհիշի, թե ինչ աժիոտաժ բարձրացավ 88-ին ինքնաշեն զենքերի ստեղծման և զենքի ձեռք բերման շուրջը: Բազմաթիվ էնտուզիաստներ գործի դրին իրենց, երբեմն թվացյալ, գյուտարարական շնորհքը: Եղան շատ ցավալի զոհեր: Շատերը, նկատի ունենալով ռադիոֆիզիկոսի իմ մասնագիտությունը, դիմում էին ինձ տարբեր, երբեմն սրամիտ առաջարկներով: Մի քանի փոքր խմբերի հետ համագործակցում էի Չարենցավանում, Աշտարակում, Էջմիածնում: Մի քանիսի հեռա-

խոսահամարները գրքույկումս էին: Անասելի կսկիծով էի լսում չարագուշակ ժպիտով «ինկվիզիտորին», որը ցուցակի մեջ գրանցելուց առաջ հայտարարում էր պայուսակի միջի ամեն մի թերթիկը... Նշեց չարաբաստիկ հեռախոսագրքույկիս էջերի քանակը: Սարսափում էի ակամա նրանց բացահայտվելու ու հետապնդման ենթարկվելու մտքից: Բանտում ամեն անգամ հերթական հարցաքննման բերվելիս լարված պատրաստվում էի հնարավոր մերկացումներին: Աստված խնայեց: Գուցե փրկեց գրքույկիս միջի գրառումների փնթիությունը, հայերենի, ռուսերենի, անգլերենի խառնուրդը, նշումներն ու լրացումները: Ինքս էի դժվարությամբ վերծանում:

Ձերբակալման հետ կապված վերջին, այժմ կասեի զվարճալի շտրիխը. մի քանի օր անց աներձագիս կինը պատմում է կնոջս. «Մենք գիտեինք տղաների հանդիպման մասին. մեր աշխատակցուհին՝ հյուրընկալողի մայրը ժամանակից շուտ գնաց տուն, որպեսզի հասցնի փքաբլիթ թխել. "Աղջիկս էսօր կոմիտեի տղաներին է ընդունում..."». կոնսպիրացիայի գագաթնակետ... Երբ ազատվեցինք, Համբարձումը կատակում էր. «Տղերք, եթե Ղաքարյան Աշոտն է կազմակերպում հանդիպումը, չգնաք՝ կտանեն...»:

Ուշ գիշեր էր, երբ մեզ հասցրին Սովետաշենի գաղութ: Տարբնակեցրին տարբեր խուցերով: Ես հայտնվեցի բավականին ընդարձակ, մարդաշատ «ապարանքում» և ուրախացած գրկախառնվեցի Վիտյա Այվազյանի հետ: Մեծ մասը բերվել էին պարետային ժամը խախտելու համար՝ անգամ հիմնարկի հանձնարարականը կատարելիս: Երկհարկանի քնադարակներ՝ նառեր, տեղաշորը՝ վրայիս վերարկուն, բարձը՝ չարաբաստիկ պայուսակս: Ջահելները տեղ տվեցին առաջին հարկում: Պատի մեջ Լենինի գլխով հոբելյանական ռուբլիանոցի չափ ծակ էր փորած: «Պատի ետևում Մանուկյան Վազգենն է, – ուրախացրեց Վիտյան, – կարող եք խոսել»: Կանչեցի՝ արձագանքեց: Առաջին հնգյակը համարյա մի ամիս է, ինչ այստեղ էր: Նրանց ակնարկել էին, որ ինչպես և պարետային ժամը խախտողներին, մեկ ամսից կազատեն: Հարցրեց իմ կարծիքը: Համոզված հանգստացրի՝ «Չեմ կարծում, որ այդքան անխոհեմ գտնվեն՝ հեռացնեն բանտարկելով»: Պարզվեց, որ՝ այո... Բանտում տնօրինում էին ռուս սպաները: Ուստի կենցաղային բողոքները, որոնց հեղինակները «աչքաբաց» բանվոր ու վարորդ տղաներն էին,

համեմվում էին աղավաղված ռուսերենով՝ նրա հարուստ «բանահյուսության գոհարներով», որին, օգտվելով նույն «բառապաշարից», ուրախ արձագանքում էր խոշորամարմին, բարեհոգի մայորը, սակայն առանց ակցենտի: Վագգենը հարևան խցից չքացել էր: Համոզված էի, որ մի քանի օրից բոլորիս բաց կթողնեն: Սակայն հաջորդ խորը գիշերով հանեցին քնից ու հրավիրեցին առանձնասենյակ, ուր սպասում էր սառը, անբարյացակամ հայացքով մի սպա: Առաջարկեց կարդալ մեղադրանքը: Մի քանի հոդված, պատիժը՝ մինչև 3–4 տարի: Ներսս սառեց, բայց ցույց չտվեցի. հասկացա, որ պետք է հրաժեշտ տամ ընտանիքիս հետ սպասվելիք հանդիպմանը: Ստորագրեցի, որ մեղադրականին ծանոթացա, անշուշտ, համաձայն չեմ: Հետո սկսվեց պայուսակի պարունակության վերը հիշատակածս ցուցակագրումը: Որից հետո առաջարկեցին հագնվել ու դուրս բերեցին մռայլ նախասրահ: Պայուսակս չվերադարձրին: Երկու սպա թևանցուկ դուրս հանեցին բակ, ու մեր եռյակը հայտնվեց զինվորներից ու ծառայողական շներից բաղկացած երկար միջանցքում: «Միջանցքը» ավարտվեց բեռնատարի թափքի մոտ: Ինձ բարձրացրին ու նստեցրին մեջտեղի նստարանին. շուրջս մոտ տասը զինված զինվոր և սերժանտ, որը թիկունքից ավտոմատը դեմ տվեց ծոծրակիս. "Не разговаривать, головой не вертеть, при малейшей попытке к бегству — стреляю"[1]: Հետաքրքիր է՝ ոնց էր պատկերացնում փախուստս: «Զավեշտախաղը», որն ըստ КГБ-ական «խորամիտ հոգեբանի» մտահղացման, պետք է հոգեպես խորտակեր ինձ, տվեց հակառակ արդյունք՝ արթնացրեց ժամանակավորապես խլացած հակազդեցության ոգիս. չթաքցնելով թեթև հեգնանքը՝ հարցրի. "А думать можно, сержант?"[2]: "Разговорчики!!!"[3] – որոտաց վերջինս՝ ուժեղացնելով ճնշումը ծոծրակիս վրա...

Չոր, երկտեղ նստատեղերով ռազմական ինքնաթիռում նստեցինք զույգ-զույգ՝ մեկ ուղեկցող զինվորների հետ. յուրաքանչյուրիս ձեռքը շղթայված էր զինվորի ձեռքի հետ: Այդ փաստն ինձ զվարճացրեց. պատկերացրեցի զինվորի հիմար

---

1 «Չխոսե՛լ, գլուխը չպտտե՛լ, փախուստի նվազագույն փորձի դեպքում՝ կկրակե՛մ»:

2 «Իսկ մտածել կարելի՞ է, սերժանտ»:

3 «Լռե՛լ...»:

վիճակը, եթե մեկնումեկիս մոտ «կարիք» առաջանա: Մի փոքր ուշ այն շահարկելու առիթը ստեղծվեց (վերջինս հիշատակվում է նաև լուսահոգի Համբարձումի նոթերում): Ինքնաթիռում ծանր լռություն էր, սրտերում՝ ծանր կասկածներ. պատկերացում չունենք, թե ու՞ր են տանում... Մի պահ հայացքս հանդիպեց Սամսոնի հայացքին, դուր չեկավ՝ դատապարտված մատաղացուի աչքեր: Նայեցի մյուսներին: Գուցե թվաց, բայց Վանոյի աչքերում էլ նման ակնարկ տեսա: Հասկացա, որ պետք է ինչ-որ կերպ ցրել այդ տրամադրությունը: Օգնության եկավ մեր տարօրինակ իրավիճակը: Կանչեցի ուղեկցող սպային. դա մեղադրանքը ինձ ներկայացնող ու իմ ապագա քննիչ Բաուլինն էր: Ասացի, որ փոքր կարիք ունեմ, խնդրում եմ ուղեկցել զուգարան: Մռայլ պատասխանեց, որ համբերեմ, զուգարան չկա: Դա ավելի զվարճացրեց, ասացի, որ չեմ դիմանա: Առաջինը խաղը բռնեց Համբարձումը. իր սովորությամբ ըմբոստացավ ու բարձրաձայն բողոքեց տարիքավոր ակադեմիկոսի նկատմամբ նման անկիրթ վերաբերմունքի դեմ: Բաուլինը զիջեց, ուղեկցեց ինձ իմ «սիամական երկվորյակիս» հետ ինքնաթիռի վերջում կախած վարագույրի հետևը, ուր դույլ էր դրված ու դուրս եկավ: Ցանկություն չունեի, ուստի մի քանի վայրկյան կանգնելուց հետո աչքով արի զինվորին ու ստանալով նրա հազիվ նկատելի ժպիտ-պատասխանը՝ դուրս եկանք: Խաղը շարունակեց Վանոն. հայտարարեց, որ չի դիմանում... Մթնոլորտը լիցքաթափվեց: Առաջին գիշերը «Մատրոսկայա տիշինա»-յի շատ փոքր մենախցում: Երկիարկ մահճակալն՝ առանց տեղաշորի, գիշերն անց եմ կացնում նստած: Հաջորդ առավոտ անձնական թերթիկի մանրամասն լրացում, հետո՝ փոխադրում «Բուտիրկա», 5 տեղանոց կիսամութ խուց, նորից անկետային տվյալների լրացում, լուսանկարում և բոլոր 10 մատների դրոշմը վերցնելը (Игра на пианино[1]): Զուգաննման ներկը մի քանի օր չի լվացվում: Լուսանկարվելուց առաջ խնդրեցի՝ թույլ տան՝ սափրվեմ՝ «ո՛չ»: Բազկաթոռի թիկնակը, որին նստում ես նկարվելու, մի փոքր հետ է թեքված այնպես, որ օպտիկան նայում է դեմքիդ մի փոքր ներքևից: Երբ տեսա լուսանկարս, հասկացա «ֆիրմային գաղտնիքը». լուսանկարից ինձ նայում էր շատ վտանգավոր ու անուղղելի հանցագործ...

---

1 Դաշնամուրի նվագ

«Դաշնամուրի նվագը» կրկնվեց նաև հաջորդ օրը. լավ չէր ստացվել...

Խցակիցներս. հիսունի մոտ պնդակազմ, շիկակարմիր, անբարյացակամ, ծանր դեմքով Նիկոլայը՝ ռեցիդիվիստ, կողոպտիչ (гопстопник) առաջին պահից չթաքցրեց իր անբարեհաճությունը, երկրորդը՝ նույն տարիքի, փոքրամարմին, նիհար, բավական զարգացած ու զրուցասեր, ակնհայտ ուրախ էր իմ հայտնվելուց: Մասնագիտացել էր խարդախության մեջ (Куклист): Գործընկերուհին (подельщица) կանանց բաժնում էր. «վառվեցին» միասին: Տրամադրությունը բարձր էր. ինձ համար խորհրդավոր կապուղիներով պարզել էր, որ կստանան երեք տարի ու կուղարկվեն նույն զոնան: Երբ մտածում էի, որ ինձ էլ կարող են տալ նույնը (վերագրվող հոդվածով այդքանը հասնում էր) ու այդքան ժամանակ չեմ տեսնի երեխաներին, խլանում էի ներքին հուսակտուր ճիչից: Բանտային չափանիշներով նրբանկատ էր. «Երկու տարուց ավել չեն տա, – մխիթարում էր ինձ, – իսկ դա ժամկետ չի, մի ոտքի վրա կանցկացնես»: Անկեղծ ափսոսացի, երբ մի շաբաթից իրեն տարան: Մյուս երկուսը ջահելներ էին, անունները չեմ հիշում: Մեկը՝ փոքրամարմին, նենգ, ակնհայտ ստոր, զբաղվել է մանր գողությամբ (Щипач) և կանեփ հավաքելով ու վաճառելով, ուստի ինքնահաստատվելու ջանք էր թափում իր քրեական քաշն ուռճացնելով: Նիկոլայը նրա համար հեղինակություն է: Մյուս երիտասարդը սկսնակ է, համեմատաբար զարգացած, միջին թվաբանական մոսկվացի տղա, շախմատ է խաղում, ուրախանում է՝ իմ մեջ խաղընկեր գտնելով: «Կուկլիստի» փոխարեն բերեցին 18 տարեկան մի չուվաշի. երանության աստիճանի միամիտ. Մոսկվա էր ժամանել գիշերով ու որոշել էր գիշերը լուսացնել կայարանի սպասադահլիճում, զրույցի էր բռնվել մի խումբ ջահելների հետ, որոնք, ինչ-որ զանցանք կատարելով, հասցրել էին ցրվել, նա, չգիտակցելով եղելությունը, հայտնվել էր օպերատիվ կարգախմբի «ջերմ գրկում»: Անկապ բացատրություն տալու փորձը որակվել էր որպես պարզունակ սուտ ("Чепуху лепит, дуру гонит"):

Ամենից շատ ուրախացել էի լածս դույլ-պարաշայի փոխարեն տեսնելով սովորական ունիտազ, անընդհատ հոսող ջրով: Յաջորդ հաճելի հայտնագործությունը՝ անսպասելի հարուստ գրադարան. «ստալինիզմի զոհերի սեփական գրադարանների

հաշվին», բացատրեցին ինձ: Սննան մենյուն չէր հոգնեցնում բազմազանությամբ. սուպ (բալանդա), վարսակի շիլա, թեյ: Տոներին՝ տեսակավոր գինու հնության աղ դրած ձկան կտոր: Փրկում էին հարազատների նվիրաբերումները (ամիսը՝ 5 կգ) և բանտամիջի խանութը, որտեղից կարելի էր ապրանքավորվել ամիսը մինչև 10 ռուբլու չափ: Քանի որ «հաջողության ասպետները» երբեմն հայտնվում էին «հանգստավայրում» առանց կոպեկի կամ հարազատ «պենատներից» շատ հեռու, ապա խուց մտնող սննդամթերքը բոլորինն էր՝ համաձայն բանտային անառարկելի օրենքի (ու՞ր էր՝ հանրապետությունում գործեր նման բարոյական նորմ): Խանութի տեսականին և գները, հավանաբար, Խրուշչովի խոստացած կոմունիզմի լուսավոր ապագայից էին քոչել: Որպես օրինակ բերել եմ տիպային մեկամսյա պատվերս:

| | | | |
|---|---|---|---|
| Հաց | 4 | հատ | 1.04 ռ. |
| Պանիրկ | 6 | հատ | 1.74 ռ. |
| Տետր | 4 | հատ | 0.16 ռ. |
| Լուցկի | 4 | հատ | 0.12 ռ. |
| Օրար | 4 | հատ | 0.48 ռ. |
| Երշիկ | 0.5 | կգ | 2.1 ռ. |
| Շաքար | 1 | կգ | 1.04 ռ. |
| Կարագ | 0.4 | կգ | 1.4 ռ. |
| Թխվածքաբլիթ | 2 | կգ | 1.8 ռ. |
| Ատամնափոշի | | | 0.12 ռ. |
| Ընդամենը | | | 10 ռ. |

Սիգարետները նախատեսվում էին բանտարկյալ գրադարանավարուհուն իմ ոչ ստանդարտ պատվերների (գեղարվեստականից բացի՝ նաև ֆիզմաթ գրականություն) կատարումը շահագրգռելու, ինչպես նաև բանտարկյալ ճաշ բաժանողներին (բալանդյորներին) գաղտնի գրությունները (մալյավաները) ընկերներիս հասցնելու համար: Մտատանջություններիս դեմ միակ դարմանն ընթերցանությունն էր, որը խանգարվում էր ամենօրյա, ժամեր տևող հարցաքննություններով: Հաճախ «տնային աշխատանքի» գրավոր հանձնարարություններ էի ստանում. ասենք, մանրամասն շարադրել շարժման մեջ «խրվելու» իմ դրդապատճառները կամ այս կամ այն ելույթներիս (պարզվեց, որ բոլորն անխտիր ձայնագրվել և անհաջող թարգմանվել են) մեկնաբանությունը և այլն: Սկզբում շատ պաշտոնական, անթափանցիկ ու անհաղորդ քննիչիս՝ Բաուլինի մոտ սկսում են ծիլ տալ մարդկային գծեր՝ երբեմն ներքաշվում է կողմնակի թեմայով զրույցի մեջ: Մեր գործի արդարության մեջ իմ անվերապահ համոզմունքը, հիմնավորումներս ու մեկնությունները ի վերջո հալեցնում են նրա կան-

խակարծությունը, չի սքողում իր հարգանքը: Մի օր՝ մոտ ամիս ու կես անց, ծիծաղելով խոստովանում է՝ քննչական խմբի ղեկավարը կես լուրջ, կես կատակ դիմում է իրեն. «Չեմ զարմանա Վասիլի Միխայլովիչ, մի օր կգաք ու կհայտարարեք՝ «Կեցցե «Ղարաբաղ» կոմիտեն»:

Տնային հանձնարարությունները տրվում են զգալի ընդմիջումներով: Տարբեր համեմվածքներով քողարկված, ի վերջո պտտվում են նույն իրադարձությունների ու թեմաների շուրջ՝ նպատակ ունենալով հայտնաբերել ցուցմունքների տարընթերցում: Ինձ այդ թակարդը չէր մտահոգում. նույն հարցի շուրջ արտահայտում եմ նույն կարծիքը՝ իմ համոզմունքը: Անցնելով առաջ՝ ասեմ, որ տարիներ անց եղեռնագոհ Հենրիկ Խաչատրյանը, հանդիպելով կնոջս, ասել է, որ ինքը կարող է հպարտանալ ինձնով, քանզի սկզբից մինչև վերջ չեմ փոխել ո՛չ ցուցմունք, ո՛չ կարծիք: Չեմ բացառում, որ նման «կոմպլիմենտ» արել է նաև զինակիցներիս հարազատներին:

Փոխհարաբերությունների հակառակ զարգացում էր ծավալվում բանտախցի ներսում: «Ռեժիսորը» Նիկոլայն էր, փութեռանդ կատարողը՝ կանեփագործը: Աշխատում էի առիթ չտալ ու մանր խայթոցներին չարձագանքել. չէր օգնում: Կասկածում էի, որ նպատակն ինձ հունից հանելն է: Կասկածս խորացավ, երբ մի տարի հանգստավետության մեջ անցկացրած Նիկոլային կանչեցին իբր հարցաքննության, որից հետո եզի առողջության այդ գորիլան «խաթարված առողջության» վերականգնման համար լրացուցիչ մթերափայ սկսեց ստանալ. խժռում էր միայնակ: Լուրջ ռիսկի էր գնում. «կարմիր գլխարկները» (բանտի վարչության հետ համագործակցողները) դաժան են պատժվում գողական օրենքներով: Կանեփագործի յալանչիությունը հազիվ էի տանում: Համբերությանս բաժակը լցրեց խեղճ ու կրակ չուվաշի նկատմամբ զազրելի ձեռառնոցը, մի պահ չդիմացա, կտրուկ պահանջեցի՝ վերջ տան: Կարծես դրան էին սպասում. վիրավորանքները և սպառնալիքները թափվեցին գլխիս. ընդգծված շուռ եկա մեջքով՝ հասկացնելով, որ շան տեղ չեմ դնում: Ավելի կատաղեցին. Նիկոլայը զուսպ ռեպլիկներով շիկացնում էր վիճակը: Երբ կանեփագործը թույլ տվեց առանձնահատուկ կեղտոտ հայհոյանք, անսպասելի ինձ համար շրջվեցի ու հարվածեցի: Չափազանցված ոռնոց գցեց. հանելով սրիչը ու «պարե-

լով» դեմս՝ սպառնում էր «ճախշել» դեմքս: Նորից շրջվեցի մեջքով, թեև լարված էի: Ձեռք չտվեց. հասկացա, որ դա արգելված է: Կանչեցի դաստիարակին՝ 25 տարեկան լեյտենանտին, ու տվեցի նրան կես ժամ ինձ այդ տականքներից ազատելու համար, այլապես խոստացա երակս բացել ու ցույց տվեցի պատուհանի ապակու վերին կոտրված անկյունը: Հավատաց: Փոխադրեցին. նոր խուցն ավելի ընդարձակ էր, 4 տեղանոց, ցերեկային լույսի լամպերով: Նախորդի համեմատ՝ յուքս: Նոր խցակիցներս հաճելի տպավորություն թողեցին՝ արժանապատիվ գողեր էին: Ուրախ էին իմ հայտնվելու համար. ինձ փոխանակել էին ոջլոտ ադրբեջանցու հետ: Առանձնանում էին Սերյոգան՝ 30-ի մոտ ռեցիդիվիստ, սեփական արժանապատվության զգացումով, գողական աշխարհի չափանիշներով՝ արդարամիտ, մյուսը՝ Դիման, սկսնակ «դոմուշնիկ»[1], ասես կոնսերվատորիայի ակնոցավոր գեղեցկատես ուսանող: Սիրում էր նկարել միջնադարյան ամրոցներ ու եկեղեցիներ: Հաստատվեց փոխադարձ հարգալից բարյացակամ մթնոլորտ: Չափազանց շոյված էին ու հպարտ, որ նստած են պրոֆեսորի հետ: Ակադեմիայի թղթակից անդամ լինելս ոչ մի տպավորություն չթողեց, սակայն պրոֆեսորը գողական աշխարհի գիտական բարձրագույն կոչումից՝ «դոցենտից» բարձր էր: Դիմում էին միայն կոչումովս՝ ակնհայտ հաճույք էին ստանում դրանից: "... твою мать", – երազկոտ ծոր էր տալիս Սերյոգան, – расскажу будущим детям с кем сидел, не поверят... Скажут батя цену себе набивает..."[2]: Սակայն բանտային քաղաքավարությունն ունի իր ուրույն դրսևորումները. խաղում ենք դոմինո (козла забиваем)... Ես չարախնդորեն գուշակում եմ. "Придется тебе, Серега, на базар сбегать"[3], – ինչին «զտարյուն ինտելիգենտ» Սերյոգան, քարը դնելով, անվրդով արձագանքում է. "А вот ... вам, профессор"[4]: Շաբաթը մեկ բոլորիս հանում են միջանցք ու քրքրում իրերը՝ սառը զենք, թմրադեղեր փնտրում: Հերթական шмон[5]-ի ընթացքում միջանցքի հերթապահ երիտասարդ զին-

---

[1] Բնակարանային գող

[2] «Քու մերը... ապագա երեխեքիս պատմեմ՝ ում հետ եմ նստել, չեն հավատա, կասեն թանկացնում ա իրան...»:

[3] «Ստիպված կլինես «շուկա» գնալ, Սերյոգա...»:

[4] «Ք.. ես կերել... պրոֆեսոր»:

[5] Խուզարկություն

վորը՝ վերտուխայը, լսելով տղաների՝ ինձ ուղղած կոչումը, հետաքրքրվեց. "А тебя за что, старик?"[1] (նախորդ խցիս կանեփագործը փչացրել էր ածելիս, ուստի մորուք էի թողել), դերս մինչև վերջ տանելով, անտարբեր պատասխանում եմ. "Да, так... мелочовка... две мокрухи и одна малолетка..."[2]: "Ну ты даешь, старик"[3] – անկեղծ հիանում է վերտուխայը: Մի քանի տարի առաջ տղաները հավաքույթ էին կազմակերպել ծննդյանս օրվա առթիվ, պատմեցի այդ էպիզոդը, որին Սիմիդյան Կարոն՝ անպետքը, տեղից լրացրեց. «Մալալետկեն էլ Գրիգելդան էր», – ակնարկելով իմ ու կնոջս միջև քառորդ դար տարբերությունը:

Պետք է ասեմ, որ, չնայած պարբերաբար համակող ծանր հոգեկան ապրումներին, այդ ամիսներն արգասավոր էին և հագեցած. գեղարվեստականից բացի գրադարանում գտնվեցին ֆիզիկայի մի քանի բուհական ձեռնարկ՝ հաճույքով վերընթերցեցի: Տկարամտիս ջանասիրությանը տղաները որոշեցին գործնական ուղղություն տալ. առաջարկեցին տարբեր տիպի խաղերում անսխալ շահելու ալգորիթմը գտնել: Ինչ վերաբերում է սպորտլոտոյին, հիասթափեցրի հենց սկզբից՝ բոլոր թվերի հայտնվելը հավասար հավանական է, գուշակումն՝ անհնար: Անցանք ձիասպորտին, բացատրեցին կանոնները, ինչ-որ ալգորիթմի հույս առկայծեց, ակամա տարվեցի կոմբինատորիկայով և, կարծես, մի քանի բավական խճճված, բարդ խնդիրների լուծման ընդհանուր բանաձևեր գտա, որոնք տղաների ուզածը չէին, սակայն ինքնուրույն հետաքրքրություն էին ներկայացնում: (Բանտից դուրս գալով նորից խրվեցի ղարաբաղյան թոհուբոհի մեջ, իսկ երբ մի քանի տարի անց անդրադարձա գրություններիս, հասկացա, որ գլուխ չեմ հանի արածիցս): Երբ առանձնապես ծանրանում էր հոգեվիճակս, գրում էի զվարճալի մանկական պատմվածքներ, մասնավորապես՝ ֆանտաստիկ: Հետո դրանցից մի՝քանիսը մտան 90-ին լույս տեսած «Վազգենիկը, լուսեղեն դինոզավրը և այլմոլորակայինները» գրքույկիս մեջ:

Նամակ եմ գրել նաև Գորբաչովին: Այն աղքատիկ ինֆորմացիան, որը ներս էր թափանցում բանտի ռադիոյով, տագնապ

---

1 «Քե՞զ ինչի համար են նստեցրել, ծերուկ...»:

2 «Հե՛չ, մանրուք. երկու սպանություն ու մի անչափահաս...»:

3 «Համա տիպն ես, ծերուկ...»:

էր առաջացնում Ղարաբաղի խնդրի հետ կապված: Դա էլ հենց կազմել էր նամակիս բովանդակությունը: Զարմանք էի հայտնում ԼՂԻՄ-ի խնդրի շուտափույթ ու արդար լուծման դեմ նրա դրսևորած համառության առթիվ և այլն: Ավելի քան հավանական է նամակիս «Վանյկա Ժուկովյան» ճակատագիրը: Հետագայում պարզեցի, որ նման բախտին է արժանացել նաև հանրապետության ներքին կյանքին վերաբերող՝ Սուրեն Հարությունյանին ուղարկած նամակս: Անցել էր մոտ երկու ամիս: Համոզված, որ ուղեկցում են հերթական հարցաքննության, հայտնվեցի մեծ սենյակում: 5–6 հոգու շրջապատում ինձ դիմավորեց գեներալ-լեյտենանտ Նովիկովը, որի հետ ծանոթացել էի Երևանում: Բարձրացավ տեղից՝ ինձ ընդառաջ, բարևեց, առաջարկեց նստել: Մի երկու խոսք փոխանակելուց հետո անցավ իր այցելության բուն խնդրին:

– Ռաֆայել Ավետիսովիչ, պետք է խոստովանեմ, որ վատ եմ քնում, երբ Ձեզ, ինձ պես պատերազմի մասնակցին, պատկերացնում եմ այստեղ, ուստի հոգեկան հանգիստս վերականգնելու համար ուզում եմ առաջարկություն անել. չէ՞իք համաձայնի դուրս գալ այստեղից... – Մի պահ պատկերացրի հանդիպումս ընտանիքի, բարեկամների հետ, մտքերս խառնվեցին, հուզվեցի... «Քեզ հավաքիր..., – չոր սթափեցրեց ներքին ձայնս, – թուլությունդ չտեսնեն...»:

– Դուք այդ առաջարկը միայն ի՞նձ եք անում, – հարցրի:

– Առայժմ միայն Ձեզ...

– Ափսոս... Վասիլի Գեորգևիչ... Շատ կուզենայի ազատության մեջ հայտնվել, սակայն կսպասեմ, տղաների հետ միասին դուրս կգամ: Բոլոր դեպքերում սրտանց շնորհակալ եմ Ձեզ և՛ առաջարկի, և՛ մտահոգության համար:

– Ցավում եմ, – կարճատև լռությունից հետո արտաբերեց նա, – սակայն այլ պատասխան Ձեզնից չէի սպասում:

Հետո իմացա, որ ազատ են արձակվել Ստամբուլցյան Խաչիկը և Ալեքսանը: Խաչիկն իր խցակիցներին արդեն հասունացրել էր խմբային աղոթքի, փոթորկոտ Համբարձումը՝ ծեծկռտոցի՝ ի պատասխան անձնական վիրավորանքի:

Ավելի ուշ Բաուլինը վշտացրեց ինձ. Նովիկովը սրտի նոպայով հայտնվել է հիվանդանոցում: Հուսով եմ՝ ոչ իմ պատճառով:

Ապրիլին հարցաքննությունները հանկարծ ընդհատվեցին: Պատճառը պարզվեց ավելի ուշ, երբ ազատ արձակվեցինք ու

ծանոթացանք հանուն մեր ազատման ծավալված պայքարի մասշտաբներին: Երկրի ղեկավարությունը հասկացել էր, որ գլխացավանքի նվազագույնը մեզ ազատ արձակելն է: Իմացա նաև, որ հունվարի 26-ին ծննդյանս օրվա կապակցությամբ մոտ մեկուկես հազար շնորհավորական հեռագիր էր ուղարկվել Բուտիրկա: Ի վերջո Երևանում երեկոյան հրահանգ իջեցրին փոստի բաժանմունքներին՝ դադարեցնել հեռագրերի ընդունումը: Ինձ հասավ երկու հեռագիր: Հատկապես ջերմացրել էր ավելի ուշ ինձ հասած՝ Ռազմիկ Մարկոսյանի շնորհավորականը (Զատիկյան-Հայրիկյան ազատության ասպետների խմբի այն եզակիներից, որի բարոյականությունը մազաչափ չպղտորվեց մինչ օրս): Իսկ Պոլիտեխնիկական ինստիտուտի մի խումբ դասախոսներ դիմել էին Սուխարևին խնդրանքով՝ փոխանցել ինձ շնորհավորական հեռագիրը ծննդյանս օրվա կապակցությամբ, որում սրտապնդում էին ինձ Պուշկինի՝ Չաադաևին ուղղված հայտնի ոտանավորի տողերով:

Հանգիստ չէր տալիս արցախյան խնդրի ճակատագիրը: Գիշերները գալարվում էի զայրույթից՝ հիշելով կենտրոնի հենց սկզբից որդեգրած կեղտոտ խաղը մեր արդար պահանջի նկատմամբ: Անշուշտ, չդիմացա, երկարաշունչ «քարոզ» հղեցի Գորբաչովին բանտից: Այսօր այն ընթերցում եմ որոշակի բավարարվածությամբ, չնայած նրա մեջ նկատվող մեր հույզերի մարող խարույկի միամտության դեռ կայծկլտողածխիկների՝ շարունակում էի անգամ բանտում պահանջախնդիր մնալ և վերլուծաբար հիմնավորել նրա սխալ քաղաքականությունն Արցախի հարցում: Նրա անգլերեն թարգմանությունը տե՛ս Հավելվածում, էջ 310: Բերում եմ այն մի խնդրանքով՝ ընթերցել 88-ի աչքերով, թեև դա ճիգեր կպահանջի:

Լռությունը երկարեց ու ես զարմանքով գիտակցեցի, որ ինձ պակասում են Բաուլինի հետ զրույց-հարցաքննությունները, որոնք օգնում էին հստակեցնել մտքերս:

Անտեղյակ լինելով բողոքի բարձրացած ալիքին՝ ես յուրովի մեկնեցի այդ լռությունը: Նորից մեջս գլուխ բարձրացրեց առժամանակ քնած կասկածը՝ կա չկա երիցս անիծյալ հեռախոսագրքույկս «հոտոտելով»՝ դուրս են եկել զենքով զբաղվող տղաների վրա: Կասկածս դարձավ անանց մտատանջություն, վերածվեց տագնապի ու ավարտվեց միկրոինֆարկտով:

Գուցե բանը դրան չհասներ, եթե չտուժեր մեր սենյակի ջերմ

մթնոլորտը: Նկատելով, որ շփումը ինձ հետ խարխլում է ազնիվ գողերի գաղափարական հիմքերը, սկսեցին հաճախակի փոխել հարևաններիս: Տարան Սերյոգային: Հարափոխ այդ շարքից կառանձնացնեի երկուսին. «Աստծու մարդ» Ալեքսեյը ծառայել է եկեղեցում՝ նաև բարձրաստիճան հոգևորականների մոտ, ու բաց չի թողել նրանց կողոպտելու առիթը: Շուտասելուկի տեմպով արտասանում էր երկարաշունչ աղոթքներ: Բարձրաստիճան հոգևորականների մասին ամենաբացասական կարծիքի էր: Մյուսը՝ Իգոր Դանշինը, վառ ընմուշ էր. բարձրահասակ, հաճելի դիմագծերով, բարձրագույն ուսումով, ավտոռալիի սպորտի վարպետ: Ծյուրիմացաբար (կանոններով արգելվում էր) մի անգամ հարցաքննության գնալիս մի պահ հայտնվեցինք դեմ դիմաց: 2 շաբաթ անց հայտնվեց մեր սենյակում: «Ես անմիջապես նկատեցի ինտելեկտից այլանդակված դեմք», – «շոյեց» ինձ՝ սենյակ մտնելով: Մոսկվայի բանկերից մեկի աղմուկ հանած թալանման ծրագրի ուղեղն է եղել: Պարբերաբար տանում էին դատարան, որը շարունակվում էր ամիսներ: «Ընդամենը բացահայտել են 27 «պատկեր», մինչդեռ ինձ մոտ հարյուրից ավելի են», – հպարտանում էր նա... Հիանալի պատմիչ էր, զվարճացնում էր դատավորական կազմը: Մեզ մոտ փոխադրվելուց առաջ կարճ ժամանակ եղել է իմ նախկին խցում: Անմիջապես պարզել է Նիկոլայի ինչ լինելը. "Рыжий поплатится"[1] – համոզված ասաց նա: Մի անգամ դատարանից վերադառնալով՝ բարևներ փոխանցեց ինձ բանտի «զակոննիկից». «Կասես, որ մենք հարցում ենք պրոֆեսորին, նրան մատով ձեռք տվող չի լինի, իսկ «կյաժը» պատասխան կտա»:

Ի տարբերություն մեր իշխանավորների արձակած կարգադրությունների (ասենք՝ Երևանի պաղպաղականոցների գիշերային կակաֆոնիաների վերաբերյալ, որոնցից շարունակում են դիվահարվել շրջակա շենքերի դատապարտված բնակիչները), «զակոննիկի» հրահանգն անխուսափելի է, ինչպես ցերեկվա ու գիշերվա հաջորդականությունը: Անցնելով առաջ ասեմ, որ մոտ կես տարի անց Երևանում ստացա Դիմայի հերթական նամակը Պոտմա ճամբարից, ուր նա «գործուղվել» էր 2 տարով: Ինձ խոստացել էր ազատվելուց հետո չվերադառնալ նախկին զբաղմունքին և նամակները սկսում էր իրեն դուր եկած «ցավդ տա-

1 «Կյաժը պատասխան կտա...»:

նեմ» երգի ռեֆրենով: Այս անգամ նամակը սկսվում էր այսպես. "Цавд танем, Рафаэль Аветисович! Рыжий поплатился..."[1]: Չէի ուզենա հայտնվել «կյաժի» տեղում:

* * *

Սուր ցավը վրա տվեց հանկարծակի՝ զբոսանքի ժամին: Խնդրեցի ռենտգեն, ասացին՝ հերթը կհասնի մեկ ամսից: Փորձեցի ցավը հաղթահարել վազքով զբոսանքի ժամին: Սրտի անասելի ծակոցից ուշաթափվեցի: Իգորը, վերցնելով ինձ ձեռքերի վրա, տարավ խուց՝ ճանապարհին բարձրաձայն, ամբողջ բանտով մեկ լսելի հայհոյելով բանտի ու երկրի մեծերին: Վերջին անգամ ծանրոցը բերել էր որդիս՝ Ալեքսանդրը, կասկածեցի եղբորս առողջականի վրա (ինչը հետո հաստատվեց): Պահանջեցի տեսակցություն եղբորս կամ կնոջս հետ: Մերժեցին: Մոտեցել էր ապրիլի 24-ը: Նախազգուշական եռօրյա հացադուլ հայտարարեցի ի հիշատակ Եղեռնի զոհերի և ի պահանջ տեսակցության (նախազգուշացումը պարտադիր գրավոր ուղարկվում էր բանտապետին): Երեք օրից ավելին ցանկալի չէ՝ պարտադիր (ուժով) սրսկում են սնունդը, ստորացուցիչ վիճակ է: Հացադուլս համընկավ ծանրոցի ստացման հետ: Տղաները վայելում էին դրա բարիքներն ու համոզում ինձ, որ աննկատ ուտեմ՝ չեն ծախի ("чтоб я сукой был"): Չէին հասկանում իմ «տխմար սկզբունքայնությունը»: Պարզվում է, որ նույն ժամանակ կինս՝ Գրիգելդան, տեսակցության պահանջով գրոհ էր սկսել հանրապետությունում: Հասել էր Լոբովին, որը մարդկային առումով ամենահամակրելին էր իշխանական բուրգում: Ինչ ասես շպրտել էր նրա երեսին, որից հետո Լոբովը հենց իր ներկայությամբ զանգել էր Մոսկվա ու ստացել տեսակցության թույլտվությունը: Մի քանի օրից հայտնվեցինք ապակու տարբեր կողմերում. զրուցում էինք հեռախոսով: Տեսքս հյուծված էր, մորուքս սաստկացնում էր անբարենպաստ տեսքս: Երևան վերադառնալուն պես Գրիգելդան ելույթ է ունենում միտինգում, հայտարարում, որ կյանքս վտանգված է, խառնում բոլորին իրար: Ինձ շտապ փոխադրում են հիվանդանոցային բաժին, առանձին սեն-

---

1 «Ցավդ տանեմ, Ռաֆայել Ավետիսովիչ, կյաժն իր արժանին ստացավ...»:

յակ, ուր միակ հարևանուհիս «Լարիսկա» առնետն էր: Պատի վրա առնետի բնի վերևի գրությունը զգուշացնում էր. "Бродяга, не забудь покормить Лариску"[1]: Վերջինս սննդի բաժանման պահին դունչը դուրս էր հանում «դղյակից»:

Երկու նշում ևս, և ավարտեմ Բուտիրյան ժամանակագրությունը: Մեկը վերաբերում է ներբանտային նամակագրությանը. ինձ դա հաջողվեց Համբարձումի ու Աշոտի հետ մեկական անգամ: Հարցաքննմանը տանելիս ամեն անգամ սկզբից մտցնում են մեկ մետրանոց խցիկ, մինչև որ քննիչը կազատվի: Այստեղ սկսվում են իմ ահն ու սարսափը. մանկությունից տառապում եմ կլաուստրոֆոբիայով (փակ տարածության վախ): Մի անգամ փորձեցին խցկել ավելի փոքր վանդակ՝ միայն կանգնած ես տեղավորվում, կտրուկ բողոքեցի՝ փոխադրեցին ավելի մեծ բուն: Ամեն անգամ նման վանդակ մտնելիս փակում էի աչքերս ու պատկերացնում, որ մեծ դահլիճում եմ, սակայն տագնապը ներսս նստած էր: Մի անգամ բացեցի աչքերս ու դիմացի պատին նկատեցի հայատառ գրություն: Ասեմ, որ պատերը ծեփում են խոշորացված մեղվաբջիջների նման, որպեսզի բարդացնեն բանահյուսության «գոհարները» պատի վրա հավերժացնելու մոլուցքը: Համբոն հարցնում էր. «Ո՞նց եք, տղերք»: Այսքանը... Սակայն սիրտս ուրախությունից եկավ բերանս: Գրեցի մի քանի բառ, խնդրեցի՝ պատասխանի: Թվում է փոքր մի բան, բայց մի քանի օր տրամադրությունս բարձր էր: Զարմանալի է, բայց նման չնչին պարագան կարող է հոգեկան վիճակի շրջադարձ կատարել: Անհամբեր սպասում էի հերթական հարցաքննմանը ու նույն վանդակում փակվելու հավանականությանը: Դա իրականացավ միայն 2 շաբաթ անց. Համբոն քաջալերում էր:

Աշոտի հետ նամակափոխանակումը իրագործվեց բանտային մշակված տեխնոլոգիայով: Թղթի պստլիկ կտորի վրա մանրագույն տառերով գրվում է նամակը (որը, կարծում եմ, կհավաներ մանրակերտի մեր հռչակված վարպետ Էդուարդ Ղազարյանը), այնուհետև այն փաթաթվում, դառնում է սիսեռի չափ գնդիկ ու զոդվում ցելոֆանի մեջ: Երբ ճաշ բաժանող «զեկ»-ը բացում է պատուհանիկը, աչքով ես անում ու գցում «մայլավան»: Անպայման նվիրում ես սիգարետի տուփ ու ասում հասցեատիրոջ սենյակի համարը: Աշոտը ստացավ և պատասխանեց:

---

1 «Թափառական, չմոռանաս կերակրել Լարիսկային»:

Երկրորդ դեպքը մինչ օրս հիշելիս ափսոսանք է առաջացնում: Ստարավոյտովա Գալյան մեզ սրտապնդելու համար, ներգրավելով Սախարովին, հասավ այցելության թույլտվությանը, իբր մեր պայմաններին ծանոթանալու համար: Եկավ Անդրեյ Դմիտրիևիչի հետ, խստիվ պայմանով, որ ոչ մի ձևով չբացահայտվի իրենց ներկայությունը: Նույն ժամանակ բանտի մոտակայքում փողը հնչեցրեց մեր միտինգների ազդակոչը: Ավա՜ղ, չլսեցինք: Սպայի ուղեկցությամբ անցնում են մեր միջանցքով, նայում իմ խցի «աչքից»՝ ես խորասուզված եմ ընթերցանության մեջ: Փորձում են մի փոքր բարձր ձայնով խոսել իրար հետ, սպան բողոքում է: «Գուցե փորձեմ հազա՞լ», – շշնջում է Անդրեյ Դմիտրիևիչը Գալյայի ականջին: Վերջինս դրական նշան է անում: Խեղճ Անդրեյ Դմիտրիևիչը վատ դերասանի նման մի քանի անգամ հազում է: Ոչ մի արդյունք: «Այնպես էիր կպել գրքիդ, միայն հարվածը վզակոթիդ կօգներ», – գանգատվում էր հետագայում Գալյան: Աշոտի խուցը իմի դիմաց էր, մի փոքր հեռու: Ի վերջո Գալյան բարձրաձայն նրա անունը տվեց, որին Աշոտն ուրախ արձագանքեց, սակայն ստիպված եղան անմիջապես հեռանալ:

# ՆՈՒՅՆ ԱՅԴ ԺԱՄԱՆԱԿ...

Մինչ մենք վայելում էինք պետության «հոգատարությունը» և «ճաշակում» բանտային խոհանոցի «հարուստ» մենյուն, բանտից դուրս մեր ձերբակալման շուրջը բողոքի անօրինակ ալիք էր ծավալվել ու արձագանք գտել Միության կենտրոններում ու դեմոկրատական աշխարհում: Բուռն գործունեություն էր ծավալել պահեստային «Ղարաբաղ» կոմիտեն՝ ներգրավելով տարբեր ձեռնարկությունների ու ԲՈՒՀ-երի ակտիվիստներին:

Հունվարի 20-ին «Amnesty International»-ն անհանգստություն է արտահայտում 11-ի և այլոց ձերբակալման առթիվ:

Նույն հունվարին լուսահոգի նահատակ Մովսես Գորգիսյանի խմբագրությամբ «Հայրենիք» հրատարակչությունը լույս ընծայեց «Մեղադրվում են» հավաքածուն, ուր տեղ էին գտել կոմիտեի 88-ի նոյեմբերյան և դեկտեմբերյան կոչերը, մեր համառոտ կենսագրությունները, ելույթները, հոդվածները, մասնավորապես՝ Գորբաչովին ուղղված նամակս (թարգմանաբար), Աշոտի պատասխանը ՀԿԿ քարտուղարներից մեկին, Համբարձումի բաց նամակը Ս. Հարությունյանին: Հունվար-փետրվար ամիսներին տարբեր թերթերին տրված հարցազրույցները (“The London Times”, 14.01.89, “US News and World Report” 30.01.89, “The Washington Post”, 05.02.89, “Le Monde”, 08.02.89) ելույթներում ակադեմիկոս Անդրեյ Սախարովը պաշտպանում է շարժումը և բողոքում մեր ձերբակալության դեմ: Գալյա Ստորովոյտովան անանորյա մաղթանքներով դիմում է հայ բարեկամներին: «Գլասնոստ»-ի խմբագիր Սերգեյ Գրիգորյանցը հարցազրույց է տալիս «Ամերիկայի ձայն»-ին, Միությունում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հոդվածների շարք «Անկախություն» շաբաթաթերթում: Հարվարդի համալսարանից Derek Bock-ը դիմում է Սուխարևին: Դրան հետևեցին Ֆրանսիայում հայ-ֆրանսիական համերաշխության (նախագահ Քրիստիան Տեր-Ստեփանյան) լույս ընծայած հավաքածուներն՝ ի պաշտպանություն «Ղարաբաղ» կոմիտեի[1]: Յուրաքանչյուրիս

---

1 “Campagne de soutien au comité 'Karabagh'”, Solidarité franco-arménienne, 1989.

«որդեգրել էր», այսինքն պատվավոր քաղաքացիություն էր շնորհել Ֆրանսիայի այս կամ այն քաղաքը, յուրաքանչյուրի քաղաքագլուխը դիմել էր Մոսկվային իր հովանավորյալի խնդրով: Մասնավորապես Լեոնի խնդրով Գորբաչովին էր դիմել այն ժամանակ Փարիզի քաղաքագլուխ ժակ Շիրակը: Իմ հովանավորը Լիոնի քաղաքագլուխ Միշել Նուարն էր, որը 90-ի գարնանը հրավիրել և ընդունել էր ինձ Լիոնի շքեղ քաղաքապետարանում:

Յավաքածուներում տեղ էին գտել Ֆրանսիայի պետական տարբեր գործիչների, այդ թվում՝ Եվրախորհրդի՝ դիմումներ, ձերբակալվածների հարազատների հետ հանդիպումների մասին հաղորդումներ, մամուլի տեսություն և այլն: Մարտի սկզբին ստեղծվեց «14-ի պաշտպանության խորհուրդը», որի մեջ մտան մեր անվանի գրողները, գիտնականները, շարժման ակտիվիստները: Բազմաթիվ ստորագրություններով նամակներ սլացան Գորբաչովի, ԽՍՅՄ Գխ նախագահի, Պոլիտբյուրոյի անդամների, դատաիրավական օրգանների ղեկավարների, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կազմակերպությունների հասցեներով: Նամակներ էին սլանում գիտահետազոտական ինստիտուտների, ԲՈՒՅ-երի աշխատակիցների ստորագրություններով: Յիշատակման են արժանի Ֆրանսիայի և ԱՄՆ-ի թվով մոտ 30 գիտնականների մարտին ուղարկված նամակ-բողոքները Գորբաչովին (պատճենները՝ Յակովլևին և Սախարովին), ինչպես նաև Ֆրանսիայի ակադեմիայի անդամների և Կանադայի երեսփոխանների (Բիլ Բլեյքի ստորագրությամբ), Լատվիայի գիտնականների Միության, ԽՍՅՄ պատգամավորների, մեծ թվով հայ մտավորականների և Գիտությունների Ակադեմիայի անդամների ստորագրությամբ և այլոց նամակներ: Գլխավոր դատախազ Սուխարևին դիմել էին մերձբալթյան երկրների ազգային ճակատների նախագահությունները, գրող, արձակագիր Անահիտ Սահինյանը և ուրիշներ: «Սոգլասիե» թերթի մարտի 14-ի N 4-ում Գալինա Ստարովոյտովան ջերմ մաղթանքներով դիմում է հայ եղբայրներին և քույրերին, անուն առ անուն հիշատակելով ձերբակալվածներին՝ արիության կոչ անում: Նույն էջում տպագրված է Անդրեյ Սախարովի, Ա. Ադամովիչի, Ե. Եվտուշենկոյի, Ա. Վոզնեսենսկու, Գ. Գասպարովի և «Մոսկովսկայա տրիբունայի» մյուս անդամների "Экскурс в лжеисторию" համատեղ հոդվածը, որում հեղինակները քննադատության են ենթարկում պատմության թատերաբեմ

ավելի ուշ իջած՝ իրենց պատմությունը «հնեցնելու» երիտասարդ ազգերի երբեմն փաստերով չհիմնավորված ճիգերը և մասնավորապես ադրբեջանցի վայ-գիտնականների՝ աղվանների հետ իրենց նույնացնելու և հայ մշակութային կոթողները սեփականացնելու անշնորհք ու անազնիվ ճիգերը: Այնուհետև կառավարությանը կոչ է արվում անհապաղ ազատ արձակել կոմիտեի ձերբակալված անդամներին:

Մամուլը պարբերաբար անդրադառնում է երկրաշարժի թեմային: «Պրավդա»-յի հունվարի 2-ի համարում հոդվածագիրը պատմում է աղետի առաջին օրից սովետական բանակի զինվորների անձնուրաց օգնության մասին: Յիշատակվում է մի գվարդիական-դեսանտավոր (ազգանունը չի նշված), որը փլատակների տակից փրկել է 10 երեխայի: Իր ոճին հավատարիմ «Պրավդա»-ն չկարողացավ զրկել «ինքզինք» թույնաբաժին ներարկելու հաճույքից, հիշատակելով մի խումբ պրովոկատորների կողմից զինվորների քարկոծման «փաստը»: Վերջինս մերկացվել էր հունվարի 6-ի «Վզգլյադ»-ում: Աղետի գոտի մեկնած ռուս կամավորական ջոկատների տղաները կիսում են իրենց հույզերը Մոսկվայի «Սվոբոդնոյե սլովո» շաբաթաթերթի էջերում (20.02.89 թ.): Նշում են բնակչության անխտիր ջերմ վերաբերմունքը ռուս փրկարարների հանդեպ ու զայրույթով՝ Լենինականի քաղ. հիվանդանոցի գլխավոր բժիշկ Սուքյանի մասին, որը մերժում էր ջոկատներին հասանելիք դեղամիջոցները՝ դարձնելով դրանք (բնակիչների պնդմամբ) ինքնահարստացման միջոց: Ոչ պակաս աննախանձելի գնահատականի արժանացավ քաղաքի միլիցիայի վարքը: «Զորյան» ինստիտուտը հրապարակում է փետրվարյան համառոտ ժամանակագրությունը:

Յունվարի 17–18-ին ԽՍՅՄ Մինիստրների Խորհրդի նախագահ Ն. Ռիժկովի, պաշտպանության նախարար Դ. Յազովի և այլ բարձրադիր հյուրերի մասնակցությամբ տեղի ունեցավ ՅԽՍՅ կոմկուսի կենտկոմի պլենում: Քննարկվեցին պարտկոմիտեների նոր կազմության մշակմանը նվիրված խնդիրները: Կոչետկովի փոխարեն հայկոմկուսի 2-րդ քարտուղարի պաշտոնում ընտրվեց Օ. Լոբովը:

Ապրիլին «պայթում» է Զիյա Բունիաթովի «լեղապարկը», և նա թուք ու մուր է թափում ակադեմիկոս Անդրեյ Սախարովի գլխին, որն իր տիկնոջ՝ Ելենա Ալիխանյան-Բոնների, ազգագրագետ Բատկինի ու Ստարավոյտովայի հետ այցելել էր Բա-

քու: «Քրիստչիըն սայենս մոնիտորը» (95) իր էջերում հիշեցնում է. «որոշ մարդիկ դեռ սպասում են գլասնոստի»: Արևմտյան մի խումբ լրագրողներ և գործիչներ բաց նամակ են փոխանցում Գորբաչովին նրա՝ Լոնդոն այցելության ժամանակ: Նամակում թվարկում են ԽՍՀՄ-ի կողմից ստորագրած Հելսինկյան համաձայնագրի այն կետերը, որոնք երաշխավորում են խոսքի, դավանանքի ու խղճի ազատություն: Առիթից օգտվելով՝ ուշացած երախտիքս հայտնեմ Մոսկվայի մթնոլորտի ֆիզիկայի ինստիտուտի (ԽՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Վալերի Տատարսկի, Գ. Կալլիստրատովա և ուրիշներ), Լենինգրադի (Վալերի Նարվեր, Յուրի Դուկարևիչ, Իոսիֆ Լևին, Ա. Գ. Բոգդանով), Մերձբալթիկայի իմ գործընկերներին, գիտնականներին միջնորդության համար (Գորբաչովին և Սուխարևին) անարժանիս խնդրով: Աշխատակիցների ստորագրությամբ նման միջնորդությամբ դիմել էին Մատենադարանի, Երևանի ֆիզ. ինստիտուտի, Գիտությունների Ակադեմիայի մեխանիկայի ինստիտուտի (ակադ. Լենսեր Աղալովյանի ստորագրությամբ), Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի (ռեկտոր Յուրի Սարգսյանի ստորագրությամբ) նաև իմ հարազատ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի աշխատակիցները: Խոնարհվում եմ ի երախտիք: Հետագայում ցավով իմացա, որ, ի տարբերություն շարքային աշխատակիցների, հարազատ ինստիտուտի գիտական խորհուրդը (որի անդամներից էին նաև իմ նախկին ասպիրանտներից և ուսանողներից մի քանիսը), ենթարկվելով տնօրենի ճնշմանը, չեն համարձակվել նման նամակի կողմ քվերակել: Դա առաջացրել էր աշխատակիցների զայրույթը: Նրանցից ամենադյուրազգացը՝ Ազիզբեկյան Հրանտը, հայրենակիցներին ուղղված իր դիմումում «հիացմունք» հայտնելով այն թեթևության հանդեպ, որով գիտխորհուրդը լքեց իր կոլեգային, եռօրյա հացադուլի է նստում: Նրան հետևում են ևս մի քանի երիտասարդ աշխատակիցներ, որոնց հետագայում տարբեր պատրվակներով հեռացրեցին ինստիտուտից:

ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեն բողոքով դիմում է Ասկերանի շրջանային ղեկավարությանը՝ ի բողոք ԼՂԻՄ-ի ադրբեջանաբնակ գյուղերում ապօրինի մեծածավալ հապճեպ շինարարական աշխատանքների ծավալման: Ի պատասխան՝ հայաբնակ գյուղերում կասեցվում է օրինական շինարարությունը:

Ադրբեջանի ղեկավարության և մտավորականության (Վեզի-

րով, Բունիաթով և այլք) պրովոկացիոն հակահայկական գործողությունները ի չիք են դարձնում իրավիճակը կարգավորելու և խաղաղացնելու՝ հատուկ կառավարման կոմիտեի (Ա. Վոլսկի) ջանքերը: Ի բողոք դրան, մայիսի 3-ին հայտարարվում է անժամկետ գործադուլ «պահանջում ենք հստակ դիրքորոշում» կարգախոսով: Հայաստանի գրողների միությունը դիմում է ՀԽՍՀ ԳԽ Հայոց Ցեղասպանության ուսումնասիրման կենտրոնի բացման առաջարկով:

ԼՂԻՄ-ին սատար կանգնելու կոչով ժողովրդին է դիմում շարժման նախաձեռնող խումբը: Համախմբվել ու անդուլ գործում էր կոմիտեականների կանանց մեծամասնությունը: Հատկապես բուռն ու հանդուգն պայքար էր ծավալել Վազգեն Մանուկյանի տիկինը՝ Վարդուհին, առաջին հնգյակի ձերբակալման օրից: Ի վերջո նա դարձավ «կանանց ջոկատի խմբապետը»: Ելույթներ միտինգներում, նամակներ, հարցազրույցներ արտասահմանյան ԶԼՄ-ներին, հանդիպումներ հասարակական (Շարլ Ազնավուր, մտավորականներ) և քաղաքական գործիչների հետ, ստորագրությունների հավաք և այլն և այլն: Արժե, որ Վարդուհին մի օր կազմակերպի մեր «դեկաբրիստուհիների հուշ-հաշվետվությունը»:

Քանի որ խոսք բացվեց «թույլ» սեռի մեր խիզախ զինակիցների մասին, ապա չենք կարող չհիշատակել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ռուսաստանի՝ շարժմանն աջակցող գործընկերկանանց: Մասնավորապես կուզենայի երախտիքս հայտնել իմ բարեկամներ Թամար Բաքայանին-Հաճյանին (Բոստոն), Լյուսի Դանիելյանին և Սալբի Ղազարյանին (Լոս-Անջելես) և այլոց (թող ներեն, որ հիմա դժվարանում եմ անունները թվել), որոնք դեռ տարիներ առաջ՝ մինչև շարժման սկսվելը, ակտիվ պայքարել են հանուն ցեղասպանության ճանաչման, իսկ 89-ին՝ մեր ձերբակալման դեմ: «Դեմքիս ժպիտ կպցրեցի ու մտա Լատվիայի դեսպանի մոտ քո խնդրով», – պատմում է Թամարը: Ասեմ՝ չնայած փորձություններին՝ Թամարի և Լյուսիի հայրենասիրությունը չասասանվեց. այսօր Թամարը ՀՀ Իրավաբանական Միության մեջ է, Լյուսին հաջողությամբ դասավանդում է Երևանի Ամերիկյան Համալսարանում: «Հայրենիքս թողած՝ ի՞նչ գործ ունեմ Ամերիկա», – զարմանում է Լյուսին...

Այստեղ, վտանգելով ընթերցողի մոտ անաչառ պատմիչի տպավորություն ստեղծելու ջանքերս, պետք է անդրադառնամ

կնոջս՝ Գրիգելդայի, ծավալած բուռն գործունեությանը, որին նա ձեռնամուխ եղավ մեր ձերբակալման պահից, այսինքն, ձերբակալմանը հաջորդած առավոտյան: Բռնելով 7 տարեկան Վազգենիկիս և 4 տարեկան Գայուշիկիս ձեռքից՝ նա անցավ գլխավոր դատախազ, նոր նշանակված Վլադիմիր Նազարյանի, ՆԳՆ նախարար Հուսիկ Հարությունյանի և Մոսկվայից ժամանած քննչական խմբի ղեկավար, գեներալ Տիտովի «երկարատև պաշարմանը»՝ նույն՝ «Ու՞ր է ամուսինս» հակիրճ, սակայն համառորեն կրկնվող հարցով: Անտեղյակ ձևանալու կամ իրենից մյուսին ֆուտբոլելու պարզունակ տակտիկան ապարդյուն էր: Ի վերջո Նազարյանն աղերսեց քարտուղարուհիներին, որ իրեն «բացակա» նշանակեն, սակայն վերջինները «մատնում» էին: Անցնելով առաջ ասեմ, որ ամիսներ անց Մոսկվայում քննչական խմբի ղեկավար Բուրցևը հետաքրքրվեց՝ արդյո՞ք ինձ չի անհանգստացնում կնոջս հանդուգն վարքը... «Ոչ միայն անհանգստանում եմ, այլև վախենում եմ, բայց ոչ իր կամ երեխաների, այլ ձեզ համար...»: Կարծես ընկալեց չար կատակս:

Գրիգելդայի գրոհի անկասելի «9-րդ ալիքը» փուլ եկավ Գիտությունների ակադեմիայի վրա. հերթով մոտենում էր ակադեմիկոսներին ու առաջարկում ստորագրել ի բողոք մեր ձերբակալման: Հրաժարվողներին «նենգ մեղմությամբ» խոստովանում էր, որ իրենց ստորագրությունը ոչինչ չի փոխի, պարզապես ուզում է, որ հետագայում չամաչեն իրենց կոլեգայից: Շատերը պատրաստ էին ստորագրել ինձ համար, սակայն մյուսներին չէին ճանաչում: Գրիգելդան անդրդում էր՝ միայն բոլորի՛... Ակադեմիայի այն ժամանակվա փոխպրեզիդենտը՝ իմ լավ բարեկամ Սեդրակյան Դավիթը, որն օգնում էր կնոջս հանդիպումների հարցում, խոստովանում էր. «Իհարկե ոչ նման գնով, բայց կուզենայի համոզվել, որ իմ կինն էլ կմարտնչեր քո կնոջ նման...»: Վաղամեռիկ Լուսինե Զաքարյանի միջամտությամբ կաթողիկոսին ներգրավելու փորձը մերժվեց վերջինիս կողմից: Նույն արդյունքը «գրանցվեց» Ելցինի հետ Մոսկվայում հանդիպման ժամանակ, ուր մեկնել էին ձերբակալվածներիս կանանցից և հարազատներից մի քանիսը ռուս մտավորականությանը հորդորելու և ապագա դատապաշտպանների հետ հանդիպելու նպատակով: Մասնավորապես Անդրեյ Մակարովը ինքը դիմեց Գրիգելդային՝ իմ պաշտպանությունը հանձն առնելու պատրաստակամությամբ: Ու թեև դրա կարիքը չառաջացավ

բարեկամացանք: Գրիգելդայի գրոհի «ճակատային գիծը» փոխադրվեց արտասահման: Դիմումներ իրավապաշտպան տարբեր կազմակերպություններին, հեռագրեր պետական և քաղաքական գործիչներին... Ձեռքիս տակ է խնամքով պահպանված նրա թղթապանակը. մի քանի նամակ ու հեռագրեր Գորբաչովին, Սախարովին, Գերագույն Խորհրդի նախագահությանը, գեներալ Տիտովին, Բուշին... Հեռագրերի ստացումը հաստատող ծանուցագրեր, Գերմանիայի քաղաքական գործիչներին՝ Վիլլի Բրանտին (սոցիալ-դեմոկրատականների նախագահ), Դիտրիխ Շպեռլինգին, նախագահ Ռիխարդ ֆոն Վայզակերին, Կանաչների նախագահին, ԽՍՀՄ ԳԱ պրեզիդենտ Մարչուկին և այլոց:

Նամակ ոլացավ նաև իրավապաշտպան Յուրի Օրլովին, որի հետ ծանոթ էինք դեռ Երևանի ֆիզ. ինստիտուտում նրա աշխատած տարիներից: Սախարովին իմ խնդրով դիմելուց բացի ֆիզիկոս Յուրին արձագանքել էր "Где справедливость"[1] չափածո այս բողոքով.

### ГДЕ СПРАВЕДЛИВОСТЬ

Метет метель по горным перевалам
Путь труден, очень труден для людей.
Но все ж идут от стариков до малых
От мест родных и от судьбы своей.

Не голод гонит их и не стихия
От земель политых потом и слезой.
А дни пришедшие лихие:
Вновь геноцид навис над головой.

Вновь льется кровь народа Айастана,
Вновь поднял турок свой зловещий меч,
Вновь вскрылась кровоточащая рана
И слышится надменная их речь.

Несправедливость снова торжествует,
Народу древнему опять покоя нет.
Ведь только где армяне не бывают?
Вдали от родины скитаясь много лет.

1 «Ու՞ր է ճշմարտությունը»

К чему страдания, унижение, муки,
Разрыв священных, самых близких уз,
И эти грустные напевы, звуки,
Рыдания вековых народных муз?

А земли исстари родные
Надменно топчет изувер, палач.
Армянские законно-вековые
Они, как люди, испускают плач.

Народ свободный, горделивый,
Он терпелив и много лет
Ждет мудрых правильных решений...
А быть под игом турок — НЕТ!

Юрий Орлов. Март 1988 г.

* * *

Մայիսի, եթե չեմ սխալվում, 30-ին՝ նորից ինքնաթիռ, սակայն առանց շղթայելու: Նորից բոլորս, ներառյալ Իգորը, միասին ենք: Ողջագուրվում ենք, չենք թաքցնում ներքին հրճվանքը: Ուշ գիշերով հասնում ենք Սովետաշեն, սակայն ռազմական փոքր թռիչքադաշտում սպասում է բազմությունը: Մթության մեջ հեռվից փորձում են ճանաչել աստիճաններով իջնողներին: Լսում եմ իմ անունը: Հաջորդ օրը երեկոյան պայմանական ազատում են: Հարազատների մեքենաների էսկորտը շարժվում է խորը գիշերվա ցնծալից փողոցներով: Մատենադարանի հարթակ են բարձրացնում ձեռքերի վրա: Պողոտան մայթից մայթ, մինչև գիշերվա հեռուն լեցուն է մարդկանցով: Խաչիկ Ստամբուլցյանն առաջին ձայնը տալիս է ինձ:

– Սիրելի ժողովուրդ... Խնդրում եմ, մեզ չհերոսացնեք...

## ***Վերջ առաջին մասի***

# ՀԱՎԵԼՎԱԾ

## ԾՈՎԱՓ ՄԵԿՆԵԼԻՍ ԼՈՂԱՁԳԵՍՏՈՎ ՕՂԱՆԱՎ ՄԻ՛ ՄՏԵՔ

Այսօր գոյություն չունեն միավորման գործընթացի մեջ չներգրավված երկրներ. պարզապես տարբեր է միավորման աստիճանը: Օրինակ, Եվրոպան միավորվում է, որպեսզի հակադրվի ամերիկյան տնտեսական-մշակութային էքսպանսիային: Փորձում են միավորվել նաև սևծովյան երկրները, սակայն երբևէ խոսք չի լինում միասնական պետության ստեղծման մասին: Ավելին. այնտեղ, որտեղ ուժային մեթոդներով ժամանակին ստեղծվել են այդպիսի միասնական պետություններ, անխուսափելի է քայքայման գործընթացը, քանզի առկա է դրա կազմում ապրող այս կամ այն ազգի ձուլման վտանգը: Այդպես եղավ և՛ ցարական Ռուսաստանում (հիշենք Ֆինլանդիայի և մերձբալթյան երկրների անջատումը), և՛ ԽՍՀՄ-ում, և՛ Հարավսլավիայում, և՛ Ավստրո-հունգարական կայսրությունում:

Ինչու՞ հայտնվեց ռուս-բելառուսական միասնական պետության գաղափարը: Ռուսաստանի մտադրությունները հասկանալի են. ձգտում Ռուսաստանը պահպանել նախկին ԽՍՀՄ սահմաններում: Դա համապատասխանում է Պետրոս Առաջինի օրոք սկիզբ առած Ռուսաստանի ծավալապաշտական քաղաքական ուղեգծին: Մյուս կողմից՝ դրանով փորձ է արվում արգելակել ՆԱՏՕ-ի ընդլայնումը:

Ինչ վերաբերում է Բելառուսին, ապա մեծ դեր են խաղացել Ա. Լուկաշենկոյի ամբիցիաները, որը մտադիր էր դառնալ միացյալ պետության համանախագահ, իսկ այնուհետև՝ նախագահ: Այդ հույսերի նվազմանը համընթաց՝ փոխվում էր նաև ռուս-բելառուսական համադաշնության կանոնադրությունը և ի վերջո՝ ստորագրելիս՝ Լուկաշենկոն ջնջեց միասնական պետության մասին կետը:

Հարց է ծագում. ի՞նչ է տալիս այդպիսի միավորումը ԱՊՀ ներկայիս կարգավիճակի հետ համեմատությամբ: ՆԱՏՕ-ի՝ Բելառուս մուտք գործելու վտանգ չկա, Ռուսաստանի հետ տնտեսական և մշակութային կապերը ոչնչով սահմանափակված չեն: Միասնական տարադրամ և մաքսային ծառայությու՞ն: Աստծո սիրույն, դա շուտով լինելու է անգամ Եվրոպայում, սակայն առանց որևէ պետության ազգային անկախության սահմանափակման:

Այժմ մեր մասին: Ժողովրդական միջավայրում առկա է կարոտախտը սոցիալ-տնտեսական անցյալի նկատմամբ, ինչը խորանում է ծանր սոցիալ-տնտեսական վիճակի և տնտեսության քայքայման պատճառով: Միամտություն է կարծել, թե երշիկի գինը կիջնի մինչև 2.20, իսկ աշխատավարձերը սրընթաց կաճեն, հենց որ մենք միավորվենք Ռուսաստանի հետ: Չէ՞ որ Ռուսաստանում մարդիկ ամիսներով աշխա-

տավարծ չեն ստանում, գործադուլ են անում և ինքնասպան են լինում հանքավորները, արտասահման են փախչում գիտնականներն ու ձեռներեցները, բանակը սոված է, քաղքերն անկում են ապրում, Հայաստանից էլ ծանր քրեածին իրավիճակ է: Այնպես որ Ռուսաստանում իրավիճակն էապես ավելի բարվոք չէ: Միգուցե միավորումը կօգնի Արցախի հարցի լուծմա՞նը: Բայց եթե մենք, գլուխներս ջարդելով, առանց պայմաններ առաջադրելու, նետվում ենք Ռուսաստանի գիրկը, իսկ Ադրբեջանը, հրաժեշտ տալով ռուսներին, պատրաստվում է ընդգրկվել ՆԱՏՕ-ի կազմում, ապա ու՞մ է Ռուսաստանը փորձելու գայթակղել ղարաբաղյան քաղցրաբլիթով:

Ինչու՞ էին բոլշևիկները Ղարաբաղն ու Նախիջևանը հանձնել Ադրբեջանին: Միամիտները բացատրում են դա այն հանգամանքով, որ Ադրբեջանը մեզանից շուտ մտավ սովետական պետության կազմի մեջ: Սակայն, կարծում եմ՝ պատճառն այն էր, որ թույլ Ռուսաստանի հետ խաղերի մեջ էր մտել և ճնշումներ էր բանեցնում Թուրքիան: Իսկ այսօր Ռուսաստանի վրա զորեղ ճնշում է բանեցնում Արևմուտքը, որը, նավթի հոտ առնելով, պահանջում է Ղարաբաղը վերադարձնել Ադրբեջանին: Մենք տեսնում ենք, թե ինչպես է Ռուսաստանը զիջումների գնում իր համար առավել կարևոր ռազմավարական խնդիրներում: Այդ դեպքում ի՞նչն է խանգարում նրան զիջել նաև Ղարաբաղի հարցում:

Մի՞թե մենք մինչև հիմա չենք ըմբռնել, որ «աշխարհաքաղաքականությունը» և «արդարությունը» շահի ու հաշվարկի արդյունքն են: Ես համոզված եմ (կուզենայի սխալվել), որ մայիսի 12-ի ժողովը և ՌԴ Պետդումային հապշտապ դիմելու փաստը ավելի շուտ վնասել են մեզ, քան օգուտ բերել: Չէ՞ որ Ռուսաստանն առանց այդ էլ վստահ էր մեր հավատարմության մեջ, իսկ Արևմուտքը, որի վարկերով մենք սնվում ենք, ակնհայտորեն բացասաբար կարծագանքի: Ճակատագիրը, միգուցե վերջին անգամ, մեզ քաղաքական խաղաթուղթ էր տվել: Ճիշտ է, դա խոշոր խաղաթուղթ չէր, սակայն փոխանակ այն խելամտորեն օգտագործելու՝ դեն նետեցինք և շալվարը քշտելով՝ վազեցինք առաջ: Իսկ Հայրենական Պատերազմի իմ զինակիցներն, անգամ, պահանջում են նախկին ԽՍՀՄ-ի վերականգնումը: Ուզում եմ հարց տալ. գուլագներով, քաղաքական հոգեբուժարաններով, գաղափարական թելադրանքով ու բռնի միակարծությամբ հանդե՞րձ...

600 տարի ստրկությունից հետո մենք ստացանք, թեկուզ խղճուկ, բայց պետականություն: Եվ այդպե՛ս վարվել անկախության հետ այն պատճառով, որ իշխանության եկած տգետներն ու թալանիչները ծանր սոցիալ-տնտեսական վիճակի են մատնել երկիրը, առնվազն անպատվաբեր է: 1933 թ. Ուկրաինայի հարավում և Կուբանի մարզում գյուղացիությունը սովամահ էր լինում, սակայն ոչ ոքի մտքով չանցավ Ամերիկայի կազմի մեջ մտնել: Վրաստանում էլ վիճակը ծանր է, սակայն նրանք երբեք չեն հրաժարվի անկախությունից: Հիշենք թեկուզ այն, որ

անցյալում նրանց մտավորականները (ի տարբերություն մերոնց) չէին դավաճանել մայրենի լեզվին: Կարծում եմ, որ միավորման շուրջ աղմուկ-աղաղակը միտումնավոր հրահրել են որոշ ամբիցիոզ գործիչներ ինչպես Երևանում, այնպես էլ՝ Մոսկվայում, ինչպես նաև Ռուսաստան փախած մեր գործարարներից ոմանք, ովքեր դրանով ուզում են հիմնավորել Ռուսաստանում ընդմիշտ մնալը:

Ես մեծացել եմ Ռուսաստանում և ռազմաճակատ եմ մեկնել Ռուսաստանից: Սովորել և դաստիարակվել եմ ռուսական գրականության և գիտության հիման վրա: Յոգեհարազատ լինելով Ռուսաստանին՝ հասկանում եմ, որ պատմականորեն սերտաճել ենք նրա հետ ինչպես տնտեսական, այնպես էլ հոգևոր ոլորտում: Եվ համոզված եմ, որ սերտաճումն ու անկախությունը փոխլրացնող, բայց ոչ երբեք փոխադարձ բացառող հասկացություններ են: Եվ մեզ ոչինչ չի խանգարում խորացնելու Ռուսաստանի հետ մեր կապերը առկա կարգավիճակի հիման վրա: Չէ՞ որ մենք կնքեցինք ռազմաքաղաքական դաշինք և կարելի է կնքել նաև փոխշահավետ տնտեսական պայմանագրեր: Չպետք է մոռանանք, որ ընդմիշտ անցել են այն ժամանակները, երբ մի արկղ կոնյակով կարելի էր լուծել գործարանի կամ գիտական հիմնարկի հարց: Իսկ եթե գործնական հիմքի վրա տնտեսական համագործակցության համար իշխողների խելքները հասու չեն, թող վտարեն տգետներին ու թալանչիներին և հրավիրեն պրոֆեսիոնալներին:

Եվ պետք չէ դեն նետել այն անկախությունը, հանուն որի և՛ մեր նախնիք, և՛ մենք այդքան արյուն ենք թափել: Պետք չէ նմանվել այն գրոսաշրջիկին, որը, մեկնելով ծովափ, օդանավ է նստում լողազգեստը հագին և շնչախողովակը բերանին:

## ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՊՅ - ՈՒՄ
### Կանխատեսումները և իրականությունը

*Վերակառուցման նախօրեին:* ԽՍՅՄ-ում գիտությամբ զբաղվում է մոտ 5000 ինստիտուտ: Միայն հիմնարար (ֆունդամենտալ) գիտությամբ զբաղվում է քառորդ միլիոն գիտնական: Մասնավորապես Յայաստանում գիտության ոլորտում և նրա սպասարկմամբ զբաղված է մոտ 50000 մարդ, որոնցից մոտ 22 հազարը գիտական աշխատողներ են: Յանրապետությունում գործում է (ներառյալ ԲՈՒՅ-երը) 104 գիտական կազմակերպություն, շատերը՝ իրենց արտադրական բազաներով: Գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների խտությամբ (զբաղված բնակչության 10000 հոգուն 50 գիտաշխատող) հանրապետությունը առաջին տեղում է ԽՍՅՄ-ում: 1988 թվի դրությամբ հանրապետությունում աշխատում է 800-ից ավելի դոկտոր, մոտ 3500 թեկնածու: Յանրապետությունում առկա և զարգացող գիտական ուղղություն-

ների լոկ թվարկումը էջեր կզբաղեցներ: Որոշ ոլորտներում ձեռք բերած նվաճումները ճանաչվել են համաշխարհային գիտական հասարակության կողմից և այլն և այլն: Երկրում գործում է կենտրոնացված ղեկավարմամբ և մատակարարմամբ գիտական լայն ցանց: Մոսկվայից թելադրվող գնագոյացումը թույլ է տալիս ֆինանսավորել գիտական ուղղությունների ողջ սպեկտրը, այդ թվում նաև հիմնարարներինը: Գիտաշխատողը ապահովված է կենսամինիմումով: Նրան, ինչպես նաև ԲՈՒՅ-ի կամ ասպիրանտուրայի շրջանավարտին գործազրկություն չի սպառնում: Մրցակցությունը թույլ է արտահայտված, դա գոյապայքար չէ, ավելի շուտ հեղինակության հարց է: Մյուս կողմից՝ ֆինանսական կենտրոնացված հավասարեցումը և թույլ արտահայտված նյութական խթանը ծնում են (մի քանի կենտրոնների բացառությամբ) գիտական բալաստ, գավառայնություն ու նաև ցուցադրականություն: Գիտության 70%-ը ուղղակի կամ անուղղակի սպասարկում է պաշտպանության համակարգը, ինչը չի նպաստում նրա առևտրականացմանը, կենցաղում նրա ներդրմանը: Յատկանշական է, որ 90-ականների սկզբին Ռուսաստանի բնակչության միայն 8%-ն է արտահայտվել պետության կողմից գիտության հովանավորման օգտին: «Երկաթյա վարագույրը» և համատարած գաղտնիացումը կտրուկ սահմանափակում է արտասահմանյան գիտնականների հետ շփումները՝ հաճախ հանգեցնելով «հեծանիվի հայտնագործմանը», մի շարք ոլորտներում ետ մնալուն, ինչը հատկապես վնասաբեր է նորագույն տեխնոլոգիաների բնագավառում: Երկու օրինակ. առաջին կինեսկոպներից մեկը ստեղծվել էր Ռուսաստանում, սակայն հեռուստատեսության ժամանակակից ստանդարտը և գունավոր հեռուստատեսությունը եկան արևմուտքից, իսկ ԽՍՅՄ-ում մեծ ջանքերով կառուցված հեռուստահամակարգը դեռ ստեղծման պահին արդեն բարոյապես հնացած էր ու ենթակա էր վերափոխման: Այն ընթացքում, երբ միկրոէլեմենտների տեխնոլոգիայում անհույս ետ մնալու հետևանքով Միությունում զոռ էին տալիս պահարանաչափ, համեմատաբար դանդաղագործ հաշվիչ մեքենաների արտադրմանը, արևմուտքից եկավ նման «պահարանների» մի ամբողջ դահլիճ փոխարինող և ֆունկցիոնալ հնարավորություններով անհասանելի գերազանցող սեղանադիր կոմպյուտերը: Ծայրաստիճան գաղափարայնացումը լուրջ վնասում էր ոչ միայն հումանիտար գիտություններին. «Լիսենկովշչինան», որի ջանքերով ջախջախվեց գենետիկայի փայլուն դպրոցը, իսկ դրա նվիրյալներից շատերը դաժանաբար հալածվեցին ու անգամ ոչնչացվեցին ֆիզիկապես (Վավիլովը՝ դրա վառ օրինակ): Իշխանական բուրգը պայմանավորել էր ղեկավարման նույն ձևը գիտությունների ակադեմիայում, նախարարություններում և գիտական ձեռնարկություններում՝ սահմանափակելով գիտական կենտրոնների ինքնուրույն գործունեությունը, երբեմն էլ խանգարելով տաղանդավոր երիտասարդության աճին:

*Վերակառուցումը սկսվեց:* ԽՍՀՄ վարչա-հրամայական բուրգի՝ վերակառուցմամբ սկսված սասանումը չէր կարող չառաջացնել համարժեք խմորում ԳԱ-ում: Դրա առաջին հետևանքը եղավ «ԽՍՀՄ ԳԱ կարգավիճակի վերաբերյալ» Գորբաչովի 23.08.90 թ. հրամանագիրը, համաձայն որի ԳԱ-ն ձեռք է բերում համամիութենական ինքնակառավարվող կազմակերպության կարգավիճակ (սեփական կանոնադրությամբ), որի գործունեության մեջ կառավարությունը չի խառնվում: Միութենական ԳԱ-ն ինքնուրույնաբար ղեկավարվում է իր մոտ 300 իսկական անդամների կողմից, որոնց հիմնական նպատակն է հիմնարար գիտությունների միութենական կենտրոնի ամրապնդումը: Ընհանուր առմամբ, առաջատար գիտնականների մեծ մասի արձագանքը դրական էր, մինչև անգամ հիացական. «հրամանագիրը պարունակում է այն, ինչի մասին արդեն 60 տարի երազել են մեր երկրի գիտնականները. աշխատել այնպես, ինչպես իրենք են հարմար գտնում՝ ձեռքի տակ ունենալով անհրաժեշտ միջոցներ», – գտնում է Ե. Լ. Ֆեյնբերգը, իսկ նախագահական խորհրդի անդամ, ակադեմիկոս Յու. Ա. Օսիպյանը մինչև անգամ հաշվել էր, թե որքան կավելանա այս կամ այն կատեգորիայի գիտաշխատողի աշխատավարձը: Նա հրամանագրի դրական կետերից մեկն է համարում ինստիտուտներում պայմանագրային համակարգի թույլատրումը և ցանկացած արտասահմանյան կամ միութենական գիտական կազմակերպության հետ աշխատակցելու իրավունքը:

Սակայն գիտական հասարակության մեջ արձագանքը միանշանակ չէր և հասավ մինչև անգամ բողոքի ցույցերի: Մասնավորապես պարզ չէր, թե ինչո՞վ է 300 ակադեմիկոսի դիկտատը լավ նախորդից: Բնականաբար Հրամանագրի դեմոկրատացման անհրաժեշտության խնդիր բարձրացվեց: Ակադեմիկոս Գինզբուրգի կարծիքով թղթակից անդամներին ոչ միայն պետք է իրավունք տալ մասնակցել պրեզիդիումի ընտրություններին, այլև ընդգրկվել նրա կազմում: Որպես կարևորագույն պայման նա տեսնում է ԳԱ գործունեության կոորդինացիայի կատարելագործումը և ֆունդամենտալ հետազոտությունների ֆոնդի կազմակերպումը: Հատկանշական է այդ բոլոր քննարկումների ընհանուր առանձնահատկությունը՝ բոլոր դեպքերում, որպես անվիճելի նախապայման, ենթադրվում էր, որ գիտության ֆինանսավորումը ամբողջապես իրագործվում է պետության կողմից: Նշենք, որ նմանատիպ գործընթացներ տեղի էին ունենում մի շարք միութենական երկրներում, այդ թվում նաև Հայաստանում:

*ԽՍՀՄ փլուզումը:* Ցավոք, ԽՍՀՄ փլուզումը և անցումը շուկայական հարաբերությունների ծնեց նոր, անկանխատեսելի իրավիճակ: Մեր հանրապետությունում այն խորացվել էր հողի շուտափույթ մասնավորեցման տենդով և գյուղատնտեսական տեխնիկայի փոշիացմամբ: Երրորդական կարևորություն ստացան դեռ երեկ արծարծվող, թվում էր՝ կենսական անհրաժեշտության խնդիրները, քանզի լիարժեք պետական

ֆինանսավորումը գործնականորեն փլուզվել էր: Պարզվեց, որ Ռուսական հսկայածավալ տերությունն ի վիճակի չէ ֆինանսավորելու ոչ միայն գիտության ամբողջ սպեկտրը, այլև դրա ամենաառաջատար ճյուղերը, ինչպես նաև արտադրությունը և գյուղատնտեսությունը, գոնե նախկին մակարդակով:

Լսվեցին սթափեցնող ձայներ: Ակադեմիկոս Լ. Վ. Կելդիշը կոչ էր անում պատրանքներով չխաբվել և գիտակցել, որ պետությունն այժմ այլևս ի վիճակի չէ պահպանելու հիմնարար գիտությունների նախկին բոլոր ուղղությունները և որ անհրաժեշտ է որոշել՝ ո՞ր գիտությունն է այսօր պետք և ի՞նչ ծավալով: Ըստ որում, անհրաժեշտ է համարվում առարկել հիմնարար գիտության առավել տարածված սահմանմանը՝ որպես վաղվա տեխնոլոգիաների հիմք՝ դրանով իսկ բացառելով հումանիտար գիտությունները: Իրականում «հիմնարար գիտությունը ուղղված է նոր օրինաչափությունների, միաժամանակ նոր դրույթների և երևույթների որոնմանը, որոնց կիրառական արդյունքները ապագա տասնամյակների հարց են»: Եվ այդ գիտությունը ամենահարուստ երկրների մենաշնորհն է: Լ. Վ. Կելդիշի կարծիքով ակադեմիական ինստիտուտների համակարգը նոր պայմաններում չի գոյատևի: Որպես ապացույց նա բերում է ԳԴՀ Գիտությունների Ակադեմիայի դառը փորձը, որը «կնքեց իր մահկանացուն»: Ակադեմիկոս Գինզբուրգը հիշեցնում է, որ անգամ այնպիսի հարուստ երկրներ, ինչպիսիք Գերմանիան, Ֆրանսիան, Անգլիան են, ստիպված են միավորել ուժերը գիտական մի շարք այնպիսի խնդիրների լուծման համար, որոնք պահանջում են միլիարդների ներդրում: ԱՊՀ երկրներին հիշեցվում է Նիդերլանդների սփոփիչ օրինակը, որը կարողացավ ապահովել առաջնակարգ գիտությունը միայն շատ նեղ ոլորտում, այն էլ՝ ոչ առանց մեծ գիտական կենտրոնների հետ համագործակցության: Մեծ Բրիտանիայի Թագավորական գիտական քոլեջի պրոֆեսոր Ա. Կոննաուեյը, նկատի ունենալով ԱՊՀ-ն, գտնում է, որ պետությունը չի փրկի գիտությունը, եթե գիտությունը չփրկի ինքն իրեն: Որպես անհապաղ միջոց՝ նա առաջարկում է կրճատել բոլոր ինտելեկտուալ ծիգերը, հասցնելով դրանք մինիմալ բավարարության մակարդակի՝ չբացառելով մի շարք, այդ թվում հումանիտար ինստիտուտների փակման հնարավորությունը: Բացի դրանից, նա գտնում է, որ ՌԴ-ում գիտությանը պետք է արագ թափով լրացնի իր բացը առևտրականացման մեջ՝ իր առաջ ունենալով զարգացած երկրների օրինակը, որոնցում գիտության բյուջեի մեծ մասը վարձատրվում է արդյունաբերական ընկերությունների կողմից (ԱՄՆ՝ 60%, Ճապոնիա՝ 80%):

*Բայց ո՞վ և ինչպե՞ս:* Ցավոք, ոչ ոք «ինտելեկտուալ ծիգերի կրճատման» և «ո՞ր գիտությունն է մեզ անհրաժեշտ» խնդիրների լուծման կոնկրետ մեխանիզմներ չի առաջարկում: Անգամ նորմալ գործող արտադրության պայմաններում հայտնի չէ, թե ով իր վրա կվերցնի

բառոյական առումով ծանր այդ խնդիրը՝ փակվող ինստիտուտների ցուցակի ներկայացումը: Համձնարարել դա Գիտության Օլիմպոսում բազմած «երկնաբնակների՞ն»: Չեմ պատկերացնում իր գիտական ուղղության փակմանը համաձայնող որևէ ակադեմիկոսի: Շուկայական հարաբերություններում միակ և բնական «առաջարկի և պահանջարկի» մեխանիզմը՝ պետության խնայող քաղաքականության հետ մեկտեղ, ուղղված գործընթացի ցավագին արտահայտումների մեղմացմանը, չի իրագործվում, քանզի գիտության երկար սպասված ազատությունը եկավ քանդվող արդյունաբերության հետ մեկտեղ: Այսինքն, գործնականորեն վերացավ սպառողը՝ այն պոտենցիալ կերակրողը, որն իր վրա կարող էր վերցնել գիտական բյուջեի հոգսի մի մասը: Սպառողի բացակայության պայմաններում կոնվերսիան ևս դարձավ անհնարին: Ծաղկող հիմնական բիզնեսը առևտուրն է, այն էլ՝ մեծամասնությամբ սպեկուլյատիվ բնույթի (վերավաճառք), որը գիտության հետ սերտաճելու կարիք չունի: Բացի դրանից, այն վնասեց նաև առևտրականացմանը. ամբողջ անհրաժեշտ ապրանքը ներկրվում է և որակի տեսակետից (տեխնոլոգիապես) մրցակցությունից դուրս է:

Նման պայմաններում գործում է բնազդածին «փրկվի՛ր, թե կարող ես» կոչը և սկսվում է ուղեղների և, ոչ միայն ուղեղների, արտահոսքը: Պարզվեց նաև, որ Արևմուտքը մեծ հաճույքով ընդունում է մեր ուղեղներին (և ոչ միայն), հատկապես հիմնարար գիտությունների մասնագետներին՝ էժան և որակյալ:

*Մենք ենք, մեր «ցավերը»:* ԱՊՀ-ի համար ընդհանուր փորձությունների հետ մեկտեղ մեր հանրապետությանը բաժին ընկավ սարսափելի երկրաշարժ, երկաթգծային շրջափակում, պատերազմ, անընդունակ, երբեմն նաև հանցավոր կառավարություն (մաֆիայի կողմից դավադրված էներգետիկ ճգնաժամ, ցուրտ և մութ ձմեռներ): Առանց այն էլ սակավաթիվ բնակչության՝ սկսված և մինչ այժմ շարունակվող «ելքը» հանրապետությունը անդարձնելի արհավիրքի սահմանագծին է հասցրել: Գիտությունը հայտնվել է դաժան իրավիճակում: Գիտական կադրերի մի մասը սոցիալական անելանելիությունից, մյուս մասն էլ՝ հայրենասիրությամբ ոչ այնքան ծանրաբեռ, երջանկության որոնումներում լքեց հայրենիքը: Մնացողները շարունակում են գանգատվել պետության անտարբերությունից՝ պահանջելով անհապաղ միջոցներ ձեռնարկել գիտությունը լրիվ կործանումից փրկելու համար, չնայած բոլորին հայտնի է, որ կաթվածահար արտադրության պայմաններում անգամ բարոյապես առողջ կառավարությունը սակավ էֆեկտիվ է: Իսկ մեր դեպքում կառավարությունը, որը ստիպված էր հենվել կիսաքրեական-առևտրական (ըստ էության՝ միակ) բիզնեսի վրա, ինքն էլ անխուսափելիորեն քրեականանում էր (այս կամ այն չափով) և արդյունաբերության վերակենդանացմանը ուղղված գործնական քայլերի փոխարեն զբաղված էր ինքնահարստացմամբ՝ խորացնելով սոցիալական լարվա-

ծությունը: Գիտնականների սթափ դատող մասը, իր ռուսաստանյան և արտասահմանյան գործընկերների նման, գիտության փրկությունը և ապագա կենդանացումը կապում էր արտադրության հետ համագործակցությամբ, սակայն շուտով, տեսնելով վերջինիս շարունակվող ավերումը, հրաժարվեց այդ պատրանքից: Խոստովանեմ՝ ձեր խոնարհ ծառան ևս հայտնվեց նրանց թվում: Ժամանակին ինքնավստահորեն հայտարարեցի, թե մեր ոչ մեծ, հետևաբար հեշտ ադապտացվող ճարտարագիտական Կենտրոնը Սորոսից մուրալու փոխարեն իր գործունեությունը կուղղի հանրապետության տնտեսության կենսական խնդիրների լուծմանը նպաստելուն:

Սկզբում վատ չէր ընթանում, կային և՛ լավ մշակումներ, և՛ սպառողներ, սակայն պետության գանձարանը տարեց-տարի աղքատանում էր և, փաստորեն, հատավ: Գոյատևելու նպատակով ստիպված ուշացումով փորձեցինք միանալ արտասահմանյան գրանտերի համար մրցավազքին: Լրացուցիչ հարված հասցվեց 95-ից հետո: Բանն այն է, որ անկախության առաջին տարիներին ինստիտուտներին, ի լրումն բազային ֆինանսավորման, տրվեց ընդհանուր ֆինանսավորման 15–20% կազմող թեմատիկ ֆինանսավորում՝ շնորհալի երիտասարդների նախաձեռնությանը նպաստելու նպատակով: Ենթադրվում էր, որ թեմաները քննարկող հանձնաժողովի մեջ չպետք է մտնեն ինստիտուտների տնօրենները, և կազմը պետք է պարբերաբար ռոտացիայի ենթարկվի: Սակայն, երբ բյուջեն սնանկացավ, կառավարությունը վերացրեց բազայինը՝ թողնելով խղճուկ թեմատիկը: Հանձնաժողովը դարձավ մշտական՝ տնօրեններից բաղկացած, նոր թեմաներն այլևս չքննարկվեցին՝ առաջացնելով տնօրենների անհիմն դժգոհությունը թեմատիկ ֆինանսավորման նկատմամբ: Բարեբախտաբար կառավարությունը կարծես որոշել է 2002 թվից վերականգնել բազային ֆինանսավորումը՝ պահպանելով փոքր չափի թեմատիկը: ՌԴ և ԱՊՀ երկրների հետ գիտաարդյունաբերական խզված կապերը վերականգնելու կոչերը, չնայած միանգամայն տեղին, սակայն սակավ արդյունավետ են, քանզի նույն պրոբլեմներն այնտեղ ևս առկա են: Նիդերլանդների փո՞րձը... Այնտեղ գիտական այդ բարեկեցությանը հասել են երկրի արդյունաբերական և մշակութային զարգացմանը ձեռք ձեռքի տված և ավելի՛ քան մեկ հարյուրամյակում: Մեզ առաջարկվում է այդ բարեկեցությունը ստեղծել տնտեսության թալանի և կոլապսի պայմաններում: Անիրակա՛ն է: Եվ, այսպես թե այնպես, այս անուրախ հերոսապատման մեջ կա հուսադրող հատիկ: Թվում է՝ ակներև են բոլոր այն նախադրյալները, որպեսզի ՀՀ ԳԱԱ-ն ավանդի իր հոգին: Չնայած դրան, այն մինչև այժմ էլ դեռ գոյություն ունի և գործում է: Հասկանալի է, բավականին քրքրված, մարդկային և նյութական ռեսուրսներով աղքատացած, բայց՝ գոյություն ունի: Ո՞րն է այս ֆենոմենի գաղտնիքը: Մենք մի քանի պատճառ ենք տեսնում: Առաջինը. գիտաշխատողների մեծ մասը տոկու-

նություն ցուցաբերեց ամենադժվար տարիներին և, չնայած պետության կողմից չնչին ֆինանսավորմանը, ինստիտուտները չլքեց: Եվ այստեղ կարևոր չէ՝ այլ աշխատանք գտնելու անհնարինությունի՞ց, թե՞ հայրենասիրությունից դրդված:

Հետագայում սկսեց գործել և ընդարձակվել միջազգային գրանտերի համակարգը, որի չափը սկզբում դժվար էր կանխատեսել: Այստեղ առավելագույնս շահեցին տեսաբանները, որոնք կախված չէին թանկարժեք էքսպերիմենտից: Նրանցից շատերն ինստիտուտների հետ իրենց կապերը չխզեցին՝ գերադասելով երկարատև գործուղումները: Էքսպերիմենտատորների մի մասը կարողացավ կոնվերսիա իրագործել, բայց քիչ թե շատ լիարժեք աշխատեցին այն ինստիտուտները, որոնք ստացան գրանտեր, ընդ որում դրանց չափերը վերջին ժամանակներս բավական ավելացան:

Որոշակի դրական դեր խաղաց ինստիտուտների գոյատևման միջոցների հայթայթման խնդիրը ամբողջությամբ տնօրենների ուսերին բարդելը, ինչը խթանել էր վերջիններիս շահագրգիռ նախաձեռնությունը:

Սակայն կան նաև բացթողումներ: Դրանցից մեկն արժանի է հիշատակման: Խոսքը մեր հարևանի՝ Իրանի Իսլամական Հանրապետության պոտենցիալի ոչ էֆեկտիվ օգտագործումն է: Իրանի հետ գիտատեխնիկական սերտ առնչությունների նպատակահարմարության համար մի քանի նախադրյալներ կան: Ամենից առաջ, այն միակ բարեհամ հարևանն է, որի հետ նաև ցամաքային անմիջական տրանսպորտային կապ կա: Իրանը ռեգիոնի մեծագույն և ամենաազդեցիկ պետությունն է, որի աշխարհաքաղաքական նպատակները համահունչ են մերին: Վերջապես, ներկայումս Իրանը ինտենսիվորեն ստեղծում է գիտաարտադրական մեր ունեցածի նման բազմաճյուղ մի համալիր, որը մեզ մոտ վերջին տարիներին ինտենսիվորեն քայքայվում է:

Թվում է՝ ամեն ինչ խոսում է փոխշահավետ համագործակցության օգտին: Մեր գիտնականներն ու ինժեներները վաստակի պատճառով Հայրենիքը լքելու փոխարեն, կարող էին Իրանի իրենց կոլեգաներին անգնահատելի օգնություն ցուցաբերել: Ցավոք, համագործակցությունն այժմ սահմանափակվում է լայն սպառման ապրանքների առևտրով: Այստեղ անհրաժեշտ է պետական փոխադարձ հրատապ մոտեցում՝ խնդիրների ճշտմամբ հանդերձ:

Սակայն, այսպես թե այնպես, պետության արդյունաբերության վերականգնումը առաջնային և կենսական կարևորություն ունի: Միայն այդ դեպքում կարելի է խոսել երկրի և, մասնավորապես, գիտության հուսալի ապագայի մասին:

Ռուսաստան-Հայաստան-Իրան.
«Քաղաքակրթությունների երկխոսություն»:
Թեհրան: Դեկտ. 98 թ.

## ՏԱՐՎԱ ՁԱՐՄԱՆՔ
## («Հայոց Աշխարհ»)

Իշխանափոխությունից հետո առժամանակ «տագ արած» նախկին հանցախումբը, համոզվելով, որ իր աճեցրած սանիկները զերծ մնացին արդար դատաստանի առջև կանգնելուց, «յավաշ-յավաշ սիրտ առան» ու դժգոհելով երկրի քայքայման մի փոքր դանդաղած տեմպերից՝ օրըստօրե աճող լկտիությամբ են ազդարարում ռևանշի չմարող կիրքը:

Ծավալվող անբարո այդ քարոզարշավը հիմնվում է հոգեբանական պարզունակ դրսևորման վրա. ժողովուրդը բողոքում է ներկայիս իշխանավորներից՝ կարճ ժամանակում մոռանալով ու մեղմելով նախորդների «ղալաթները»:

Այս ամենը կարելի էր բանի տեղ չդնել, եթե երկրում վիճակը բարվոք լիներ, սակայն շարունակվող արտագաղթի, հատկապես սահմանամերձ դատարկվող գյուղերում ծանր սոցիալական վիճակի առկայությամբ, լռել նշանակում է համաձայնել նրանց հետ: Այդ առումով ուշագրավ են փետրվարի 2-ի «Առավոտ»-ում հրապարակված հոդվածները: Ու եթե Վ. Մարտիրոսյանի վերլուծականում բերված դատողությունների ու եզրահանգումների հետ կարելի է ինչ-որ տեղ համաձայնել, ապա նախորդ նախագահին նվիրված Մ. Հայրապետյանի «Ջոն»-ը ճչացող փաստերը անտեսող, դեկլարատիվ բնույթի անպարկեշտ գովերգ է:

Մի քանի դիտողություն առաջին հոդվածի վերաբերյալ: Հարգելով հեղինակի կարծիքը՝ բայցևայնպես ստիպված եմ չհամաձայնվել նրա արտահայտած պնդումների հետ: Նախ, վճռականապես առարկում եմ 98-ը որպես հեղաշրջում որակելու դեմ: Իրականում հեղաշրջումը տեղի ունեցավ 96-ին, երբ Տեր-Պետրոսյանը իր «դրուժինայի» քաջարի ջանքերով յուրացրեց ուրիշի հաղթանակը: Դրա ամենաhամոզիչ փաստարկը հենց անմիջապես և, այո՛, ինպուլսիվ Վազգեն Սարգսյանի շպրտած մարտահրավերն էր. «100 տոկոս էլ հավաքեիք՝ չէինք թողնի....»: Նա, որպես ամենաեռանդուն մաքառող, գիտեր, որ իրական հաղթողը Վ. Մանուկյանն է:

Եվ իզուր է հոդվածի հեղինակը Վազգեն Սարգսյանի ասածին «հավելում» «այս ձևով եթե 100 տոկոս էլ...» բառերը: Որովհետև նա քաջ գիտեր, որ «այս ձևովը» ամբողջությամբ վերաբերում է իրենց ճամբարին... Այո՛, «այս ձևովը» «մահակն» էր, կաշառքը և անթաքույց նենգափոխությունը: Ցավոք, այդ օրերին Վազգենի աչքերից դեռ չէր ընկել իր կուռք Լևոնի նկատմամբ «աչքակապը»: Այն ընկավ «Պատերազմ և խաղաղությունից» հետո:

Ուստի, չեմ կարող համաձայնել հոդվածագրի նաև այն պնդման հետ, որ Լ. Տեր-Պետրոսյանը առաջարկում էր Արցախի խնդրի լուծման «տնտեսական» տարբերակը: Ո՛չ... Նրա առաջարկը լիակատար պար-

տություն էր. «ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմում բարձր ինքնավարությամբ»: Կարծես այդպես չէր 88-ին, երբ նա վանկարկում էր «պայքար մինչև վերջ»-ը: Այստեղ Արցախի ազատագրմանը մինչևվերջ նվիրված ֆիդային (համաձայն եմ հեղինակի հետ) սիրտը չդիմացավ՝ ուժեղին հատուկ ազնվությամբ իր ուսերին բարձեց անվերապահ նվիրվածությամբ պայմանավորված սխալների բեռը ու երես դարձրեց կուռքից: Ինչ վերաբերում է «տնտեսական» տարբերակին, ապա Արցախը հանձնելուց հետո, կասկած չկա, այն կշարունակվեր նախագահի հանցախմբի կողմից արդեն հաստատված ծրագրով. ապաշնորհ կառավարում, թալան, արտագաղթ:

Չեմ կարծում նաև որ Վազգենը կուլ տվեց Սփյուռքի «տարեկան մեկ միլիարդի» խայծը: Անմիջական էր, բայց ոչ այդքան միամիտ. շատ լավ գիտեր, թե ուր է գնում Սփյուռքի օգնության զգալի մասը: Եվ վերջինը. Դեմիրճյանի հետ դաշինքի հիմնական շարժառիթը վերջինիս բարձր վարկանիշի շահարկումն էր՝ երկրապահներին և հանրապետականներին խորհրդարան անցկացնելու ճշգրիտ հաշվարկած ակնկալմամբ: Այսինքն ֆիդային հասունանում էր որպես քաղաքական գործիչ:

Դառնալով երկրորդ հոդվածին՝ կիետևեմ հեղինակի ոճին՝ գլուխ չեմ ցավեցնի վերլուծություններով, պարզապես կիայտնեմ իմ «կետերը»:

Տեր-Պետրոսյանի ամենամեծ հանցանքը պետության ղեկավարի աթոռին տիրանալն էր. մի պետության, որի ժողովրդի և նրա ապագայի հանդեպ տածած իր զգացմունքերը տատանվում են անտարբերությունից արհամարհանք, իսկ երբ դադարեց լինել ժողովրդի կուռքը, ատեց ու հեռանալիս չարագուշակեց նրա ապագան, այնուհետև հեռացավ, և տարբեր աթոռներին ծվարած իր թիմակիցներով աշխատում են, որ այն իրականանա: Ցավոք, ներկայիս ղեկավարությունը, թվում է՝ անխոհեմաբար նպաստում է դրան:

Ասում են՝ Պուանկարեն ատում էր առանձին ամեն մի ֆրանսիացու, սակայն անձնուրաց պաշտում էր Ֆրանսիան: Լևոնի մոտ դա էլ չկար:

Այս հանցանքից բխում են մյուսները. անտարբերություն իր թողտվությամբ բուսած մաֆիայի եռանդուն ջանքերով երկրի տնտեսության քայքայման, էներգակիրների հետ կապված ստոր և սեփական ժողովրդի նկատմամբ անմարդկային դաժան գործարքի նկատմամբ, որի հետևանքով ժողովուրդը ենթարկվեց մութ ու ցուրտ ձմեռների տառապանքին, ինչից սկսվեց ու մինչ օրս չի դադարում կործանարար արտագաղթը: Իսկ երբ Աշոտ Մանուչարյանը ընդոստացավ այդ այլանդակությունների դեմ, նախագահը Վանո-Աշոտ կոնֆլիկտում հանցագործին գերադասեց վերջինից, ապացուցելով, որ արդեն սերտաճել է մաֆիայի հետ:

Հեղինակը հիանում է եզակի քաղաքական գործչի արտաքին քաղաքականությամբ: Նշենք մի քանի «ձեռքբերում». ժառանգեց ուրիշի քարոզած «չկա մշտական թշնամի»-ն, որը հանգեցրեց Գորբաչովի

"кольцо" մտրակին և Շահումյանի ու Գետաշենի կորստին: Հաղթահանակեցինք հազարավոր կամավորների՝ Մոնթեի, Լեոնիդի և մյուս հերոսների՝ Վազգեն Սարգսյանի, Վազգեն Մանուկյանի, Սամվել Բաբայանի և այլոց կազմակերպչական գործունեության շնորհիվ: Իսկ Քելբաջարը 93-ին չվերադարձվեց շնորհիվ Էլչիբեյի:

*Իսկ անհերելի անտարբերությունը արտաշխարհում տարվելիք քարոզչության նկատմամբ բերեց նրան, որ ազատագրական մեր պայքարի նկատմամբ ձեռք բերած համընդհանուր համակրանքը հետզհետե հալվեց ու հանգեցրեց Լիսաբոնի խայտառակությանը, երբ համընդհանուր մերժման արժանացանք:*

Առանձնացնեմ Լ. Տեր-Պետրոսյանի անտարբերությունը իր ընտրյալ բլեյանների «ժրաջան ակտիվությամբ» քայքայվող, երկրի ապագայի համար ճակատագրական նշանակություն ունեցող կրթական համակարգի նկատմամբ: Մինչդեռ... Թերևս դիմենք օրինակներին:

1945-ին՝ Բեռլինի անկումից հետո, մեզ Քյոնիգսբերգից փոխադրեցին Հյուսիսային Չինաստան՝ ճապոնական ճակատ: Ռազմական մասնագիտության (ռադիոկապավոր) բերումով քաջ ծանոթ էի ինչպես սովետական, այնպես էլ ամերիկյան, անգամ գերմանական (խփված «Յունկերս»-ից) ռադիոմիջոցներին: Ապշել էի ճապոնական ռադիոսարքերի պարզունակությունից: Սակայն պարտված (!) ճապոնիան կրթական համակարգի մեջ հսկայական ներարկումներով արարեց հրաշք՝ կարճ ժամանակում աշխարհը հեղեղելով ամենակատարյալ ու բազմապիսի էլեկտրոնիկայով: Նրա օրինակին հետևեց Հարավային Կորեան, իսկ վերջին տարիներին փոքրիկ Իռլանդիան, ներարկելով կրթության մեջ բյուջեի 70 տոկոսը, դարձավ համակարգչային ոլորտի «օրենսդիրը»՝ բերելով երկրին միլիարդներ:

Ավաղ, մեզ մոտ Սփյուռքից հոսող միլիոնավոր դոլարները նստեցին ճիվաղների անձնական հաշիվների վրա՝ շվեյցարական բանկերում, կամ դարձան հյուրանոցներ ու կազինոներ... իսկ կրթության և հատկապես գիտության վիճակը բարվոք համարելու ոչ մի հիմք չկա: Ո՞ր մեկը ասես... Ցավ է ու զայրույթ...

Քաղաքական իմաստության մեկ փայլուն դրսևորում ևս. նախագահ Քոչարյանի խղճին թողնելով ԼՂՀ-ի իրեն ընտրած ժողովրդին լքելը... Համաձայնեք, որ այդ քայլով Տեր-Պետրոսյանը, հանուն իր հիմքերն ամրացնելու պատրանքի, միջազգային հանրության առջև վարկաբեկեց Արցախի ամենուրեք վանկարկվող «անկախությունը»...

Զավեշտականը այդ նույն հանցագործների դժգոհությունն է իրենց ուղղված արդարացի մեղադրանքների դեմ: Դրանցից մեկը, պայմանականորեն, քանի որ ինքն է ցանկացել, կոչենք Ավետիս Հարությունյան («Հայկական ժամանակ» 09.09.2002 թ.), «հարություն առնելով» «ավետում» է ինձ և ակադեմիկոս Լենսեր Աղալովյանին մոռանալ Արցախի խնդիրը և զբաղվել թոռների դաստիարակությամբ: Արշալույսգեյության

«բարձր ոճի ընտրանին» և Հրանտ Մաթևոսյանին նմանվելու չկայացածության բարդույթով տառապողի ճիգերը կասկածի տեղ չեն թողնում: Ուստի չեմ բաժանում իմ լավ բարեկամ Լենսերի վրդովմունքը. անձամբ պատիվ չեմ անի փարիզյան մարգարեին՝ վիճարկելով իմ գիտաքաղաքական կամ ֆիզիկական ամլությունը: Պարզապես մի երկու դիտողություն:

Իմ անհարգարժան ընդդիմախոս...! Մեր տարբեր մոտեցումները Արցախի խնդրին ունեն պարզ բացատրություն. մենք տարբեր մղումներով մտանք շարժման մեջ: Ես երջանիկ էի, որ կյանքիս մայրամուտին Աստված ինձ հնարավորություն շնորհեց, իրականացրեց կյանքիս երազանքը՝ մասնակից դառնալու մեր կորցրածի լոկ մի հողակտորի ազատագրմանը: Դու մտար անզորությունից դուրս գալու և իշխանական լծակները քո՝ հոգևորից շատ հեռու իղձերը լիուլի բավարարելու տենչով: Ուստի շատ շուտ Արցախը քեզ և քո «շեֆի» համար դարձավ ոտքերից կախված «քար»: Ինձ՝ բթամտիս համար, մնաց «անկյունաքար», կյանքիս գերխնդիր... Աշխատիր հասկանալ ինձ ու ներել. քանի ողջ եմ, իմ թույլ ուժերով դիմադրելու եմ պարտվողական դրսևորումներին:

Այն էլ հիշեցնեմ, որ իմ տարեկից Ալիևը փայլուն հաղթանակ տարավ մեծամիտ ջահելներիդ նկատմամբ դիվանագիտական ու քարոզչական մենամարտում: Ուզում եմ նաև փարատել թոռներիս անտերության առթիվ արտահայտած քո տագնապը: Խաղաղվիր: Արցախի խնդիրը չի ինձ խանգարում զբաղվելու իմ թոռներով և գիտական հիմնարկով: Ավելին, թոռնիկներիս (իմ և ուրիշների) համար վերահրատարակեցի մանկապատանեկան պատմվածքների համեստ գրքույկս: Աշխատել եմ, որ նրա սփռած լույսը «ծանր» չլինի՝ արթնացնի բարին ու սերը սեփական երկրի ու լեզվի նկատմամբ: Համոզված եմ, որ թոռներս, ինչպես արդեն զավակներս են, կդառնան արժանի ու ազնիվ քաղաքացիներ և ոչ թե հղփացած ու լկտի անբաններ:

Եվ վերջապես մի խնդրանք իմ կողմից ևս. ձեռ քաշեք ձեր ռևանշիստական իղձերից... Մի՞թե չի բավարարում թալանածն ու ապականածը... Թե՞ ճարտարապետական կոթողների անվտանգ պահպանման հետ կապված տագնապն է ձեզ համակել և հիմա աղիողորմ մղկտում եք, որ ժամանակին չհասցրիք (հրապարակի գրանիտի և մալախիտի հետևից) ավելի անվտանգ տեղ տեղափոխել նաև Գառնին ու Մայր Տաճարը: Եվ ինչու՞ եք այդքան վատ կարծիքի մեր ժողովրդի մասին:

Համաձայն եմ Աղասի Արշակյանի հետ. ժողովուրդը ում ասես կընդունի, անգամ լրիվ անճանոթի, սակայն ո՛չ քաջածանոթ ճիվաղների:

Ռաֆայել Ղազարյան
13.03.2002 թ.

## В Президиум 26-го Съезда КПСС

В эти дни, когда страна готовится к высшему партийному форуму, призванному вскрыть недостатки и наметить пути успешного выполнения грандиозной программы 11-ой пятилетки, не могу не высказать беспокойства по поводу имеющего, подчас, место неправильного подхода к подбору руководящих кадров в различных областях народного хозяйства.

Действующая ныне практика создает у многих уверенность, что более или менее ответсвенное назначение может получить лишь член партии. Хочешь возглавить производство, НИИ или ВУЗ, факультет или кафедру, стать заведующим базой или магазина, прокурором или председателем райсовета, поехать стажером за границу и т.д. — сперва стань членом партии. Потом уже посмотрим на твои профессиональные параметры.

Хорошо, если в партию принимаются лучшие из лучших. Ну, а если имеет место то, о чем пишет Леонид Ильич в "Целине", когда действуют приятельские принципы или соображения удобного, покладистого исполнителя? Тогда открываются лазейки для изворотливых и настырно целеустремленных карьеристов, видящих в партийном билете, в лучшем случае, компенсацию своей профессиональной неполноценности, в худшем-отмычку к народному добру. И тогда появляются воры зав. базами, взяточники прокуроры, ревизоры, сотрудники рай- и горсоветов, члены ВУЗовских приемных комиссий. Возникают некомпетентные, но угодные кому-то директора предприятий и руководители учебными заведениями, которые из карьеристских соображений беззастенчиво замалчивают недостатки и стряпают липовые проценты плана выпуска продукции или успеваемости учащихся.

И самое страшное здесь не в ущербе, наносимом бездарным руководством промышленности, науке, сельскому хозяйству и, в конечном итоге, обороноспособности страны, не в том, что из ВУЗ-а выйдут дипломириванные неучи, которые, в лучшем случае, осядут балластом в НИИ и на производстве, а в том, что такие деятели <u>подрывают авторитет и престиж партии</u> в широких массах, толкая на необаснованные обобщения.

Оправдан ли такой подход к подбору руководящих кадров? Ведь ни у кого не возникает мысли ставить вопрос подобным образом в спорте или исполнительском искусстве, сначала де поступи в партию, потом уже примешь участие в мировом первенстве по фигурному катанию или конкурсе скрипачей... Едва ли мы имели бы сегодняшние успехи в спорте или в исскустве,

если бы ограничили выбор спортсменов и пианистов лишь членами партии. Сперва спортсмен добивается выдающихся результатов и, если он, в добавок воспитал в себе высокие моральные и идейные качества, его рекомендуют в члены партии. То есть-нормальный путь. Так почему же ограничивать выбор руководителей производства или науки? Пусть, если он высококвалифицированный специалист и достойная личность, проявит себя в новом качестве руководителя и лишь справившись с этим может быть рекомендован в члены партии.

НИИ или ВУЗ выдвигает кандитатуру способного перспективного молодого специалиста на поездку за рубеж. Но он беспартийный. "Как вы думаете решить вопрос вашего членства?", спрашивают его в отборочной комиссии. "У меня есть связи, думаю, что решу", отвечает иная простая душа. "Почему ты на второй год остался председателем профкома, ведь ты не хотел?". "Видишь ли, шеф обещал, если потерплю еще год-выдвинет в партию". Можно привести множество подобных примеров. Очевидно, что подобный путь в партию отнюдь не прибавит ни сознательности, ни принципиальности; он лишь наносит ущерб делу партии, общегосударственным интересам.

Решение обратиться к съезду партии созрело у меня под впечатлением мыслей и анализа собственного опыта работы, изложенных Леонидом Ильичом в его поучительной книге "ЦЕЛИНА"[1].

Ветеран Великой Отечественной Войны,
доктор технических наук,
профессор Казарян Рафаэль Аветисович.
378410, Аштарак-2, ИФИ АН Арм. ССР, д. 6, кв. 6.

## Обращение к народу!

"Поскольку средства массовой информации проводят политику умалчивания и искажают информацию о событиях в Нагорно-Карабахской Автономной Области (НКАО), Армении и Азербайджане, считаем целесообразным сообщить вам о них

- Карабах (историческая область Армении-Арцах) испокон веков является неотъемлемой частью Армении
- В 1923 г. область в результате махинации была введена в состав Азербайджана. В то время коренные жители Карабаха-

1 Որը, ի՞նչ մեղքս թաքցնեմ, նույնիսկ չէի էլ բացել:

армяне составляли 96% населения. По данным переписи 1976 г. в НКАО проживало 123 тыс. армян, 37 тыс. азербайджанцев, 1.3 тыс. русских и 0.7 тыс. других национальностей.

• Вопрос о воссоединении Карабаха с Арменией поднимался неоднократно, но наибольшую остроту он получил в настоящее время-время гластности, демократии и перестройки.

**Краткая хроника последних событий.**

13—18.02.88 г. в НКАО проводились многотысячные митинги с требованием воссоединения с Арменией.

20.02 в результате требований народа НКАО была созвана сессия облсовета народных депутатов которая единогласно приняла решение о выходе НКАО из состава Аз. ССР и воссоединении с Арменией, о чем сообщалось в областной газете /Советский Карабах/ 21.02.88 г.

В этот же день в столице Армении Ереване состоялся 30-тысячный митинг в поддержку конституционных требований народа НКАО.

20—27.02 движение за воссоединение НКАО с Арменией охватило всю республику достигнув своего апогея 26.02, когда более 600000 жителей города Еревана вместе с представителями многочисленных районов республики собрались на митинг требуя удовлетворения законного решения облсовета НКАО.

После обращения тов. Горбачева М. С. (текст которого не был полностью передан по ЦТ и не был опубликован в центральной прессе), в котором он обещал всестороннее и объективное рассмотрение данного вопроса в политбюро ЦК КПСС-демонстрации были прекращены. За этот период в Ереване не было совершено ни одного правонарушения.

Полное отсутствие гласности в прессе, радио и телевидении привело к резне армянского населения в Сумгаите, где число жертв уже достигло 28-и, к избиению, побоищам и погромам в других районах Азербайджана.

**Население Карабаха и Армении требует соблюдения своих законных конституционных прав!**

5 марта 1988 г.

Глубокоуважаемые товарищи!

Средства массовой информации в стиле недоброй памяти застойного периода и подавления гласности либо умалчивают, либо столь искаженно освещают события в НКАО, Арм. ССР и Азербайджане, что у советских людей может сложиться совершенно ложное представление о происходящем, что вынуждает нас обраититься к вам по имеющемуся в нашем распоряжении лишь каналу почтовой связи.

Вначале краткая предистория вопроса.

Армянская исконность Карабаха (Армянское название-Арцах) и Нахичевани (Армянское название Нахиджеван) подтверждаются многочисленными древними и средневековыми письменными источниками соседних народов. Более того, когда почти вся Армения, после многовековой борьбы с персидскими завоевателями и сельджукскими ордами потеряла независимость, княжества Арцаха в неравной борьбе отстаивали свою независимость.

После одновременного установления Советской власти в Азербайджане и Карабахе (в апреле 1920 г.) произашло их присоединение к Советской России. Однако сразу же после победы Советской власти в Армении (29.11.1920 г.) ревком Азербайджана 01.12.1920 г. в специальной декларации заявил "рабоче-крестьянское правительство Азербайджана, получив сообщение о провозглашвнии в Армении Советской Социалистичекой Республики, приветствует победу братского народа. С сегодняшнего дня прежние границы между Арменией и Азербайджаном объявляются аннулированными. Нагорный Карабах, Зангезур и Нахичевань признаются составной частью Армении". Председатель ревкома Азербайджана-Н. Нариманов" (Газета "Коммунист", Ер., N 22, 07.12.1920 г.). 04.12.1920 "Правда", N 273 сообщила о переходе Зангезура, Нахичевани и НКАО к Советской Армении.

Подобное решение вопроса приветствовали В. И. Ленин, Г. К. Орджоникидзе, С. М. Киров (Г. К. Орджоникидзе, ст. и речи, т. 1 м. 1956 г. стр. 142).

Однако ликование народа продалжалось недолго. Вскоре. 5 июля 1921 г. кавбюро ЦК РКП (б), не имея полномочий на решение территориальных вопросов, без голосования и обсуждения, в результате грубого давлиения со стороны Сталина и при содействии националистов типа А. Караева вынесло противоположное решение-Карабах вновь был отделен от Армении и присоединен к Аз. ССР, в составе которой из ее части была организована НКАО, причем таким образом, что в отличие от

других автономных государственных образований нашей страны, область была названа не по национальной (в те годы 90% составляли армяне), а по географической принадлежности. Это решение является прямым нарушением ленинской национальной политики. Вот образчик указаний А. Караева: "Сегодня вместо войска наши деньги делают чудеса. Снова и снова повторяю: мой совет не жалеть никакой суммы, увеличте жалование, дайте наградные и все, что они хотят. Правительство постановило для присоединения Карабаха и Зангезура к Азербайджану отпустить 200 миллионов рублей". И еще "но более печально то, что до сих пор не обезглавлено, не оставлено без вождей Зангезурское Армянство... Постарайтес, чтобы все видные и нужные армяне были арестованы. Ссылка и похищение не большое дело... Постарайтесь переизбрать ревком и во время этого выбрать только мусульман и известных нам русских" (см. ЦПА ИМЛ ф. 64 оп1 ед.. хр. 10 л. 2—3). Чтобы лучше понять думы и боль нашего народа сейчас, напомним, что Армения уже в начале этого века лишилась большей части своей исторической территории-западной Армении, а население этой области было истреблено и развеяно по миру в годы геноцида (1915—1922 гг.), развязанного младотурками. В 1920 г. у нашей республики была отторгнута карская область (почти половина оставшейся Восточной Армении). Затем, в 1922 году, по настоянию кемалистов, от Армении была отторгнута еще одна ее область-Нахичеванская и передана Азербайджану. Желание пантюркистов было очевидно-очистить от армян эту область. Как ни горько нам сознавать оно было осуществлено. В результате Арм. ССР составляет примерно 10% исконной Армении.

Сдерживание соц.-экономического развития Карабаха, упразднение в школах обучения истории Армении, варварское уничтожение христианских пемятников, а в последние годы беззастенчивая фальсификация вплоть до их присвоения (ничтоже смущаясь тем, что узурпаторы-мусульмане), почти полная изоляция от Советской Армении, приостановление работ по созданию радиорелейной связи между Ереваном и Степанакертом-далеко не полный перечень целенаправленных действий пантюркистской политики руководства ЦК КП Азербайджана, преследующей одну цель-уготовление Карабаху участи Нахичевани, т. е. изгнание исконного населения. Частично они в этом преуспели. Десятки тысяч карабахцев эмигрировали в Сов. Аремению, Сев. Кавказ и в Среднюю Азию. Характерно, что между переписями 1939 и 1959 гг. только в НКАО (не считая Ленинграда и Литвы, по

которым жестоко прошлась Великая Отечественная Война) отмечено сокращение численности населения.

Армянское население НКАО неоднократно поднимало вопрос о воссоединении с Аремнией. Только в 1965—67 гг. в ЦК поступило около 50000 подписей из НКАО и прилегающих районов (с курдским населением) с требованием о присоедонении НКАО к Армянской ССР...

*...Այնուհետև շարադրված են վերջին իրադարձությունները...*

Трагедия Сумгаита убедителано показала, что пантюркизм, через своих ставленников в Аз. ССР, таких как Алиев и др., и сеть параллельных (неофициальных) мечетей, достиг значительных "успехов" в разжигании религиозно-националистического фанатизма, сведшего на нет десятилетиями воспитывавшийся интернационализм. Симптоматично и другое: по поводу любой аварии на транспорте создается компетентная комиссия из центра. Здесь же "комиссию" возглавил пред. Совмина Аз. ССР Сеидов, в объективность которого мы не верим.

Мы никогда не могли взять в толк, как на глазах у всего человечества в начале 20 века турецкие варвары могли систематически и организованно в течении нескольких лет вырезать до полного истребления, с применением дантовых пыток, древний культурный народ за всю свою четырехтысячелетнюю историю не посягавший на права соседей. Теперь мы видим что такое возможно и в конце 20 века. Притом в братской семье народов, лишь за попытку воспользоватся своим конституционным правом. Так руководители Азербайждана надеются заставить армянский народ в НКАО и в Армянской ССР отказаться от борьбы за воссоеденение. Этим действиям пантюркистов объективно потворствуют советские средства массовой информации, оказавшиеся беспомощными в создавшейся обстановке.

Мы обвиняем руководителей Советского Азербайджана в преступлении против всего армянского народа и требуем создания объективной комиссии для расследования их преступно-провокационной деятельности.

Мы заявляем, что армянский народ полон решимости вернуть Нагорный Карабах в объятия родной Армении.

Весь армянский народ глубоко верит в большой потенциал гуманизма и интернационализма всех советских граждан и призывает присоединиться к требованиям о справедливом и конституционно законном решении давно уже назревшего вопроса — воссоединения Карабаха (Арцаха) и Нахичеванской АССР с Арменией.

